

**ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ԽՍՀՄ ՌԱԶՄԱՎՈՐՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**



**ԵՐԵՎԱՆ 2015**



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСТОРИИ

КАРЕН ГАМЛЕТОВИЧ ХАЧАТРЯН

АРМЕНИЯ В СИСТЕМЕ  
ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА СССР  
(1922-1991 гг.)

ЕРЕВАН-2015

9(47.925)  
7-28<sup>\*</sup>

h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԻՄԻԱԿԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

5222


ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՐՄ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
(1922-1991 թթ.)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ ԱՇԾՅԱՆ  
ՍԱՏԵՆԱՍԻՐ  
132



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
132

ԵՐԵՎԱՆ-2015



ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(52)  
Խ 282

## Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խաչատրյան Կ.Գ.

Խ 282 Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի  
համակարգում (1922–1991 թթ.): Խմբ.՝ պ.գ.դ., պրոֆ. Հ.Մ. Հարությունյան, -  
եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2015. – 345 էջ:

Մենագրությունում առաջին անգամ հայ պատմագրության մեջ  
ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ստեղծման և փուլա-  
յին զարգացման պատմության ընդհանուր համատեքստում բացահայտ-  
վում է Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետության արդյուն-  
աբերության և գիտության ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ-ում խորհրդային  
ամբողջ ժամանակաշրջանում: Ցույց է տրվում Խորհրդային Հայաստա-  
նում իրականացված ռազմապաշտպանական միջոցառումների նշանա-  
կությունը հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և  
անվտանգության ապահովման գործում:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին, հայրենի պատմությամբ  
հետաքրքրվող լայն հասարակայնությանը:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(52)

ISBN 978-9939-860-20-6

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2015

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության մեջ  
Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետությունն ունի իր  
ուրույն տեղն ու դերը: Խորհրդային Հայաստանը հանդիսացավ  
Հայաստանի առաջին հանրապետության իրավաժառանգորդը,  
խորհրդային ամբողջատիրության պայմաններում իր հնարավո-  
րությունների չափով 70 տարիների ընթացքում պահպանեց և  
զարգացրեց հայոց պետականությունը: Անկախ նրանից, թե կոմու-  
նիստական վարչակարգն ինչ չարիքներ է գործել ԽՍՀՄ բոլոր ժո-  
ղովուրդների, այդ թվում հայության նկատմամբ, խորհրդային տա-  
րիները մեր ժողովրդին տվել են նաև շատ դրական արժեքներ:  
ԽՍՀՄ կազմում հայ ժողովուրդը պաշտպանված էր արտաքին  
սպառնալիքներից, ունեցավ ստեղծագործելու և զարգանալու  
ապահով պայմաններ: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին ար-  
տադրողական վիթխարի հզորություններ, աննախադեպ զարգա-  
ցում ապրեց Հայաստանի տնտեսությունը, արդյունաբերությունը,  
գիտությունը, կրթությունը և մշակույթը, բազմապատկվեց երկրի  
բնակչությունը, տվյալ տասնամյակների ձեռքբերումներն անհամե-  
մատելի են հայրենի պատմության նախորդ շրջանների հետ:  
Խորհրդային տարիներին Հայաստանը դարձավ տարածաշրջանի  
ամենազարգացած արդյունաբերական երկրներից մեկը, այստեղ  
կառուցվեցին և շահագործման հանձնվեցին 700-ից ավելի խոշոր  
գործարաններ ու ֆաբրիկաներ, արտադրական այլ ձեռնարկու-  
թյուններ: Երևանից, Լենինականից (Գյումրի) և Կիրովականից (Վա-  
նաձոր) բացի՝ ձևավորվեցին տասնյակ արդյունաբերական նոր  
կենտրոններ՝ Հրազդանն ու Չարենցավանը, Աբովյանն ու Բյուրե-  
ղավանը, Ապարանն ու Արթիկը, Գորիսն ու Կապանը, Քաջարանը,  
Կանոն (Գավառ) և այլն: 1980-ական թվականներին Խորհրդային  
Հայաստանից աշխարհի շուրջ 85 երկրներ արտահանվում էին

200-ից ավելի արտադրատեսակներ, այդ թվում ռազմական նշանակության ապրանքներ<sup>1</sup>:

Խորհրդային Հայաստանն անցել է պատմության գիրկը, սակայն այսօր էլ խիստ արդիական և հրատապ է նրա պատմության գիտական ուսումնասիրումն ու արժևորումը, «մութ անցքերի» և «սպիտակ էջերի» վերհանումը: Անկախության առաջին տարիներին, սակայն, Հայաստանի խորհրդային հանրապետության պատմության ուսումնասիրումը կարծես հետին պլան մղվեց: Որոշ պատմաբաններ և քաղաքական գործիչներ անհիմն կերպով փորձում էին խորհրդային Հայաստանը պետականություն չհամարել, ժխտվում էր պատմական տվյալ ժամանակաշրջանում դրական արժեքների ձեռքբերումը: Կարծում ենք, անկախությունը և պետականությունը համարժեքներ չպետք է դիտել: Խորհրդային Հայաստանը, այո, լիարժեք անկախ պետություն չէր, բայց օժտված էր պետականության որոշակի ատրիբուտներով (Սահմանադրություն, զինանշան, դրոշ, օրհներգ, պետական կառավարման համակարգ, այդ թվում արտաքին կապերի գերատեսչություն և այլն) ու սահմանափակ իրավունքներով պետական կազմավորում էր ընդհանուր խորհրդային պետության մեջ: Խորհրդային Հայաստանի պատմության նկատմամբ նիհիլիստական մոտեցումների շրջանը, բարեբախտաբար, կարճ տևեց, և պարզ դարձավ, որ վերջինիս պատմության բազմաթիվ հիմնահարցեր կարոտ են անկողմնակալ և քննախույզ ուսումնասիրության, նորովի մեկնաբանությունների:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի երրորդ հանրապետության անկախ պետականության պայմաններում հայրենական պատմագիտության առջև լայն հնարավորություններ են բացվել կատարելու պատմագիտական օբյեկտիվ և անաչառ ուսումնասիրություններ:

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյան Կ., Հայաստանի երկրորդ (խորհրդային) հանրապետության պատմության հիմնահարցերի ուսումնասիրության արդի վիճակը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի (17–19 հոկտեմբերի, 2013) զեկուցումների ժողովածու, Ե., 2014, էջ 101–105:

յուններ այնպիսի թեմաներով, որոնց մասնակի անդրադարձն անգամ բացառված էր խորհրդային պետության գոյության գրեթե ողջ ժամանակաշրջանում: Խորհրդային ամբողջատիրական համակարգը և պետական գրաքննության մամլիչ մեքենան իր բազմաթիվ օղակներով աչալուրջ հետևում և խստորեն կասեցնում էր խորհրդային քաղաքական, ռազմական և ռազմատնտեսական պատմության որոշ անցքերի լուսաբանումը թե խորհրդային զանգվածային լրատվամիջոցներով, պարբերական մամուլի հրապարակումներում և թե գիտական ուսումնասիրություններում: Նման «խիստ զաղտնի» խնդիրներից մեկի ուսումնասիրության առաջին փորձն է ներկայացված աշխատությունը: Նրանում առաջին անգամ հայ պատմագիտության մեջ ամբողջական և համակողմանի ուսումնասիրվում և բացահայտվում է խորհրդային Հայաստանի տեղն ու դերը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումներում և ռազմական արդյունաբերական համալիրի (ՌԱՀ, ռուսերեն՝ Военно-промышленный комплекс (ВПК)) համակարգում խորհրդային ողջ ժամանակաշրջանում:

«Ռազմարդյունաբերական համալիր» հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ դրեց ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերը 1961 թ.: ՌԱՀ ասելով նկատի էր առնվում Երկրորդ աշխարհամարտի ու դրա ավարտից հետո միջազգային հարաբերություններում սկսված սառը պատերազմի մեկ ու կես տասնամյակի ընթացքում ձևավորված «ռազմական հսկայական վերնախավի սերտաճումը սպառազինության հսկայածավալ արդյունաբերության հետ»<sup>2</sup>: Սակայն, ԽՍՀՄ ՌԱՀ-ի համար այս սահմանումն ամբողջական համարել չենք կարող, քանզի, ինչպես գիտենք, ԽՍՀՄ-ի քաղաքական ու տնտեսական համակարգերն ամբողջությամբ սերտաճած էին, դրանք ղեկավարվում և ուղղորդվում էին

<sup>2</sup> Տե՛ս Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), М., 2006, с. 8.

երկրում մենատիրություն հաստատած կոմունիստական կուսակցության վերնախավի կողմից:

«ՌԱԴ» հասկացության բացատրության, խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության բնութագրման հարցերը մշտապես գտնվել և գտնվում են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դրանք տարբեր են, տարբեր են տեսակետները նաև խորհրդային ՌԱԴ-ի վերջնական ձևավորման ժամանակաշրջանի մասին: Խնդրի վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունները հետխորհրդային տարածքում կատարել են հիմնականում ռուսաստանցի հետազոտողները: 1990-ական թթ. կեսերին լույս տեսան նրանց առաջին աշխատությունները, որոնցում փորձ կատարվեց հետազոտել և բնութագրել խորհրդային ՌԱԴ-ը, ինչպես նաև նրա կայացման և վերջնական ձևավորման հիմնափուլերը:

Այսպես, առավել համոզիչ են թվում հիմնախնդրի հետազոտողներից Ն. Միմոնովի մոտեցումները: Հեղինակն առաջինն էր հետխորհրդային հետազոտողներից, որ հանդես եկավ 1996 թ. հրատարակած առաջին մենագրությամբ<sup>3</sup>: Ուսումնասիրելով ԽՍՀՄ-ում ՌԱԴ-ի ձևավորման և զարգացման խնդիրը 1920-1950-ական թթ., Միմոնովը հանգում է մի քանի համոզիչ եզրակացությունների: Նա գտնում է, որ ԽՍՀՄ-ի համար ՌԱԴ-ը համարժեք է «պաշտպանական արդյունաբերություն» հասկացության հետ և ներկայացնում է «մշտապես գործող և փոխկապակցված արտադրական ձեռնարկությունների (որոնք առանձնացել են իրենց «մայր» ճյուղերից արտադրանքի հատուկ նշանակության շնորհիվ, բայց չեն կորցրել նրանց հետ արտադրական-տնտեսական կապը) ամբողջություն»: Միմոնովը նշում է նաև, որ ՌԱԴ-ի ստեղծումը սկսվում է 1920-ական թթ. վերջին – 1930-ականների սկզբին և ավարտվում 1941-1945 թթ. Հայրենական պատերազմի նախօրեին<sup>4</sup>:

<sup>3</sup> Симонов Н., Военно-промышленный комплекс СССР в 1920-1950-е годы: темпы экономического роста, структура, организация производства и управление, М., 1996.

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 5, 27, 326:

Ռուսաստանցի մեկ այլ հետազոտող Ի. Բիստրովայի կարծիքով, խորհրդային ՌԱԴ-ը իշխանության որոշակի համակարգ է, որում ռազմական, պետական-կուսակցական ղեկավարության միաձուլումը պայմանավորեց վերջինիս վիթխարի ազդեցությունը հասարակության և պետության զարգացման գործում: Հեղինակը գտնում է, որ խորհրդային ՌԱԴ-ի վերջնական ձևավորումը տեղի է ունեցել Երկրորդ աշխարհամարտի վերջից մինչև 1960-ական թթ. սկիզբը՝ կապված աշխարհում ընթացող գիտատեխնիկական հեղափոխության և սառը պատերազմի քաղաքականության հետ: Բիստրովայի կարծիքով, խորհրդային ՌԱԴ-ի տնտեսական, նյութատեխնիկական բաղադրիչը կարելի է բնութագրել «պաշտպանական-արդյունաբերական համալիր» հասկացությամբ<sup>5</sup>:

Նշված խնդիրներին անդրադարձել են նաև Արևմուտքի որոշ հեղինակներ, օրինակ Լ. Սամուելսոնը գտնում է, որ ՌԱԴ-ի առանցքն էր կազմում պաշտպանական արդյունաբերությունը, և որ այն ԽՍՀՄ-ում ձևավորվել է արդեն 1930-ական թթ.<sup>6</sup>: Ուշագրավ է հետազոտող Դ. Հոլլոուվեյի տեսակետը խորհրդային ՌԱԴ-ի մասին, նա նշում է, որ ՌԱԴ-ից բացի՝ ԽՍՀՄ-ում, փաստորեն, այլ տնտեսություն չկար, և որ «խորհրդային Միությունը չունեի ՌԱԴ, այն ինքը՝ ՌԱԴ էր»<sup>7</sup>: Իհարկե, Հոլլոուվեյի տեսակետը վիճարկելի է և ընդունելի լինել չի կարող, սակայն, կարծում ենք, հեղինակը փորձել է առավել պատկերավոր բնութագրել խորհրդային ՌԱԴ-ը:

Կարելի է ընդհանրացնել, որ ԽՍՀՄ ՌԱԴ-ը՝ արտադրական ձեռնարկությունների, գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաև դրանք ղեկավարող մարմինների, փոխկապակցված մի համակարգ էր, որն իրականացնում էր ռազմական տեխնիկայի,

<sup>5</sup> Տե՛ս Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 5, 20:

<sup>6</sup> Самуэльсон Л., Красный колосс. Становление военно-промышленного комплекса СССР. 1921-1941, М., 2001.

<sup>7</sup> Holloway D., War, Militarism, and the Soviet State, Harmondsworth, 1980.

սպառազինության և ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման և արտադրության պատվերներ:

Խորհրդային ՌԱՀ-ի նյութատեխնիկական և տնտեսական գլխավոր բաղադրիչն էր ռազմապաշտպանական արտադրությունը, ուստի «ՌԱՀ» հասկացությունը ԽՍՀՄ-ում համարժեք էր «պաշտպանական արդյունաբերական համալիր», «ռազմապաշտպանական արդյունաբերություն», «պաշտպանական արդյունաբերություն» հասկացություններին: Խորհրդային ՌԱՀ-ում գիտատեխնիկական դերի ավելացումը սառը պատերազմի տարիներին բերեց պատմագրության մեջ «ռազմագիտաարդյունաբերական համալիր» արտահայտությանը, որի հեղինակը Ա. Բեզբորոդովն է<sup>8</sup>:

Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման, ռազմական արտադրության սկզբնավորման և զարգացման յուրահատկությունները, դրանց նշանակությունը հանրապետության տնտեսության ու արդյունաբերության, գիտության տարբեր ճյուղերի զարգացման համար և այլ տարաբնույթ խնդիրները սույն աշխատությունում ուսումնասիրվում են ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի, վերջինիս կուսակցական-պետական կառավարման համակարգի ձևավորման և փոլային զարգացման պատմության ընդհանուր համատեքստում:

Թեմայի ուսումնասիրումը կունենա ոչ միայն պատմագիտական, տեսական, այլև գործնական, կիրառական նշանակություն, նկատի ունենք, որ հատկապես վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում չափազանց կարևոր դեր է հատկացվում երկրում գիտահենք տնտեսության, արդյունաբերության գլխավոր հատվածի՝ ծանր, այդ թվում ռազմական, զարգացման հեռանկարներին:

Ռազմաքաղաքական առումով աշխատության արդիականությունն ու հրատապությունը նաև նրանում է, որ ռազմաարդյունաբե-

<sup>8</sup> Стів Безбородов А., Власть и ВПК в СССР (середины 40-х – середины 70-х годов), «Сталин и холодная война», М., 1997, с. 94–126.

րության ոլորտում Հայաստանի Հանրապետությունը ներկայումս սերտ համագործակցություն է ծավալել մի քանի երկրների (ԱՄՆ, Իտալիա, Լեհաստան, Սերբիա, Բելառուս և այլն), առաջին հերթին՝ Ռուսաստանի Դաշնության հետ, նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում: Ռուսաստանի Դաշնության հետ իրականացվում են հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և ռազմական անվտանգության համալիր միջոցառումներ, մասնավորապես, ստեղծվում է հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միասնական համակարգ:

Հայաստանի երրորդ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման և ռազմական անվտանգության գործում ՌԱՀ-ը կարևոր դեր ու նշանակություն ունի: ՀՀ զինված ուժերը (ԶՈՒ) մշտապես բարձր մարտական պատրաստության վիճակում պահելու համար անհրաժեշտ են ժամանակակից մարտունակ սպառազինություն և ռազմական տեխնիկա: Այդ առումով դրական է, որ ներկայիս «ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը դիտում է որպես ոչ միայն ԶՈՒ-ի կարիքների բավարարման գերակա միջոց, այլև պետության ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետ խթանիչ» և, որ «համակարգի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության ապահովման գերակայություն»<sup>9</sup>:

Հանրապետությունում ՌԱՀ-ի կատարելագործմանն ու նրա դերի բարձրացմանն է միտված 2015 թ. մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՌԱՀ-ի մասին» ՀՀ օրենքը: Նրանում հստակ նշվում է, որ օրենքի նպատակն է՝ «Հայաստանի Հանրապետության ՌԱՀ-ի կայուն, համակարգված, իրավական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական կադրային քաղաքականության հիմքերի ստեղծումը և Հայաս-

<sup>9</sup> Օհանյան Ս., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 11, 15:

տանի Հանրապետության զինված ուժերի ու այլ զորքերի սպառազինման պետական, ինչպես նաև ռազմատեխնիկական հավակնոտ ծրագրերի իրականացումը»: ՀՀ օրենքի այլ դրույթների համաձայն՝ «ՀՀ ՌԱՀ-ը գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական մարմինների համակարգ է, որի գործունեությունն ուղղված է պետության ռազմատեխնիկական քաղաքականության կենսագործմանը», իսկ «ռազմարդյունաբերական գործունեությունը՝ ռազմական կարիքների համար պետական պատվերների հիման վրա սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արդիականացման, արտադրության, վերականգման, նորոգման, ծառայությունների մատուցման և սպասարկման աշխատանքների տնտեսական գործունեության ձևերի համակցություն»: Հոդված 3-ով՝ ՀՀ ռազմարդյունաբերական քաղաքականության նպատակն է՝ «ռազմարդյունաբերության վերածույնը տնտեսության կարևորագույն և առաջատար ոլորտի, որը կապահովի սեփական պաշտպանական կարիքները ոչ միայն կարճաժամկետ, այլև երկարաժամկետ հեռանկարում՝ ստեղծելով ռազմական անվտանգության ապահովման և տարածաշրջանային հավասարակշռության պահպանման իրական երաշխիքներ»: Հոդված 4-ով՝ ՌԱՀ-ի կարևոր խնդիրներնից է համարվում «բնակչության զբաղվածության ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծումը», «ռազմարդյունաբերական գործունեության խթանումը» և այլն<sup>10</sup>:

Այսպիսով, անհնար է առանց զարգացած ռազմարդյունաբերական համալիրի ունենալ արդիական զենքի տեսակներով և ռազմական միջոցներով սպառազինված ուժեր և մարտունակ բանակ, պաշտպանված պետություն:

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» (<http://www.parliament.am>):

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել մեծամասամբ արխիվային փաստաթղթերը, կուսակցական և պետական մարմինների, խորհրդային կառավարության, նրա առանձին գերատեսչությունների որոշումներն ու հրամանները, հրահանգներն ու հանձնարարականները, նամակներն ու զեկուցագրերը, հաշվետվությունները և այլն, որոնց զգալի մասը տարիներ շարունակ հավաքվել է «Հատուկ թղթապանակում»՝ «խիստ գաղտնի» ու «հատուկ կարևորության» մակագրությամբ, և ուսումնասիրողների համար հասանելի չի եղել: Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ի, այդ թվում Խորհրդային Հայաստանի, ռազմապաշտպանական խնդիրներին և ռազմական (պաշտպանական) արդյունաբերությանը վերաբերող միութենական-կենտրոնական, նաև՝ հանրապետական, բոլոր փաստաթղթերը պատրաստվել են մի քանի օրինակից, որոնցից հանվել են անհրաժեշտ քանակի պատճեններ: Փաստաթղթերի և այլ նյութերի մեկական օրինակներ պարտադիր ուղարկվել են միութենական հանրապետությունների կոմկուսի կենտկոմներ և կառավարություններ:

Աշխատանքում առաջադրված հիմնախնդիրների զգալի մասի (հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանի) ուսումնասիրումը հնարավոր է դարձել շնորհիվ հետխորհրդային տարիներին գաղտնազերծված արխիվային ֆոնդերի փաստաթղթերի ու նյութերի, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանց գերակշիռ մասը գաղտնազերծվել և պահպանման է հանձնվել Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)<sup>11</sup> ՀՀ կառավարության 1990-ական թթ. սկզբի և հետագա տարիների հատուկ որոշումներով:

Աղբյուրների հաջորդ խումբը կազմում են փաստաթղթերի և վիճակագրական նյութերի տպագիր ժողովածուները<sup>12</sup>: Աղբյուրա-

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1 (ՀԿԿ կենտկոմ («Հատուկ թղթապանակներ»)), ֆ. 113 (ՀԽՍՀ կառավարություն) և այլն:

<sup>12</sup> Социалистическое строительство Арм. ССР (1920–1940), Е., 1940, Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сб. документов и

գիտական արժեք ունեն նաև ժամանակի խորհրդահայ կուսակցական և պետական ղեկավար գործիչների հուշագրություններն ու աշխատությունները<sup>13</sup>, նրանց, նաև հայազգի նշանավոր գիտնականներին և կոնստրուկտորներին, ռազմական տեխնիկայի փորձարկողներին և ռազմական արտադրության մասնագետներին նվիրված ուսումնասիրությունները<sup>14</sup>: Դրանցում խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, արդյունաբերության, գիտության բնագավառներում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները ներկայացված են ականատեսի աչքերով, բացահայտված են առանձին խոշոր անհատների գործունեության ուշագրավ դրվագները, տրվել են ուշադրության արժանի գնահատականներ և այլն:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն առանձին կոլեկտիվ ուսումնասիրությունները և աշխատութ-

---

материалов, Е., 1975, Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг., Е., 2010, Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941–1943), М., 1946, Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг., том 4. Крымская конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (4–11 февраля 1945 г.). Сборник документов, М., 1979, том 6. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.). Сборник документов, М., 1984, Документы внешней политики СССР, т. 23, книга 1, М., 1995, Политбюро ЦК РКП(б) – ВКП(б). Повестки дня заседаний, 1919–1952. Каталог в трех томах, т. 1 (1919–1929), М., 2000.

<sup>13</sup> Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը (Հուշեր), Ե., 2001, Աստատրյան Ե., 20–րդ դար. Հայաստանի կառուցման ճանապարհին (Հուշեր), Գիրք առաջին, Ե., 2004, Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, Ե., 2008, Դնի սկвозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Е., 2010, Հայաստանի ժողովնախորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան (կազմող՝ Է. Չոլախյան–Գալապարյան), Ե., 2012 և այլն:

<sup>14</sup> Ավետիսյան Հ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Հարությունյան. Կյանքը և գործունեությունը, Ե., 2000, Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին–երրորդ, Ե., 2008, Նույնի՝ Անտոն Քոչինյանի ժամանակը, Ե., 2013, Саркисян А., Армяне – военные ученые, конструкторы, испытатели и производственники 20-го века, т. 1, Е., 1998, т. 2–3, Е., 2005, Заробян Н., Яков Заробян и его эпоха, Е., 2008 և այլն:

յունները<sup>15</sup>, որոնցում առկա են որոշակի փաստագրական նյութեր և քննական վերլուծություններ:

Թեմային առնչվող պատմագիտական աշխատությունները, որոնց գերակշիռ մասն օտարալեզու է, սակավաթիվ են: Հրապարակի վրա թեև չկա սույն աշխատության թեմայով որևէ առանձին և ամփոփ ուսումնասիրություն, սակայն առկա են մենագրություններ և աշխատություններ, որոնցում ներկայացված են աշխատությունում լուսաբանված որոշ հիմնախնդիրները:

Խորհրդային տարիներին առավել հանգամանալի ուսումնասիրվել են Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների և դրանց նախորդող տարիներին ԽՍՀՄ ռազմատնտեսական քաղաքականության, Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացման, Հայրենական պատերազմի տարիներին ռազմական նշանակության արտադրանքի թողարկման, դրանում գիտության և գիտատեխնիկական աշխատողների մասնակցության վերաբերյալ խնդիրները: Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտողներից կարելի է առանձնացնել Յ. Չաղակի, Գ. Կրավչենկոյի, Ս. Ռոզենֆելդի և Կ. Կլիմենկոյի, Գ. Ալախվերդյանի, Ա. Գրիգորյանցի, Կ. Կոզմոյանի, Լ. Անանյանի, Հ. Հարությունյանի աշխատությունները<sup>16</sup>:

---

<sup>15</sup> История ереванского станкостроительного завода имени Ф. Э. Дзержинского, Е., 1967, История социалистической экономики СССР, в семи томах, т. 5. Советская экономика накануне и в период Великой Отечественной войны. 1938–1945 гг., М., 1978, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, Ե., 1994, Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие. Под ред. О. Бакланова и О. Рогозина. Под общей ред. О. Рогозина, М., 2013 և այլն:

<sup>16</sup> Чадаев Я., Экономика СССР в период Великой Отечественной войны (1941–1945), М., 1965, Кравченко Г., Экономика СССР в годы Великой Отечественной войны (1941–1945), М., 1970, Розенфельд С., Клименко К., История машиностроения СССР (с первой половины 19-го в. до наших дней), М., 1961, Аллахвердян Г., К характеристике промышленности Армянской ССР в период Отечественной войны, “Известия АН Арм. ССР (Общественные науки)”, Е., 1954, № 2, с. 3–11, Григорьянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920–1965), Е., 1966, Կոզմոյան Կ., Երևանի Ֆ. Է. Չերժինսկու

խորհրդային Հայաստանի տնտեսության և արդյունաբերության պատմության առանձին հարցերին խորհրդային տարիներին անդրադարձել են նաև մի շարք այլ հեղինակներ<sup>17</sup>: Նրանց աշխատությունները թեև որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, սակայն, կրում են խորհրդային ժամանակաշրջանին հատուկ առանձակի կնիքը և ռազմատնտեսական ոլորտի խնդիրներին գրեթե չեն առնչվում:

Ինչ վերաբերում է հետպատերազմյան տարիների ՌԱՀ-ի և ռազմապաշտպանական ոլորտի խնդիրների պատմությանը, ապա խորհրդային պատմագրությունը դրանց ընդհանրապես չի անդրադարձել:

Ի տարբերություն խորհրդային պատմագրության՝ Արևմուտքի որոշ հեղինակներ (Վ. Ասպատուրյան, Մ. Ազուրսկի) իրենց աշխատություններում<sup>18</sup> առաջին փորձերը կատարեցին ԽՍՀՄ ՌԱՀ-ի բացառապես տեսական հարցերի ուսումնասիրության բնագավառում: Պարզ է, որ խորհրդային ՌԱՀ-ի գործունեության մասին գերզադտնի տվյալները չէին կարող հասանելի լինել որևէ ուսումնասիրողի (առավելևս արտասահմանցի) համար:

անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Ե., 1956, նույնի՝ Լենինական, Ե., 1957, Կիրովական, Ե., 1960, Հոկտեմբերյան, Ե., 1975, Անանյան Լ., Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը (նախապատերազմյան շրջան), Ե., 1979, նույնի՝ Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1982, Հարությունյան Հ., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.), Ե., 1987:

<sup>17</sup> Ենգոյան Փ., Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926–1958), Ե., 1967, Ջուրաբյան Ս., Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացումը 50 տարում (1920–1970), Ե., 1971, Պողոսյան Վ., Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը Մեծ Հայրենականում հանրապետության նյութական և հոգևոր ուժերի մոբիլիզացման ուղղությամբ, Ե., 1982, Ավագյան Վ., Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927–1980 թթ.), Ե., 1983 և այլն:

<sup>18</sup> Aspaturian V., The Soviet Military-Industrial Complex: Does It Exist? //Testing the Theory of the Military-Industrial Complex, Journal of international Affairs, 26, № 1, 1972, pp. 1–28, Agursky M., The Soviet Military-Industrial Complex. Jerusalem Papers on Peace Problems, 31, 1980, pp. 1–32.

ԽՍՀՄ փլուզումից հետո միայն սկսեցին ի հայտ գալ խորհրդային ՌԱՀ-ի և ռազմապաշտպանական արդյունաբերության պատմության խնդիրներին նվիրված հատուկ ուսումնասիրություններ, որոնց գերակշիռ մասի հեղինակները ռուսաստանցի հետազոտողներ են: Հետխորհրդային շրջանի հեղինակներից, ինչպես նշեցինք, առաջինը Ն. Սիմոնովն է, ով ուշագրավ մենագրություն հրատարակեց խորհրդային ՌԱՀ-ի ստեղծման և կայացման մասին: Նա արխիվային փաստաթղթերի լայն հենքի վրա գիտականորեն ուսումնասիրում է նախապատերազմյան շրջանում ԽՍՀՄ-ում ռազմական արտադրության կազմակերպման և զարգացման, խորհրդային ռազմատեխնիկական քաղաքականության հարցերը, վերլուծության է ենթարկում ռազմական արտադրանքի քանակական աճի տվյալները Հայրենական պատերազմի ու հետպատերազմյան առաջին տարիներին և այլն<sup>19</sup>:

5222 Սույն աշխատանքում առաջադրված հիմնախնդիրների որոշակի մասի լուսաբանման համար անչափ օգտակար են եղել Ի. Բիստրովայի վերը նշված արժեքավոր ուսումնասիրությունը և հրատարակած հոդվածները<sup>20</sup>: Օգտագործելով մեծ քանակի պատմագիտական և տեղեկատու գրականություն, վիճակագրական և արխիվային նյութեր, հեղինակը հետազոտում է խորհրդային ՌԱՀ-ի ինչպես տեսական խնդիրները, այնպես էլ գործունեությունը խորհրդային գրեթե ամբողջ ժամանակաշրջանում, կատարում ուշագրավ և համոզիչ եզրահանգումներ: Ն. Սիմոնովի և Ի. Բիստրովայի մենագրությունները կարելի է համարել խորհրդային ՌԱՀ-ի և ռազմապաշտպանական արդյունաբերության պատմության ուսումնասիրության ոլորտում լուրջ առաջընթաց: Դրանցում գիտական շրջանառության մեջ է դրված զգալի քանակի փաստական նյութ, որը մինչ այդ հասանելի չէր հետազոտողների համար:

<sup>19</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ.:

<sup>20</sup> Տե՛ս Быстрова И., նշվ. աշխ., նույնի՝ Военно-экономическая политика СССР: от “демилитаризации” к гонке вооружений, “Сталинское десятилетие холодной войны: факты и гипотезы”, М., 1999 с. 171–187 և այլն:

Նախապատերազմյան ու պատերազմի շրջանում խորհրդային պաշտպանական արդյունաբերության, նրա կառավարման համակարգի ձևավորման, ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման որոշ հիմնահարցերի ուսումնասիրության համար օգտակար են եղել Մ. Մուխինի, Ա. Ստեպանովի, Ա. Բեզուդովի արժեքավոր հոդվածները<sup>21</sup>: Նախապատերազմյան շրջանի խորհրդային տնտեսության, այդ թվում ռազմապաշտպանական ոլորտի, խնդիրների լուսաբանման են նվիրված անգլիացի պատմաբան Ռ. Դևիսի և շվեդ հետազոտող Լ. Սամուելսոնի աշխատությունները, որտեղ հեղինակները կատարում են մի շարք ուշագրավ եզրահանգումներ<sup>22</sup>:

Ինչ վերաբերում է մերօրյա հայ պատմագիտությանը, ապա հետազոտողներից և ոչ մեկն իր առջև խնդիր չի դրել ուսումնասիրելու խորհրդային ՌԱԳ-ի, դրանում Հայաստանի մասնակցության հիմնախնդիրը ԽՍՀՄ ամբողջ ժամանակաշրջանում: Նախապատերազմյան շրջանում խորհրդային Հայաստանի տնտեսության վերականգնման և զարգացման, հանրապետության արդյունաբերականացման խնդիրներն ուսումնասիրված են վաստակաշատ պատմաբան Վ. Ղազախեցյանի արժեքավոր մենագրության մեջ<sup>23</sup>: Դրանում, սակայն, ռազմապաշտպանական ոլորտի խնդիրներին զրեթե անդրադարձ չի կատարվում, դրանք շոշափվում են մեկ կամ երկու պարբերությամբ:

<sup>21</sup> Мухин М., Эволюция системы управления советской оборонной промышленностью в 1921–1941 годах и смена приоритетов “оборонки”, “Отечественная история”, М., 2000, № 3, с. 3–15, Степанов А., Военные планы и оборонная промышленность СССР накануне и в начале Второй мировой войны: британский фактор, “Отечественная история”, М., 2006, № 3, с. 33–40, Безугольный А., Ни войны, ни мира. Положение на советско–турецкой границе, меры советского руководства по предотвращению турецкой угрозы в первый период Великой Отечественной войны, “Военно–исторический архив”, М., 2003, № 5, с. 53–76.

<sup>22</sup> Davies R., Crisis and Progress in the Soviet Economy, 1931–1933 (The industrialisation of Soviet Russia), London, 1996, Самуэльсон Л., указ. соч.

<sup>23</sup> Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:

Խորհրդային Հայաստանի նախապատերազմյան և պատերազմի շրջանի պատմության մեզ հետաքրքրող խնդիրներ է ուսումնասիրել ռազմական պատմության հետազոտող Կ. Հարությունյանը: Նրա արժեքավոր աշխատություններում<sup>24</sup> առկա է մեծ քանակի փաստական նյութ և ուշագրավ եզրակացություններ: Նշելի են նաև պատմաբաններ Զ. Մանուկյանի, Գ. Խաչատրյանի ու Ս. Ղարիբջանյանի ուսումնասիրությունները<sup>25</sup>, որոնցում քննության են առնված Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի արդյունաբերության՝ պատերազմի պահանջներին վերակառուցման, ռազմական արտադրանքի թողարկման, դրանում հայ գիտնականների և հանրապետության գիտության մասնակցության և այլ խնդիրներ:

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան և 1990–ական թթ. սկզբի սոցիալ–տնտեսական և հասարակական–քաղաքական կյանքի պատմության խնդիրների լուսաբանման են նվիրված Ռ. Ազիզբեկյանի ու Գ. Գեղամյանի համահեղինակած աշխատությունը և Ա. Վիրաբյանի արժեքավոր մենագրությունը<sup>26</sup>: Տնտեսության պատմության հետազոտող Լ. Անանյանի աշխատությունում<sup>27</sup> որոշ ընդհանրացված տեղեկություններ են բերված հետպատերազմյան

<sup>24</sup> Հարությունյան Կ., Մանուկյան Զ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակում, 1941–1945 թթ., Ե., 2001, Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Ե., 2002, Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Е., 2004 և այլն:

<sup>25</sup> Մանուկյան Զ., Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941–1945 թթ.), Ե., 2000, Հարությունյան Կ., Մանուկյան Զ., նշվ. աշխ., Խաչատրյան Գ., Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, Ե., 2005, Гарибджанян С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), Е., 2007, նույնի Դոкументы об организации академической науки в Армении в годы Великой Отечественной войны (1942–1944), “Вестник общественных наук”, Е., 1995, № 1, էջ 239–249:

<sup>26</sup> Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945–1990–ական թվականներին, Ե., 1994, Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական–քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Ե., 2001:

<sup>27</sup> Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Ե., 2003:

տարիներին Հայաստանի ձեռնարկություններում արտադրված ռազմապաշտպանական բնույթի արտադրանքի մասին և այլն:

ԽՍՀՄ փլուզման շրջանում Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանրագույն դրության, տնտեսության և արդյունաբերության անկման, արտաքին մատակարարումների և բեռնափոխադրումների ծավալների բազմակի կրճատման, տնտեսական կապերի խզման, դրանց խորքային պատճառների ու հետևանքների մասին է նշվում Ռ. Ազիզբեկյանի հետաքրքիր ուսումնասիրության<sup>28</sup> և Է. Մինասյանի արժեքավոր մենագրության մեջ<sup>29</sup>: Վերջին տարիներին հայ մասնագետների (հիմնականում ռազմական ոլորտի) կողմից հրապարակվել են մերօրյա ՌԱՀ-ի տեսական և գործնական խնդիրներին վերաբերող, նրանում գիտության դերի մասին մի շարք հետաքրքիր հոդվածներ<sup>30</sup>:

Մենագրությունում առաջադրված հիմնախնդիրներն հետազոտվել են արխիվային փաստաթղթերի և նյութերի, տպագիր սկզբնաղբյուրների, հուշագրական, պատմագիտական և այլ գրականության ուսումնասիրության, փաստերի և նյութերի համադրման և ընդհանրացումների, պատմաքննական վերլուծությունների միջոցով:

<sup>28</sup> Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Ե., 1992:

<sup>29</sup> Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013:

<sup>30</sup> Խաչատուրով Յու., Շաղյան Պ., Գաղալյան Կ., Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները, «Հայկական բանակ», Ե., 2008, № 1, էջ 11–35, Օհանյան Ս., նշվ. աշխ., Իսախանյան Մ., Պետրոսյան Ա., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 18–24, Պետրոսյան Ա., Թովմասյան Ա., Ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալները, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 25–34, Բաղալյան Գ., ՀՀ արդյունաբերության զարգացման համատեքստում ռազմաարդյունաբերական համակարգի զարգացման հեռանկարի մասին, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 35–42, Մաթևոսյան Հ., Ռազմաարդյունաբերական համալիրը և հիմնարար գիտությունը, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 43–53:

ԽՍՀՄ ՌԱՀ-ում Խորհրդային Հայաստանի մասնակցության և դերի հիմնախնդրի շրջանակներն այնքան լայն են ու բազմաբովանդակ, որ արխիվային փաստաթղթերի և նյութերի հետևողական գաղտնագերծումների դեպքում հնարավոր կլինի կատարել նոր հետազոտություններ:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:  
ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920–1930–ԱԿԱՆ ԹԹ.)**

**1.1. Ռազմապաշտպանական արդյունաբերության և դրա  
կառավարման համակարգի ձևավորման և զարգացման  
հիմնափուլերը**

Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումով երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում որակապես նոր իրավիճակ ստեղծվեց: Սպառազինություն և ռազմամթերք արտադրելու բնագավառում ցարական Ռուսաստանն ակնհայտորեն հետ էր մնացել ինչպես արևմտաեվրոպական առաջատար երկրներից, այնպես էլ ԱՄՆ–ից: Երկրում թույլ էր զարգացած ռազմական արդյունաբերության ողնաշարը կազմող մեքենաշինությունը, նաև մետաղագործական և քիմիական արդյունաբերությունը: Կայսրության մեքենաշինության արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը 1913 թ. կազմել է երկրի ընդհանուր արտադրանքի ընդամենը 7 %-ը, իսկ Ռուսաստանի մեքենաշինության տեսակարար կշիռը համաշխարհային մեքենաշինության մեջ՝ 3,5<sup>31</sup>: Մասնագետների եզրակացմամբ՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին «Ռուսական ռազմական

<sup>31</sup> Ст'ю Розенфельд С., Клименко К., История машиностроения СССР (с первой половины 19-го в. до наших дней), М., 1961, էջ 96:

արդյունաբերության ծավալներն ակնհայտորեն բավարար չէին «մեծ» պատերազմի պահանջներն ապահովելու համար»<sup>32</sup>:

Միջազգային քաղաքական և տնտեսական մեկուսացման մեջ հայտնված խորհրդային Ռուսաստանի իշխանությունները պարտադրված էին ներքին միջոցներով հոգալ երկրի ռազմական արդյունաբերության ստեղծման և զարգացման մասին: Գործնականում դա հնարավոր էր միայն արդյունաբերության վերազինման և ռազմականացման, ռազմապաշտպանական արդյունաբերության նոր ճյուղեր ստեղծելու միջոցով: Խորհրդային իշխանություններն անմիջապես հսկողություն սահմանեցին ռազմական գործարանների նկատմամբ՝ դրանց հզորությունների հնարավոր թալանը և փոշիացումը կանխելու նպատակով: Խորհրդային իշխանության առաջին իսկ դեկրետով կազմավորվեց ՌՍԴԽՀ պաշտպանության խորհուրդը, որն արտակարգ հսկողություն էր իրականացնելու ռազմական կամ ռազմականացված գործարանների նկատմամբ: Խորհուրդն անմիջապես դիմեց գործուն միջոցների՝ ռազմական արտադրանքը կատարելագործելու և գործարանների արտադրական թողունակությունը բարձրացնելու ուղղությամբ<sup>33</sup>:

Այդ հարցում Պաշտպանության խորհուրդը սերտ և արդյունավետ համագործակցում էր Համառուսաստանյան ժողովուրդների և նրա տեղական մարմինների հետ: Վերջիններս նշանակալի դեր ունեցան խորհրդային Ռուսաստանի ռազմական արդյունաբերության կազմակերպման և վերելքն ապահովելու գործում: Խորհրդային նորաստեղծ պետության համար դա անչափ կարևոր էր, քանզի հիմնականում դրանից էր կախված խորհրդային իշխանության լինել–չլինելու հարցը Ռուսաստանում քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ներխուժման շրջանում: Ուստի պատահական չէր, որ 1918–1920 թթ. խորհրդային երկրի ամբողջ արդյունաբերությունը գործնականում աշխատում էր երկրի պաշտպանունակությունը և

<sup>32</sup> Ст'ю նույն տեղում, էջ 100:

<sup>33</sup> Ст'ю Коваленко Д., Оборонная промышленность Советской России в 1918–1920 гг., М., 1970, էջ 193:

Բանվորագյուղացիական Կարմիր բանակի (ԲԳԿԲ) ռազմական կարիքներն ապահովելու համար:

Ռազմական արտադրանքի թողարկումը շեշտակիորեն ավելացավ հատկապես 1919–1920 թթ., երբ գրեթե սպառված էին նախկին պաշարները, իսկ մեծաթիվ բանակին մատակարարելու համար պահանջվում էր հսկայական քանակությամբ սպառազինություն, ռազմամթերք և ռազմահանդերձանք:

Արդեն 1920 թ. վերջին Խորհրդային Ռուսաստանում դրվեց ռազմական արդյունաբերության կենտրոնացված ղեկավարման հիմքը, որն ընդհանուր և բնորոշիչ էր այդ տարիների Խորհրդային վարչակարգի համար: Վերջինիս կենտրոնում համակարգող մարմինն էր՝ դեռևս 1919 թ. ստեղծված Ռազմական արդյունաբերության խորհուրդը (Ռազմարդխորհուրդ)<sup>34</sup>, որի ճյուղային գլխադասային մարմինները կառավարում էին ռազմապաշտպանական արդյունաբերության առանձին ճյուղերը:

ՌՍԴԽՅ Ժողկոմխորհի 1921 թ. մարտի 17–ի որոշմամբ Ռազմարդխորհուրդը վերաենթարկվում է Ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդին (ԺՏԲԽ) և իրականացնելու էր հետևյալ հիմնական գործառույթները՝ ռազմական արդյունաբերության արտադրական կենտրոնների կազմակերպում, արտադրական կարողությունների համակենտրոնացում և դրանց հետագա զարգացում, ռազմական գործարանների միասնական կառավարում և աշխատանքների վերահսկում: ՌՍԴԽՅ ԺՏԲԽ–ի նախագահության 1921 թ. հունիսի 6–ի որոշումով ԺՏԲԽ–ի կառուցվածքում ստեղծվում է Ռազմական արդյունաբերություն գլխավոր վարչություն (Գլխռազմարդ): Խորհրդային Միության կազմավորումից հետո ԽՍՀՄ Կենտգործկոմի 1923 թ. նոյեմբերի 12–ի որոշմամբ ՌՍԴԽՅ Գլխռազմարդը վերանվանվում է ԽՍՀՄ Գլխռազմարդի: Այն իրականացնելու էր հետևյալ հիմնական գործառույթները. ռազմական

<sup>34</sup> Стів Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие. Под ред. О. Бакланова, О. Рогозина и др., М., 2013, էջ 57:

արդյունաբերության բնագավառում միասնական քաղաքականության մշակում (որը բխելու էր Խորհրդային պետության պաշտպանության պետական-կուսակցական դոկտրինից), ռազմական արդյունաբերության բոլոր ճյուղերի միասնական կառավարում և արտադրանքի պլանավորում<sup>35</sup>:

ԽՍՀՄ–ում նոր տնտեսական քաղաքականությունից (ՆԷՊ) արդյունաբերականացման (ինդուստրացման) քաղաքականությանն անցումը սկզբնական շրջանում արտահայտվեց առաջին հերթին ռազմապաշտպանական արդյունաբերության կտրուկ զարգացմամբ՝ ենթագետիկայի աննախադեպ զարգացմանը զուգընթաց: Պատճառը ոչ միայն այն էր, որ արագացված տեմպերով կառուցվում էին տարբեր ուղղությունների նոր ձեռնարկություններ, այլև նրանում, որ ռազմապաշտպանական արդյունաբերությունը համալրվում էր այն գործարաններով, որոնք վերամասնագիտացվում և քաղաքացիականից անցնում էին ռազմական արտադրության: 1920–ական թթ. վերջերից ԽՍՀՄ–ում տարածված էր նաև հանրապետական գերատեսչական ենթակայությամբ գործարանների՝ ռազմապաշտպանական արդյունաբերության միութենական գերատեսչությունների կառավարման ոլորտն անցնելու գործընթացը: Ավելացնենք, որ որպես Խորհրդային ժողտնտեսության կարևորագույն ճյուղ՝ պաշտպանական արդյունաբերությունը սերտորեն շաղկապված էր պետական-կուսակցական ղեկավարման համակարգի հետ, ուստի շատ դյուրին կարող էր ընդգրկվել Խորհրդային տնտեսության պլանային, վարչահրամայական համակարգում, դառնալ նրա «առաջամարտիկը»:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ Խորհրդային տնտեսության համակարգում անցումը վարչահրամայական կառավարման եղա-

<sup>35</sup> Стів Мухин М., Эволюция системы управления советской оборонной промышленностью в 1921–1941 годах и смена приоритетов “оборонки”, “Отечественная история”, М., 2000, № 3, էջ 3–4: Стів Іван Симонов Н., Военно-промышленный комплекс СССР в 1920–1950–е годы. Темпы экономического роста, структура, организация производства и управление, М., 1996, էջ 38:

նակի առաջինը տեղի էր ունենալու հենց ռազմապաշտպանական արդյունաբերության բնագավառում: Եվ դա տրամաբանական էր. ռազմական բարդ տեխնիկայի և սպառազինության արտադրությունը պահանջում էր տասնյակ գործարանների գործունեության կենտրոնացում և միասնական կառավարում՝ պետական-կուսակցական աջալուրջ հսկողության ներքո, երբ յուրաքանչյուր թերացում և «վնասարարություն» պատժվում էր ամենայն խստությամբ: Վարչահրամայական կառավարման համակարգն աստիճանաբար հաստատվեց նաև խորհրդային ողջ տնտեսության մեջ:

1920-ական թթ. վերջին և 1930-ական թթ. սկզբին աշխարհում միջազգային իրադրության կտրուկ սրումը, պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամով և պատերազմի առաջին օջախի ծագումով Հեռավոր Արևելքում, խորհրդային իշխանություններին ստիպեց առավել մտահոգվել երկրի պաշտպանունակության ամրապնդման և ռազմապաշտպանական արդյունաբերության զարգացման խնդիրներով: Դրանք հատուկ քննարկման առարկա դարձան ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1929 թ. հուլիսի 1-ի և 8-ի փակ նիստերում: Քննարկումների արդյունքում քաղբյուրոն 1929 թ. հուլիսի 15-ին ընդունում է «Ռազմական արդյունաբերության մասին» «խիստ գաղտնի» որոշումը<sup>36</sup>: Ի զարգացումն առանցքային այս որոշման՝ հետագա ամիսներին ընդունվեցին նոր որոշումներ ու կարգադրություններ:

Խորհրդային պետության և կուսակցական բարձրագույն ղեկավար մարմինների առանձնահատուկ աջալուրջ վերաբերմունքը ռազմական արդյունաբերության խնդիրների նկատմամբ, նրանց կողմից ձեռնարկված կտրուկ միջոցառումները շուտով տվեցին իրենց դրական արդյունքները: Խորհրդային առաջին հնգամյակի վերջին տարիները՝ 1931-1932 թթ., բեկունային կարելի է համարել ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավոր-

<sup>36</sup> Стен Политбюро ЦК РКП(б) – ВКП(б). Повестки дня заседаний, 1919–1952. Каталог, в трех томах, т. 1, 1919–1929, М., 2000, էջ 708:

ման և զարգացման գործում: Աննախադեպ ընդլայնվեցին ռազմական ծրագրերը և պատվերները, երկիրն անցում էր կատարում ռազմական արտադրանքի բազմաճյուղ մասնագիտացված համակարգի ստեղծմանը: Դա պայմանավորված էր Կարմիր բանակի արագ վերազինման հրամայականով: ԽՍՀՄ ժողկոմխորհին կից Պաշտպանության կոմիտեի կողմից (որի նախագահն էր խորհրդային առաջնորդ Ի. Ստալինը) 1931–1932 թթ. ընդունված մի շարք հիմնարար որոշումներով ռազմական արտադրանքի գերակա ուղղություններ են հռչակվում ռազմաավիացիոն արտադրությունը, տանկաշինությունը, ռազմական նավաշինությունը, հրետանային և հակաօդային պաշտպանության համակարգերի, հակաքիմիական պաշտպանության և քիմիարձակման միջոցների արտադրությունը:

Այսպիսով, ԽՍՀՄ-ում իրականացվող արդյունաբերականացման քաղաքականության հաջողությունները կարևոր խթան հանդիսացան խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության հետագա զարգացման, երկրի ռազմական անվտանգությունն ապահովելու համար: Ինչպես ճիշտ նկատում է հետազոտող Ա. Ֆիլիտովը, իր գոյությունից սկսած ԽՍՀՄ-ն «իրենից ներկայացնում էր ռազմական ճամբար, որտեղ ամեն ինչ ենթարկվում էր երկրի առավելագույն պաշտպանունակության ապահովման խնդրին»<sup>37</sup>:

ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության առջև դրված բարդ և պատասխանատու խնդիրների լուծումը պահանջում էր ոլորտի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում: Ռազմապաշտպանական արդյունաբերության ղեկավարման վերը նշված համակարգը, ենթարկվելով վարչակառավարման որոշ փոփոխությունների, ամփոփվեց ԽՍՀՄ ԺՏԲԽ-ի շրջանակներում մինչև 1932 թ. սկիզբը, երբ համակարգն արմատական վերափոփոխումների ենթարկվեց:

<sup>37</sup> Филитов А., Конец холодной войны и распад СССР: проблема закономерности и альтернативности, “Историческое пространство (Проблемы истории стран СНГ)”, М., 2011, с. 247.

1932 թ. հունվարի 5-ին ԽՍՀՄ ԺՏԲԽ-ն բաժանվեց ծանր, թեթև և անտառային արդյունաբերության ժողկոմատների: Պաշտպանական արդյունաբերության կառավարումն այսուհետ կենտրոնանալու էր ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմատի համակարգում ձևավորված Գլխավոր ռազմամոբիլիզացիոն (Գլխռազմմոբ) վարչության մեջ: Այն փաստը, որ ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ նշանակվեց կուսակցական-պետական փոռձառու գործիչ Գ. Օրջոնիկիձեն, որը մինչ այդ, 1926 թ. վերջերից, ԽՍՀՄ ԺՏԲԽ-ի նախագահն էր, վկայում է այն մասին, թե որքան էր կարևորվում ճյուղի գործունեությունը ԽՍՀՄ ղեկավարության կողմից: Ի դեպ, Օրջոնիկիձեն մնաց ժողկոմի պաշտոնում մինչև իր ողբերգական մահը՝ 1937 թ. փետրվարի 18-ը:

Եթե 1929 թ. դրությամբ խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերությունն իր մեջ ներառում էր 52 ձեռնարկություն, ապա արդեն 1932-1933 թթ. Գլխռազմմոբ վարչության մեջ կենտրոնացված էին 127 ձեռնարկություն: Դրանք ներգրավված էին արտադրության հետևյալ հիմնական ճյուղերում՝ ավիացիոն, հրետանային-զինանոցային, զինագնդացիային, փամփուշտների, արկերի և արկերի պայթուցիչների, տանկերի և զրահամեքենաների արտադրություն, ռազմաքիմիական և այլն<sup>38</sup>: Ռազմապաշտպանական ձեռնարկությունների գերակշիռ մասը տեղակայված էր ՌՍԴԽՅ տարածքում (մեծ մասը՝ Մոսկվայում և շրջանում), մի քանի ձեռնարկություն (հիմնականում ռազմաավիացիոն արտադրության)՝ Խորհրդային Ռևրախնայում:

Ռազմապաշտպանական արդյունաբերության առջև պետության կողմից դրված հսկայածավալ առաջադրանքներն իրականացնելու համար 1932 թվականից կտրուկ ավելացվեցին ոլորտում ֆինանսական ներդրումների ծավալները: Երկրի ռազմական բյուջեն արձանագրեց մինչև 120 % աննախադեպ աճ, ընդ որում՝ ներդրումների ծավալներն աճեցին հատկապես ավիացիոն և տանկա-

<sup>38</sup> Стів Мухин М., նշվ. աշխ., էջ 6-7:

շինության ոլորտներում: Միասին դրանք կազմում էին պաշտպանական արդյունաբերության մեջ բոլոր ներդրումների շուրջ մեկ երրորդը<sup>39</sup>:

Ռազմական արտադրանքի բնագավառում առաջնությունը ԽՍՀՄ-ում տրվում էր ռազմաավիացիոն արտադրությանը: Յետաքրքիր է, որ արդեն 1930-ական թթ. խորհրդային ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների շուրջ մեկ երրորդը (127-ից 41-ը) կազմում էին ավիացիոն ձեռնարկությունները, ինչը վկայում է ճյուղի նկատմամբ խորհրդային իշխանությունների հատուկ ուշադրության մասին: Ավիացիոն արտադրության, այդ թվում ինքնաթիռաշինության, ոլորտում կտրուկ զարգացման գործընթացը ԽՍՀՄ-ում սկսվել էր դեռևս 1920-ական թվականների վերջից և հաջողությամբ շարունակվեց հետագա տարիներին: Իրականացված միջոցառումների արդյունքում ավիացիոն արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը, համեմատած ռազմական այլ արտադրանքի հետ, կտրուկ աճ արձանագրեց: Ուստի պատահական չէ, որ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման «առաջին հնգամյակի չորս տարում ավիացիոն արդյունաբերությունը թողարկեց 4289 ինքնաթիռ՝ երկու անգամ ավելի, քան խորհրդային իշխանության անցած բոլոր տարիներին»: Իսկ արդեն 1936 և 1937 թթ. ԽՍՀՄ-ում արտադրվում էր այնքան ինքնաթիռ, որքան առաջին հնգամյակի տարիներին<sup>40</sup>:

1930-ական թթ. սկիզբը բեկումնային էր նաև ԽՍՀՄ տանկաշինության և ռազմական նավաշինության ոլորտներում: Եթե ավիացիոն արդյունաբերության ճյուղը Ռուսաստանում առաջին քայլերը սկսել էր կատարել Առաջին աշխարհամարտի նախօրյակին, իսկ նավաշինությունը գոյություն ուներ շատ ավելի վաղ ժամանակներից, ապա տանկաշինությունը լիովին նոր ճյուղ էր: ԽՍՀՄ-ը

<sup>39</sup> Стів Davies R., Crisis and Progress in the Soviet Economy. 1931-1933 (The industrialisation of Soviet Russia), London, 1996, էջ 169, 312:

<sup>40</sup> Шумихин В., Советская военная авиация, 1917-1941, М., 1986, с. 155, 157.

սեփական տանկեր սկսեց արտադրել միայն 1931 թվականից, այն էլ սահմանափակ քանակով:

Երկրում ծավալված «Տանկային մեծ ծրագիրը» թեև իսկույն հայտնվեց խորհրդային ղեկավարության, այդ թվում Ի. Ստալինի անմիջական ուշադրության կենտրոնում, այդուհանդերձ՝ խիստ դանդաղում էր: Պատճառներից հիմնականը՝ զրահանյութի և արդիական սարքավորումների, ինչպես նաև ինժեներատեխնիկական որակյալ կադրերի սահմանափակ լինելն էր: Տանկաշինության ոլորտում դժվարությունները ԽՍՀՄ-ում հաղթահարվեցին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ երկիրն իրացրեց տարբեր մակնիշների ծանր տանկերի արտադրությունը: Երկրորդ հնգամյակի տարիներին՝ 1933–1937 թթ., բուռն զարգացում ապրեց նաև ռազմական նավաշինությունը, հատկապես՝ սուզանավաշինությունը: Այդ տարիներին ԽՍՀՄ-ում արտադրված 345 ռազմական նավերից 137-ը սուզանավեր էին<sup>41</sup>:

Նշված ժամանակաշրջանում խորհրդային ռազմական արդյունաբերության զարգացման գերակա ուղղություններից էին նաև հրետանային զինատեսակների, հակաօդային պաշտպանության համակարգերի ստեղծումը, ռազմամթերքի արտադրության և ռազմաքիմիական արդյունաբերությունը: Եթե առաջին հնգամյակում ռազմական արդյունաբերության նշված ճյուղերում աշխատանքներն անբավարար էին և նախատեսված ծավալները հիմնականում թերակատարվում էին, ապա արդեն երկրորդ հնգամյակում դրվեցին զարգացման ամուր հիմքերը:

1935 թ. վերջերից ԽՍՀՄ «պաշտպանական» ոլորտի կառավարման վարչական համակարգում դարձյալ արմատական փոփոխություններ արձանագրվեցին: Դա պայմանավորված էր խորհրդային պետական և կուսակցական բարձրագույն ղեկավար շրջաններում տեղի ունեցող խմբակային պայքարով, ինչպես նաև երկ-

<sup>41</sup> Стів Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие, էջ 468:

րում ծավալվող քաղաքական բռնություններով: Մյուս կողմից՝ 1930-ական թթ. երկրորդ կեսից վտանգավոր լարվածություն էր առաջացել միջազգային հարաբերություններում՝ կապված ֆաշիզմի տարածման և գերմանական բլոկի երկրների (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) զավթողական ծրագրերի աշխուժացման հետ:

Չերթական «ռազմական տագնապի» պայմաններում հրատապ էր դառնում սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի, քիմպաշտպանության և քիմհարձակման միջոցների, բանակային կապի, ռազմահանդերձանքի արտադրանքի չափերի կտրուկ ավելացումը, մանավանդ, որ Կարմիր բանակի անձնակազմի թվաքանակը գրեթե կրկնապատկվել էր՝ 1933 թ. 885 հազարից 1937 թ. հասնելով 1,5 միլիոնի<sup>42</sup>:

Շուտով լուծարվում է ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողովուհատի ռազմամոբիլիզացիոն գլխավոր վարչությունը, իսկ նրա ենթակայության տակ գտնվող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները խմբավորվում են երկու նորաստեղծ գերատեսչությունների՝ Ռազմական արդյունաբերության գլխավոր վարչության և Ռազմամթերքների գլխավոր վարչության շրջանակներում: Իսկ արդեն ԽՍՀՄ Կենտգործկոմի 1936 թ. դեկտեմբերի 8-ի որոշմամբ երկրի ռազմապաշտպանական ողջ արդյունաբերությունը կենտրոնացվում է ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության առանձին ժողովուհատի<sup>43</sup> համակարգում: Սա, մեր կարծիքով, շրջադարձային քայլ էր ԽՍՀՄ տնտեսության «պաշտպանական» համակարգի հետագա զարգացման համար՝ ռազմապաշտպանական արդյունաբերությունն աստիճանաբար և հաստատուն կերպով

<sup>42</sup> Стів Сямонов Н., նշվ. աշխ., էջ 91:

<sup>43</sup> ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողովուհատի առաջին տեղակալի պաշտոնը 1936–1939 թթ. վարել է հայազգի խորհրդային պետական գործիչ, ծնունդով շուշեցի, Իվան (Յովհաննես) Ֆյոդորի (Թևադոսի) Թևոսյանը (տե՛ս Արշումանյան Ա., Иван Тевосян, М., 1983, էջ 17):

ստանձնում էր խորհրդային Միության ժողտնտեսության անվիճելի «լոկոմոտիվի» դերը:

Սակայն ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում խորհրդային երկրում, այդ թվում «պաշտպանական» ոլորտում: Այս առումով հատկանշական է 1936 թ. ապրիլի 8-ին Ի. Ստալինի կողմից ոլորտի պատասխանատու Գ. Օրջոնիկիձեին տրված հանձնարարականը. «Ռազմական արդյունաբերությունում գործը դեռևս դժվարությամբ է առաջ գնում: Հարկավոր է գազանի համառությամբ զարկ տալ ավիացիայի, հրետանու (զարգացմանը – Կ.Խ), արտադրանքի որակին (որակին!)»<sup>44</sup>:

Բացի այն, որ խորհրդային ողջ տնտեսությունը 1936–1937 թթ. հայտնվել էր ճգնաժամում (չէին կատարվում պետական պատվերները նույնիսկ գերակա նշանակություն ունեցող ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում, մեծ չափերի էր հասնում վնասարարությունը, արտադրանքի խոտանը և այլն), 1937 թ. երկրում ծավալված քաղաքական բռնաճնշումների զոհ դարձան բազմաթիվ որակյալ մասնագետներ և կադրեր: Բացառություն կազմեց թերևս ավիացիոն արդյունաբերության ոլորտը, որտեղ, ինչպես վերը նշվեց, արձանագրվեցին լուրջ հաջողություններ:

ԽՍՀՄ տնտեսությունում ստեղծված ծանր դրությունը, ինչպես նաև միջազգային ասպարեզում լարվածության կտրուկ աճը, խորհրդային ղեկավարությանը ստիպում է դիմել առավել կտրուկ միջոցների՝ «պաշտպանական» ոլորտում կուսակցական–պետական մարմինների վերահսկողությունն ուժեղացնելու համար: Այդ նպատակով ԽՍՀՄ ժողկոմխորհի Պաշտպանության կոմիտեին կից 1938 թ. հունվարին կազմավորվում է Ռազմաարդյունաբերական հանձնաժողով, որի վարույթում էին կենտրոնանալու այն գործառույթները, որոնք բխում էին երկրի տնտեսությունը և արդյունաբերությունը հնարավոր պատերազմին նախապատրաստելու հրա-

<sup>44</sup> Стів Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), М., 2006, էջ 138:

մայականից<sup>45</sup>: Հանձնաժողովի գլխավոր խնդիրն էր՝ մոբիլիզացնել պաշտպանական արդյունաբերության բոլոր հզորություններն ու պաշարները՝ սպառազինության արտադրման և Կարմիր բանակի ու Ռազմածովային ուժերի մատակարարման առաջադրանքների (որոնք նախանշում էր Պաշտպանության կոմիտեն) կատարումն ապահովելու համար: Ռազմաարդյունաբերական հանձնաժողովը ոլորտում իրականացնելու էր նաև վերահսկողական և աշխատանքների համակարգման գործառույթներ՝ «բաշխելու էր մոբիլիզացիոն պլանի»<sup>46</sup> առաջադրանքները Միության և միութենական հանրապետությունների ժողկոմատների միջև»<sup>47</sup>: Կոմիտեի գործունեությունն ընթանում էր գաղտնիության խստացված ռեժիմի պայմաններում: Հարկ է նշել, որ ռազմապաշտպանական համակարգի ձեռնարկություններում գաղտնիության ռեժիմը խստացվել էր դեռևս 1930-ական թթ. սկզբի «ռազմական տագնապի» տարիներին և այդպիսին մնաց խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում:

Պաշտպանական արդյունաբերության միասնական ժողկոմատը գոյատևեց մինչև 1939 թ. սկիզբը, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունվարի 11-ի որոշումով այն բաժանվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության, ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության<sup>48</sup>, ԽՍՀՄ ռազմամթերքների և ԽՍՀՄ սպառա-

<sup>45</sup> Стів История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, Советская экономика накануне и в период Великой Отечественной войны. 1938–1945 гг., М., 1978, էջ 97:

<sup>46</sup> Մոբիլիզացիոն պլան (ծրագիր, հայտ)՝ ռազմական արտադրանքի և պատվերների հատուկ պլան, որը կազմվում է հնարավոր պատերազմին պատրաստ լինելու նպատակով: Մոբիլիզացիոն պլանով նախատեսված առաջադրանքների կատարումը հիմնականում դրվում էր ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների վրա:

<sup>47</sup> Стів Быстрова И., նշվ. աշխ., էջ 147–148: Стів նաև՝ Симонов Н., նշվ. աշխ., էջ 41:

<sup>48</sup> Նավաշինության արդյունաբերության ժողկոմի պաշտոնում նշանակվեց Ի. Թևոյանը և պաշտոնավարեց մինչև 1940 թ. մարտի 17-ը, երբ նշանակվեց ԽՍՀՄ սև մետաղագործության ժողկոմ (1940–1946 թթ.):

զինության առանձին ժողկոմատներ<sup>49</sup>։ Դրանց կառուցվածքը հաստատվեց «Պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի տրոհման մասին» ԽՍՀՄ ժողկոմխորհի 1939 թ. հունվարի 21-ի որոշումով։ Համաձայն դրա՝ յուրաքանչյուր ժողկոմատի կազմում ձևավորվեցին մի քանի գլխավոր վարչություններ, որոնք ղեկավարելու էին ռազմական առանձին արտադրությունները՝ հրետանային, սարքաշինության, փամփուշտների, ավիառումբերի և արկերի, ականների և նռնակների, պայթուցիչների, պարկուճների և այլն։ Ինչ վերաբերում է տանկաշինությանը և ռազմաքիմիական արտադրությանը, ապա ռազմապաշտպանական արդյունաբերության այդ ոլորտների գործարաններն անցան նույն թվականին ստեղծված ԽՍՀՄ միջին մեքենաշինության<sup>50</sup> և ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության ժողկոմատների տնօրինությանը։ Ընդ որում՝ ռազմապաշտպանական ոլորտի գործարանները միավորվեցին ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմատի համակարգում ստեղծված հատուկ «գլավկոմ»՝ «Գլավսպեցմաշում»<sup>51</sup>։

Հանրագումարի բերելով խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության, դրա կառավարման համակարգի ձևավորման և զարգացման գործընթացը ԽՍՀՄ-ում 1920–1930-ական թթ.՝ կարելի է նշել, որ այդ տարիների միջազգային համեմատաբար խաղաղ պայմաններում ԽՍՀՄ-ը վճռական քայլեր ձեռնարկեց ռազմապաշտպանական արդյունաբերության զարգացման, դրա կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ։ Արդեն 1930-ական թթ. վերջին ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերությունը կլանում էր երկրի տարեկան համախառն եկամուտի մոտ 30 %-ը։ Ընդհանուր առմամբ՝ եթե 1938–1940 թթ.

<sup>49</sup> Стів История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, էջ 97:

<sup>50</sup> ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմի պաշտոնը 1941–1946 թթ. վարել է հայազգի խորհրդային պետական գործիչ, ծնունդով շուլավերցի Ստեփան Հակոբի Ակոպովը։ 1939–1941 թթ. նա զբաղեցրել է ԽՍՀՄ ծանր մեքենաշինության ժողկոմի, ապա՝ Միջին մեքենաշինության ժողկոմի տեղակալի, առաջին տեղակալի պաշտոնները։

<sup>51</sup> Стів Мухин М., նշվ. աշխ., էջ 11–13:

ԽՍՀՄ ողջ արդյունաբերության արտադրանքի ծավալն աճեց 45 %-ով, ապա ռազմական արտադրանքի ծավալն ավելացավ 2,8 անգամ<sup>52</sup>։

Այսպիսով, ինչպես իրավացիորեն եզրահանգում են խորհրդային մասնագետներ Ս. Ռոզենֆելդն ու Կ. Կլիմենկոն, «նախապատերազմյան շրջանում ԽՍՀՄ-ում ստեղծվեց ռազմական արդյունաբերություն, որն ուներ ավիացիոն, տանկային, նավաշինական, սպառազինություն և ռազմամթերք արտադրող մասնագիտացված գործարաններ»<sup>53</sup>։

1920–1930-ական թթ. խորհրդային տնտեսության նշանակալի ձեռքբերումներն ամուր հենարան հանդիսացան ԽՍՀՄ պաշտպանականության ամրապնդման, բավականաչափ սպառազինված բանակ ստեղծելու համար։ Խորհրդային իշխանության ընդամենը երկու տասնամյակների ընթացքում ռազմապաշտպանական արդյունաբերությունը վերածվեց ԽՍՀՄ տնտեսության արդյունաբերական խոշորագույն ճյուղի, սպառազինություն ներմուծող երկրից ԽՍՀՄ-ը դարձավ սպառազինության մատակարար Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրների համար (Չեխոսլովակիա, Լեհաստան, Ֆինլանդիա, Իսպանիա, Չինաստան, Թուրքիա և այլն)։ Մատակարարումները դադարեցվեցին միայն երկրորդ աշխարհամարտի սկզբին, երբ առավել հրատապ էր սեփական կուտակումներն ավելացնելու խնդիրը։

Կարելի է փաստել, որ երկրորդ աշխարհամարտի սկզբին և Հայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ-ը հիմնականում լուծել էր երկրի ռազմապաշտպանական մասնագիտացված արդյունաբերության ստեղծման կարևոր հիմնախնդիրը։

<sup>52</sup> Стів История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, էջ 55:

<sup>53</sup> Розенфельд С., Клименко К., նշվ. աշխ., էջ 364:

## 1.2. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացումը որպես ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման նախադրյալ

Հայաստանի առաջին հանրապետությունից Խորհրդային Հայաստանը ժառանգեց ամբողջությամբ քայքայված և հետամնաց տնտեսություն: Խորհրդայնացման պահին երկիրը գրեթե չունեւ արդյունաբերական հզորություններ, իսկ եղածն էլ (պղնձածուլական 1–2 գործարան և զինուկոնյակի կոմբինատ) հումքի ու ֆինանսական ներդրումների բացակայության պայմաններում փլուզման եզրին էր: Նախապատերազմյան 1913 թ. համեմատությամբ 1920 թ. վերջին էլեկտրաէներգիայի արտադրությունը հանրապետությունում նվազել էր՝ 3, արդյունաբերության արտադրանքը՝ շուրջ 12 անգամ<sup>54</sup>: Ծայրահեղ հետամնաց վիճակում էր արդյունաբերության հիմքը կազմող մետաղամշակող ճյուղը: Գոյություն ունեցող մեխանիկական արհեստանոցները և տնայնագործական դարբնոցները հիմնականում ծառայում էին բնակչության կենցաղային պահանջներին: Երևանում նման տիպի միակ ձեռնարկությունը՝ հայտնի գործարարներ Երվանդ և Սիսակ Տեր–Ավետիքով (Տեր–Ավետիքյան) եղբայրների կողմից 1905 թ. կառուցված մեխանիկական արհեստանոցն էր, որը շուտով վերածվեց մեխանիկական գործարանի: Այն ուներ փականագործական, մեխանիկական, կաթսայագործական, թուջածուլման, դարբնոցային և փայտամշակման արտադրամասեր, որտեղ աշխատում էր 60–65 մարդ<sup>55</sup>: Գործարանը զուրկ էր քիչ թե շատ արդիական սարքավորումներից, այստեղ արտադրվում և վերանորոգվում էին գյուղատնտեսական գործիքներ, ջեռուցման փոքր կաթսաներ, ջրամղիչներ, հնոցներ և այլն<sup>56</sup>:

<sup>54</sup> Տե՛ս Социалистическое строительство Армянской ССР (1920–1940), Е., 1940, էջ 23, 24, 47:

<sup>55</sup> Տե՛ս История ереванского станкостроительного завода имени Ф. Э. Держинского, Е., 1967, էջ 7:

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում:

Մեխանիկական–փականագործական փոքր արհեստանոց գործում էր նաև Ալեքսանդրապոլում (Լենինական, այժմ՝ Գյումրի), այն պատկանում էր գործարար Վ. Հեքիմյանին: Ինչ վերաբերում է ռազմական արտադրանքի ոլորտին, ապա Հայաստանի առաջին հանրապետության տարիներին այն կրել է սիմվոլիկ բնույթ: Ալեքսանդրապոլում գործող մեխանիկական հրետանային արհեստանոցի բազայի վրա հիմնվել և մի կարծ ժամանակահատված գործել է, այսպես կոչված, «Փամփուշտի ազգային գործարանը»: Փամփուշտի մեխանիկական գործարան գործել է նաև Քանաքեռում: Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարի 1920 թ. սեպտեմբերի 15–ի թիվ 114 հրամանով Քանաքեռում գործող զինագնդացիային արհեստանոցը վերակազմավորվել է Քանաքեռի հրետանային մեխանիկական արհեստանոցի<sup>57</sup>: Ալեքսանդրապոլի և Քանաքեռի փամփուշտի գործարանների և արհեստանոցների հզորությունները ժամանակի ընթացքում ավելացվել են Բաթումից ներմուծված մեքենայական շարժիչների և «նոր տիպի գործասեղանների շնորհիվ»: Ձեռնարկություններում 1920 թ. մայիսի 1–ից մինչև հոկտեմբերի 20–ն ընկած ժամանակահատվածում պատրաստվել և հարմարեցվել է 788 հազար փամփուշտ, կատարվել է նաև զենք ու զինամթերքի մանր վերանորոգում<sup>58</sup>:

Հանրապետությունում որոշ ժամանակ գործել է էլեկտրատեխնիկական լաբորատորիայով ռադիո–հեռագրակապի արհեստանոց, որը սպասարկել է հայկական բանակի ռադիո–հեռագրակապի դիվիզիոնը: Այստեղ վերանորոգվել են ռադիոընդունիչներ և հաղորդիչներ: Արհեստանոցին կից բացվել է հենակետային դպրոց՝ համապատասխան կադրեր պատրաստելու նպատակով<sup>59</sup>:

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացման պահին հանրապետությունում, փաստորեն, գոյություն չունեին արդյունաբերական

<sup>57</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184 շրջ.:

<sup>58</sup> Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920), Ե., 1996, էջ 52–53: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 185 շրջ.:

<sup>59</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 51 շրջ.:

քիչ թե շատ խոշոր գործարաններ ու ձեռնարկություններ, գրեթե բացակայում էր գործարանային-բանվորական կյանքը:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո նոր իշխանությունները քաջ գիտակցում էին, որ երկրի տնտեսության վերականգնումը և հետագա զարգացումն անբողջությամբ կախված է լինելու խորհրդային Ռուսաստանի կողմից տրամադրվելիք օգնությունից, դա էր դիտվում որպես Հայաստանի խորհրդային հանրապետության կայացման և գոյության միակ երաշխիքը: Եթե 1921 թ. խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնությունը գրեթե ամբողջությամբ հատկացվում էր բնակչության սպառողական պահանջները բավարարելու, սովի ճիրաններում հայտնված ժողովրդին կերակրելու համար, ապա արդեն 1922 թ. կեսերից, երբ որոշ չափով վերակենդանացավ գյուղատնտեսությունը, հաղթահարվում էր սովը, Ռուսաստանի օգնությունն ուղղվեց Հայաստանի քայքայված արդյունաբերության վերականգնմանը, նոր արտադրամասերի կառուցմանը: Վերջինս մեծ նշանակություն էր ունենալու երկրի տնտեսության հետագա անկումը կասեցնելու և առաջընթացն ապահովելու համար<sup>60</sup>:

Երևանի մեխանիկական գործարանը վերականգնելու և վերակառուցելու նպատակով Ռուսաստանից շուտով ստացվեց 12 վագոն մեքենաներ ու այլ սարքավորումներ, 30-ից ավելի հաստոցներ, մեկ ծուլարան<sup>61</sup>: 1924 թ. Լենինգրադի «Պրոմմետ» գործարանի բանվորները մեխանիկական գործարանին նվիրեցին նոր սարքավորումներ և 32 մետաղահատ հաստոց<sup>62</sup>: Վերազինվելով նոր տեխնիկայով, մեխանիկական արհեստանոցը վերածվեց մեխանիկական գործարանի: Վերջինիս հիմքի վրա էլ շուտով Երևանում կառուցվեց Ֆ. Է. Չերժինսկու անվան մեքենաշինական նոր գոր-

<sup>60</sup> Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, էջ 218-219:

<sup>61</sup> Տե՛ս Վարդապետյան Ա., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920-1925 թթ., Ե., 1959, էջ 118:

<sup>62</sup> Տե՛ս История севанского станкостроительного завода имени Ф. Э. Дзержинского, էջ 15:

ծարանը: Արդեն 1930-ական թթ. սկզբին գործարանն այնքան էր հզորացել, որ այնտեղ 1934 թ. պատրաստվեց 150 տեղանոց «Ա. Ի. Միկոյան» ջերմանավը, որը նավագնացության հանձնվեց Սևանում<sup>63</sup>: ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Չերժինսկու անվան գործարանը Հայրենական պատերազմի սկզբից և եթ դասվեց ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների շարքում և սկսեց կատարել ռազմական արտադրանքի պատվերներ:

Տնտեսության քիչ թե շատ վերականգնման գործընթացը ԽՍՀՄ-ում ավարտված համարվեց 1925 թ. վերջին, երբ դեկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը «որդեգրեց երկրի ինդուստրացման, արտադրության միջոցների արտադրման զարգացման ուղղությունը»<sup>64</sup>: Առաջնային համարվեց ծանր արդյունաբերության գերակա զարգացումը, ինչը հիմնավորվում էր, ինչպես արդեն նշել ենք, ԽՍՀՄ պաշտպանունակության ամրապնդման և ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման ու զարգացման հրատապ անհրաժեշտությամբ:

Անդրդաշնության հանրապետությունների, այդ թվում Խորհրդային Հայաստանի, արդյունաբերականացման խնդիրները նախանշվեցին Թիֆլիսում 1926 թ. մայիսին կայացած կուսակցական խորհրդակցությունում և Անդրերկրկոմի պլենումում: Հայաստանում գտնում էին, որ երկիրը կարող է մասնակից դառնալ ԽՍՀՄ արդյունաբերականացման խնդրի լուծմանը՝ զարգացնելով սեփական հիդրոէներգետիկական, օգտակար հանածոների արտադրությունը և դրանց արդյունաբերական մշակումը<sup>65</sup>: Սակայն Հայաստանի արդյունաբերականացման բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ երկիրը, ինչպես նշվեց, գրեթե չունեց ֆաբրիկա-գործարանային արդյունաբերություն: Ուստի, եթե ԽՍՀՄ մեծ մա-

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26: Տե՛ս նաև՝ Հայաստանի ժողտնխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան (կազմող՝ Է. Չոլախյան-Գասպարյան), Ե., 2012, էջ 356-359:

<sup>64</sup> Տե՛ս ՍՄԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հ. 3 (1922-1925), Ե., 1987, էջ 565:

<sup>65</sup> Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 287:

սում արդյունաբերականացումը սկսվեց ծանր արդյունաբերությունից, ապա Հայաստանում՝ թեթև: Դա էր նաև պատճառը, որ ծանր արդյունաբերության զարգացումը Հայաստանում, ի տարբերություն խորհրդային որոշ հանրապետությունների, մինչպատերազմյան տարիներին խիստ դանդաղեց: Հանրապետությունում հիմնականում տեղի էր ունենում արդյունաբերական ձեռնարկությունների վերանորոգման, վերակառուցման կամ հիմնադրման գործընթացը: Սկզբնական շրջանում դրանում մեծ էր ԽՍՀՄ արդյունաբերական զարգացած շրջանների կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տնտեսական օգնության դերը:

Խորհրդային Հայաստանի տնտեսության տեխնիկական վերազինման գործում վճռական նշանակություն ուներ հիդրոէներգետիկան: Ֆինանսական մեծ չափերի հասնող միութենական միջոցների շնորհիվ 1920–1930–ական թթ. կառուցվեցին և գործարկվեցին Երևանի ու Լենինականի, Չորագետի և Քանաքեռի գերհզոր հիդրոէլեկտրակայանները, շահագործման հանձնվեցին նաև փոքր կայաններ (Մեղրիում, Սիսիանում և այլն): Արդեն 1930–ական թթ. վերջերին Հայաստանում գործում էր 51 կայան, նախախորհրդային շրջանի համեմատ հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել էր շուրջ 67 անգամ:

Էներգետիկայի զարգացումը նպաստավոր նախադրյալներ ստեղծեց հանրապետության տնտեսության համալիր զարգացման համար: Այն խթանեց լեռնահանքային, մասնավորապես պղնձարդյունաբերությունը և, հատկապես, քիմիական արդյունաբերությունը: Վերջինիս նորակառույցներից էին 1927 թ. գործարկված Երևանի կարբիդի 1–ին գործարանը, Դարաքիլիսայի (Կիրովական, այժմ՝ Վանաձոր) քիմիական գործարանը՝ կարբիդ–կալցիումի ու ցիանամիդի արտադրամասերով, որի կառուցումը սկսվել էր 1929 թ.: Գործարանի շինարարության ընթացքն արագացնելու նպատակով Միութենական մարմինների որոշումով 1932 թ. այն մտցվեց ԽՍՀՄ հարվածային շինարարության կառույցների ցանկ: Գործարանը շահագործման հանձնվեց 1933 թ., 1934 թ. գործարկվեցին

նոր հզորություններ: Ինչպես նշվում է Հայոց պատմության ակադեմիական նոր հատորում. «Մասնավորապես միութենական նշանակություն ունեցող կարբիդի արտադրության ընդլայնումը հնարավորություն էր տալիս կազմակերպելու բազմաթիվ նոր արտադրություններ», այդ թվում ռազմապաշտպանական նշանակության<sup>66</sup>:

ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության առաջատար ձեռնարկություններից էր դառնալու միութենական կառավարության 1933 թ. մայիսի 11–ի թիվ 931 որոշմամբ Երևանի մերձակայքում կառուցվելիք սինթետիկ կաուչուկի (ՍԿ) գործարանը: Որոշման ընդունման գործում մեծ էր ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ Գ. Օրջոնիկիձեի դերը: Աշխատաքները թույլատրվում էր ֆինանսավորել նրա ղեկավարած ժողկոմատի միջոցներից, 20 մլն. ռուբլու չափով: Կառավարության որոշումը ստորագրել էր ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Վ. Մոլոտովը (Սկրյաբին)<sup>67</sup>:

Ի կատարումն որոշման՝ ՀՍԽ՜՜ ժողկոմխորհը 1933 թ. հունիսի 7–ի և հունիսի 19–ի նիստերում լսում է գործարանը կառուցելու մասին կառավարության նախագահ Սահակ Տեր–Գաբրիելյանի զեկուցումը: Շինարարությունը ժամանակին ավարտելու և ՍԿ «Սովկրենի» գործարկումը հաջողությամբ իրականացնելու համար ընդունվեցին միջոցառումների համալիր ծրագրեր: Գործարանի կառուցման և շահագործման հանձնելու ամբողջ ընթացքը գտնվում էր ինչպես ՀԿ(Բ)Կ Կենտկոմի և ՀՍԽ՜՜ կառավարության, այնպես էլ ԽՍՀՄ ղեկավարության աջալուրջ հսկողության ներքո<sup>68</sup>:

Տարիների ընթացքում ՍԿ «Սովկրենը» դարձավ Հայաստանում ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտի առաջատարներից մեկը: Երկրում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը սկզբունքային նշանակություն ուներ

<sup>66</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Ե., 2010, էջ 459:

<sup>67</sup> Տե՛ս Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ. 617, ց. 1, գ. 6576, ք. 1:

<sup>68</sup> Տե՛ս Գևորգյան Ռ., Մեծ քիմիայի «առեղծվածը», Ե., 2010, էջ 41–44:

ԽՍՀՄ-ի համար: Ռազմական արտադրանքի համար խիստ կարևոր այդ հումքը վերջինս ստիպված էր թանկ գնով ներմուծել արտասահմանից: Ուստի Հայաստանում արհեստական կաուչուկի արտադրության կազմակերպումը միտված էր մոտ ապագայում վերացնելու արտասահմանից ԽՍՀՄ-ի կախվածությունը: Նշենք, որ քլորոպրենային կաուչուկի առաջին արտադրանքը ՍԿ «Սովպրեն» գործարանը թողարկեց 1940 թ. մարտից:

Ինչպես նշվում է Հայոց պատմության ակադեմիական նոր հատորում. «Օանր արդյունաբերության ճյուղերից Հայաստանում մեծ ուշադրություն էր նվիրվում նաև լեռնահանքային (պղնձի) արդյունաբերության զարգացմանը, մի բնագավառ, որով, ինչպես նշել է Ա. Խանջյանը ԴԿ(Բ)Կ 9-րդ համագումարում (1934 թ.), Հայաստանը մասնակից էր դառնում ԽՍՀՄ էլեկտրաֆիկացիայի, ավտոմոբիլային, տրակտորային, ավիացիոն, կապի արդյունաբերության զարգացման, երկրի ռազմական պաշտպանության գործին (1933 թ. հայկական պղինձը կազմում էր ԽՍՀՄ պղնձի արտադրության 10 %-ը)»<sup>69</sup>:

1930-ական թթ. վերջին տարիներին Հայաստանում զարգացման բարձր տեմպերով, այդուհանդերձ, աչքի ընկան մեքենաշինությունն ու մետաղամշակումը: Արմատապես փոխվեցին մետաղամշակման արդյունաբերության տեխնիկական բազան, արտադրության ծավալը և կառուցվածքը: Եթե 1940 թ. արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալը 1913 թ. համեմատությամբ աճել էր 8,7 անգամ, ապա մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքն ավելացավ 15 անգամ<sup>70</sup>:

Այսպիսով, 1920-1930-ական թթ. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության աննախադեպ զարգացման տարիներ էին, երբ կառուցվեցին և շահագործման հանձնվեցին նորագույն սար-

<sup>69</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), էջ 460:

<sup>70</sup> Տե՛ս Խաչատրյան Գ., Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), Ե., 2005, էջ 40:

քավորումներով համալրված արդյունաբերական տասնյակ ձեռնարկություններ: Առաջին հնգամյակում ծավալված արդյունաբերության տեխնիկական վերազինումը շարունակվեց նաև երկրորդ հնգամյակում (1933-1937 թթ.), և եթե առաջին հնգամյակում Հայաստանում կառուցվեց ու շահագործման հանձնվեց արդյունաբերական 18 ձեռնարկություն, ապա երկրորդում՝ 26<sup>71</sup>: Դրանց մի մասն ուներ միութենական նշանակություն:

Խորհրդային Հայաստանում զարգացած արդյունաբերության ստեղծմանն իր նպաստն էր բերում նաև հանրապետության գիտությունը, մասնավորապես 1935 թ. ստեղծված ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը (Արմֆան): Նրա կազմում գործող գիտահետազոտական մի քանի ինստիտուտները, հատկապես երկրաբանության և քիմիական, լուրջ հետազոտություններ ծավալեցին երկրի բնական պաշարների հայտնաբերման և արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ: Հայ երկրաբանների կողմից հայտնաբերվեցին ռազմավարական կարևոր հումքի՝ պղնձի, մագնիսիտի, հանքանյութի, հազվագյուտ գունավոր այլ մետաղների նոր հանքավայրեր: Կատարվեցին երկրաբանական-աշխարհագրական հատուկ աշխատանքներ ու գիտական ուսումնասիրություններ<sup>72</sup>: Խորհրդային Հայաստանի գիտությունը, որն աննախադեպ տեմպերով զարգանում էր ինչպես հանրապետության ակադեմիական, այնպես էլ բուհական միջավայրում, իր ժանրակչիչ և որոշիչ մասնակցությունն ունեցավ երկրի ռազմաարդյունաբերության մեջ Խորհրդային ողջ ժամանակաշրջանում:

Արդեն 1930-ական թվականների վերջին Խորհրդային Հայաստանում առկա էր զարգացած բազմաճյուղ արդյունաբերություն, ինչը կենտրոնական իշխանություններին հնարավորություն տվեց

<sup>71</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), էջ 458:

<sup>72</sup> Տե՛ս Гарибджанян С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941-1945), Е., 2007, էջ 11:

Հայրենական պատերազմի սկզբին Հայաստանն ընդգրկել էՍՍՀՄ-ում ձևավորվող ռազմաարդյունաբերական համալիրում:

Մինչև 1930-ական թթ. սկիզբը Հայաստանը ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ չէր կատարում և, փաստորեն, ընդգրկված չէր էՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության համակարգում: Անդրդաշնությունում էՍՀՄ ժՏԲԽ ռազմապաշտպանական հարցերի գծով լիազոր-ներկայացուցչի հարցմանը ՀՍԽՉ ժողտնտխորհից 1926 թ. փետրվարի 5-ի գրությամբ տեղեկացնում էին, որ երկրի տնտեսությունում ռազմապաշտպանական նշանակության կարողություններ չկան<sup>73</sup>: Հետաքրքիր է, որ 1926 թ. առաջին կեսի դրությամբ տնտեսությունում ռազմապաշտպանական նշանակության կարողություններ չուներ նաև Խորհրդային Վրաստանը: Այդ մասին էՍՀՄ ժՏԲԽ ռազմապաշտպանական հարցերի գծով լիազոր-ներկայացուցչի հարցմանը 1926 թ. մայիսի 20-ին հայտնում էին Վրաստանի ժողտնտխորհից<sup>74</sup>: Ինչ վերաբերում է Խորհրդային Ադրբեջանին, ապա վերջինս ներառված էր էՍՀՄ ռազմապաշտպանական արտադրության համակարգում իր նավթարդյունաբերական համալիրի կարողությունների միջոցով:

Միայն 1930-ական թթ. սկզբից Խորհրդային Հայաստանը սկսեց որոշակի ներգրավվածություն ունենալ միութենական ռազմապաշտպանական արտադրության մեջ: Անդրդաշնությունում էՍՀՄ ժՏԲԽ ռազմապաշտպանական հարցերի գծով լիազոր-ներկայացուցչի հարցմանը ՀՍԽՉ ժողտնտխորհից 1933 թ. մայիսի 16-ի գրությամբ տեղեկացնում էին, որ հանրապետությունը ռազմական արտադրանքի հատուկ պատվերներ թեև չի ստացել, սակայն Երևանի, Լենինականի և Ղարաքիլիսայի ձեռնարկություններ-

<sup>73</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 253, ց. 2, գ. 28, ք. 5:

<sup>74</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 11:

ում կազմակերպված է զինվորական համազգեստի և սպիտակեղենի արտադրությունը<sup>75</sup>:

Հետաքրքիր փաստեր է պարունակում ՀՍԽՉ տնտխորհրդի նախագահ Ա. Երզնկյանի և Հատուկ սեկտորի (տնօրինում էր ռազմապաշտպանական միջոցառումների հետ կապված գործառույթները) պետ Անուշինի ստորագրություններով 1933 թ. սեպտեմբերի 11-ի գրությունը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը, պատճենը՝ Պետպլանին և Կարմիր բանակի շտաբի համամիութենական տնտեսական մարմնին: Նրանում նշված է, որ ձեռնամուխ լինելով հանրապետության 1934 թ. արտադրական պլանի հսկիչ թվերի մշակմանը, Հայտնտխորհը հաստատում է, որ դրանք բավականաչափ գերազանցում են 1933 թ. հսկիչ թվերը, այդ թվում՝ պաշտպանական և նեղպաշտպանական նշանակության արտադրության գծով: Գրությունում նշվում է, որ ոլորտի պատվերների կատարմանը ներգրավված են հանրապետության մինչև 20 արտել և, որ հնարավոր պատերազմի տարվա մոբիլիզացիոն պլանի համաձայն՝ նրանց տրված են համապատասխան հանձնարարականներ: Դրանք կատարելու համար, – շարունակում են փաստաթղթի հեղինակները, – անհրաժեշտ հումքի հայտերը թեև ներկայացված են, և դրանց մի մասը ընդունվել է, սակայն բանվորական ուժի բացակայության պատճառով ստիպված կլինենք 1934 թ. հրաժարվելու հաստատված մոբառաջադրանքներից: «Հումքի և բանվորական ուժի բացակայության պատճառով անցնող տարում ևս ստիպված էինք մասամբ հրաժարվելու մոբառաջադրանքներից և փակելու գումակային շինարարության արտադրամասերը, դրանով իսկ չկատարելով այդ տեսակի արտադրության գծով Կարմիր բանակի մոբհայտերի հսկիչ թվերը»:

Ելնելով վերը նշվածից և նկատի ունենալով, որ առկա է 1934 թ. մոբպլանով նախատեսված արտադրական առաջադրանքները չկատարելու վտանգը, Ա. Երզնկյանը խնդրում է հրահանգավորել

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 118, ք. 14–15:

հունք ստանալու ուղիների հնարավորության մասին՝ «առնվազն այն քանակով, որն անհրաժեշտ է պաշտպանական նշանակության հսկիչ թվերը կատարելու, ինչպես նաև սատարելու այն արտելներին, որոնք ունեն հավանական պատերազմի պայմաններում մորառաջադրանքներ կատարելու հանձնարարականներ»<sup>76</sup>։ Գրությանը կից տեղեկություններ են ներկայացվում մորառաջադրանքներ կատարող արտելների վերաբերյալ։

Արդեն 1934 թ. 2-րդ կեսին Անդրկովկասյան ռազմական օկրուգի կողմից ռազմապաշտպանական միջոցառումների շրջանակներում Հայաստանին ներկայացված հայտի համաձայն՝ ՀՍԽՅ տնայնասարհեստագործական կոոպերացիայի միության («Հայտնարկոոպ») արտելները ստացան ռազմական հանդերձանքի արտադրանքի պատվերներ։ Մասնավորապես, Հայտնարկոոպի «Մորթի-մուշտակ» միության Կիրովականի արտելում պետք է իրացվեր և ապահովվեր զինվորական կիսամուշտակների արտադրությունը՝ ըստ տարիների հետևյալ քանակությամբ. 1938 թ.՝ 1000, 1939 թ.՝ 1500, 1940 թ.՝ 2000, 1941 թ.՝ 2000 և 1942 թ.՝ 2500 հատ։ Համաձայն նույն հայտի՝ Հայտնարկոոպի Երևանի, Լենինականի, Ստեփանավանի և Կիրովականի արտելներում պետք է կազմակերպվեր զինվորական համազգեստի, գոտկատեղի կաշեգործիների, շինելի փաթեթազևանների, հրացանների համար ուսագործիների և ստորճանակի պատյանների արտադրությունը՝ ըստ տարիների հետևյալ քանակությամբ. 1938 թ.՝ 500, 1939 թ.՝ 750, 1940 թ.՝ 750, 1941 թ.՝ 1000 և 1942 թ.՝ 1000 կոմպլեկտ<sup>77</sup>։

Այսպիսով, Հայաստանն ընդգրկվում էր միութենական ռազմապաշտպանական պատվերների ոլորտ՝ հանրապետության տեքստիլ և կաշվի արդյունաբերության արտադրանքի միջոցով։ Պետք է նշել, որ դեռևս Հայաստանի առաջին հանրապետության տարիներից ռազմական նախարարության գլխավոր համբարակային վար-

<sup>76</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1439, թ. 209։

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 1748, թ. 87։

չության Ալեքսանդրապոլի և Կարսի հանդերձակարի, Ալեքսանդրապոլի կոշիկի և սայլաքարշային արհեստանոցները, Նոր Բայազետի ջուլհականոցը կատարում էին վարչության պատվերները՝ բանակին մատակարարելով զինվորական համազգեստ, կոշիկ, ռազմական հանդերձանք, կաշեգործիներ, ձիաթամբեր և այլն<sup>78</sup>։

Ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում նախապատերազմյան տարիներին կարևորվում էր ժողտնտեսությունում ռազմապաշտպանական միջոցառումների իրականացման ռազմավարությունը։ Գործընթացը հանրապետությունում ճիշտ կազմակերպելու և նախկինում տեղ գտած թերություններն ապագայում բացառելու նպատակով՝ ՀՍԽՅ պետպլանի պաշտպանության բաժանմունքում մշակվեց համապատասխան բացատրական գրություն-ուղղեցույց։ Հայպետպլանի փոխնախագահ Վ. Մխիթարյանի և պաշտպանության բաժանմունքի պետի պաշտոնակատար Վ. Գևորգյանի ստորագրություններով 1933 թ. հոկտեմբերի 16-ին ՀՍԽՅ ժողկոմխորի ուղղված այդ փաստաթղթում նշվում է, որ Խորհրդային Հայաստանի, որպես պատերազմական գործողությունների հավանական թատերաբեմ հանդիսացող երկրի, պաշտպանական խնդիրները չպետք է առանձնացվեն հանրապետության տնտեսական զարգացման հրամայականներից։ Ժողտնտեսության ոլորտում իրականացվող պաշտպանական միջոցառումները պետք է տնտեսապես հիմնավորված լինեն, իսկ դրանց ֆինանսավորումը՝ իրականացվի ընդհանուր հիմունքներով։ «Չնայած այդ հրամայականին, – նշվում է փաստաթղթում, – ստանալով Կարմիր բանակի հայտերը, ժողկոմատների մեծ մասը 1933 թվականին պատշաճ կերպով չեն մշակել տնտեսության տվյալ ճյուղի ընդհանուր պլանի մեջ դրանք ներառելու և ընդհանուր ճյուղային լիմիտների շրջանակներում իրականացնելու հարցերը»։ Դրա արդյունքում՝ պաշտպանական նշանակության օբ-

<sup>78</sup> Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 52–53։ Տե՛ս նաև՝ Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Ե., 2002, էջ 38։

յեկտների մեծ մասը չէին ընդգրկվել տնտեսության զարգացման ընդհանուր պլանի մեջ: «Ուստի, – եզրակացնում են Պետպլանի պատասխանատու աշխատակիցները, – ժողտնտեսության զարգացման 1933 թ. պլանը չի ընդգրկում ՀՍԽՖ–ին ներկայացված պաշտպանական միջոցառումների ամբողջ համալիրը»<sup>79</sup>:

Եշված թերությունները վերացնելու նպատակով և 1934 թ. պաշտպանական միջոցառումների հսկիչ թվերը ճիշտ կազմելու համար փաստաթղթում ներկայացված են ներքոնշյալ պարզաբանումները.

- ՀՍԽՖ պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված բոլոր միջոցառումները պետք է անցկացվեն ժողտնտեսության զարգացման ընդհանուր պլանով,

- ընդհանուր պաշտպանական միջոցառումների անցկացման համար լրացուցիչ ներդրումներ չեն տրամադրվելու,

- հատուկ ներդրումների հաշվին կիրականացվեն այն բացառիկ միջոցառումները, որոնք, իրոք, ունեն նեղպաշտպանական նշանակություն: Ընդ որում՝ այն միջոցառումները, որոնք կհաստատվեն Անդրդաշնության ժողկոմխորհի կողմից:

Բացատրական տեղեկանքում պարզաբանվում է նաև, թե որոնք են համարվում նեղպաշտպանական միջոցառումները: Այսպես.

- ռազմաուսումնական կայանների շինարարությունը,

- Կարմիր բանակի շտաբի հայտի հիման վրա Անդրկովկասյան ռազմական օկրուգի միջոցառումները,

- մոբաշարների ստեղծումը և դրանք պահպանելու համար պահեստների կառուցումը,

- բուժօգնության տնտեսական գույքի ու դեղորայքի պաշարների ստեղծումը էվակուացիոն և գործող հոսպիտալներին սպասարկելու համար,

- ռազմավարական և պաշտպանական նշանակություն ունեցող այն ճանապարհների շինարարությունը, որոնք չեն համընկնում հանրապետության տնտեսական կարիքների հետ,

- պաշտպանական միջոցառումները կապի ուղրտում, որոնք իրականացվում են կենտրոնացված կարգով՝ ԽՍՀՄ փոստ–հեռագրի ժողկոմատի միջոցով,

- թռիչքաղաշտերի և վայրէջքաուղիների կառուցումը, որոնք չեն համընկնում գյուղատնտեսական ավիացիայի պահանջների հետ,

- Կարմիր բանակի շտաբի հայտի հիման վրա դիտակետերի կառուցումը,

- Կարմիր բանակի շտաբի հայտի հիման վրա հատուկ վառելանյութերի ու ավտովառելիքի պահեստարանների կառուցումը,

- մոբաշխատողների վերապատրաստումը,

- նեղպաշտպանական այն միջոցառումները, որոնք բխում են Կարմիր բանակի շտաբի օպերատիվ պահանջներից և հաստատված են Անդրդաշնության ժողկոմխորհի կողմից,

- ռազմապաշտպանական այն բոլոր միջոցառումները, որոնց իրականացման համար հայտ կներկայացնեն Կարմիր բանակի շտաբը և տեղական ռազմական վարչության մարմինները, և այլն:

Բացատրականում նշվում է նաև, որ ՀՍԽՖ ժողտնտեսության զարգացման 1934 թ. հսկիչ թվերի մշակումը պետք է բխեցնել երկրի պաշտպանունակության ամրապնդման հրամայականից: Ուստի բոլոր ժողկոմատներին ու կազմակերպություններին առաջարկվում է, որ իրենց կողմից մշակվող պլաններում առանձին ներկայացվեն այն կոնկրետ պահանջները, որոնք կառաջադրվեն Կարմիր բանակի շտաբի կողմից: Վերջինիս կարևորությունը պայմանավորվում է նրանով, որ հանրապետությունում համալիր զարգացման հնարավորություն ստանան ինչպես տնտեսության ամբողջական ճյուղերը, այնպես էլ այն, որոնք ապահովվելու են Կարմիր բանակի մոբիլիզացիան հնարավոր պատերազմի դեպքում:

<sup>79</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1408, ք. 42:

Փաստաթղթում առաջարկվում է նաև հանրապետության ժողովուրդի տնտեսության զարգացման 1934 թ. պլանում նախատեսվել և ապահովվել երկրի պաշտպանության ամրապնդման հետևյալ պահանջները. ՀՍԽՖՀ-ի, որպես ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ հանդիսացող երկրի, պատրաստվածությունը, Կարմիր բանակի մոբիլիզացիայի ապահովումը ՀՍԽՖՀ ամբողջ տարածքում, Կարմիր բանակի կայազորների կարիքների ապահովումը խաղաղ ժամանակներում, ինչպես նաև ՀՍԽՖՀ սահմանային գոտու տնտեսական ու մշակութային զարգացումը: Ներկայացվում են այլ առաջարկություններ:

Գրությանը կից հավելվածով ՀՍԽՖՀ ժողովուրդի ուղարկելով 1934 թ. պաշտպանական միջոցառումների հսկիչ թվերը կազմելու համար միասնական ձևը՝ խնդրվում էր դրանք լրացնել երկօրյա ժամկետում և ուղարկել Հայպետպլանի պաշտպանության բաժանմունք<sup>80</sup>:

ՀՍԽՖՀ ժողովուրդին շուտով հաստատեց հանրապետությունում 1934 թ. պաշտպանական միջոցառումների համար Հայպետպլանի ներկայացրած հսկիչ թվերը՝ կից ընդարձակ բացատրականով: Որոշման մեջ առանձնակի նշվեց, որ գերատեսչությունների ներկայացրած հայտերի հիման վրա հաստատված բոլոր միջոցառումներն ամբողջությամբ ներառված են ՀՍԽՖՀ-ի տնտեսության ընդհանուր պլանի մեջ: Համաձայն որոշման՝ հանրապետությունում պաշտպանական միջոցառումների կապիտալ ծախսերի ծավալը նախատեսվում էր 35794,5 հազար ռուբլի չափով, այդ թվում՝ նեղպաշտպանական միջոցառումների համար՝ 7091,6, ընդհանուր-պաշտպանական՝ 28702,9 հազար ռուբլի<sup>81</sup>:

ՀՍԽՖՀ պաշտպանական միջոցառումների 1934 թ. հսկիչ թվերի վերաբերյալ Հայպետպլանի նախագահ Դ. Ջալադյանի, նախագահության անդամ Գ. Շաքարյանի և պաշտպանության բաժան-

<sup>80</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 42-44:

<sup>81</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 1439, ք. 155:

մունքի պետի պաշտոնակատար Վ. Գևորգյանի ստորագրություններով ընդարձակ բացատրականի ներածությունում նշված է, որ հսկիչ թվերի կազմումն ամբողջությամբ բխում է երկրի պաշտպանունակության հետագա ամրապնդման հրամայականից և, որ նեղպաշտպանական միջոցառումների գծով բանակի բոլոր հայտերը հիմնականում բավարարված են ՀՍԽՖՀ ժողովուրդների և գերատեսչությունների բյուջեների սահմաններում:

Նշենք, որ նեղպաշտպանական միջոցառումների պլանները կազմելու հիմքում դրված էին Կարմիր բանակի շտաբի և Հայկական հրաձգային դիվիզիայի հայտերը: Դրանք ներառում էին հետևյալ հիմնական ուղորտները՝ առողջապահությունը, գյուղատնտեսությունը, կոմունալ տնտեսությունը, ճանապարհային շինարարությունը, բանակային կապը, տնայնաարհեստագործական կոոպերացիան, ծանր ու թեթև արդյունաբերությունը և այլն: Համաձայն փաստաթղթում բերված վիճակագրական տվյալների՝ եթե 1934 թ. կապիտալ ծախսերի աճը ՀՍԽՖՀ ամբողջ տնտեսությունում 1933 թ. համեմատ աճել էր 280,8 %-ով, ապա նույն ժամանակահատվածում պաշտպանական միջոցառումների գծով աճը կազմեց 295,5 %<sup>82</sup>:

Հայաստանի կառավարության տարեկան ծրագրում ծախսեր էին նախատեսվում նաև թռիչքադաշտերի շինարարության, բանակային դասընթացների կազմակերպման, տեսչական ստուգումներ և մոբիլիզացիոն խաղեր անցկացնելու համար: Նախատեսվում էր հանրապետության 15 կետերում հողատարածքներ հատկացնել Կարմիր բանակի զորամասերի տեղակայման համար: Բանակի հայտերի համաձայն՝ ծախսեր էին նախատեսված նաև հակաօդային պաշտպանության միջոցառումների համար, որոնք կազմելու էին 206,2 հազար ռուբլի<sup>83</sup>:

<sup>82</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 156-157:

<sup>83</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 180:

Այսպիսով, ՀՍԽՂ ռազմապաշտպանական միջոցառումների ծրագիրը ոչ միայն չէր առանձնացվում հանրապետության տնտեսության զարգացման ամբողջական ծրագրից, այլև դրա իրականացումը բավականին լուրջ խթան էր խորհրդային Հայաստանի համալիր զարգացման համար: ՀՍԽՂ պաշտպանական և նեղ-պաշտպանական միջոցառումների պլանները և դրանց հսկիչ թվերը կազմելու վերը նշված ձևը հանրապետությունում կիրառվեց նաև մինչպատերազմյան հետագա տարիներին:

Ինչպես նշել ենք, սպառազինության արտադրության գծով խորհրդային ռազմական արդյունաբերության ձեռքբերումներն անմիջականորեն նպաստում էին խորհրդային բանակի՝ նոր և կատարելագործված զենք ու զինամթերքով, մարտական տեխնիկայով, բանակային կապի միջոցներով ու սարքավորումներով, հագեցվածությամբ: Ռազմական այդ արտադրանքից բաժին էր հասնում նաև խորհրդային Հայաստանում տեղակայված Հայկական հրաձգային, 1931 թվականից՝ լեռնահրաձգային դիվիզիայի զորամիավորումներին: 1930-ական թթ. սկզբից վերջիններս սկսեցին ստանալ նոր սպառազինություն, հետագայում նույնիսկ ինքնաթիռներ ու տանկեր: 1934 թ. դիվիզիան ստացավ օդանավային մեկ օդակ, իսկ 1935 թ. զարմանը նրա կազմում ստեղծվեց առանձին տանկային վաշտ, միաժամանակ՝ կապի առանձին ավիաօդակ<sup>84</sup>: խորհրդային մարշալ Կ. Վորոշիլովի անունը կրող կարմրադրոշ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որը գործում էր ԲԳԿԲ-ի ընդհանուր համակարգի մեջ, 1936 թ. ստացավ 76-րդ համարը:

Հայաստանում ստացված նոր սպառազինությունը, մարտական տեխնիկան ուսումնասիրվում, անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգվում էր ինչպես դիվիզիայի զորամիավորումներում գործող զինարհեստանոցներում, այնպես էլ հանրապետության մի քանի ձեռնարկությունների՝ Չերժինսկու անվան Երևանի մեքենա-

<sup>84</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 162, 168-169:

չինական գործարանի, Երևանի և Լենինականի մեխանիկական գործարանների արհեստանոցներում: Աստիճանաբար առաջացավ հատուկ մասնագիտացված կադրեր՝ զինագործներ, մեքենատեխնիկներ, ավիատեխնիկներ, այլ վարպետներ պատրաստելու անհրաժեշտություն:

Հետաքրքիր է, որ զենք ու զինամթերքի, մարտական տեխնիկայի տիրապետմանը զուգընթաց դիվիզիայում «ծնունդ առավ գյուտարարական և ռացիոնալիզատորական շարժումը»: «Դիվիզիայի գյուտարարներն ու նորարարները, - նշում է ռազմական պատմության մասնագետ Կլիմենտ Հարությունյանը, - իրենց բազմաթիվ արժեքավոր առաջարկներով և գյուտերով երկարացնում էին ռազմական տեխնիկայի օգտագործման ժամկետը, կատարելագործում մարտական զենքը, դրանով իսկ նպաստում դիվիզիայի կրակային հզորության ուժեղացմանը, ինչպես նաև տնտեսում հագարավոր ռուբլիներ: Գյուտարարական և նորարարական արժեքավոր առաջարկությունների և հայտնագործությունների գծով 1933-1934 թթ. ամբողջ Կովկասյան կարմրադրոշ բանակի մաշտաբով առաջին տեղը զբաղեցին հայկական դիվիզիայի լեռնահրետանային գնդի գյուտարարներն ու նորարարները»<sup>85</sup>: Պատմաբանը գրում է նաև, որ նշված տարիներին գնդում եղել է գյուտարարական և նորարարական 800 առաջարկություն (դրանք առավելապես վերաբերում էին հրետագիտությանը), որոնց մեծ մասն իրագործվել է: Օրինակ՝ դիվիզիայում գործող զինարհեստանոցների վարպետների հետ գյուտարարներն հնարել էին հրացանի ազուստն ուղղելու կաղապար, պայթուցիկ նյութերի քանակն ավտոմատ որոշող չափիչ գործիք, ձեռքի և հաստոցավոր գնդացիների ավտոմատ կրակը ճշտող սարք և այլն: Գյուտերն ու նորարարություններն ունեին կարևոր նշանակություն և աստիճանաբար լայն կիրառում ստացան<sup>86</sup>:

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 170:

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 171:

Այսպիսով, ՀՍԽՄ ռազմապաշտպանական միջոցառումների ծրագիրը ոչ միայն չէր առանձնացվում հանրապետության տնտեսության զարգացման ամբողջական ծրագրից, այլև դրա իրականացումը բավականին լուրջ խթան էր խորհրդային Հայաստանի համալիր զարգացման համար: ՀՍԽՄ պաշտպանական և ներպաշտպանական միջոցառումների պլանները և դրանց հսկիչ թվերը կազմելու վերը նշված ձևը հանրապետությունում կիրառվեց նաև մինչպատերազմյան հետագա տարիներին:

Ինչպես նշել ենք, սպառազինության արտադրության գծով խորհրդային ռազմական արդյունաբերության ձեռքբերումներն անմիջականորեն նպաստում էին խորհրդային բանակի՝ նոր և կատարելագործված զենք ու զինամթերքով, մարտական տեխնիկայով, բանակային կապի միջոցներով ու սարքավորումներով, հագեցվածությանը: Ռազմական այդ արտադրանքից բաժին էր հասնում նաև խորհրդային Հայաստանում տեղակայված Հայկական հրաձգային, 1931 թվականից՝ լեռնահրաձգային դիվիզիայի զորամիավորումներին: 1930-ական թթ. սկզբից վերջիններս սկսեցին ստանալ նոր սպառազինություն, հետագայում նույնիսկ ինքնաթիռներ ու տանկեր: 1934 թ. դիվիզիան ստացավ օդանավային մեկ օդակ, իսկ 1935 թ. գարնանը նրա կազմում ստեղծվեց առանձին տանկային վաշտ, միաժամանակ՝ կապի առանձին ավիաօդակ<sup>84</sup>: Խորհրդային մարշալ Կ. Վորոշիլովի անունը կրող կարմրադրոշ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան, որը գործում էր ԲԳԿԲ-ի ընդհանուր համակարգի մեջ, 1936 թ. ստացավ 76-րդ համարը:

Հայաստանում ստացված նոր սպառազինությունը, մարտական տեխնիկան ուսումնասիրվում, անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգվում էր ինչպես դիվիզիայի զորամիավորումներում գործող զինարհեստանոցներում, այնպես էլ հանրապետության մի քանի ձեռնարկությունների՝ Չերժինսկու անվան Երևանի մեքենա-

<sup>84</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 162, 168-169:

շինական գործարանի, Երևանի և Լենինականի մեխանիկական գործարանների արհեստանոցներում: Աստիճանաբար առաջացավ հատուկ մասնագիտացված կադրեր՝ զինագործներ, մեքենատեխնիկներ, ավիատեխնիկներ, այլ վարպետներ պատրաստելու անհրաժեշտություն:

Հետաքրքիր է, որ զենք ու զինամթերքի, մարտական տեխնիկայի տիրապետմանը զուգընթաց դիվիզիայում «ծնունդ առավ գյուտարարական և ռացիոնալիզատորական շարժումը»: «Դիվիզիայի գյուտարարներն ու նորարարները, - նշում է ռազմական պատմության մասնագետ Կլիմենտ Հարությունյանը, - իրենց բազմաթիվ արժեքավոր առաջարկներով և գյուտերով երկարացնում էին ռազմական տեխնիկայի օգտագործման ժամկետը, կատարելագործում մարտական զենքը, դրանով իսկ նպաստում դիվիզիայի կրակային հզորության ուժեղացմանը, ինչպես նաև տնտեսում հագարավոր ռուբլիներ: Գյուտարարական և նորարարական արժեքավոր առաջարկությունների և հայտնագործությունների գծով 1933-1934 թթ. ամբողջ Կովկասյան կարմրադրոշ բանակի մաշտաբով առաջին տեղը զբաղեցին հայկական դիվիզիայի լեռնահրետանային գնդի գյուտարարներն ու նորարարները»<sup>85</sup>: Պատմաբանը գրում է նաև, որ նշված տարիներին գնդում եղել է գյուտարարական և նորարարական 800 առաջարկություն (դրանք առավելապես վերաբերում էին հրետագիտությանը), որոնց մեծ մասն իրագործվել է: Օրինակ՝ դիվիզիայում գործող զինարհեստանոցների վարպետների հետ գյուտարարներն հնարել էին հրացանի ազուստն ուղղելու կաղապար, պայթուցիկ նյութերի քանակն ավտոմատ որոշող չափիչ գործիք, ձեռքի և հաստոցավոր գնդացիների ավտոմատ կրակը ճշտող սարք և այլն: Գյուտերն ու նորարարություններն ունեին կարևոր նշանակություն և աստիճանաբար լայն կիրառում ստացան<sup>86</sup>:

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 170:

<sup>86</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 171:

Այսպիսով, Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի առկայությունը հանրապետությունում նույնպես նպաստում էր Խորհրդային Հայաստանի ներգրավվածությանը խորհրդային ռազմապաշտպանական համակարգում:

Հանրագումարի բերելով 1920–1930–ական թթ. հանրապետության տնտեսության զարգացման յուրահատկություններն ու արձանագրված հաջողությունները՝ պետք է նշել, որ այդ տարիներին Խորհրդային Հայաստանում ոչ միայն ստեղծվեցին արդյունաբերական խոշոր հզորություններ, այլև հանրապետությունն աստիճանաբար ներգրավվում էր ինչպես Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմապաշտպանական միջոցառումների, այնպես էլ ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### **ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԽՍՀՄ ՈԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1939–1945 ԹԹ.)**

#### **2.1. Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումների և խորհրդաթուրքական դիմակայության ոլորտում**

Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների տարիներին հանդիսանալով ԽՍՀՄ սահմանամերձ տարածք և ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ՝ Խորհրդային Հայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում ԽՍՀՄ ռազմական նախապատրաստություններում: Իր հերթին խորհրդաթուրքական, իսկ պատերազմի ավարտական փուլում՝ նաև ԽՍՀՄ–Արևմուտք դիվանագիտական դիմակայության ոլորտում էր հայտնվել 1921 թ. մարտի 16–ի մոսկովյան պայմանագրով Թուրքիային անցած հայկական տարածքների (Կարս, Սուրմալու, Արդահան) ԽՍՀՄ–ին վերադարձնելու հարցը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից խորհրդային երկրի քաղաքական ղեկավարությունը և Կարմիր բանակի հրամանատարությունը սկսեցին հատուկ ուշադրություն հատկացնել ԽՍՀՄ հարավային սահմանների, այդ թվում անդրկովկասաթուրքական, ամրապնդման և ռազմականացման խնդիրներին: Անդր-

կովկասի խորհրդային հանրապետություններում տեղակայվեցին ռազմական զգալի ուժեր և միջոցներ, հիմնականում ռազմական ավիացիա և հակաօդային պաշտպանության սպառազինություն: Դա առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ խորհրդային ռազմական հետախուզության գաղտնի տվյալների համաձայն՝ անգլո-ֆրանսիական դաշինքում քննարկվում էր Բաքվի նավթարդյունաբերական համալիրի և ԽՍՀՄ հարավային սահմանների ուղղությամբ ավիացիոն ռմբակոծությունների հնարավորությունը: Պետք է նկատել, որ 1940 թ. մարտի սկզբին անգլիական կառավարությունը հանձնարարել էր բանակի շտաբի ղեկավարությանը նախապատրաստվել հնարավոր ռմբակոծություններին<sup>87</sup>: Հայտնի է նաև, որ նշված ժամանակաշրջանում նկատվում էին անգլիական լրտես-ինքնաթիռների թռիչքներ ԽՍՀՄ օդային տարածքում<sup>88</sup>: 1940 թ. օգոստոսի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 7-րդ նստաշրջանին երկրի արտաքին քաղաքականության մասին հաշվետու զեկուցման մեջ ԽՍՀՄ արտգործոժողկոմ Վ. Մոլոտովը նշում է. «Ապրիլի սկզբին Թուրքիայի տարածքից մեր Բաթում քաղաքի շրջանում, որտեղ գտնվում են մեծ քանակությամբ նավթազտիչ գործարաններ, արտասահմանյան ինչ որ ինքնաթիռ էր հայտնվել: Սկզբից թուրքական կողմը փորձում էր գործն այնպես ներկայացնել, թե իբր Թուրքիայի տարածքից ընդհանրապես որևէ ինքնաթիռ չի թռչել, իսկ հետո, այդուհանդերձ, խոստացավ ապագայում միջոցներ ձեռնարկել նման տեսակի թռիչքները կանխելու նպատակով»<sup>89</sup>:

Մինչև ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակումը խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինը համոզված էր, որ երկրի հիմնական հակառակորդների թվում առաջին հերթին Մեծ

<sup>87</sup> St'u Якушевский А., Агрессивные планы и действия западных держав против СССР в 1939-1941 гг., "Военно-исторический журнал", М., 1981, № 8, էջ 52-53:

<sup>88</sup> St'u Документы внешней политики СССР, т. 23, книга 1, М., 1995, էջ 227-228:

<sup>89</sup> St'u Васильев И., О турецком "нейтралитете" во Второй мировой войне, М., 1951, էջ 41-42:

Բրիտանիան է: Խորհրդային ղեկավարությանը հայտնի էին դարձել Մեծ Բրիտանիայի ծրագրերը՝ ԽՍՀՄ-ի վրա հնարավոր հարձակման ղեպքում, որպես ռազմական հենադաշտ օգտագործելու Թուրքիայի տարածքը: Այդ համատեքստում խորհրդային Միությունը չէր բացառում նաև ռազմական ընդհարումը Թուրքիայի հետ, որպես Արևմուտքի, ինչպես և ֆաշիստական Գերմանիայի գլխավոր դաշնակցի: Վերջիններիս ծանրակշիռ օգնությամբ Թուրքիայի ռազմականացումը չէր կարող չանհանգստացնել խորհրդային ղեկավարությանը և Կարմիր բանակի հրամանատարությանը: Ելնելով նշված դատողություններից, խորհրդային ղեկավարությունը միջոցառումների համալիր ծրագրեր մշակեց՝ Թուրքիայի տարածքից Մեծ Բրիտանիայի հնարավոր հարվածներին պատրաստ լինելու համար: Այսպես, արդեն 1940 թ. սկզբին Անդրկովկասյան ռազմական օկրուգում սկսեցին տեղակայվել ավիացիոն զորամասեր, ռազմական կործանիչներ և ռմբակոծիչներ, ռազմական այլ տեխնիկա: Մեկ տարում դրանց քանակը ռազմական օկրուգում աճեց ավելի քան 4 անգամ<sup>90</sup>: ԽՍՀՄ ռազմական այլ օկրուգներից Անդրկովկաս տեղափոխվեցին հրաձգային մի քանի դիվիզիաներ, հրետանային, զենիթային և տանկային զորամասեր: Դրանք հիմնականում տեղակայվեցին խորհրդային Ադրբեջանում, սակայն բաժին հասավ նաև Հայաստանին ու Վրաստանին: Այս միջոցառումը, իր հերթին, հրատապ դարձրեց վերակառուցելու Անդրկովկասի հանրապետությունների արդյունաբերական որոշ գործարանները և ձեռնարկությունները՝ վնասված ռազմական տեխնիկան արագ վերանորոգելու, ինչպես նաև ռազմաարդյունաբերական պատվերներ կատարելու համար: Այդ նպատակով Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ, այդ թվում Հայաստան, ներմուծվեցին մեծ քանակությամբ սարքավորումներ և հումք: Խորհրդային Հայաստանում ռազմական տեխնիկա, մասնավորապես տանկեր վե-

<sup>90</sup> St'u Мельтюхов М., Упущенный шанс Сталина, Советский Союз и борьба за Европу: 1939-1941. Документы, факты, суждения, М., 2002, էջ 215-216:

րանորոգելու առաջադրանքներ ստացան Երևանի ավտոնորոգման և Լենինականի մեխանիկական գործարանները: Այսպես, Խորհրդային Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղակայված ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատի Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմխորհրդի կողմից 1940 թ. մայիսի 10-ին ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահին ուղղված թիվ 0041730 գրությունով, «Պատերազմական ժամանակի միջոցառումների նախապատրաստական աշխատանքների անցկացման կարգին համապատասխան, խնդրվում էր.

1. Պարտավորեցնել ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի ժողկոմատին, որ ընթացիկ տարում ամենասեղմ ժամկետներում կառուցի 8 բենզալցակայան և կազմակերպի դրանց շահագործումը հետևյալ վայրերում. Լենինական՝ 200 խորանարդ մետր տարողությամբ և լիցքավորման 4 կետով, Համամլու (Սպիտակ)՝ համապատասխան՝ 100 և 2, Դիլիջան, Սևան և Վորոնցովկա (Կալինինո, Տաշիր)՝ 60 և 1, Սարդարապատ, Միկոյան և Ապարան՝ 60 և 2:

2. Պարտավորեցնել ՀԽՍՀ ավտոմոբիլային և տեղական արդյունաբերության ժողկոմատներին, ինչպես նաև Երջաղխորհրդի տեղական արդյունաբերության վարչությանը ձեռք առնելու համապատասխան միջոցներ՝ Պաշտպանության ժողկոմատի տանկերի, ռազմական և այլ ավտոմեքենաների ու տրակտորների ամենամսյա վերանորոգումը պատերազմական ժամանակում ապահովելու նպատակով»<sup>91</sup>:

Մասնավորապես, Երևանի ավտոնորոգման և Լենինականի մեխանիկական գործարաններին հանձնարարվում է վերանորոգման ընդունել համապատասխանաբար՝ «Տ-26» մակնիշի 15 և 10 տանկեր: Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններից բացի՝ ռազմական և այլ մեքենաների ու տրակտորների վերանորոգում պետք է իրականացնեին Կիրովականի, Ախտայի (Յրագ-

<sup>91</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 8, գ. 7, մաս «cc», ք. 613-614:

դան), Արթիկի, Հոկտեմբերյանի (Արմավիր) և Նոր Բայազետի վերանորոգման կայանները:

Նշված ծրագրի կատարումն ապահովելու նպատակով հանձնարարվում է կարգադրել ժողկոմատներին, որ վերջիններս անհապաղ հայտեր ներկայացնեն ԽՍՀՄ ժողտնտխորհին՝ անհրաժեշտ քանակի պահեստամասեր և նյութեր ստանալու համար: Կարգադրվում է նաև՝ «Անդրկովկասյան ռազմական օկրուգի համապատասխան ստորաբաժանումից անմիջապես ընդունել անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ՝ վերանորոգման աշխատանքներն իրականացնելու նպատակով»: Գրությունը ստորագրել են Անդրկովկասյան ռազմական օկրուգի առաջին դեմքերը՝ գորքերի հրամանատար, բանակի երկրորդ աստիճանի հրամանատար Ի. Տյուլենևը, ռազմխորհրդի անդամ, դիվիզիոնի կոմիսար Յա. Դորոնինը և շտաբի պետ Ֆ. Տոլբուխինը<sup>92</sup>: Վերջինս վկայում է Անդրկովկասյան ռազմական օկրուգի ղեկավարության կողմից խնդրին մեծ կարևորություն տալու մասին:

Հանձնարարականի վերաբերյալ ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի ժողկոմատից 1940 թ. մայիսի 22-ին ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանին տեղեկացնում էին, որ հանրապետության հիմնական մայրուղիներում 700 խմ ընդհանուր ծավալով 8 բենզալցակայան և Երևանում ու Լենինականում երկու սպասարկման կայաններ՝ յուրաքանչյուրն օրական 250 մեքենա սպասարկելու հնարավորությամբ, կառուցելու համար մոտավոր հաշվարկներով կպահանջվի 1.900.000 ռուբլի:

Նշելով, որ ժողկոմատը չի տիրապետում նման ծավալով ֆինանսական միջոցների, ՀԽՍՀ ավտոտրանսպորտի ժողկոմ Վ. Գուրգենյանը նպատակահարմար է համարում հարցը բարձրացնել Անդրկովկասյան ռազմական օկրուգի ղեկավարության առջև, որ վերջինս հանդես գա միջնորդությամբ ԽՍՀՄ կառավարության առջև՝ նշված օբյեկտների կառուցման համար հատուկ լիմիտներ

<sup>92</sup> Տես նույն տեղում:

տրամադրելու և շինարարությունը զինվորական շինարարական կազմակերպության կողմից իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է ռազմական և այլ մեքենաների վերանորոգման խնդրին, ապա ժողկոմը հայտնում է, որ ամսական վերանորոգել 150 միավոր մեքենա հնարավոր չէ, քանի որ ավտոմեքենաների վերանորոգման գործարանի հզորությունն արտահայտվում է մեկ տարում 500 պայմանական միավոր կապիտալ վերանորոգումով: Ելնելով նշվածից, ժողկոմը հայտնում է, որ ամսական հնարավոր է իրականացնել մինչև 42 միավորի կապիտալ վերանորոգում կամ 106 միավորի միջին վերանորոգում, պայմանով, եթե գործարանն ամբողջությամբ զբաղվի նշված մեքենաների վերանորոգմամբ և կենտրոնացված կարգով ապահովվի պահեստամասերով և նյութերով<sup>93</sup>:

Անդրկովկասում խորհրդային ռազմական ներուժի ավելացման և նախապատրաստական այլ միջոցառումների հետ զուգահեռ՝ երկրի ղեկավարությունը և Կարմիր բանակի հրամանատարությունը հատուկ ուշադրություն էին դարձնում ինչպես թուրքիայի վերաբերյալ հետախուզական տվյալների հավաքմանը, այնպես էլ Մերձավոր Արևելքում ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմի ուսումնասիրությանը: ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի հետախուզության տվյալների համաձայն՝ 1940 թ. փետրվարի 1-ի դրությամբ թուրքական հակաօդային պաշտպանության համակարգը պարունակում էր 13 զենիթային դիվիզիոն և 3 առանձին զենիթային մարտկոց: Խորհրդային հետախուզության փաստաթղթերում ուշադրություն է դարձվում թուրքիայի ռազմական ավիացիայի զնահատականին: 1940 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ նրանում առկա էր 800 ինքնաթիռ, որոնցից 350-ը՝ ժամանակակից տեսակի: Նշվում է նաև, որ, չնայած այն օգնությանը, որ թուրքիային տրամադրում են Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, թուրքական ՀՕՊ-ը, այդուհանդերձ, խոցելի է, քանի որ արդյունա-

<sup>93</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 616-617:

վետ չեն գործում ռազարային սարքավորումները, ցածր է հրամանատարական կազմի ռազմական պատրաստվածությունը և այլն<sup>94</sup>:

Արդեն 1940 թ. ապրիլին, ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատի և Գլխավոր շտաբի համապատասխան կարգադրությամբ, Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարությունն Անդրկովկասյան ռազմական օկրուգի հեռահար ռմբակոծիչների զնդերին կարգադրում է ուշադրություն դարձնել, մշակել և ուսումնասիրել ավիահարվածների հնարավորությունը ռազմավարական այնպիսի կարևոր շրջանների ուղղությամբ, ինչպիսիք են Ալեքսանդրիան, Բեյրութը, Նիկոսիան, Ստամբուլը, Անկարան, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները և այլն: ԽՍՀՄ սևծովյան նավատորմի ռազմաօդային ուժերի առաջ խնդիր է դրվում՝ պատրաստ լինել հարվածներ հասցնելու թուրքիայի ռազմածովային նավատորմի, Մարմարի ծովի և Բոսֆորի նեղուցի շրջանում տեղակայված ռազմակայանների ուղղությամբ<sup>95</sup>:

Նշված մոտեցումները և Կարմիր բանակի առջև դրված մարտական առաջադրանքերն առաջին հայացքից թեև բախտախնդիր են թվում, սակայն վկայում են, որ ԽՍՀՄ-ը շարունակում էր թուրքիային դիտել որպես հնարավոր հակառակորդ: Ավելին, խորհրդային առաջնորդների անդրկովկասյան գաղտնի բանակցություններում երբեմն առաջ էին քաշվում թուրքիայի հնարավոր մասնատման վերաբերյալ գաղափարներ: Այսպես, Կոմինտերնի գործկոմի գլխավոր քարտուղար Գեորգի Դիմիտրովի հետ 1940 թ. նոյեմբերի 25-ին զրույցի ժամանակ Ի. Ստալինը արտահայտվում է հստակ. «Մենք թուրքերին կվճռենք դեպի Ասիա: Դա ի՞նչ թուրքիա է, այնտեղ 2 մլն վրացի կա, 1,5 մլն հայ, 1 մլն քուրդ և այլն: Թուրքերը միայն 6-7 միլիոն են»<sup>96</sup>:

<sup>94</sup> Տե՛ս Степанов А., Военные планы и оборонная промышленность СССР накануне и в начале Второй мировой войны: британский фактор, "Отечественная история", М., 2006, № 3, էջ 36-37:

<sup>95</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 35:

<sup>96</sup> Димитров Г., Дневник (9.III.1933 - 6.II.1949), София, 1997, с. 203.

1941 թ. մարտի 25-ին Մոսկվայում և Անկարայում հրապարակվեց կողմերի նկատմամբ հնարավոր ռազմական ագրեսիայի դեպքում չեզոքության մասին խորհրդաթուրքական համատեղ հռչակագիրը, սակայն դա չէր խանգարում, որ խորհրդային հետախուզությունը շարունակեր գաղտնի տեղեկություններ հավաքել Թուրքիայի ռազմական ներուժի մասին: Մասնավորապես, խորհրդային Չայաստանում տեղակայված Անդրկովկասյան ռազմական օկրուգի հետախուզության բաժինն ապրիլ ամսին գաղտնի տեղեկանք էր պատրաստել Էրզրումում (Կարինում), Սարիղամիշում, Արդվինում և այլ շրջաններում տեղակայված թուրքական զորամիավորումների և նրանց սպառազինության մասին<sup>97</sup>:

Թուրքիայի հակախորհրդային քաղաքականության դրսևորումն էր 1941 թ. հունիսի 18-ին, Չայրենական պատերազմի սկսվելուց ընդամենը 4 օր առաջ, ստորագրված գերմանաթուրքական բարեկամության և չհարձակման մասին պայմանագիրը: Ուստի պատերազմի սկզբից Ի. Ստալինը շարունակում էր չվստահել Թուրքիային: 1941 թ. հուլիսի 4-ին Կրեմլում Անդրկովկասի հանրապետությունների կոմկուսների առաջին քարտուղարների (Չայաստանի՝ Գ. Չարությունյանի, Վրաստանի՝ Կ. Չարկվիանիի և Ադրբեջանի՝ Մ. Բադիրովի) հետ հանդիպման ժամանակ Ստալինը հայտարարեց. «Ռազմաճակատը ձեզանից հեռու է, բայց, համեմայնդեպս, դուք գտնվում եք վտանգավոր գոտում: Մենք չենք կարող վստահ լինել, որ Թուրքիան չեզոքություն կպահպանի»<sup>98</sup>:

Թուրքական հնարավոր վտանգի մասին շարունակում էին վկայել Անդրկովկասյան ռազմական օկրուգի հետախուզության նոր տվյալները: Մասնավորապես, 1941 թ. օգոստոսի 15-ի տվյալների համաձայն՝ Թուրքիան խորհրդային սահմանի երկայնքով կենտրոնացրել էր իր 48 հետևակային դիվիզիաներից 26-ը: Դրանք հիմնականում տեղաբաշխված էին Վան-Երևան, Կարս-Լե-

<sup>97</sup> Տե՛ս Степанов А., նշվ. աշխ., էջ 86-87:

<sup>98</sup> Горьков Ю., Государственный комитет обороны постановляет (1941-1945). Цифры, документы, М., 2002, с. 230.

նինական և Արդահան-Ախալցխա-Ախալքալակ ուղղություններով: Միաժամանակ թուրքական կողմը ճանապարհաշինարարական մեծածավալ աշխատանքներ էր ծավալել Էրզրում-Կարս, Արդահան-Օլթի և սահմանամերձ այլ շրջաններում՝ ռազմական փոխադրումների նպատակով<sup>99</sup>:

Նշենք, որ թուրքական ինքնաթիռները պատերազմի առաջին շրջանում սկսել էին խախտել խորհրդային Չայաստանի օդային սահմանները: Առկա էր նաև հանրապետության տարածքում հակառակորդի կողմից պարաշյուտային դեսանտի իջեցման վտանգը<sup>100</sup>: Ուստի ՉԽՍՀ ժողկոմխորհը 1941 թ. հուլիսի 3-ին ընդունեց «Չակառակորդի պարաշյուտային դեսանտի դեմ պայքարելու համար կործանիչ գումարտակների ձևավորման մասին» որոշումը: Դրանց ձևավորումը և ղեկավարումը դրվեց հանրապետության Ներքին գործերի ժողկոմատի վրա: Վերջինիս կից ստեղծվեց օպերատիվ շտաբ, որի պետ նշանակվեց 1-ին կարգի ռազմական իրավաբան Լևոն Կարապետյանը<sup>101</sup>:

Ընդունված որոշումում հատուկ նշվում է հանրապետության տարածքում հակառակորդի պարաշյուտային դեսանտի իջեցման հնարավոր վայրերում՝ Երևանում, Լենինականում և Կիրովականում գտնվող ռազմավարական օբյեկտներում շուրջօրյա դիտակետերի կազմակերպման անհրաժեշտության մասին: ՉԽՍՀ օդային տարածքը հսկելու և հանրապետության շրջանների հետ օպերատիվ կապը պահպանելու նպատակով առանձնացվում է 6 ինքնաթիռ<sup>102</sup>:

<sup>99</sup> Տե՛ս Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Е., 2004, էջ 51:

<sup>100</sup> Ավետիսյան Յ. և ուրիշ., Գրիգոր Չարությունյան. կյանքը և գործունեությունը, Ե., 2000, էջ 55: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Վ., Գրիգոր Չարությունյանի ժամանակը: Գիրք առաջին, Ե., 2008, էջ 464-465:

<sup>101</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сб. документов и материалов, Е., 1975, էջ 71:

<sup>102</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 72:

Պատերազմի առաջին իսկ օրերից հանրապետությունում մեծ ուշադրություն դարձվեց բնակչությանը հակաօդային և հակաքիմիական պաշտպանության նախապատրաստելու խնդրին: Հակառակորդի հնարավոր ներխուժման սահմանամերձ վայրերում կառուցվելու էին պաշտպանական ամրություններ, ուժեղացվելու էր պաշտպանական կարևոր նշանակություն ունեցող արդյունաբերական կառույցների պաշտպանությունը: Այդ նպատակով 1941 թ. հուլիսի 12-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմն ընդունեց «Հանրապետությունում ժողովրդական աշխարհագործի ջոկատների կազմակերպման և նրանց ռազմական պատրաստվածության մասին» որոշումը: 1941 թ. դեկտեմբերի 1-ի տվյալներով՝ Հայաստանի տարածքում ստեղծվեցին աշխարհագործի 52 ջոկատներ, որոնցում ընդգրկված էին 25.530 մարտիկներ<sup>103</sup>:

Թուրքիայից սպառնացող վտանգը կանխելու, խորհրդային հարավային սահմաններն ամրացնելու և անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով պատերազմի սկզբին ձեռնարկվեցին նաև ռազմատակտիկական որոշակի գործողություններ: Մասնավորապես, պատերազմի նախօրյակին խորհրդաիրանական պետական սահմանի Նորաշեն-Նախիջևան հատվածում տեղակայված և Արաքս գետի երկայնքով սահմանը հսկող 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան 1941 թ. օգոստոսի 25-ին մտավ իրանական տարածք և արագորեն հասավ Թավրիզ: Խորհրդային կողմի այդ սրընթաց ռազմագործողությունը նպատակ ուներ ձախողելու Իրանը ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի մեջ ներքաշելու ֆաշիստական ծրագրերը, միաժամանակ, ինչպես ճիշտ նկատում է Կ. Հարությունյանը, նախազգուշացում էր Թուրքիային<sup>104</sup>: Մարտական առաջադրանքները կատարելուց հետո դիվիզիան 1941 թ. սեպտեմբերի սկզբին

<sup>103</sup> Տե՛ս Ավետիսյան Հ. և ուրիշ., նշվ. աշխ., էջ 54-55: Տե՛ս նաև՝ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), էջ 549:

<sup>104</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 229:

վերադարձվեց ԽՍՀՄ և ուղարկվեց խորհրդագերմանական ճակատ: Հետագայում դիվիզիան մասնակցեց 1942 թ. Ստալինգրադի հերոսական ճակատամարտին և նույն թվականի նոյեմբերից վերակազմավորվեց Կ. Վորոշիլովի անվան 51-րդ գվարդիական դիվիզիայի:

Անդրկովկասում խորհրդային ռազմապաշտպանական միջոցառումները 1941 թ. աշնանից նոր թափով ծավալվեցին: ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) 1941 թ. նոյեմբերի 13-ի որոշումով խորհրդային հանրապետություններում, այդ թվում Անդրկովկասի, ձևավորվելու էին ազգային զորամիավորումներ<sup>105</sup>:

Պատերազմի առաջին շրջանում Անդրկովկասում կազմավորվեցին բավարար չափով զինված և հանդերձավորված ավելի քան 20 նոր դիվիզիաներ, տասնյակ այլ զորամիավորումներ: Դրանց թվում էին 89-րդ, 261-րդ, 408-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները, որոնք ձևավորվեցին Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ և 46-րդ բանակների կազմում: Բացի այդ, Հայաստանում կազմավորվեցին կամ վերահամալրվեցին ևս մի քանի հրաձգային դիվիզիաներ<sup>106</sup>: Մինչև ռազմաճակատ մեկնելը դիվիզիաների զորամասերի գլխավոր խնդիրն էր՝ բարձրացնել մարտական պատրաստվածությունը, մի մասինն էլ՝ պաշտպանել անդրկովկասաթուրքական պետական սահմանը:

1942 թ. փետրվարին Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Ի. Տյուլենևը, որը շրջանը ղեկավարելու մեծ փորձ էր կուտակել դեռևս 1939-1940 թթ.: Նշանակման հրամանում նշվում է, որ Անդրկովկասյան ռազմական օկրուգն իր մեջ ներառում է Դաղստանում, Անդրկովկասի հանրապետություններում և Իրանում տեղակայված խորհրդային

<sup>105</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 201-202:

<sup>106</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 203:

գորքերը<sup>107</sup>: Մինչև 1942 թ. գարուն տարածաշրջանում տեղակայված խորհրդային զորքերի քանակը հասցվեց 25 դիվիզիայի:

1942 թ. մարտի 12-ին Թբիլիսիում Մ. Բաղիրովի, Կ. Չարկվիանիի և Գ. Հարությունյանի մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ որոշվեց մարտի 13-ից Անդրկովկասյան ռազմական օկրուգում անցկացնել ռազմաուսումնական խաղեր, և որպես հավանական հակառակորդ նկատի ունենալ Թուրքիան: «Ռազմական գործողությունները» սկսվելու էին Թուրքիայի հանրապետության հյուսիս-արևելյան տարածքների ուղղությամբ խորհրդային զորքերի հարձակումով և ավարտվելու էին Օլթիի, Սարիղամիշի, Տրապիզոնի և Էրզրումի գրավումով: Նախատեսվում էր, որ ռազմական գործողությունների երրորդ փուլում՝ 31-րդ օրը, Կարմիր բանակի առաջավոր զորամասերը մտնելու են Էրզրում<sup>108</sup>:

Անդրկովկասյան ռազմական օկրուգում տիրող իրադրությունը քննարկելու նպատակով 1942 թ. ապրիլի 25-ին Ի. Ստալինը Կրեմլում ընդունում է Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար զեներալ Ի. Տյուլենևին: Պաշտպանության պետական կոմիտեի անդամների, Գլխավոր շտաբի պետի և այլոց ներկայությամբ Ստալինը հրամայում է ուժեղացնել ռազմական օկրուգը՝ հազեցնել այն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ: Գլխավոր շտաբի ապրիլի 26-ի հրահանգների համաձայն՝ տարածաշրջան ուղարկվելու էին հրետանային զորագունդ, 6 զրահագնացք, 6 ավիազորագունդ, 100 ռազմական բեռնատար: Նախատեսվում էր նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ, այդ թվում Հայաստան, ուղարկել լրացուցիչ սարքավորումներ և հունք՝ ռազմարդյունաբերական պատվերներն ավելի լայն ժավալներով իրականացնելու համար:

<sup>107</sup> Стів Тюленев И., Через три войны, М., 1960, էջ 172:

<sup>108</sup> Стів Безугольный А., Ни войны, ни мира: Положение на советско-турецкой границе, меры советского руководства по предотвращению турецкой угрозы в первый период Великой Отечественной войны, «Военно-исторический архив», М., 2003, № 5, էջ 67-73:

Եվ իրոք, Անդրկովկասյան ռազմական օկրուգի զորամասերի զենք ու զինամթերքի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ էր դրանց պատրաստումը կազմակերպել տեղական արդյունաբերության հիմքի վրա: Ինչպես նկատում է զեներալ Տյուլենևը, «Այդ գործին լծվեցին Անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական, խորհրդային և արհմիութենական կազմակերպությունները: Նրանց օգնությամբ օկրուգի զորքերի սպառազինման խնդիրը քիչ քե շատ արագ լուծում ստացավ»<sup>109</sup>:

Ի զարգացումն վերը նշված հրահանգների, 1942 թ. մայիսի 1-ին կազմավորվեց Անդրկովկասյան ռազմաճակատը: Վերջինիս դիվիզիաների հրամանատարները շուտով հրահանգ ստացան պատրաստ լինելու Թուրքիայի հետ հնարավոր պատերազմին: Սակայն 1942 թ. մայիսի 26-ին Լոնդոնում անգլո-խորհրդային դաշինքի մասին ստորագրված պայմանագիրը որոշ ժամանակով արգելակեց խորհրդային ռազմապաշտպանական նախապատրաստությունները: Պայմանագրի ստորագրմանը նախորդել էր կողմերի միացյալ հայտարարությունը, ուր նշվում է, որ Մեծ Բրիտանիան և ԽՍՀՄ-ը «պատրաստ են ազնվորեն պահպանելու Թուրքական հանրապետության տարածքային ամբողջականությունը... և Թուրքիային տրամադրել ցանկացած օգնություն ու աջակցություն՝ եթե նա հարձակման ենթարկվի մեկ այլ պետության կողմից»<sup>110</sup>:

Այդուհանդերձ, թուրքական զորքերի շարունակվող կուտակումները խորհրդաթուրքական սահմանին և Ստալինգրադյան ճակատամարտի ամենաթեժ օրերին բարձրաստիճան թուրք ղեկավարների հակախորհրդային հայտարարություններն անհանգստացնում էին խորհրդային ղեկավարությանը: Հայտնի է, որ զերմանաթուրքական գաղտնի պայմանավորվածությունների համաձայն՝ անդրկովկասաթուրքական, այդ թվում խորհրդային Հայաստանի սահմանի երկայնքով տեղակայված թուրքական 26 դիվի-

<sup>109</sup> Тюленев И., նշվ. աշխ., էջ 173:

<sup>110</sup> Ржешевский О., Сталин и Черчилль. Встречи. Беседы. Дискуссии. Документы, комментарии. 1941-1945, М., 2004, с. 188-189.

գիաները 1942 թ. ամռանը կազմ ու պատրաստ էին խորհրդային տարածք ներխուժելու համար, եթե ֆաշիստական բանակները գրավեին Ստալինգրադն ու ամրապնդվեին Կովկասում: Այդ մասին իր հուշագրություններում վկայում է գեներալ Ի. Տյուլենևը. «Թուրքական կառավարությունը սպասում էր նպաստավոր պահի, որ իր զորքերին հրաման արձակի մեր սահմանն (անդրկովկասաթուրքական – Կ.Խ.) անցնելու համար: Կառավարությունը մտահոգացել էր հարավում խորհրդային Միությունից լայնածավալ տարածքներ պոկելու ծրագրեր:

Արդեն Անդրկովկասում իմ ձեռքն ընկավ թուրքական «Բոկկուրթ» («Գորշ գայլ» – Կ.Խ.) ամսագրի հուլիսյան համարը (1941 թ. – Կ.Խ.), որտեղ տպագրված «Մեծ Թուրքիայի» քարտեզում ներգրավված էին Անդրկովկասը և միջինասիական խորհրդային հանրապետությունները»<sup>111</sup>: Ավելացնենք, որ նշված քարտեզը կցված էր «Թուրքիզմը սպասում է» խոսուն վերնագրով ամսագրային ընդարձակ հոդվածին<sup>112</sup>:

Թուրքական իշխանությունները չէին էլ թաքցնում խորհրդային մի շարք տարածքների նկատմամբ իրենց հավակնությունները: Այդ մասին 1942 թ. ամռանը նրանք շտապեցին տեղեկացնել պաշտոնական Բեռլինին, պատրաստակամություն հայտնելով մասնակցել խնդրի լուծմանը: Մասնավորապես, առաջարկվում էին Թուրքիայի և Գերմանիայի հովանավորության ներքո Ղրիմում և Կովկասում բուֆերային պետություններ ստեղծելու տարբեր նախագծեր<sup>113</sup>: Երկրորդ աշխարհամարտի սկզբից ևեթ թուրքերը բարենպաստ իրադրության էին սպասում ԽՍՀՄ-ից Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը պոկելու համար, – եզրակացնում է ժամանակի խորհրդային պատմաբան Ի. Վասիլևը<sup>114</sup>:

<sup>111</sup> Տե՛ս Կյուլենև Ի., նշվ. աշխ., էջ 172:

<sup>112</sup> Տե՛ս Կասիլև Ի., նշվ. աշխ., էջ 58:

<sup>113</sup> Տե՛ս Արմենիա և սովետա-թուրքական օրոնոմիա և Դիվլոմատիկոսկոս Դոկումենտա 1945–1946 Կ. Ստալինգրադ, 2010, էջ 30:

<sup>114</sup> Տե՛ս Կասիլև Ի., նշվ. աշխ., էջ 54:

Պաշտոնական Անկարայի դիրքորոշումը պատերազմի գրեթե ողջ ընթացքում կրում էր ընդգծված հակախորհրդային, հակառուսական բնույթ: Բնորոշիչ են Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջոզլիի հետևյալ ռազմաշունչ հայտարարությունները. «Ռուսական խնդիրը Գերմանիան կլուծի միայն այն դեպքում, եթե ոչնչացվեն Ռուսաստանում բնակվող ռուսների առնվազն կեսը» և, «որպես թուրք, ինքը մոլեգնաբար ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը, ինչը կհանդիսանա ֆյուրերի ամենամեծ սխրանքը, որը կարող է կրկնվել հարյուր տարին մեկ»<sup>115</sup>: խորհրդային հատուկ ծառայությունների տեղեկացմամբ՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ն. Մենեմենջիօղլին մեկ առիթով հայտարարել է, որ «եթե գերմանաթուրքական համաձայնագիրն անգամ որոշակի նպաստի ԽՍՀՄ-ի պարտությանը պատերազմում, ապա այն դրական կարելի է համարել»<sup>116</sup>: Հակառուսական քարոզում թուրք պաշտոնյաներից հետ չէր մնում նաև Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինենյուն, «Թուրքիան վերին աստիճանի շահագրգռված է ռուսական հսկայի ոչնչացման մեջ», – հայտարարում էր նա<sup>117</sup>:

1942 թ. ամռանն–աշնանը գերմանաթուրքական վտանգն Անդրկովկասում այնքան իրատեսական էր դարձել, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության սեպտեմբերի 9–ի հրամանագրով Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ների տարածքում մտցվեց ռազմական դրություն: Ի կատարումն որոշման, տարածաշրջանում տեղակայված 45–րդ բանակի ռազմխորհրդի սեպտեմբերի 16–ի որոշումով սեպտեմբերի 18–ից ռազմական դրության մեջ հայտարարվե ին Հայկական ԽՍՀ և Լախիջևանի Ինքնավար ԽՍՀ ամբողջ տարածքը: Որոշման մեջ նշվեց ռազմական

<sup>115</sup> Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941–1943), М., 1946, док. 27, с. 98.

<sup>116</sup> Гасанлы Дж., СССР–Турция: от нейтралитета к холодной войне (1939–1953), М., 2008, с. 110.

<sup>117</sup> Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941–1943), с. 58.

դրությունից բխող անհետաձգելի համալիր միջոցառումների մասին<sup>118</sup>:

Ճաշխոսական Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմում Կարմիր բանակի և դաշնակից զորքերի հաղթանակները շուտով սթափեցրին թուրքական իշխանություններին: Ավելին, 1945 թ. փետրվարի 23-ին Թուրքիան շտապեց պատերազմ հայտարարել Գերմանիային և Ճապոնիային, ինչն, իհարկե, ձևական բնույթ էր կրում: Թուրքական ճկուն դիվանագիտությունը դրանով փորձում էր սիրաշահել Խորհրդային Միությանը և չեզոքացնել սպառնացող վտանգը: Սակայն, ԽՍՀՄ ղեկավարությունն աչալուրջ էր, և անմիջապես, 1945 թ. մարտի 19-ին, հանդես եկավ կառավարության հայտարարությամբ այն մասին, որ 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդաթուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, այն չեղյալ է հայտարարվում (դեմոնստրացիա): Այսպիսով, Խորհրդային Միությունն ակտիվացնում էր իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Դրա վկայությունն էր նաև այն, որ «1945 թ. ապրիլի 6-ին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն որոշում ընդունեց Անդրկովկասի ավտոմոբիլային ճանապարհները վերակառուցելու մասին, որը հեռու գնացող նպատակ էր հետապնդում և փաստորեն ռազմական նախապատրաստությունների սկիզբ էր»<sup>119</sup>:

1945 թ. մայիս-հունիսին տեղի ունեցած խորհրդաթուրքական բանակցությունների ժամանակ խորհրդային կողմը թուրքերին ծանուցեց, որ պատրաստ է նոր պայմանագիր կնքել Թուրքիայի հետ, եթե վերանայվի Բոսֆոր ու Դարդանեղ անցուղիների վերահսկողության վերաբերյալ Մոնտրյոի համաձայնագիրը և Թուրքիան Խորհրդային Միությանը վերադարձնի 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագրով Թուրքիային զիջած տարածքները՝ Կարսը, Սուր-

<sup>118</sup> St'u Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), էջ 183-185:

<sup>119</sup> Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957 թթ.), Ե., 2001, էջ 37:

մալուն, Արդահանը, Արդվինը: Համաձայնություն, սակայն, չկայացավ. թուրքական կողմը վճռականորեն մերժեց խորհրդային պահանջները: Այդ հարցում Թուրքիան ստացել էր Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի քաղաքական և ռազմական անբաքույց աջակցությունը. սկսվում էր սառը պատերազմի դարաշրջանը:

Թուրքիային Խորհրդային Միության կողմից ներկայացված տարածքային պահանջները քննարկման առարկա դարձան մեծ տերությունների ղեկավարների 1945 թ. հուլիսին տեղի ունեցած Պոտսդամի կոնֆերանսում: Սակայն պատերազմում ԽՍՀՄ-ի երբեմնի դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, վճռականապես հանդես եկան Թուրքիային պաշտպանելու դիրքերից: Վերջինիս նկատմամբ խորհրդային տարածքային պահանջները դիտարկելով «կոմունիզմի ծավալումը զսպելու» դիրքերից, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան չպաշտպանեցին ԽՍՀՄ քաղաքականությունը: Պատմական տվյալ ժամանակաշրջանում խնդիրը ներքաշվեց ԽՍՀՄ-ի և Արևմուտքի առճակատման, սկսվող սառը պատերազմի գաղափարական, ռազմավարական և քաղաքական հակամարտության ոլորտը, ինչն էլ կանխորոշեց խորհրդային կողմի համար նրա բացասական ելքը<sup>120</sup>:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների տարիներին Խորհրդային Հայաստանը դիտվում էր որպես ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ, միաժամանակ՝ հուսալի պատնեշ թուրքական հնարավոր հարձակման դեպքում: Հայաստանը, նրա պաշտպանունակության, ռազմական պատրաստվածության, ռազմապաշտպանական արդյունաբերության ներուժի հզորացման խնդիրները կարևորվում էին խորհրդային ղեկավարության և բանակի հրամանատարության կողմից:

<sup>120</sup> Մանրամասն տե՛ս Хачатрян К., Советско-турецкие отношения на начальном этапе холодной войны и Армянский вопрос (1945-1949 гг.), «Вестник РАУ», Е., 2003, № 1, с. 50-57.

## 2.2. Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորումը: Ռազմական պատվերները և արտադրանքը

### 2.2.1. Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի հիմնումը և շահագործումը

1930-ական թվականների վերջին միջազգային իրադրության կտրուկ սրումը և Երկրորդ աշխարհամարտի սկիզբը նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց խորհրդային ողջ տնտեսությանը, այդ թվում ռազմապաշտպանական արդյունաբերությանը: ԽՍՀՄ տնտեսության մեջ իրականացվող կառուցվածքային բոլոր վերակառուցումներն այսուհետ կրելու էին ռազմամոբիլիզացիոն բնույթ: Այսպես՝ 1939 թ. չորրորդ («հատուկ») եռամսյակում գործադրված Կարմիր բանակի սպառազինման մոբիլիզացիոն առաջին պլանում («ՄՊ-1») հրամայական համարվեց ինչպես երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ամբողջական վերակառուցումը և վերազինումը, այնպես էլ ոլորտի ձեռնարկությունների աշխարհագրության ընդլայնումը, նրանում ԽՍՀՄ բոլոր շրջանների ընդգրկումը: Հատուկ մոբայլաններ մշակվեցին և հաստատվեցին նաև հետագա՝ 1940 և 1941 թվականների համար: Դրանք կատարելու համար ռազմական արտադրանքի պատվերներ ստացան ԽՍՀՄ արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերի ձեռնարկությունները: Ամբողջ երկրով մեկ ծավալվեց արտադրական գործընթացի արմատական վերակառուցում: «Մինչև պատերազմը ստեղծված ռազմական գործարանների արտադրական հզորությունները պատերազմի տարիներին մի քանի անգամ ուժեղացվեցին խաղաղ արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի հզորություններով: Դրանք դրվեցին ի ծառայություն պաշտպանական, առաջին հերթին՝ մեքենաշինական, էլեկտրատեխնիկական և մետաղամշակման ճյուղերի: Ռազմական ձեռնարկությունների արտադրական

կարողությունների ավելացման խոշոր աղբյուր հանդիսացավ արքավորումների, հատկապես հաստոցների վերաբաշխումը»<sup>121</sup>:

Ջուզահեռ մեծ թափ էր հավաքում քաղաքացիական ձեռնարկությունների փոխանցումը ռազմապաշտպանական արդյունաբերության համակարգ: Գործընթացը պայմանավորված էր նաև նրանով, որ Երկրորդ աշխարհամարտի բռնկումը խորհրդային ղեկավարությանը ստիպեց էլ ավելի խստացնել երկրում կիրառվող «գաղտնիության ռեժիմը»: Ռազմական արդյունաբերության ոլորտում դրա իրականացումն ավելի ոյուրին էր, քան քաղաքացիական ձեռնարկություններում: Ռազմական արտադրանք թողարկող գործարաններն աստիճանաբար ընդգրկվեցին «հատուկ ռեժիմային գործարանների» համակարգում և համարակալվեցին խորհրդային Հայաստանում նման ձեռնարկությունների շարքում ընգրկվեցին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի Երևանի ինքնաթիռաշինական թիվ 447, ԽՍՀՄ ականանետային սպառազինության ժողկոմատի Երևանի թիվ 722 և ԽՍՀՄ ռետինե արդյունաբերության ժողկոմատի Կիրովի անվան «Սովպրեն» սինթետիկ կաուչուկի թիվ 742 գործարանները:

Ինչպես վերը նշել ենք, ռազմական արտադրանքի բնագավառում նախապատերազմյան վերջին տարիներին ԽՍՀՄ-ում առաջնությունը տրվում էր ռազմական ավիաարդյունաբերության ոլորտին: Խնդիր էր դրված ինչպես որակով, այնպես էլ արտադրանքի քանակով չզիջել Արևմուտքին՝ հատկապես Գերմանիայի ավիաարդյունաբերությանը: Վերջինիս միագումար հզորությունը 1939 թ. վերջի դրությամբ երկու անգամ գերազանցում էր խորհրդային ավիաարդյունաբերության համանման ցուցանիշը<sup>122</sup>:

Խորհրդային ղեկավարության կողմից ձեռնարկված կտրուկ և անհետաձգելի միջոցառումների շնորհիվ, որոնք ուղղված էին ավիացիոն արդյունաբերության ծավալմանը և ինքնաթիռաշինա-

<sup>121</sup> Розенфельд С., Клименко К., նշվ. աշխ., էջ 364:

<sup>122</sup> Ст'ю Шахурин А., Крылья победы, М., 1990, էջ 105:

կան նոր գործարանների արագացված շինարարությանը, պատկերը շուտով փոխվեց հոգուտ ԽՍՀՄ-ի: Արդեն Հայրենական պատերազմի սկզբին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության համակարգում գործում էր ավելի քան 100 ձեռնարկություն, 1940 թ. և 1941 թ. առաջին կեսին արտադրվեց ավելի քան 12.000 մարտական ինքնաթիռ<sup>123</sup>:

1939 թ. ամռան-աշնանը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն կարևոր որոշումներ ընդունեց «Ավիաշարժիչ գործարանների զարգացման» և «Գոյություն ունեցող ինքնաթիռաշինական գործարանների վերակառուցման ու նոր գործարանների շինարարության մասին»: Նախատեսվեց մոտակա երկու տարիների ընթացքում կառուցել 9 ինքնաթիռաշինական և 6 ավիամոտորաշինական գործարան, ինչպես նաև վերամասնագիտացնել գործող 9 մեքենաշինական գործարանները: Երկրորդ աշխարհամարտի բռնկումը խորհրդային ղեկավարությանը ստիպեց ավելի վճռական միջոցների դիմել. որոշում ընդունվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողովուհու տնօրինությանը փոխանցել քաղաքացիական մեքենաշինության ևս 60 ձեռնարկություն<sup>124</sup>: Ավիացիոն արդյունաբերության ժողովուհու հանձնարարվեց զարկ տալ ինքնաթիռաշինական ձեռնարկությունների ստեղծմանը Կովկասում ու Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում:

Ի կատարումն ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնարարականների՝ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը 1940 թ. սեպտեմբերի 19-ին ընդունեցին թիվ 1724-693 «Խիստ զաղտնի» որոշումը՝ Երևանում ինքնաթիռաշինական գործարան (թիվ 447) կառուցելու մասին<sup>125</sup>:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, որը ջանքեր էր գործադրել որոշման ընդունման համար, անմիջապես գործի անցավ: Հետժողովուրդի 1940 թ. սեպտեմբերի 25-ի «Խիստ

<sup>123</sup> Ст'я Быстрова И., ցվ. աշխ., էջ 184:

<sup>124</sup> Ст'я История социалистической экономики СССР, в семи томах, т. 5, էջ 97:

<sup>125</sup> Ст'я ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 136, թ. 16:

զաղտնի» որոշմամբ հանձնարարվեց թիվ 447 գործարանի շինարարության համար առանձնացնել Երևանի Լեպսեի<sup>126</sup> անվան գործարանի և Հետժողովուրդի անտառժողովուհու փայտամշակման արտադրամասի տարածքները, ինչպես նաև դրանց միջև ընկած 46 հեկտար հողատարածքը<sup>127</sup>: Շինարարությունն իրականացնելու համար թիվ 447 գործարանին փոխանցվեցին այդ տարածքում գտնվող բոլոր շենքերն ու շինությունները, մասնավորապես Լեպսեի անվան գործարանը և փայտամշակման արտադրամասը, լաքերի և ներկերի գործարանը, տետերի և երաժշտական գործիքների ֆաբրիկաները, «Հայմարմար» միավորման կիսակառույց շենքը և այլն: Կառավարության որոշումով շինարարական աշխատանքների իրականացումը հանձնարարվեց «Կառուչուկին» տրեստին, որը փոխանցվեց Հետժողովուրդի կառավարության անմիջական ենթակայությանը: Գործարանի ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների համար առանձնացվեցին բնակելի շենքեր և տարածքներ: Կառավարության որոշման մեկ այլ կետով՝ Հետժողովուրդի «Հայպետնախագիծ» կազմակերպությանը հանձնարարվեց «Լծել բոլոր ուժերը հույժ կարևոր այդ գործին», տրվեցին նաև այլ հանձնարարականներ<sup>128</sup>: Նշելի է, որ գործարանի մասնաշենքերի նախագծման աշխատանքները վստահվեցին «Հայպետնախագիծ» ինստիտուտի գլխավոր մասնագետ, Հայաստանի ճարտարապետների միության անդամ Վալենտինա Աճեմյանին, որը մասնագիտացել էր «արդյունաբերական համալիրների, հատկապես՝ գործարանների, ֆաբրիկաների ու կոմբինատների, դրանց վարչական շենքերի նախագծման ոլորտում»: Վ. Աճեմյանի գործուն մասնակցությամբ

<sup>126</sup> Լեպսե Իվան Իվանի (Յան Յանի, 1889-1929)՝ լատիշ խորհրդային կուսակցական, արհմիութենական գործիչ, 1924 թվականից ԽՍՀՄ արհմիությունների նախագահության անդամ: Լեպսեի անժամանակ մահվան կապակցությամբ Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն 1929 թ. հոկտեմբերին նրա անունը հավերժացնելու նպատակով առաջարկեց անվանակոչել ԽՍՀՄ բնակավայրերի փողոցներ և հրապարակներ, նրա անունով կոչել միութենական գործարաններ, ձեռնարկություններ և այլն:

<sup>127</sup> Ст'я ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 129, թ. 1:

<sup>128</sup> Ст'я նույն տեղում, թ. 1 և շրջ.:

կազմած նախագծերով միայն Երևանում կառուցվել է մեկ տասնյակից ավելի ձեռնարկություններ, այդ թվում՝ էլեկտրաշարժիչների, էլեկտրամեքենաշինական և այլ գործարաններ<sup>129</sup>։

ՀԽՍՀ կառավարության 1940 թ. սեպտեմբերի 26-ի որոշումով «Կաուչուկշին» տրեստի դռների վերանորոգման արհեստանոցը և Հայտրանսպորտի ավտոդպրոցի նորակառույց շենքը 1940 թ. հոկտեմբերից փոխանցվելու էին թիվ 447 գործարանին<sup>130</sup>։ Որոշումները ստորագրել էր ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանը։

Թիվ 447 գործարանի նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացվելու էին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ։ Շուտով Երևան ժամանեց Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովը, որը ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 24-ի թիվ 505 «խիստ գաղտնի» հրամանի համաձայն՝ ուսումնասիրելու էր Հայաստանի իշխանությունների կողմից գործարանի կառուցման համար նախատեսված տարածքները։

Ուսումնասիրություններն ավարտելուց հետո գործարանի բրիգադի պետ և նախագծի գլխավոր ինժեներ Ն. Սվայկինն ու նրա տեղակալ Ի. Ֆեդիչևը 1940 թ. հոկտեմբերի 15-ին արդյունքների մասին ընդարձակ զեկուցագրեր ներկայացրեցին ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմ Ա. Շախուրիին և ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանին։ Ձեկուցագրերում մասնավորապես նշվեց, որ հանձնաժողովն ուսումնասիրել է հետևյալ տարածքները. 1-ին՝ Վերին Չարբախ գյուղը և այն դաշտը, որը Վերին Չարբախից ձգվում է մինչև Ներքին Չարբախ և սահմանազատվում Ձանգու գետով ու թեքությամբ, որն իր հերթին ձգվում է Վերին Չարբախի և Ներքին Չարբախի միջև, 2-րդ՝ «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածքից մինչև Վերին Չարբախ գյու-

ղը. 3-րդ՝ այն տարածքը, որը ձգվում է Երևան-Թբիլիսի երկաթգծի երկայնքով՝ մի կողմից սահմանազատված տրամվայի գծով, որը զննում է դեպի «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածք, մյուս կողմում՝ գոյություն ունեցող թռիչքադաշտն էր։

Բննարկումների արդյունքում հանձնաժողովը հավանության արժանացրեց այն տարածքները, որոնք ընկած էին «Սովպրեն» շինմիավորման բնակելի տարածքի և Ներքին Չարբախ գյուղի միջև՝ ներառյալ Վերին Չարբախ գյուղը։ Ընդ որում՝ արտադրական տարածքի տակ էին ընկնում ինչպես նշված հողատարածքը, այնպես էլ «Սովպրեն» շինմիավորման և Վերին Չարբախի բնակելի տարածքների միջև ընկած քաղաքային շերտը, իսկ թռիչքադաշտի տարածքը գտնվում էր Վերին և Ներքին Չարբախի բնակելի տարածքների միջև։

Ձեկուցագրում նշվում է նաև գործարանի կառուցման համար անհրաժեշտ տարածքների ընհանուր չափի մասին. ա) արտադրական տարածքի համար հատկացվող հողեր քաղաքային հողերից՝ 105,4 հեկտար, բ) թռիչքադաշտի համար հատկացվող հողատարածք Վերին Չարբախ գյուղից՝ 311,8, այդ թվում ծառատնկարաններ և այգիներ՝ 74,04, գյուղացիական տներ և տնամերձ հողատարածքներ՝ 65,86, վարելահողեր՝ 147,9, այլ հողատարածքներ (ոչ գյուղատնտեսական նշանակության)՝ 24,0, Ներքին Չարբախ գյուղից՝ 14,0, այդ թվում ծառատնկարաններ և այգիներ՝ 1,0, գյուղացիական տնակներ և տնամերձ հողեր՝ 1,40, վարելահողեր՝ 11,6 հեկտար։ Ձեկուցագրի վերջում խնդրվում է շինարարությունն իրականացնելու համար կառավարության որոշումով ձևակերպել նշված հողատարածքների օտարումը թիվ 447 գործարանի կառուցման համար<sup>131</sup>։

Նույն օրը՝ հոկտեմբերի 15-ին, ՀԽՍՀ ժողկոմխորհը որոշեց գործարանի կառուցման համար հատկացնել հանձնաժողովի ընտրած հողատարածքները՝ ընդհանուր առմամբ 431,2 հեկտար,

<sup>129</sup> Տե՛ս Հայուհիներ. հանրագիտարան 2 հատորով, հ. 2, Ե., 2011, էջ 562։

<sup>130</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 24, գ. 130, թ. 1։

<sup>131</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 136, թ. 4, 10-11։

որից 105,4-ը՝ քաղաքային հողատարածք, 311,8-ը՝ Վերին Չարբախի հողատարածք և 14,0-ը՝ Ներքին Չարբախի<sup>132</sup>: Որոշման մասին Ա. Փիրուզյանի ստորագրությամբ զեկուցագիր ուղղարկվեց ԽՍՀՄ Ժողկոմիստրիի նախագահ Վ. Սոլոտովին<sup>133</sup>: Թիվ 447 գործարանի կառուցման աշխատանքների ընթացքի մասին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը, ով «ամեն օր լինում էր շինարարական հրապարակում, տեղում լուծում բազմաթիվ հարցեր»<sup>134</sup>, 1941 թ. փետրվար-հունիս ամիսներին կանոնավոր՝ ամիսը մեկ (երբեմն մի քանի անգամ), զեկուցագրերով տեղեկացնում էր Ի. Ստալինին<sup>135</sup>: Դրանցից մեկում Հարությունյանը հայտնում է, որ նախատեսվում է գործարանի կառուցման աշխատանքներն ավարտել 1942 թ. փետրվարին<sup>136</sup>:

Շուտով Ուկրաինայի հարավից Հայաստան տեղափոխվեցին ինքնաթիռաշինական գործարանի համար անհրաժեշտ սարքավորումներ, դրանք տեղադրելու համար ժամանեցին Միության ավիացիոն գործարանների որակյալ մասնագետներ և, ինչպես իր հուշերում վկայում է ՀԽՍՀ պետական-կուսակցական գործիչ Ե. Ասծատրյանը, գործարանում արագ կազմակերպվեց արտադրությունը: Բայց, «ելնելով սկսված պատերազմի պայմաններից, կենտրոնական մարմինները որոշում են սառեցնել գործարանի շինարարությունը»<sup>137</sup>:

Հայրենական պատերազմի սկսվելուց հետո ԽՍՀՄ կառավարության որոշումներով երկրում ընդհատվեց արդյունաբերական հարյուրավոր խոշոր ձեռնարկությունների շինարարությունը: Հայաստանում դրանց թիվը հասավ 30-ի: Վերջինների շինարարութ-

<sup>132</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 15:

<sup>133</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 16 և շրջ.:

<sup>134</sup> Ավետիսյան Հ. և ուրիշ., նշվ. աշխ., էջ 47: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին, էջ 323-325:

<sup>135</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 65, թ. 52-58, 63-71, 77-82, 89-94, 101, 102 և այլն:

<sup>136</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 57-58:

<sup>137</sup> Տե՛ս Ասծատրյան Ե., 20-րդ դար. Հայաստանի կառուցման ճանապարհին (Հուշեր): Գիրք առաջին, Ե., 2004, էջ 102:

յան համար նախատեսված ֆինանսական և նյութական միջոցներն ու աշխատուժն ուղղվեցին ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնմանը:

Այդուհանդերձ, արդեն 1942 թ. աշնանից գործարանում սկսեցին իրականացվել մարտերում վնասված մարտական ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ: Մինչև 1942 թ. ավարտը թիվ 447 գործարանում վերանորոգվեց 36 միավոր ինքնաթիռ: 1942 թ. հետո համեմատ 1943 թ. գործարանն առաջադրանքները գերակատարեց 46,4 %-ով<sup>138</sup>:

Նշելի է, որ մարտական ինքնաթիռների վերանորոգման որոշակի փորձ Հայաստանում ձեռք էր բերվել դեռևս առաջին հանրապետության տարիներից, երբ ազգային բանակում ձևավորվել և զործում էր տարբեր մակնիշի ինքնաթիռներից բաղկացած հայկական ավիաջոկատ: Արտասահմանից Հայաստան բերված ինքնաթիռների հավաքումը, ինչպես նաև վնասված մարտական ինքնաթիռների նորոգումն իրականացնելու համար այն ժամանակ կազմակերպվեցին հատուկ արհեստանոցներ<sup>139</sup>:

Ցուցաբերած տպավորիչ արդյունքների շնորհիվ Երևանի թիվ 447 գործարանը շուտով հայտնվեց ԽՍՀՄ ղեկավարության ուշադրության կենտրոնում: 1943 թ. դեկտեմբերի 1-ին լույս տեսավ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմ Ա. Շախուրիների թիվ 716 «զաղտնի» հրամանը<sup>140</sup>:

Ի կատարումն ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1943 թ. հոկտեմբերի 8-ի թիվ 4290 «զաղտնի» որոշման՝ Շախուրինը հրամայում էր.

<sup>138</sup> Տե՛ս Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1982, էջ 30:

<sup>139</sup> Տե՛ս Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 49-50: Տե՛ս նաև՝ Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 35:

<sup>140</sup> Հիմնախնդրի լուսաբանման համար կարևոր սույն նորահայտ արխիվային փաստաթուղթը նպատակահարմար ենք գտել ներկայացնել գրեթե ամբողջությամբ:

1. Թիվ 447 գործարանում կազմակերպել «Յակ-3» ինքնաթիռների ագրեգատների արտադրությունը և, առաջին հերթին, թիվ 31 գործարանի (գտնվում էր Թբիլիսիում – Կ.Խ.) համար պատրաստել ինքնաթիռների թևեր: Նկատի ունենալ, որ հետագայում թիվ 447 գործարանն անցնելու է ամբողջական կործանիչների ինքնուրույն թողարկմանը՝ թիվ 31 գործարանի հետ կոոպերացիայի միջոցով:

2. Թիվ 447 գործարանի բանվորներին և ինժեներատեխնիկական անձնակազմին դասել վճարման 2-րդ հատուկ կարգին:

3. Թիվ 292 գործարանի (գտնվում էր Մոսկվայում – Կ.Խ.) տնօրեն Լևինին պարտավորեցնել թիվ 447 գործարանին տրամադրել տեխնիկական փաստաթղթեր և գծագրեր՝ «Յակ-3» ինքնաթիռների մասերի արտադրությունը կազմակերպելու համար:

4. Կապիտալ աշխատանքների ծավալը թիվ 447 գործարանում 1943 թ. չորրորդ եռամսյակի և 1944 թ. առաջին կիսամյակի համար սահմանել 12 մլն ռուբլի:

5. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ Վիգիյանին<sup>141</sup> թիվ 447 գործարանին հատկացնել շինանյութեր և անհրաժեշտ սարքավորումներ:

6. ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի սարքավորումների գլխավոր վարչության պետ Գրիշինին և պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի արտասահմանյան բաժնի պետ Ռոմանովին՝ վերահսկել, որ 1943 թ. չորրորդ եռամսյակում և 1944 թ. առաջին եռամսյակում թիվ 447 գործարանին տրամադրվեն արտասահմանից ներմուծվող դարբնոցամամլիչ և մետաղակտրիչ սարքավորումները՝ ընդհանուր 250 միավոր, լաբորատոր սարքավորումներ՝ 250 հազար, գործիքներ՝ 400 հազար ռուբլի չափով, ինչպես նաև Անդրկովկասին հատկացվող ընդհանուր քանակից 10 բեռնատար ավտոմեքենա:

<sup>141</sup> Գուրգեն Վարդանի Վիգիյանը 1942–1947 թթ. զբաղեցրել է ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմի (նախարարի) տեղակալի պաշտոնը:

7. ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության ժողկոմատի էլեկտրականություն մատակարարող գլխավոր վարչության պետ Տեր-Եղիազարովային՝ թիվ 447 գործարանին հոսանք մատակարարելու համար հատկացնել անհրաժեշտ սարքավորումներ:

8. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ Սանդլերին՝ 1943 թ. չորրորդ եռամսյակում գործարանում արտադրությունը սկսելու համար հատկացնել անհրաժեշտ նյութեր:

9. Թիվ 84 գործարանի (գտնվում էր մերձմոսկովյան Խիմկիում, 1941 թ. դեկտեմբերին էվակուացվել էր Տաշքենդ – Կ.Խ.) տնօրեն Յարունինին՝ ս.թ. դեկտեմբերին թիվ 447 գործարանին տրամադրել մեկ «Լի-2» ինքնաթիռ:

10. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ Շորինին՝ 1943 թ. չորրորդ եռամսյակից թիվ 447 գործարանի աշխատողներին հատկացնել լրացուցիչ սնունդ:

11. Հիդրոավիաարդի պետ Շտեյներգին՝ ապահովել գործարանի շինարարությունը տեխնիկական փաստաթղթերով, ինչպես նաև կազմավորել հատուկ բրիգադ՝ նախագիծն իրացնելու նպատակով թիվ 447 գործարանին տեխնիկական այլ օգնություն ցույց տալու համար:

12. Թույլատրել թիվ 447 գործարանին Ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի առաջին գլխավոր վարչությանը կից կազմակերպել մշտական ներկայացուցչություն՝ երկու հաստիքային աշխատակցով:

13. Ավիացիոն արդյունաբերության ժողկոմի տեղակալ Տարասովին՝ թիվ 447 գործարանի արտադրությունը շտապ կազմակերպելու նպատակով հատկացնել բարձր որակավորում ունեցող բանվորական ուժ<sup>142</sup>:

Նշենք, որ ԽՍՀՄ Պաշտպանության պետկոմի 1943 թ. հոկտեմբերի 8-ի որոշումով ԽՍՀՄ արտաքին առևտրի ժողկոմ Անաստաս Միկոյանին կարգադրվեց թիվ 447 գործարանին հատկացնել ար-

<sup>142</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 57, ք. 180 և շրջ.:

տասահմանից ներմուծվող մետաղակտրիչ և դարբնոցամամլիչ, լաբորատոր սարքավորումներ ու գործիքներ, բեռնատար ավտոմեքենաներ և այլն:

Պաշտպանության պետկոմը հանձնարարական էր իջեցնում նաև ՀԽՍՀ ժողկոմխորհին: Համաձայն դրա՝ վերջինս պարտավոր էր կապիտալ շինարարությունն (գործարանի արդյունաբերական մասնաշենքերի 60.000 քմ և բնակելի մասնաշենքի 8.000 քմ տարածքում) ավարտել մինչև 1944 թ. կեսերը:

Նույն որոշմամբ ԽՍՀՄ ժողկոմխորհի աշխատանքային ռեզերվների վարչության պետ Մոսկատովին հանձնարարվեց 1943 թ. չորրորդ եռամսյակում թիվ 447 գործարանին կից կազմակերպել արհեստագործական ուսումնարան՝ 800 սովորողով, և ուսումնարանի ողջ թողարկված ամրագրել գործարանին: Պաշտպանության պետկոմի որոշումով հանձնարարականներ ստացան նաև այլ գերատեսչությունների ղեկավարները: Մասնավորապես՝ ԽՍՀՄ առևտրի ժողկոմ Լյուբիմովին հանձնարարվեց թիվ 447 գործարանի ինժեներատեխնիկական անձնակազմի և բանվորների մթերային մատակարարումը հավասարեցնել հատուկ ցուցակով մատակարարվող պաշտպանական ձեռնարկությունների մատակարարումների չափին և այլն<sup>143</sup>:

Խորհրդային ղեկավարության այս համալիր որոշումները (չէր անտեսվում գործարանի համար որակյալ երիտասարդ կադրերի պատրաստումը և աշխատողների մթերային հատուկ մատակարարումը), որոնց ընդունման գործում մեծ էր նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարության դերը, ոգևորությամբ ընդունվեցին Երևանում: Գործարանի աշխատողները՝ բանվորից մինչև տնօրեն, լծվեցին անդուլ աշխատանքի: Արդեն 1943 թ. վերջին գործարանը տվեց առաջին արտադրանքը՝ «Յակ-3» կործանիչ ինքնաթիռների պահեստամասեր, թևեր և շասսիներ (գետնի վրա ինքնաթիռի շարժվելու անվահամակարգ):

<sup>143</sup> Տե՛ս նույն տեղում:

Եթե սկզբնական շրջանում գործարանի արտադրանքն ուղարկվում էր Թբիլիսի՝ ինքնաթիռների վերջնական հավաքման համար, ապա նախատեսվում էր, որ 1945 թվականի առաջին կիսամյակից գործարանն անցնելու է պատրաստի ինքնաթիռների արտադրանք: Այդ մասին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց 1944 թ. հունիսի 20-ին: Գործարանի տնօրեն Վ. Նաջարյանին<sup>144</sup> և գլխավոր ինժեներ Լիտվինենկոյին հանձնարարվեց 1944 թ. վերջին ավարտին հասցնել նոր արտադրամասերի կառուցումը: Հանձնարարվում է նաև ավելացնել բանվորների և ինժեներատեխնիկական անձնակազմի քանակը, կազմակերպել նրանց վերապատրաստումը, արտադրության մեջ ներգրավել գործարանին կից արհեստագործական ուսումնարանի շրջանավարտներին, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետների միութենական ինքնաթիռաշինական այլ գործարաններից և այլն<sup>145</sup>:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում Հայրենական պատերազմի ավարտական փուլում Երևանի թիվ 447 գործարանում կազմակերպվեց «ՈՒՏ-2Ս» ուսումնամարզական թեթև ինքնաթիռների շարային արտադրություն<sup>146</sup>:

Վնասված ռազմական ինքնաթիռների վերանորոգումից, «Յակ-3» կործանիչների պահեստամասերի, թևերի և շասսիների արտադրությունից բացի՝ թիվ 447 գործարանը պատերազմի տարիներին մասնակցեց նաև հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև կենտրոնական մարմինների կողմից դրված զինամթերքի, ռազմաճակատի համար այլ արտադրանքի պատվերների կատարմանը: Պատե-

<sup>144</sup> Հետաքրքիր է, որ Նաջարյանից առաջ գործարանի տնօրենի պաշտոնում 1943-1944 թթ. միմյանց փոխարինել են Փափախյանը, Խաչատրյանը և Աթոյանը՝ յուրաքանչյուրը պաշտոնավարելով ընդամենը մի քանի ամիս:

<sup>145</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), էջ 280-281:

<sup>146</sup> Տե՛ս Մանուկյան Հ., Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941-1945 թթ.), Ե. 2000, էջ 65: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք երկրորդ, Ե., 2008, էջ 270-273: Նաև՝ ՀԱՍ, ֆ. 313, ց. 1, գ. 8, թ. 103-104:

րազմի ընթացքում գործարանում արտադրվեցին «ՊՏՄ», «ՅաՄ-5Մ» և «ՏՄԴ-Բ» տեսակի հակատանկային, ինչպես նաև «ՊՊՄ» տեսակի հակահետևանկային ականների պատյաններ, Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում արտադրվող 82 մմ-ոց (միլիմետրանոց) բեկորային ականների համար հատուկ դարսելու արկղեր, ռազմական սայլակառքեր, բեռնատար սահնակներ և այլն<sup>147</sup>:

Պատերազմից հետո Երևանի թիվ 447 գործարանը վերափոխվեց էլեկտրամեքենաշինական գործարանի, ներդրումներ կատարվեցին շինարարությունն ավարտին հասցնելու համար: Գործարանը վերամասնագիտացվեց զեներատորների, ուժային տրանսֆորմատորների, շարժական էլեկտրակայանների արտադրության գործում: Տարիների ընթացքում այն դարձավ ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի կարևոր ձեռնարկություններից մեկը:

### **2.2.2. Արդյունաբերության վերակառուցումը և ռազմական արտադրության կազմակերպումը Հայրենական պատերազմի առաջին փուլում (1941–1942 թթ.)**

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության ղեկավարման գործում որոշիչ էր 1941 թ. հունիսի 30-ին ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեի դերը, որը գլխավորում էր խորհրդային պետության ղեկավար Ի. Ստալինը: Կոմիտեն պլանավորում և համակարգում էր ռազմական արտադրության ամբողջ գործընթացը. երկրի որ գործարանում և ինչ քանակությամբ զենքի ու ռազմամթերքի արտադրություն պետք է կազմակերպվեր, որ ձեռնարկությունների հետ կոոպերացիայի միջոցով ու համագործակցությամբ և այլն<sup>148</sup>:

<sup>147</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 8, գ. 75, թ. 3:

<sup>148</sup> ՊՊԿ-ն պատերազմի 50 ամիսների ընթացքում կայացրեց և հրապարակեց շուրջ 10 հազար (9971) տարբեր հրահանգներ և որոշումներ, որոնց երկու

ՊՊԿ-ի անմիջական ղեկավարության ներքո աշխատում էին ԽՍՀՄ պետպլանը, բոլոր ժողկոմատներն ու գերատեսչությունները, այդ թվում տնտեսության և արդյունաբերության ոլորտների: Ռազմական վերակառուցումը նախատեսում էր երկրում գոյություն ունեցող բոլոր միջոցների՝ նյութական, ֆինանսական, աշխատուժի և այլն, մոբիլիզացում, դրանց կենտրոնացում և փոխանցում ռազմական տնտեսությանը՝ քաղաքացիական պահանջարկի կտրուկ սահմանափակման պայմաններում: Հարկավոր էր նաև արտադրության բնագավառում կարճ ժամանակում իրականացնել արտադրական տեխնոլոգիաների արմատական վերակառուցում:

Պատերազմի հաջորդ իսկ օրը՝ 1941 թ. հունիսի 23-ին, ԽՍՀՄ ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ գործողության մեջ դրվեց դեռևս հունիսի 6-ին կառավարության կողմից հաստատված ռազմամթերքի արտադրության մոբիլիզացիոն պլանը: Իսկ արդեն հունիսի 30-ին հաստատվեց 1941 թ. երրորդ եռամսյակի մոբիլիզացիոն նոր պլանը, որով նախանշվեցին արդյունաբերության վերակառուցման հիմնական ուղղությունները: Արդյունաբերության շատ ճյուղեր ամբողջությամբ կամ մասնակիորեն անցան ռազմական պատվերների կատարմանը<sup>149</sup>:

Համընդհանուր մոբիլիզացիայի օրինակ էր ռազմամթերքի և ռազմամթերքի մասերի արտադրության կազմակերպումը, դրանում ընդգրկվեցին ԽՍՀՄ բոլոր շրջանների բազմաթիվ ձեռնարկություններ: Սակայն պատերազմի առաջին ամիսների ժանր պարտությունները և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ԽՍՀՄ տարածքների կորուստը, որտեղ կենտրոնացված էին արդյունաբերական խոշոր կարողություններ, ստիպեցին երկրի իշխանություններին դեպի ԽՍՀՄ արևելյան շրջաններ էվակուացնել ռազմապաշտպանական արդյունաբերության հարյուրավոր գոր-

երրորդը վերաբերվում էր ռազմական արտադրության կազմակերպման հարցերին:

<sup>149</sup> Տե՛ս Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1982, էջ 10–11:

ծարաններ, այստեղ գործարկել նոր ձեռնարկություններ: Խորհրդային բանակի սպառազինության հիմնական արտադրանքը պետք է թողարկեին խորը թիկունքի շրջանները՝ դառնալով ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության կարևորագույն հենակետեր<sup>150</sup>: Խնդրի լուծման ճանապարհին կարևոր նշանակություն ունեցան ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1941 թ. օգոստոսի 16-ին հաստատված ԽՍՀՄ արևելյան շրջանների 1941 թ. չորրորդ եռամսյակի և 1942 թ. ռազմատնտեսական պլանները<sup>151</sup>: Դրանց իրականացման արդյունքում պատերազմի առաջին տարվա ընթացքում թիկունքում կառուցվեցին շուրջ 3,5 հազար արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ: Արդեն 1942 թ. առաջին կիսամյակում երկրի պաշտպանական արդյունաբերությունը վերականգնեց կորցրած հզորությունները<sup>152</sup>:

Համաձայն հաստատված պլանների՝ Պաշտպանության պետական կոմիտեի կողմից ռազմական արտադրանք արտադրելու հաճնարարականներ ստացան նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները, այդ թվում Խորհրդային Հայաստանը: Միութենական հանրապետություններում ու մարզերում հաճնարարականների համակարգումը և վերահսկումը ապահովելու նպատակով ՊՊԿ-ն տեղերում ուներ իր ներկայացուցիչներին, որոնք օժտված էին գրեթե անսահմանափակ լիազորություններով:

Հայրենական պատերազմի սկզբից Մոսկվան պահանջում էր, որ խորհրդային հանրապետությունների իշխանությունները պարբերաբար, 10 օրը մեկ, հաշվետվություններ ուղարկեին Մոսկվա՝ ԽՍՀՄ կառավարություն և ՀամԿ(բ)Կ Կենտկոմ: ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին և ՀԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանին 1941 թ. օգոստոսի կեսերին ուղղված

<sup>150</sup> Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), էջ 580:

<sup>151</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 138:

<sup>152</sup> Տե՛ս Чадаев Я., Экономика СССР в период Великой Отечественной войны (1941–1945), М., 1965, էջ 177, 203:

հեռագրում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Հատուկ սեկտորի պետ Ա. Պոսկրեբիշևը հայտնում է, որ համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. հունիսի 23-ի որոշումի՝ «հաշվետվություններում հարկավոր է ներկայացնել ռազմամթերքի արտադրության պլանի կատարողականները, պետք է նշել նաև ձեռնարկությունների անունները, արտադրանքի տեսակը, ամսական պլանը, արտադրանքի հանձնումը ռազմական ներկայացուցչին յուրաքանչյուր ամսվա 10-ի, 20-ի և 30-ի (31-ի) դրությամբ՝ հաշվետու ամսվա սկզբից աճողական ամփոփմամբ: Արտադրանքը պետք է ցույց տալ հատով»<sup>153</sup>: Ի պատասխան՝ 1941 թ. օգոստոսի 29-ին Գ. Հարությունյանը, ով նաև Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ էր, հայտնում է Պոսկրեբիշևին, որ Հայաստանի իշխանությունները ճշտապահ են և սահմանված կարգով արդեն ուղարկել են հինգ ամփոփագրեր, իսկ վերջինը՝ 1941 թ. օգոստոսի 21-ին<sup>154</sup>:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանն ամենայն պատասխանատվությամբ մասնակից էր դառնում ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության առջև ՊՊԿ-ի կողմից դրված մեծածավալ խնդիրների լուծմանը: Իրավացի է հետազոտող Գ. Խաչատրյանը, երբ նշում է, «որ դրա իրականացման համար հանրապետությունում կային անհրաժեշտ նախապայմաններ, որոնցից հիմնականը բազմաճյուղ արդյունաբերությունն էր»<sup>155</sup>: Եվ իրոք, ինչպես ճիշտ նկատում է խնդիրն առաջիններից մեկն ուսումնասիրած Գ. Ալահվերդյանը, «Հանդիսանալով ԽՍՀՄ արդյունաբերական շրջաններից մեկը, Հայկական ԽՍՀ-ն պատերազմի նախօրյակին ուներ բավականին զարգացած ծանր արդյունաբերություն, որը մասնագիտացված էր գունավոր մետաղագործության և քիմիական արդյունաբե-

<sup>153</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 91, ք. 125:

<sup>154</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>155</sup> Տե՛ս Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 53: Տե՛ս նաև՝ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), էջ 581:

րության մեջ: Այդ ճյուղերը կարևոր դերակատարում ունեին հանրապետության պաշտպանական արդյունաբերությունում»<sup>156</sup>: Ժամանակի վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր համախառն արտադրանքի նկատմամբ 1913 թ. 23,7 %-ից 1941 թ. աճել էր մինչև 62,4 %<sup>157</sup>:

Հանրապետության տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու և ռազմականացնելու գործում մեծ դեր ունեցան ՀԽՍՀ կառավարությունը, կուսակցական, խորհրդային և իշխանության այլ մարմինները: Նշելի է, որ պատերազմի ընթացքում տեղի ունեցած ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 13 պլենումներում քննարկման առարկա են դարձել ռազմական, ռազմատնտեսական և ռազմամոբիլիզացիոն բնույթի ավելի քան 30 կարևոր հարցեր<sup>158</sup>: Շնորհակալ գործունեություն ծավալվեց հանրապետության տնտեսությունը պատերազմի պահանջներին վերակառուցելու, ռազմական պատվերները ժամանակին և որակով կատարելու, նոր ձեռնարկությունների կառուցման, արտադրական նոր գործընթացների ներդրման, երկրի ռազմաարդյունաբերական գործարաններին ռազմավարական հումք՝ մոլիբդեն<sup>159</sup>, կարբիդ, կաուչուկ, կաուստիկ սոդա, կարբինոլ մատակարարելու և այլ խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: Որոշիչ նշանակություն ունեցավ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 9-րդ պլենումը (1941 թ. նոյեմբերի 19-20-ը): Խնդիր դրվեց սեղմ ժամկետներում ավարտել հանրապետության ժողովրդական տնտեսության ամբողջական փոխադրումը ռազմական ուղու վրա, և առավելագույնս արդյունավետ օգտա-

<sup>156</sup> Аллахвердян Г., К характеристике промышленности Армянской ССР в период Отечественной войны, «Известия АН Арм. ССР (Общественные науки)», Е., 1954, № 2, с. 3.

<sup>157</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, ք. 35:

<sup>158</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), էջ 750:

<sup>159</sup> Մոլիբդենը մետաղին տալիս է ամրություն, ինչը կարևոր է հատկապես ռազմական արդյունաբերության արտադրանքի համար: Մոլիբդենի հարուստ հանքավայրերից է Քաջարանը:

արժեքով արտադրական կարողությունները՝ ամբողջությամբ անցնել ռազմական արտադրանքի պատվերների կատարմանը: Հանրապետության մեքենաշինական և մետաղագործական գործարանների ղեկավարությանը հանձնարարվեց ամբողջությամբ անցնել Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմխորհրդի կողմից պահանջվող սպառազինության, ռազմամթերքի, դրանց համար առանձին մասերի արտադրությանը<sup>160</sup>:

Գործադիր իշխանության կարևոր գործառույթներ էր իրականացնում ՀԽՍՀ ժողկոմխորհին կից գործող պետական կարգադրիչ մարմինը՝ «Համատեղ նիստը» («Փոքր ժողկոմխորհի նիստ»), որն օժտված էր մեծ լիազորություններով: Վերջինս ղեկավարում և համակարգում էր հանրապետության ռազմական տնտեսությունը, ռազմապաշտպանական արդյունաբերության աշխատանքները, ռազմական պատվերների կատարումը: Նրա կազմում էին ժողկոմխորհի նախագահ Արամ Փիրուզյանը, որը նաև «Համատեղ նիստի» նախագահն էր, նրա տեղակալ Գուրգեն Չոլախյանը, Կենտկոմի ռազմական բաժնի վարիչ Ա. Մկրտչյանը, Անդրկովկասյան ռազմական օկրուգի մատակարարման վարչության ներկայացուցիչ Վաստվր, ՀԽՍՀ պետպլանի նախագահ Բ. Աստվածատրյանը, տեղական արդյունաբերության ժողկոմ Լ. Խաչատրյանը, հանրապետության զինկոմ Գ. Ասատրյանը և ուրիշներ<sup>161</sup>:

Կարճ ժամանակահատվածում հաղթահարելով ռազմական արտադրանք թողարկելու հետ կապված բազմաթիվ դժվարությունները՝ հանրապետության արդյունաբերությունը պատերազմի սկզբից սկսեց կատարել Անդրկովկասյան ռազմական օկրուգի նրամանատարության պատվերները: Արդեն 1941 թ հուլիսին միայն Տեղարդժողկոմատի, Հայարտխորհրդի և Հայանտառարդ

<sup>160</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 101-102:

<sup>161</sup> Տե՛ս Խաչատրյան Գ., նշվ. աշխ., էջ 51:

համակարգի ձեռնարկությունները կատարում էին շուրջ 80 ռազմական տարբեր պատվերներ<sup>162</sup>:

Ձեռնարկություններում, որոնք ներգրավվեցին ռազմապաշտպանական պատվերներ կատարելու գործին, իրականացվեցին նախապատրաստական հսկայական աշխատանքներ՝ գործող արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցում և փոխարկում քաղաքացիականից ռազմական արտադրանք արտադրելուն, նոր արտադրամասերի կազմակերպում և նոր գործարանների ստեղծում արդյունաբերության առկա ճյուղերի հիման վրա: Հրատապ լուծում էին պահանջում նաև հումքային և նյութատեխնիկական սակավ միջոցների մոբիլիզացման, զենք ու զինամթերքի գծագրերի, տեխնիկական փաստաթղթերի, անհրաժեշտ բոլոր սարքավորումների ու գործիքների ձեռքբերման և արտադրության մեջ ներդրման, տեխնոլոգիական նոր գործընթացների իրացման և այլ խնդիրները: Հայաստանի իշխանություններն առավել կարևորում էին ներմուծվող ռազմավարական հումքի խնդիրը, քանի որ դա էր ռազմական արտադրություն կազմակերպելու գլխավոր նախապայմանը: Պետք է նկատի ունենալ, որ նախապատերազմյան տարիներին Հայաստանն ամբողջությամբ ներկրում էր գունավոր և սև մետաղներ, տարբեր տեսակի խողովակներ, մետաղական արտադրանք, տարբեր սարքավորումներ, պահեստամասեր ու գործիքներ, բոլոր տեսակի ռետինե և ասբեստային սարքավորումներ, քիմիկատներ, վառելանյութեր և քուրքներ, անտառանյութ, ապակի և այլն<sup>163</sup>:

Հանրապետությունում հրատապ լուծում էր պահանջում նաև արդյունաբերությունում աշխատող մասնագետների վերապատրաստման ու նոր կադրերի պատրաստման խնդիրը: Հարկ է նկատի ունենալ, որ պատերազմի տարիներին հանրապետությունից Կարմիր բանակ զորակոչվեցին բարձր որակավորում ունեցող ին-

<sup>162</sup> Տե՛ս Григорьянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920–1965), Е., 1966, էջ 219:

<sup>163</sup> Տե՛ս Аллахвердян Г., նշվ. աշխ., էջ 4–5:

ժեներատեխնիկական աշխատողների մոտ 35 %-ը, իսկ արտադրությունում մնացածների շուրջ 50 %-ը թոշակի տարիքի էին, հաշմանդամներ ու կանայք<sup>164</sup>: Սա լուրջ խնդիրներ էր առաջացնում հատկապես պաշտպանական արդյունաբերության ոլորտում: Հանրապետությունում խնդիրը մասնակիորեն կարգավորվեց այնպես, որ առավել որակյալ մասնագետներն ամրագրվեցին պաշտպանական նշանակության ձեռնարկություններում: Սակայն այդպիսի մասնագետները համեմատաբար քիչ էին և կազմում էին նախապատերազմյան շրջանի ինժեներատեխնիկական անձնակազմի ընդհանուր թվի ընդամենը 25 %-ը<sup>165</sup>:

Ինչպես վերը նշել ենք, Խորհրդային Հայաստանում առաջինը ռազմական պատվերներ սկսեցին կատարել թեթև արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի տեքստիլ ձեռնարկությունները: Դա կարելի է բացատրել նրանով, որ ի տարբերություն ծանր արդյունաբերության, թեթև արդյունաբերությունը հանրապետությունում արագ վերակառուցվեց: Երևանի կարի 1–ին և 2–րդ ֆաբրիկաներում, կաշվի գործարանում, Լենինականի տեքստիլ կոմբինատում, Ստեփանավանի և Կիրովականի արտելներում արտադրվում էին հրացանների համար ուսագոտիներ, ատրճանակի պատյաններ, զինվորական համազգեստ՝ շինելներ, շինելի փաթեթագլաններ, կիսամուշտակներ, կաշեգոտիներ, կոշիկեղեն, ռազմահանդերձանք, թամբեր և այլն: Լենինականի տեքստիլ կոմբինատում իրացվեց հատուկ տեսակի տեխնիկական գործվածքի (բելդինգ և կորդ) արտադրությունը, որոնք լայնորեն օգտագործվում էին ռազմական արտադրանքի համար<sup>166</sup>: Արդեն 1941 թ. վերջին Երևանի կարի ֆաբրիկաների, կաշվի գործարանի, Լենինականի

<sup>164</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 208:

<sup>165</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>166</sup> Տե՛ս Կոզմոյան Կ., Լենինական, Ե., 1957, էջ 87:

տեքստիլ կոմբինատի արտադրանքի մեջ ռազմական պատվերների բաժինը կազմեց 100 %<sup>167</sup>:

Այդուհանդերձ, ռազմական արտադրանքի գլխավոր տեսակահին զենքն ու ռազմամթերքն էր, որի արտադրությանը լծվեցին հանրապետության ծանր արդյունաբերության մեխանիկական, մետաղամշակման, գունավոր մետաղագործության, քիմիական միջարք ձեռնարկություններ: Դրանց թվում էին Ձերժինսկու անվան Երևանի մեքենաշինական գործարանը, որն առաջինը ձեռնարկեց ռազմամթերքի արտադրությունը, Երևանի մեխանիկական և կարբիդի գործարանները, Երևանի տեղական արդյունաբերության մեխանիկական արհեստանոցը, Երևանի շարժիչների վերանորոգման գործարանը, Լենինականի մեխանիկական գործարանը, Արզնիի հանքային ջրերի գործարանի մեխանիկական արհեստանոցը, Երևանի Կիրովի անվան «Սովպրեն» սինթետիկ կաուչուկի թիվ 742 և Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատները, Ալավերդու պղնձածուլական գործարանը, Կապանի հանքահարստացուցիչ ֆաբրիկան և այլն:

Ինչպես նկատում է Գ. Ալահվերդյանը, «պաշտպանական արդյունաբերության առաջատար ճյուղը՝ մետաղամշակումը, հանրապետությունում թույլ էր զարգացած, և ներկայանում էր մեքենաշինական մեկ գործարանով, մի քանի ոչ մեծ, բայց ինքնուրույն մեխանիկական գործարաններով և տարբեր հզորությամբ մեխանիկական բազմաթիվ արհեստանոցներով: Դրանց մի մասը ինքնուրույն ձեռնարկություններ էին, մի մասը՝ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների, մեքենա-տրակտորային կայանների օժանդակ արտադրամասեր և այլն ... Այդուհանդերձ, պատերազմի տարիներին հանրապետության մետաղամշակման արդյունաբերությունը, որոշ վերակառուցումից հետո, կարողացավ ակտիվ մասնակցություն ունենալ

<sup>167</sup> Տե՛ս Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Ե., 2003, էջ 181:

պաշտպանական աշխատանքներում, քանզի տիրապետում էր զգալի քանակությամբ մետաղակտրոդ հաստոցների և ուներ մինչև պատերազմը պատրաստված հազարավոր որակյալ մետաղագործներ»<sup>168</sup>:

Առաջ անցնելով կարելի է փաստել, որ պատերազմի առաջին տարիներին ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում խորհրդային փորձը ցույց տվեց, որ ռազմամթերքների մասերի պատրաստումը շատ արագ և հաջողությամբ իրացվեց քաղաքացիական մեքենաշինության ձեռնարկություններում և մեխանիկական արհեստանոցներում, իսկ ռազմամթերքների հանդերձավորումը և լիցքավորումը հատուկ մասնագիտացված գործարաններից բացի՝ հնարավոր էր իրականացնել այլ ձեռնարկություններում, անգամ փայտամշակման, լեռնահանքային և այլն:

Ինչպես նշվեց, Հայրենական պատերազմի սկզբից Ձերժինսկու անվան գործարանն ամբողջությամբ անցավ ռազմական պատվերների կատարմանը, ռազմամթերք էին պատրաստում գործարանի դարբնոցը, մեխանիկական և հավաքման արտադրամասերը: 1941 թ. հունիսից այստեղ կազմակերպվեց հրկիզող ավիառումբերի («ՋԱԲ-2,5-S») պատյանների թողարկումը: Պատերազմի տարիներին գործարանը մասնագիտացավ ականանետներ արտադրելու գործում: Սպառազինության այդ տեսակի արտադրությունը պատերազմի սկզբից ևեթ կարևորվում էր խորհրդային ղեկավարության կողմից: Դեռևս 1939-1940 թթ. ականանետների արտադրության ոլորտում կտրուկ միժոցառումներ ձեռնարկվեցին: Դրանց արդյունքում նշված տարիներին ԽՍՀՄ-ը բազմապատկեց մի շարք տեսակի ականանետների (մասնավորապես 82 և 120 մմ-ոց) շարային արտադրությունը<sup>169</sup>: ԽՍՀՄ կառավարության որոշումով 1941 թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ ընդհանուր մեքենաշինության ժողկոմատը վերակազմավորվեց Ականանետների սպառազինութ-

<sup>168</sup> Аллахвердян Г., նշվ. աշխ., էջ 3-4:

<sup>169</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 318:

յան ժողովուհատի, որի ենթակայության տակ անցան մի քանի տասնյակ միութենական ձեռնարկություններ<sup>170</sup>:

1941 թ. նոյեմբերի 13-ին ընդունվեց Անդրկովկասյան ռազմա-ճակատի ռազմական խորհրդի որոշումը՝ Անդրկովկասի մի շարք գործարաններում սպառազինության արտադրություն կազմակերպելու մասին: Անդրկովկասյան ռազմաճակատի գործերի պահանջարկը բավարարելու համար գործարանները պետք է արտադրեին. 7,62 մմ-ոց ատրճանակ-զնդացրեր («ՊՊՇ»)՝ 25.000, 50 մմ-ոց վաշտային ականանետներ՝ 3000, 82 մմ-ոց գումարտակային ականանետներ՝ 2900 հատ: Անդրկովկասի հանրապետությունների կառավարություններին առաջարկվեց մեկ ամսվա ընթացքում իրացնել 50 և 82 մմ-ոց ականների, հակահետևակային «ՌԳԴ-33» և հակատանկային «ՌԳԳ-41» ձեռքի նռնակների, ատրճանակ-զնդացրի փամփուլտների արտադրությունը<sup>171</sup>:

Ի կատարումն Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի որոշման՝ ՀԽՍՀ ժողովուհտրիը 1941 թ. նոյեմբերի 27-ին մի շարք կարևոր կարգադրություններ իջեցրեց հանրապետության ձեռնարկությունների, մասնավորապես Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի, Երևանի մեխանիկական և կարբիդի գործարանների, Արզնիի հանքային ջրերի գործարանի մեխանիկական արհեստանոցի, ինչպես նաև Հայարդխորհրդի և Հայանտառարդմիության արտելների ղեկավարությանը:

Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի տնօրեն Վ. Սարգսյանին հանձնարարվեց իրացնել և 1942 թ. արտադրել «52-Ս-822» նմուշի 50 մմ-ոց վաշտային 550 ականանետներ՝ պահեստամասերի, գործիքների ու հարմարանքների կոմպլեկտով (լրակազմ) և այլն<sup>172</sup>: Երևանի մեխանիկական ու կարբիդի գործարաններին հանձնարարվեց պատրաստել և հանձնել Ձերժինսկու ան-

<sup>170</sup> Տե՛ս Быстрова И., նշվ. աշխ., էջ 207:

<sup>171</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), էջ 99-100:

<sup>172</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 107-108:

վան մեքենաշինական գործարանին «52-Ս-822» ականանետների պլաստմասե խցաններ և մետաղական օժանդակ իրեր ականանետների պարկերի համար, Հայարդխորհրդի «Կաշվեկոշիկ» միության արտելներին՝ ականանետների բրեզենտե բեռնապարկեր և պայուսյակներ գործիքների ու հարմարանքների համար: Հանձնարարվում էր նաև հանրապետության արտելներում պատրաստել «SS» և «Նազան» տեսակի ատրճանակների պատյաններ ու հրացանների ուսագոտիներ: Հայանտառարդմիության արտելներին հանձնարարվեց պատրաստել հրացանի խզակոթեր ու բռնատեղեր, զենքի փայտյա և երկաթյա այլ մասեր: Արզնիի գործարանի մեխանիկական արհեստանոցն արտադրելու էր հրետանային սպառազինության նյութեր և իրեր: Ձեռնարկությունների տնօրենները պարտավոր էին առաջադրանքների կատարման մասին հինգ օրը մեկ հաշվետվություններ ներկայացնել ՀԽՍՀ ժողովուհտրիին<sup>173</sup>:

Այսպիսով, Ձերժինսկու անվան Երևանի մեքենաշինական գործարանը դառնում էր հանրապետությունում վաշտային ականանետների և տարբեր տրամաչափի ականների արտադրության գլխադասային ձեռնարկությունը: Եթե սկզբնական շրջանում գործարանում թողարկվող ռազմական արտադրանքի հիմնական մասի՝ պատյանի ներքին մակերեսի վրա առաջանում էին անհարթություններ, ինչը խոտանում էր արտադրանքը, ապա գործարանի ծուլարանի վարպետներին շուտով հաջողվեց մշակել և փորձարկել «ավազամուղ ապարատ», որը մետաղյա մասերի մակերեսը հասցնում էր կատարյալ փայլի: Շուտով կազմակերպվեց նաև շգրիտ չափիչ սարքերի և անհրաժեշտ այլ գործիքների արտադրությունը<sup>174</sup>:

ՀԽՍՀ ձեռնարկություններում և մեխանիկական արտադրամասերում ծուլածո արկերի, ականների, նռնակների, ավիառումբե-

<sup>173</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 108-110:

<sup>174</sup> Տե՛ս Կոզմոյան Կ., Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Ե., 1956, էջ 38-39:

րի արտադրության և արտադրական հնարավորությունների մասին ԽՍՀՄ պետպլանի նախագահի տեղակալ Բորիսովի հարցմանն ի պատասխան 1941 թ. դեկտեմբերի 19-ին նրան ուղղված զեկուցագրում Գ. Հարությունյանը հայտնում է, որ «հանրապետության մի շարք ձեռնարկությունների մեխանիկական արտադրամասերի արտադրական հնարավորությունները թույլ են տալիս թողարկելու վերը նշված ռազմամթերքները, բացառությամբ ձուլածո արկերի»<sup>175</sup>: Հարությունյանը տեղեկացնում է, որ Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության հանձնարարությամբ՝ 1942 թ. փետրվար ամսից նախատեսվում է թողարկել 50 մմ-ոց ականների պատյաններ. Երևանի մեքենաշինական գործարանում՝ 7500 հատ, Լենինականի և Երևանի մեխանիկական գործարաններում համապատասխանաբար՝ 5200 և 3100, Ալավերդու պղնձածուլական գործարանում՝ 2600 հատ, հակահետևակային «ՈԳԴ-33» ձեռքի նռնակներ՝ Լենինականի մեխանիկական գործարանում՝ 13.000, «Սովպրեն» կոմբինատի մեխանիկական արհեստանոցում՝ 7800 և Կիրովականի քիմիական գործարանում՝ 5200 հատ:

Չեկուցագրում այնուհետև նշվում է, որ Երևանի Չերժինսկու անվան մեքենաշինական գործարանն իրացրել է «ՉԱԲ-2,5-S» հռկիզող ավիառումբերի պատյանների թողարկումը (ամսական 20.000 քանակով): Հարությունյանը հայտնում է, որ գործարանի հզորությունները խառատային 60 հաստոցներով և այլ սարքավորումներով ավելացնելու դեպքում՝ ականների թողարկումը կարելի է հասցնել ամսական 70.000-ի, ինչն ամբողջովին կբավարարի Անդրկովկասի ռազմաճակատի կարիքները<sup>176</sup>:

Ստորև ներկայացնենք 1941 թ. վերջի դրությամբ հանրապետությունում սպառազինություն, ռազմամթերք, պահեստամասեր ու զործիքներ, ռազմաքիմիական արտադրանք արտադրող, ինչպես նաև արտադրության հնարավորություններ ունեցող ձեռնարկ-

<sup>175</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 65, ք. 130:

<sup>176</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 130-132:

ությունների ու դրանց արտադրանքի մասին ՀԽՍՀ կառավարության տեղեկանքը, որը 1941 թ. վերջին տրամադրվել է միութենական մարմիններին: Ըստ այդմ՝

1. Սպառազինություն և ռազմամթերք, ռազմաքիմիական արտադրանք արտադրող ձեռնարկություններ՝ Չերժինսկու անվան Երևանի մեքենաշինական գործարան, Երևանի «Սովպրեն» ձեռնարկության կարբինոլի արտադրամաս և Կիրովականի քիմիական գործարանի հատուկ արտադրամաս (արտադրանքը՝ 50 մմ-ոց ականանետներ, հրկիզող ավիառումբերի պատյաններ):

2. Կոպպերատիվ հիմունքներով սպառազինության և ռազմամթերքների մասեր արտադրող ձեռնարկություններ՝ Հայարդխորհրդի «Կաշվեկոշիկ» միության Չկալովի անվան արտել, Հայանտառարդխորհրդի «Պոբեդա» արտել, ՀԽՍՀ տեղարդժողկոմատի կարբիդի գործարանի պլաստմասաների արտադրամաս (արտադրանքը՝ ականանետների բեռնապարկեր, ատրճանակի և հրացանի բռնակոթեր և այլ մասեր, պլաստմասե սոնակալներ ականանետի համար):

3. Ձեռնարկություններ, որտեղ նախատեսվում է արտադրել սպառազինություն, ռազմամթերք և ռազմամթերքի մասեր՝ ՀԽՍՀ տեղարդժողկոմատի Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններ (պատյաններ 50 մմ-ոց ականների համար և ձեռքի հակահետևակային նռնակներ), Երջաղխորհրդի տեղական արդյունաբերության մեխանիկական արհեստանոցներ (պատյաններ 50 մմ-ոց ականների համար), «Սովպրեն» ձեռնարկության մեխանիկական արհեստանոցներ (ձեռքի հակահետևակային նռնակներ), ԽՍՀՄ գունավոր մետաղների ժողկոմատի Ալավերդու պղնձածուլական գործարանի մեխանիկական արհեստանոցներ (պատյաններ 50 մմ-ոց ականների համար), ԽՍՀՄ քիմարդժողկոմատի Կիրովականի քիմգործարանի մեխանիկական արհեստանոց (ձեռքի հակահետևակային նռնակներ), ՀԽՍՀ սննդարդժողկոմատի «Արգ-

նի» գործարանի մեխանիկական արհեստանոցներ (ավտոմատ օդամղիչ ունիվերսալ պայթուցիչներ)<sup>177</sup>:

Ամփոփելով Խորհրդային Հայաստանի տնտեսության վերազինման և ռազմական արտադրության կազմակերպման արդյունքները պատերազմի սկզբնական շրջանում՝ հարկ է նշել, որ 1941 թ. վերջի դրությամբ հանրապետության ձեռնարկություններում արտադրվում էր զինվորական համազգեստ, ռազմահանդերձանք, հրետանային գույքի և բանակային կապի միջոցների մասեր (բարձր հաճախականության ռացիաների ալեհավաքներ և այլն), ատրճանակի պատյաններ, հրացանի ուսագոտիներ, խզակոթեր ու բռնատեղեր, զենքի փայտյա ու երկաթյա այլ մասեր, ինչպես նաև զինամթերքի երեք տեսակ՝ հրկիզող ավիառումբերի, հակատանկային և հակահետևակային ականների պատյաններ (համապատասխանաբար՝ 110,2, 50,0 և 103,5 հազար հատ<sup>178</sup>): Ընթացքի մեջ էր ականանետների, արկերի, ձեռքի նռնակների, այլ ռազմամթերքի արտադրության կազմակերպումը:

1942 թ. սկզբից հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ կատարող արդյունաբերական ձեռնարկությունները նոր թափով շարունակեցին զենք ու զինամթերքի, ռազմական նշանակություն ունեցող այլ արտադրանքի արտադրությունը: Կենտրոնական և հանրապետական ղեկավար մարմիններից ստացվում էին նոր պատվերներ, հանձնարարվում էր իրացնել զինամթերքի նոր տեսակների արտադրությունը: Նշենք, որ 1942 թվականը Խորհրդային Հայաստանի պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար դառնալու էր առանձնահատուկ տարի: Տարվա ընթացքում թեև արտադրվեց զենքի ընդամենը մեկ տեսակ՝ «52-Մ-822» նմուշի ականանետ, պահեստամասերի, գործիքների ու հարմարանքների լրակազմով, սակայն կտրուկ ավելացան արտադրվող ռազմամթերքի, հրետա-

<sup>177</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 18, թ. 13 և շրջ.:

<sup>178</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 327: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, թ. 3–4:

նային գույքի և բանակային կապի միջոցների մասերի տեսականին ու քանակը<sup>179</sup>: Այս ցուցանիշն ամենաբարձրն էր պատերազմի բոլոր տարիների համեմատ:

Հարկ է նշել, որ Հայաստանի ձեռնարկություններն ապահովում էին ինչպես Անդրկովկասյան ռազմական օկրուգի և գործող Կարմիր բանակի ռազմական գերատեսչությունների, այնպես էլ Հայաստանի ներքին գործերի ժողկոմատի պատվերների կատարումը: Այսպես, ՀԽՍՀ ներգործող կոմատի «կործանիչ գումարտակների և օպերատիվ-մարտական ջոկատների» պահանջարկը բավարարելու նպատակով 1942 թ. հունվարի 3-ին ՀԽՍՀ ժողկոմխորհի «Համատեղ նիստն» ընդունեց «Ձեռքի նռնակներ և ականներ արտադրելու մասին» որոշում: Երբեքարդկոմբինատի մեխանիկական արհեստանոցի տնօրինությանը հանձնարարվեց կարճ ժամկետում պատրաստել և ներգործող կոմատին հանձնել 10.000 ձեռքի նռնակ<sup>180</sup>: Հանձնարարականներ ստացան նաև հանրապետության այլ ձեռնարկությունները. մասնավորապես «Արգնի» հանքային ջրերի գործարանի արհեստանոցներում կազմակերպվելու էր հակատանկային ականների համար 7000 պայթուցիչների, իսկ ներգործող կոմատի ուղղիչ-աշխատանքային գաղութի արհեստանոցներում՝ հակատանկային և հակատանկային ականների համար հատուկ դարսելու արկղերի արտադրությունը: «Համատեղ նիստի» որոշումների համաձայն՝ առաջադրանքներ ստացան նաև հանրապետության այլ կազմակերպություններ ու ձեռնարկություններ<sup>181</sup>:

ՀԽՍՀ ժողկոմխորհի «Համատեղ նիստում» շուտով հաստատվեց հանրապետությունում սպառազինության և ռազմամթերքի արտադրության 1942 թ. առաջին եռամսյակի պլանը: Ըստ այդմ՝ Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում նախատես-

<sup>179</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, թ. 3–4:

<sup>180</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 115:

<sup>181</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 115–116:

վում էր արտադրել 450 հատ 50 մմ–ոց վաշտային ականանետներ: 50 մմ–ոց ականների պատյաններ նախատեսվում էր արտադրել ՀԽՍՀ տեղարդժողկոմատի Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններում, Երջաղխորհրդի տեղական արդյունաբերության և Ալավերդու պղնձածուլական գործարանի մեխանիկական արհեստանոցներում: Համաձայն առաջին եռամսյակի պլանի՝ Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում նախատեսվում էր արտադրել հրկիզող ավիառումբերի 75.000 պատյան, «Արզնի» գործարանի մեխանիկական արհեստանոցներում՝ ավտոմատ օդամղիչ ունիվերսալ պայթուցիչներ՝ 3000 հատ, Լենինականի մեխանիկական գործարանում, Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի և Երևանի Ս. Կիրովի անվան «Սովպրեն» ձեռնարկության մեխանիկական արհեստանոցներում՝ ձեռքի նոնակներ, համապատասխանաբար՝ 26.000, 13.000 և 30.000 քանակով<sup>182</sup>:

1942 թ. սկզբի դրությամբ հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների արտադրողական հնարավորությունների, զենք ու զինամթերքի արտադրության հաստատված պլանների մասին տեղեկացնելով Անդրկովկասյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատար Ի. Տյուլենևին, ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանը նշում է, որ ռազմական օկրուգի հրանոթային վարչությունը Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի հետ պայմանագիր է կնքել 550 ականանետ ձեռք բերելու մասին: Փիրուզյանը հայտնում է, որ գործարանն առայժմ պատրաստել է 120 ականանետ, սակայն, առանց տեփուրի և նշանառու սարքավորման<sup>183</sup>: Ձեկուցագրում տեղեկացվում է նաև ռազմական պատվերներ կատարող հանրապետության ձեռնարկությունների առջև կանգնած մի շարք դժվարությունների և խոչընդոտների մասին: Ակնկալվում էր վերադաս մարմինների

<sup>182</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 18, թ. 14:

<sup>183</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 6–8:

շտապ օգնությունը՝ ձեռնարկություններին անհրաժեշտ քանակությամբ ռազմավարական հումքով, գործիքներով և սարքավորումներով մատակարարելու համար<sup>184</sup>:

1941 թ. երկրորդ կեսին և 1942 թ. առաջին եռամսյակում հանրապետության տնտեսությունն ու արդյունաբերությունը ռազմական ուղու վրա փոխադրելու, գործընթացում առկա թերացումների, հաղթահարվող դժվարությունների և, միաժամանակ, արձանագրված ձեռքբերումների մասին է նշվում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Գ. Չոլախյանի ստորագրած և 1942 թ. ապրիլի 10–ով թվագրված՝ «Հանրապետության արդյունաբերությունը ճակատի համար» հաշվետվության մեջ<sup>185</sup>: «Կոմունիստ» թերթում լույս տեսած այդ նյութում մասնավորապես նշված է. «Աստիճանաբար հարմարվելով ռազմական արտադրանք թողարկելուն, մեր արդյունաբերությունն ընդհանուր արտադրանքի ծավալի մեջ օրեօր ավելացրել է ռազմական արտադրանքի տեսակարար կշիռը: ...Մենք ունենք մի շարք ձեռնարկություններ, որոնք ամբողջությամբ անցել են ռազմածակատի համար արտադրանք արտադրելուն (ընդգծումը մերն է – Կ.Խ.): Ընթացիկ ժամանակաշրջանում առաջին հերթին իրացվել և թողարկվել է Կարմիր բանակի համար նախատեսված ավելի քան 140 անուն արտադրանք»<sup>186</sup>: Փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1941–1942 թթ. ձմռանը, «երբ բանակը մեզանից պահանջում էր սահնակներ ու դահուկներ», հանրապետության Անտառարդմիության ձեռնարկությունները պատրաստել և բանակին հանձնել են պահանջվող քանակի բեռնատար սահնակներ ու դահուկներ: Հանրապետության մի շարք ձեռնարկություններ իրացրել են Կարմիր բանակի համար բանակային սայլակառքերի, շարժական խոհանոցների, շարժական մեխանիկական արհեստանոցների, հակաօդային պաշտպանության և գազազերծման պաշտպանիչ միջոցների արտադրությունը: Հաշվետ-

<sup>184</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 8:

<sup>185</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 75, թ. 46–54:

<sup>186</sup> Նույն տեղում, թ. 47:

վությունում առանձնահատուկ գոհունակությամբ նշվում է ռազմական նշանակության պատվերներ կատարելու գործում հանրապետության մետաղամշակման և մեքենաշինական, քիմիական, թեթև և տեքստիլ արդյունաբերության նշանակալի ավանդի մասին: Ամփոփելով նյութը, ՀԽՍՀ ժողովխորհրդի փոխնախագահը վստահեցնում է, որ «հանրապետության արդյունաբերության բանվորները, ինժեներատեխնիկական անձնակազմը, ծառայողները և ղեկավար աշխատողները կկենտրոնացնեն իրենց բոլոր ուժերը, գիտելիքները, ոգևորությունը՝ ռազմաճակատին ավելի ու ավելի շատ արտադրանք տալու համար՝ ստոր թշնամուն արագ ոչնչացնելու նպատակով»<sup>187</sup>:

Տնտեսության վերակառուցման և արդյունաբերության ռազմականացման, ռազմական արտադրանքի թողարկման ուղղությամբ պատերազմի առաջին երեք եռամսյակների ընթացքում խորհրդային Հայաստանում թեև մեծ աշխատանք էր տարվել, այդուհանդերձ, հանրապետության արդյունաբերության ռազմականացման գործընթացն ամբողջությամբ ավարտված կարելի է համարել միայն 1942 թ. կեսերին: Այդ շրջանից է, որ Հայաստանի արդյունաբերությունում զենքի և զինամթերքի, դրանց մասերի, հրետանային գույքի և բանակային կապի միջոցների մասերի, ռազմահանդերձանքի, ռազմավարական հումքի, ռազմական այլ արտադրանքի պատվերների կտրուկ աճ արձանագրվեց: Ինչ վերաբերում է խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերությանն ամբողջությամբ, ապա արդեն 1942 թ. առաջին կեսին նրանում հաջողվել էր վերականգնել պատերազմի սկզբնական շրջանի կորցրած հզորությունները: Երկրի արևելյան շրջաններում ռազմամթերքի արտադրությունը 1942 թ. մարտ ամսին արդեն իսկ հասել էր մինչպատերազմական շրջանի մակարդակին<sup>188</sup>:

<sup>187</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 49–54:

<sup>188</sup> Տե՛ս Чалаев Я., նշվ. աշխ., էջ 202–203:

Խորհրդագերմանական ճակատում 1942 թ. գարնանը ստեղծված տագնապալի իրադրությունը, այն փաստը, որ ռազմաճակատն արագորեն մոտենում էր Կովկասի և Անդրկովկասի մատույցներին, խորհրդային ղեկավարությանը ստիպեց դիմելու կտրուկ միջոցների զենքի ու զինամթերքի արտադրության ծավալները բազմապատկելու ուղղությամբ: Խնդիրն առավել հրամայական դարձավ 1942 թ. ամռան–աշնանը, երբ հուլիսի 17–ին սկսված Ստալինգրադի ճակատամարտում գերմանաֆաշիստական զորքերի առաջին ամիսների հաջողությունները, ինչպես նշել ենք, աշխուժացրին Թուրքիայի զավթողական նկրտումներն Անդրկովկասի նկատմամբ: Ռազմաճակատում վտանգավոր լարվածությունը պահպանվեց մինչև 1943 թ. փետրվարի սկիզբը, երբ շուրջ 200 օր տևած ճակատամարտն ավարտվեց խորհրդային բանակի փառահեղ հաղթանակով:

Ռազմաճակատում ստեղծված նման իրադրությունը լուրջ խնդիրների առջև կանգնեցրեց Հայաստանում ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ կատարող ձեռնարկություններին: Ուրուտի առաջատար ձեռնարկություններից Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում 1942 թ. ամբողջ ընթացքում հաջողությամբ ընթացավ 50 մմ–ոց վաշտային ականանետների արտադրությունը: Գործարանի թողարկած առաջին ականանետների փորձարկումները տեղի ունեցան 1942 թ. գարնան սկզբին: Դրանք անցկացրեցին Կարմիր բանակի Ականանետային սպառազինության գլխավոր վարչությունից հատուկ այդ նպատակով գործարան ժամանած մասնագետները: Փորձարկումներից հետո ականանետները պիտանի համարվեցին շահագործման համար. արտոնվեց գործարանում դրանց հետագա պատրաստումը: Այդ մասին նշվում է փորձարկումներն իրականացնող մասնագետների՝ 1942 թ. մարտի 28–ին կազմած և ստորագրած համապատասխան ակտում<sup>189</sup>: Շուտով գործարանի տնօրեն Վ. Սարգսյանին առա-

<sup>189</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 172, ց. 2, գ. 20, ք. 8–10:

ջարկվեց ստորագրել 50 մմ–ոց վաշտային ականանետների մատակարարման մասին թիվ 1729 պայմանագիրը<sup>190</sup>:

Չերժինսկու անվան մեքենաշինական գործարանում արտադրված 50 մմ–ոց վաշտային ականանետների առաջին խմբաքանակի (125 հատ) ընդունման մասին ակտը կազմվեց 1942 թ. հունիսի 30–ին, մի կողմից՝ գործարանի տնօրեն Վ. Սարգսյանի, գլխավոր ինժեներ Դմիտրիևի, և մյուս՝ Կարմիր բանակի Սպառազինության գլխավոր վարչության ռազմական ներկայացուցիչ Լ. Լոբչենկոյի միջև: Ակտում մասնավորապես նշված է. «Արտադրված ականանետների փորձարկումների արդյունքները բավարար են, ուստի հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ դրանց որակը համապատասխանում է ընդունված չափանիշներին. ականանետները կարող են երաշխավորվել Կարմիր բանակի համար»<sup>191</sup>: Սրանով վերջնականապես կանաչ լույս էր վառվում գործարանում ականանետների հետագա արտադրության համար:

Մինչև 1942 թ. վերջերը, երբ ականանետների արտադրությունը դադարեցվեց, Չերժինսկու անվան գործարանն արտադրեց և ռազմաճակատ ուղարկեց նախատեսված քանակից (550) պակաս՝ 428 ականանետ. պահեստամասերի, գործիքների ու հարմարանքների լրակազմով: Խնդիրը նրանում էր, որ 1942 թ. վերջերից գործարանի հզորություններն ուղղվեցին նոր նմուշի զինամթերքի՝ 82 մմ–ոց բեկորային ականների պատյանների շարային արտադրությանը: Համաձայն ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի հանձնարարականների՝ նշված զինամթերքի շարային արտադրությունը գործարանը պարտավոր էր իրացնել ամենասեղմ ժամկետներում: Այդ մասին է նշվում գործարանի միութենական վերադաս ղեկավար մարմնի՝ ԽՍՀՄ սննդարդժողկոմատի սննդմեքենաշինության գլխավոր վարչության պետի տեղակալ, գլխավոր ինժեներ Իցկովիչի 1942 թ. մայիսի 26–ի և հունիսի 13–ի գրություններում՝

<sup>190</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 21, թ. 1–6:

<sup>191</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 4–7:

ուղղված գործարանի տնօրեն Վ. Սարգսյանին<sup>192</sup>: Մայիսի 26–ի թիվ 403 գրությունում մասնավորապես նշվում է. «ՊՊԿ–ի որոշմամբ, որը կստանաք մոտակա օրերին, Չեր գործարանը պարտավոր է ամենակարճ ժամկետներում իրացնել 82 մմ–ոց «Մ–82» ականների շարային արտադրությունը, նախատեսված են հետևյալ ծավալները՝ 3000 հատ հունիս ամսին, 15.000՝ հուլիս: Իսկ օգոստոսի համար նախատեսվում է ծավալները հասցնել մինչև 25–30 հազարի: «Մ–82»–ի գծագրերը և տեխնիկական պայմանները կուղարկենք Ձեզ մոտակա 2–3 օրերի ընթացքում: Դրանք ստանալուց անմիջապես հետո հարկավոր է առավելագույնս արագացնել նախապատրաստական, այդ թվում արտադրանքի իրացման հետ կապված բոլոր աշխատանքները: Ձեզ են ուղարկում ականների արտադրությունը սկսելու համար անհրաժեշտ հիմնական նյութերի, չափիչ և կտրող գործիքների բնորոշիչ փաստաթղթերը»<sup>193</sup>:

Փաստաթղթի բովանդակությունից տեղեկանում ենք նաև, որ ականների արտադրության համար օրինակելի տեխնոլոգիան և հարմարանքների գծագրերն ակնկալվում էր ստանալ ԽՍՀՄ ռազմական արդյունաբերության առաջատար ձեռնարկություններից մեկի՝ Պոդոլսկի թիվ 460 գործարանից: «Բացի այդ, – նշվում է գրությունում, – հրավիրվել է Մոսկվա Նիժնի Տագիլսկի թիվ 3 գործարանի (որտեղ արտադրվում են 50 մմ–ոց ականներ) տեխնիկական բաժնի պետ Օլեկոն: Թիվ 460 գործարանում «Մ–82» ականների արտադրության գործընթացի հետ ծանոթանալուց հետո Օլեկոն կգործուղվի Չեր գործարան՝ ականների արտադրությունն իրացնելու գործում տեխնիկական օգնություն ցույց տալու համար»<sup>194</sup>:

Գրությունում նշվում է, որ ՊՊԿ–ի որոշումով գործարանին հատկացվել են անհրաժեշտ արտադրանյութեր, «սակայն պետք չէ հետաձգել աշխատանքների ծավալումը մինչև դրանց ստանալը,

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 1 և շրջ., գ. 17, թ. 6:

<sup>193</sup> Նույն տեղում, գ. 19, թ. 1:

<sup>194</sup> Նույն տեղում:

այլ հարկավոր է օգտագործել հանրապետության համապատասխան ձեռնարկությունների բոլոր հնարավորություններն ու միջոցներն ականների շարային արտադրությունը սկսելու համար»։ Հանձնարարվում է նաև «տեղում միջոցներ ձեռնարկել էլեկտրակետային զոդման մեկ հզոր ապարատ ստանալու համար՝ քանի որ մեր կողմից հատկացված «ԱՏՄ-50» ապարատը հնարավոր չէ տեղափոխել Երևան այնպիսի ժամկետներում, որ ապահովվի կառավարության հանձնարարության կատարումը»<sup>195</sup>։ Նշենք, որ խնդիրը լուծելու գործում մեքենաշինական գործարանին մեծ աջակցություն ցուցաբերեցին Երևանի «Սովպրեն» քիմիականության մասնագետները։ Նրանք ամենակարճ ժամկետներում մշակեցին և պատրաստեցին հայրենական էլեկտրագողող նոր սարքավորումը, որը հնարավորություն տվեց ապահովելու ռազմամթերքի արտադրանքի կայուն որակ և բարձր արտադրողականություն<sup>196</sup>։

Գործարանի տնօրեն Վ. Սարգսյանին ուղղված գրության վերջում Իցկովիչը պահանջում է «նկատի ունենալ, որ 82 մմ-ոց ականների պատրաստումը հանդիսանում է Պաշտպանության կոմիտեի հատկապես կարևոր հանձնարարականը, որի կատարումը գտնվում է անձամբ ընկ. ԲԵՐԻԱՅԻ (ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ և ՊՊԿ-ի անդամ Լավրենտի Բերիայի ազգանունը փաստաթղթում հատուկ ընգծված է մեծատառերով, հավանաբար ահազդելու նպատակով – Կ.Խ.) ամենօրյա վերահսկողության ներքո։ Այս հանձնարարությունը Ձեր գործարանի համար հանդիսանում է հիմնականն ու կարևորագույնը, և գործարանի ամբողջ գործունեությունը պետք է ուղղված լինի դրա կատարմանը»։ Սարգսյանին կարգադրվում է չսպասել կենտրոնական մարմինների հիշեցումներին ու հարցումներին, այլ կանոնավոր կերպով և ամենայն մանրամասնություններով տեղեկացնել հանձնարարությունը կատարելու

<sup>195</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 19, ք. 1 շրջ.։

<sup>196</sup> Տե՛ս Կոզմոյան Կ., Երևանի Ֆ. է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, էջ 48–49։

համար նախապատրաստական աշխատանքների ընթացքի և անհրաժեշտ նյութերի ու գործիքների ստանալու մասին<sup>197</sup>։

Ի զարգացումն նշված կարգադրությունների, երկու ամիս անց, 1942 թ. հուլիսի 25–ին, ստացվում է ԽՍՀՄ սննդարդժողկոմատի սննդմեքենաշինության գլխավոր վարչության պետ Կոտլյարի թիվ 649 «գաղտնի» գրությունը՝ ուղղված գործարանի տնօրեն Սարգսյանին։ Նրանում վերջինս տեղեկացվում է, որ ՊՊԿ-ի համապատասխան որոշմամբ գործարանում պետք է ծուլել 82 մմ-ոց ականների պատյաններ. օգոստոսին՝ 12.000, սեպտեմբերին՝ 20.000 քանակով, ինչպես նաև պատրաստել հատուկ արկղեր՝ ականները դարսելու համար. օգոստոսին՝ 2000, սեպտեմբերին՝ 2500 քանակով։ Գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար գործարանին առաջարկվեց օգտագործել ԽՍՀՄ ռազմամթերքների ժողկոմատի Պողոսկի թիվ 460 գործարանի փորձն ու առաջատար տեխնոլոգիաները։

Սարգսյանին տեղեկացնելով, որ 1942 թ. երրորդ եռամսյակում 82 մմ-ոց ականների արտադրության համար անհրաժեշտ գործիքներն ու նյութերը կտրամադրվեն մոտ ապագայում, գլխավոր վարչության պետը հայտնում է, որ հանձնարարականում նշված են արտադրանքի նվազագույն քանակությունները, ուստի հարկավոր է ձեռնարկել միջոցներ դրանք առավելագույնս գերակատարելու համար<sup>198</sup>։ Այսպիսով, Երևանի մեքենաշինական գործարանում վաշտային ականանետների և հրկիզող անթաղանթ ավիառումբերի պատյանների արտադրությանը զուգահեռ՝ 1942 թ. կեսերից կազմակերպվեց նաև 82 մմ-ոց ականների արտադրությունը։

Ուզանական արտադրանքի նոր պատվերներ ստացան նաև հանրապետության արդյունաբերության այլ ձեռնարկությունները, մասնավորապես ՀԽՍՀ անտառարդժողկոմատի։ Ի կատարումն ԽՍՀՄ ժողկոմխորիի 1942 թ. հուլիսի 29–ի որոշման՝ ՀԽՍՀ ժող-

<sup>197</sup> Տե՛ս ՀՍԱ, ֆ. 172, գ. 2, գ. 19, ք. 1 շրջ.։

<sup>198</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 27։

կոմխորիը 1942 թ. օգոստոսի 11-ին որոշեց հանձնարարել հանրապետության անտառարդժողկոմ Լ. Յովսեփյանին անմիջապես անցնել «ՅԱՍ-5» հակատանկային ականների փայտե պատյանների պատրաստմանը, և 1942 թ. 3-րդ եռամսյակում պատրաստել 15.000 հատ<sup>199</sup>: ՀԽՍՀ անտառարդմիության ձեռնարկությունները պետական առաջադրանքը կատարեցին սահմանված ժամկետներում և 100 %-ով: Նշված ձեռնարկություններում 1941-1943 թթ. արտադրվեցին հակահետևակային, նաև «ՅԱՍ-5Ա» և «ՏԱԴ-Բ» տեսակի հակատանկային ականներ<sup>200</sup>: Ինչպես արդեն նշել ենք, պատերազմի տարիներին Անտառարդմիության ձեռնարկություններն արտադրում էին նաև զինամթերքի հատուկ դարսելու արկղեր, սայլակառքեր, սահնակներ, դահուկներ, բանակի համար նախատեսված այլ արտադրանք: Պատերազմի ամբողջ ընթացքում Հայարդխորիդի ձեռնարկություններում ռազմական պատվերների կատարմանը մասնակցեց ավելի քան 600 աշխատող<sup>201</sup>:

Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմխորհրդի հանձնարականների համաձայն՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմը 1942 թ. սեպտեմբերի 25-ին և ՀԽՍՀ Ժողկոմխորիը հոկտեմբերի 1-ին նոր որոշումներ ընդունեցին հանրապետության ձեռնարկություններում, այդ թվում Ձերժինսկու անվան Երևանի մեքենաշինական, Լենինականի և Կիրովականի մեխանիկական գործարաններում ու արհեստանոցներում լրացուցիչ քանակությամբ ռազմամթերք՝ ձեռքի նոնակներ ու ականներ, ինչպես նաև զենքի ու զինամթերքի տարբեր մասեր արտադրելու մասին<sup>202</sup>:

Վերադաս մարմինների կողմից Հայաստանի պաշտպանական ձեռնարկություններին իջեցված նոր հանձնարարականները ծանր դրության մեջ դրեցին հատկապես Ձերժինսկու անվան մեքենաշին-

<sup>199</sup> Стен Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), т. 2, с. 167:

<sup>200</sup> Стен ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 6-7, գ. 75, թ. 3:

<sup>201</sup> Стен նույն տեղում, գ. 74, թ. 6:

<sup>202</sup> Стен Մանուկյան Դ., նշվ. աշխ., էջ 59:

նական գործարանի ղեկավարությանն ու անձնակազմին: Գործարանի արտադրական սուղ, նաև հնամաշ հզորությունները բավարար չէին ռազմամթերքի նոր պատվերները կատարելու համար, մյուս կողմից՝ գործարանի աշխատուժը և հաստոցները գրեթե ամբողջությամբ ներգրավված էին ականանետների և ավիառումբերի պատյանների պատվերները կատարելու աշխատանքներում: Գործարանի տնօրինության կողմից 1942 թ. աշնան սկզբին պատրաստված զեկուցագրերից մեկում նշվում է, որ 82 մմ-ոց բեկորային ականների արտադրության քանակն առավելագույնին հասցնելու համար հարկավոր է ձեռնարկել արտակարգ միջոցառումներ և կտրուկ ավելացնել գործարանի արտադրական հզորությունները:

1942 թ. աշնան դրությամբ Ձերժինսկու անվան գործարանում տեղադրված էին ընդհանուր քանակությամբ 101 սարքավորում, որից 45-ը՝ խառատային հաստոցներ: «Դրանցից չորսն այնքան խոշոր են, - նշված է զեկուցագրում, - որ անկարելի է օգտագործել իրացրած տրամաչափի ականների և ականանետների արտադրության համար: Երեք հաստոց հատկացված է զինամթերքի պատրաստման համար գործիքների և այլ հարմարանքների արտադրության համար, երեքը՝ վերանորոգումների և չորսը՝ անթաղանթ ավիառումբերի պատրաստման համար: Ընդ որում՝ այդ հաստոցներն այնքան մաշված են, որ չեն կարող օգտագործվել ականներ ու ականանետներ պատրաստելու համար: Այսպիսով, ականներ և ականանետներ արտադրելու համար գործարանի տրամադրության ներքո առկա է ընդամենը 28 հաստոց: 100 ականանետ արտադրելու համար ներկայում մշտապես զբաղված են 14 հաստոց, ուստի բեկորային ականներ պատրաստելու համար կարելի է օգտագործել միայն խառատային 17 հաստոց»<sup>203</sup>: Չեկուցագրի հեղինակները հայտնում են, որ անգամ եթե գործարանն անցնի միայն 82 մմ-ոց բեկորային ականների արտադրմանը,

<sup>203</sup> Стен ՀԱԱ, ֆ. 172, ց. 2, գ. 19, թ. 28:

ապա նույնիսկ այդ դեպքում հնարավոր կլինի թողարկել ամսական առավելագույնը մինչև 20.000 ական: Բեկորային ականների արտադրության պլանը կատարելու համար խառատային հաստոցներից բացի՝ պահանջվում էին նոր սարքավորումներ, մասնավորապես 50 կվտ հզորությամբ էլեկտրակետային զոդման մեկ սարք, պարուրակային-հղկող մեկ հաստոց և թուջի ձուլման մեծ հզորությամբ վառարան<sup>204</sup>:

Կենտրոնական մարմինների կողմից հանրապետությանը տրված զենքի ու զինամթերքի պատվերների և արտադրման ժամանակացույցերը կազմելիս բացթողումներ ու թերություններ նկատվեցին պատերազմի գրեթե ողջ ընթացքում: Վերադաս մարմինները հաճախ անտեսում էին այն փաստը, որ Հայաստանի որոշ ձեռնարկությունների արտադրողական ներուժը հնարավորություն չէր տալիս կատարելու զենքի ու զինամթերքի առաջադրանքները հաստատված քանակներով: Մյուս կողմից՝ արտադրության համար անհրաժեշտ ռազմավարական հումքը, հատուկ գործիքներն ու սարքերը, որոնք հանրապետությունը գրեթե ամբողջությամբ ստանում էր դրսից, մատակարարվում էին խիստ անկանոն և ուշացումներով, անհրաժեշտ քանակներից քիչ: Նշվածը պատճառ էր, որ Հայաստանի որոշ ձեռնարկություններ երբեմն տապալում էին զենքի ու ռազմամթերքի արտադրման գծով առաջադրանքների կատարումը: Նման իրավիճակ հասունացավ հատկապես 1942 թ. աշնանը, երբ վտանգված էր զինամթերքի մի շարք տեսակների՝ 82 մմ-ոց ականների, 76 մմ-ոց արկերի և «ՈԳԴ-33» տեսակի ձեռքի նռնակների արտադրությունը:

Հանրապետությունում ռազմամթերքի արտադրության հետ կապված նշված դժվարությունների մասին Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդին շտապեց ահազանգել ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանը: Ուղղված խորհրդի անդամ Լ. Կազանովիչին 1942 թ. դեկտեմբերի 19-ին հասցեագրված

<sup>204</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 29:

«խիստ գաղտնի» գրությունում Ա. Փիրուզյանը տեղեկացնում է, որ 1942 թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների և դեկտեմբերի կեսերի դրությամբ ՀԽՍՀ ձեռնարկությունները չեն կատարել Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմխորհրդի՝ ռազմամթերքի արտադրության հանձնարարականները<sup>205</sup>: Գրությունից տեղեկանում ենք, որ դեկտեմբերի 15-ի դրությամբ ռազմական ներկայացուցչի կողմից Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում ընդունվել է ընդամենը 3364 հատ 82 մմ-ոց ական:

Ծանր էր դրությունը նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում: Ուղղված արտադրանքի ծավալները թերակատարել էին Լենինականի մեխանիկական գործարանում, իսկ Երևանի շարժիչների վերանորոգման, Երևանի մեխանիկական և Կիրովականի քիմիական գործարանները վերը նշված ժամանակահատվածում ռազմական արտադրանքի թողարկում ընդհանրապես չէին ունեցել<sup>206</sup>:

Ռազմամթերքի արտադրության ոլորտում նման ծանր վիճակի առաջացումը ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահը բացատրում է նրանով, որ հանրապետության պաշտպանական արդյունաբերության նշված ձեռնարկություններն ի վիճակի չեն եղել երկու ամսում իրացնել պլանավորած ռազմամթերքի արտադրությունը, հաղթահարել դրա հետ կապված բազմաթիվ դժվարությունները: Ծրագրերի ձախողման հիմնական պատճառների թվում Ա. Փիրուզյանը նշում է տարբեր տեսակի մետաղների ու նյութերի անբավարար մատակարարումը, ինչպես նաև որոշ սարքավորումների, կտրող և չափիչ գործիքների բացակայությունը: «Ռազմամթերքի արտադրության հանձնարարականներ ստանալուց հետո, – պարզաբանում է Փիրուզյանը, – ՀԽՍՀ ժողկոմխորհը թեև անմիջապես մոբիլիզացրեց ռազմամթերք արտադրելու համար անհրաժեշտ հումքը, նյութերն ու գործիքները, սակայն հանրապետությունում դրանց

<sup>205</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 35, թ. 23:

<sup>206</sup> Տե՛ս նույն տեղում:

քանակը խիստ սակավ է», իսկ որոշ նյութեր և գործիքներ (օրինակ, 82 մմ-ոց ականների պատրաստման համար հատուկ տեսակի կլոր պողպատ, «ՌԳԴ-33» ձեռքի նռնակների և 76 մմ-ոց արկերի պատրաստման համար անհրաժեշտ հատուկ երկաթ, լարեպողպատե զսպանակներ, պողպատե ժապավեն և այլն) իսպառ բացակայում են: Իր բողոքը հայտնելով անկանոն մատակարարումների կապակցությամբ, Փիրուզյանը գրում է. «Չարկավոր է հաշվի առնել, որ ամբողջ հանրապետությունում դեռևս չկա մի ձեռնարկություն, որն իր սարքավորումներով ու տեխնիկական հագեցվածությամբ կարողանա պատրաստել կտրող, չափիչ, պարուրակավոր գործիքներ, պարուրակա-հղկիչ հաստոցներ և այլն»:

Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում 82 մմ-ոց ականների անխափան արտադրության համար, ըստ Փիրուզյանի, պահանջվում էին պարուրակավոր նոր տրամաչափեր և շաղափներ: Իսկ ականների կայունացուցիչների պատրաստման տեխնոլոգիական գործընթացը վերսկսելու համար անհրաժեշտ կլոր պողպատը ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության Շմիդտի անվան գործարանի կողմից թեև հատկացվել է, սակայն Չայաստան դեռևս չի հասել:

Ա. Փիրուզյանն ափսոսանքով նշում է, որ 76 մմ-ոց արկերի պատրաստման համար գործիքների վեց լրակազմի փոխարեն մինչ օրս Չայաստան առաքվել է ընդամենը մեկ ոչ լիարժեք լրակազմ, ինչի հետևանքով Երևանի շարժիչների վերանորոգման և Երևանի մեխանիկական գործարանները ռուսերը վերջնական ճշակելու հնարավորություն չունեն: Նշվում է նաև, որ Լենինականի մեխանիկական և Կիրովականի քիմիական գործարաններն ապահովված չեն պարուրակավոր և չափիչ գործիքներով «ՌԳԴ-33» տեսակի ձեռքի նռնակ պատրաստելու համար: «Պարզվում է, – նշում է Փիրուզյանը, – որ Թբիլիսիի քաղխորհրդի ենթակայության տակ գտնվող գործարանից ստացված գործիքների լրակազմը ոչ միայն մաշված է եղել, այլև ոչ ամբողջությամբ համալրված»: Ըստ Փիրուզյանի՝ դա է պատճառը, որ ՊԴԿ-ի ռազմական ներկայացու-

ցիչը հրաժարվել է ընդունել գործարանում պատրաստված ռազմական արտադրանքը<sup>207</sup>:

Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդին և անձամբ Լ. Կազանովիչին տեղեկացնելով վերը նշվածի մասին, ՉԽՍՀ ժողկոմխորհի նախագահը խնդրում է.

1. Չատկացնել և շտապ Չայաստան ուղարկել Անդրկովկասի համար ԽՍՀՄ ՊԴԿ-ի որոշումով հատկացված արտադրական ֆոնդերից անհրաժեշտ նյութերն ու գործիքները:

2. Պարտավորեցնել Վրաստանի ժողկոմխորհին՝ ապահովելու Չայաստանի համար շինարարական նյութերի (հրակայուն աղյուս և կավ, կվարցային ավազ և այլն) ամենամսյա մատակարարումները:

3. Պարտավորեցնել Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմխորհին՝ կատարելու ռազմամթերքի արտադրության համար ՉԽՍՀ-ին 12 հաստոց հատկացնելու մասին ԽՍՀՄ ժողկոմխորհի 1942 թ. օգոստոսի համապատասխան կարգադրությունը:

4. Պարտավորեցնել Դաղստանի ինքնավար խորհրդային հանրապետության ժողկոմխորհին՝ կատարելու Չայաստանին էլեկտրակետային զոդման երկու ապարատ հատկացնելու մասին Անդրկովկասյան ռազմաճակատի համար արտադրվող ռազմամթերքի գծով լիազոր ներկայացուցիչ Գամովի հոկտեմբերի 11-ի համապատասխան կարգադրությունը<sup>208</sup>:

Ա. Փիրուզյանի զեկուցագիրը շատ արագ արձագանք ստացավ: Անդրկովկասյան ճակատի ռազմական խորհրդի անդամ Լ. Կազանովիչին 1942 թ. դեկտեմբերի 26-ին ուղղված գրությունում Անդրկովկասյան ռազմաճակատի համար արտադրվող ռազմամթերքի լիազոր ներկայացուցիչ տեղակալ Իցկովը նշում է, որ ՉԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Փիրուզյանի գրության կապակցությամբ ուսումնասիրվել և ՉԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տե-

<sup>207</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23 և շրջ.:

<sup>208</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23 և շրջ., 24:

ղակալ Գ. Չոլախյանի ու ՀԿ(Բ)Կ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալ Ս. Նաջարյանի հետ համաձայնեցվել է ռազմամթերքի թողարկման համար Հայաստանի ձեռնարկությունների մատակարարումների միջոցառումների ծրագիրը: Համաձայն դրա՝ Հայաստանի պաշտպանական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների կողմից ռազմամթերքի թողարկման 1943 թ. հունվարի առաջադրանքները կատարելու համար Բաքվի «Գլխնետաղվածառք» գրասենյակին առաջարկվել է ՀԽՍՀ ժողկոմխորհի համար բեռնել 25 տոննա հատուկ երկաթ, 20 տոննա կլոր պողպատ, 120 տոննա ձուլածո թուջ: Իսկ Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության Բաքվի թիվ 610 գործարանը Հայաստան պետք է առաքեր պոբեդիտի (վոլֆրամի արտակարգ կարծրություն ունեցող համաձուլվածք – Կ.Խ.) 736 հատ թիթեղ և 82 մմ–ոց ականների պատրաստման համար չափիչ և կտրող գործիքներ<sup>209</sup>:

Հայաստանում 76 մմ–ոց արկերի, 82 մմ–ոց ականների և «ՌԳ–42» տեսակի ձեռքի նռնակների թողարկումն ապահովելու համար զեկուցագիրները Կազանովիչից խնդրում են.

1. Պարտավորեցնել Վրացական ԽՍՀ–ի ժողկոմխորհին՝ Հայաստանի համար ապահովելու շինանյութերի (հրակայուն աղյուս և կավ, կվարցային ավազ և այլն) ամենամսյա մատակարարումները:

2. Պարտավորեցնել «Կրասնոե Չնամյա» գործարանի տնօրենին՝ ՀԽՍՀ Երևանի տեղարդժողկոմատի մեխանիկական գործարանին հատկացնելու էլեկտրակետային զողման մեկ սարք (նշվում է, որ հարցի շուրջ պայմանավորվածություն գոյություն ունի Դաղստանի ժողկոմխորհի նախագահ Դանիյալովի հետ – Կ.Խ.):

3. Հարցում կատարել ԽՍՀՄ ռազմամթերքների ժողկոմատ՝ պաշտպանական արդյունաբերության թիվ 70 գործարանից (Մոսկվայի Վ. Լենինի անվան մեքենաշինական գործարան, 1941 թ. էվակուացվել է Չելյաբինսկ – Կ.Խ.) Հայաստանին չափիչ և կտրող գոր-

<sup>209</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 29:

ծիքների 4 լրակազմ մատակարարելու համար՝ 76 մմ–ոց արկեր արտադրելու նպատակով:

4. Պարտավորեցնել Թբիլիսիի Կիրովի անվան հաստոցաշինական գործարանին՝ Լենինականի մեխանիկական և Կիրովականի քիմիական գործարանների մեխանիկական արհեստանոցների համար պատրաստել ներպարուրահան և պարուրակավոր խցանների 20 լրակազմ՝ «ՌԳ–42» տեսակի ձեռքի նռնակներ պատրաստելու համար, պայմանով, որ մինչև 1943 թ. հունվարի 5–ը հանձնվի 10 լրակազմ:

5. ԽՍՀՄ ժողկոմխորհի 1942 թ. օգոստոսի 8–ի և նոյեմբերի 20–ի կարգադրությունների համաձայն՝ պարտավորեցնել Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմխորհին՝ հանրապետությունում գոյություն ունեցող պաշարներից ՀԽՍՀ ժողկոմխորհին 10–օրյա ժամկետում հատկացնել մետաղամշակման 12 հաստոց<sup>210</sup>:

Բարձրացված հարցերը շուտով ստացան իրենց լուծումները և ռազմապաշտպանական արտադրանքի պատվերներ կատարող հանրապետության ձեռնարկությունները 1943 թ. արտաքին մատակարարումների հետ կապված լուրջ խնդիրներ գրեթե չունեցան:

Այդուհանդերձ, չնայած բոլոր տեսակի դժվարությունների, Հայաստանի պաշտպանական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունները 1942 թ. ոչ միայն շարունակեցին զենք ու զինամթերքի արտադրությունը, այլև իրացրեցին ռազմամթերքի նոր տեսակների արտադրությունը: Չերժինսկու անվան մեքենաշինական գործարանն ամբողջությամբ իրացրեց 82 մմ–ոց բեկորային ականների պատյանների ձուլվածքն ու մշակումը, ականների կայունացուցիչների արտադրությունը, և օրական արտադրում էր 800–1000 ականի պատյան: Երևանի մեխանիկական գործարանն իրացրեց 76 մմ–ոց ռումբերի բալիստիկ ծայրակալների դրոշմացումը և արտադրական այլ գործընթացները, իսկ Երևանի շարժիչների վերա-

<sup>210</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 29–30:

նորոգման գործարանը՝ ռուսների ծուլումը, մշակումը և պղնձյա գոտիների ագուցումը: Լեւինականի մեխանիկական և Կիրովականի քիմիական գործարաններն անցան «ՌԳԴ-33» տեսակի ձեռքի նռնակների վերջնական հավաքմանը<sup>211</sup>:

Ռազմապաշտպանական պատվերների մեծ ծավալներ շարունակեց իրականացնել հանրապետության քիմիական արդյունաբերությունը՝ 1942 թ. ողջ ընթացքում թողարկելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հումք՝ սինթետիկ կաուչուկ, հակատանկային հեղուկ վառելիք, կաուստիկ սոդա, կալցիումի ցիանամիդ, կալցիումի կարբիդ, կարբինոլ, մոնոքլորմատ, քլորոֆորմ, ռազմական արդյունաբերության տարբեր ոլորտների համար անհրաժեշտ այլ նյութեր: Նշված արտադրանքը կարևոր էր հատկապես ռազմական ինքնաթիռների ու տանկերի արտադրության, ռազմական նավաշինության և սուզանավաշինության, բարձրորակ ավիացիոն բենզին և տանկային վառելիք ստանալու համար: Հայաստանում արտադրվող կաուստիկ սոդան մեծ չափերով օգտագործվում էր հատկապես Բաքվի նավթային արդյունաբերությունում: Հայաստանից Ադրբեջան առաքվում էր քիմիական այլ արտադրանք ևս, մասնավորապես քլորակիր՝ Բաքվի և նրա շրջանների տեղական հակաօդային պաշտպանությունն ապահովելու համար, և ամոնիտ, իսկ այնտեղից Հայաստան էր առաքվում վառելանյութ և այլ նավթամթերք<sup>212</sup>:

Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքի կարիքը զգացվում էր նաև ռազմաճակատում, գործող բանակում, ռազմածովային և ռազմաօդային ուժերում: Այսպես, օրինակ, ԽՍՀՄ Սևծովյան նավատորմի ռազմաօդային ուժերի հրամանատար, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Վ. Երմաչենկովի կողմից

<sup>211</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 23 շրջ. – 24:

<sup>212</sup> Տե՛ս Ավետիսյան Գ. և ուրիշ., նշվ. աշխ., էջ 87: Տե՛ս նաև՝ Պողոսյան Վ., Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը Մեծ Հայրենականում հանրապետության նյութական և հոգևոր ուժերի մոբիլիզացման ուղղությամբ, Ե., 1982, էջ 87:

1943 թ. սեպտեմբերի 16–ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմ ուղղված նամակից տեղեկանում ենք, որ նավատորմի վերանորոգչական արհեստանոցներում կալցիումի կարբիդի իսպառ բացակայության պատճառով կանգնեցված են մարտական ինքնաթիռների վերանորոգման աշխատանքները: Հայաստանի իշխանություններից Երմաչենկովը խնդրում է, որպեսզի Երևանի կարբիդի գործարանն իրենց հատկացնի մեկ վազոն կալցիումի կարբիդ՝ ռազմաճակատի արհեստանոցների համար: Խնդրի լուծումն այնքան էր կարևորվում, որ փաստաթղթային ձևակերպումներն արագացնելու նպատակով Երմաչենկովը հատուկ ինքնաթիռով Հայաստան գործուղեց նավատորմի ներկայացուցչին<sup>213</sup>:

Պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի քիմիական արդյունաբերության հիմքի վրա առաջացան նոր ճյուղեր, որոնք թողարկում էին պատրաստի արտադրանք: Վերջինս առավել ծանրակշիռ էր դարձնում հանրապետության ներգրավվածությունն երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում:

Այսպես, ԽՍՀՄ ՊՊԿ–ի հանձնարարությամբ Երևանի Կիրովի անվան «Սովպրեն» ձեռնարկությունում 1942 թ. հունվար–փետրվարին, ընդամենը 25 օրվա ընթացքում շահագործման հանձնվեց կարբինոլի (ուճիվերսալ սոսնձի) արտադրության լիովին նոր արտադրամաս, որի արտադրանքը չափազանց կարևոր էր երկրի պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար<sup>214</sup>: Երևանի խրոմպիկի գործարանը թողարկեց խրոմային անհիդրիդ, որն ուներ կարևոր պաշտպանական նշանակություն<sup>215</sup>:

Հանրապետությունում ռետինատեխնիկական իրերի (պլաստմասայից իրեր, ավտոդողեր, ավտոպահեստամասեր, կապի մի-

<sup>213</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 237–238:

<sup>214</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 223–224: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Վ., Գրիգորի Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին, էջ 431–432:

<sup>215</sup> Տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 90:

ջոցների մասեր և այլն) արտադրության կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեցավ ռետինատեխնիկական իրերի թողարկումն ապահովելու և «Պրոմտեխնիկա» գործարանի շինարարությունն ավարտելու ու գործարկումն ապահովելու միջոցառումների մասին» ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1942 թ. ապրիլի 21-ի որոշումը: Գործարանը կառուցվեց ռազմաճակատից թիկունք փոխադրված սարքավորումների միջոցով: Այն շահագործման հանձնվեց 1942 թ. հուլիսի 15-ին և ապահովում էր Անդրկովկասյան ռազմաճակատի և խորհրդային ավիացիոն արդյունաբերության՝ ռետինատեխնիկական իրերի, հիմնականում ավտոդողերի պահանջարկի զգալի մասը<sup>216</sup>:

Մասնագիտացված արտադրությունից բացի՝ Հայաստանի քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում 1942 թ. կազմակերպվեց նաև զինամթերքի ու ռազմահանդերձանքի որոշ տեսակների արտադրությունը: Այսպես, ի կատարումն ՀԽՍՀ ժողկոմխորհի «Համատեղ նիստի» և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշման՝ 1942 թ. հոկտեմբերի 17-ին լույս տեսավ ԽՍՀՄ ռետինե արդյունաբերության ժողկոմատի համապատասխան հրամանը: Ժողկոմի տեղակալ Պ. Մակեևի ստորագրությամբ հրամանով «Սովպրեն» գործարանի տնօրեն Ա. Ղազարյանին հանձնարարվեց անմիջապես անցնել «ՈԳ-42» տեսակի ձեռքի նռնակների արտադրության կազմակերպմանը և 1942 թ. դեկտեմբերի 1-ից ոչ ուշ սկսել շարային արտադրությունը: Անդրկովկասյան ռազմաճակատի պահանջները բավարարելու նպատակով գործարանին առաջարկվեց սեփական արտադրամասերում կազմակերպել զինվորական էմալապատ կերակրամանների արտադրությունը և 4-րդ եռամսյակում պատրաստել 20.000 կերակրաման: Առաջարկվեց նաև գործարանի մեկ այլ արտադրամասում շարունակել դյուրավառ հեղուկով լցված շշերի արտադրությունը. ամսական 150.000 հատ: Աշխա-

<sup>216</sup> Տե՛ս Ավագյան Վ., Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927-1980 թթ.), Ե., 1983, էջ 92: Տե՛ս նաև՝ Մանուկյան Հ., նշվ. աշխ., էջ 57:

տանքները ժամանակին և որակով կատարելու համար անձնական պատասխանատվություն դրվեց գործարանի գլխավոր ինժեներ Գիմենտի վրա<sup>217</sup>:

Հայաստանի քիմիական արդյունաբերության ոլորտի առաջատար Կիրովի անվան «Սովպրեն» ձեռնարկությունից հետ չէր մնում Կիրովականի քիմիական կոմբինատը. միայն 1942 թ. այստեղ արտադրվեց 2184,8 տոննա ռազմանյութ<sup>218</sup>:

Պաշտպանական նշանակության կարևոր առաջադրանքներ էին դրված նաև հանրապետության գունավոր մետաղագործության, հատկապես պղնձարդյունաբերության առջև: Ըստ հետազոտող Հ. Մանուկյանի, սկսած 1942 թվականից ԽՍՀՄ ռազմական արտադրության սպասարկման գործում ավելի է մեծանում Կապանի և Ալավերդու պղնձարդյունաբերական հանքերի և ձեռնարկությունների դերը<sup>219</sup>: Տարեցտարի ավելանում է պղնձի հանքաքարի հանույթը, դրանից ծուլվող պղնձի քանակը: Արդեն 1944 թ. պղնձի ծուլումը, 1943 թ. համեմատությամբ, ավելացավ 40, իսկ 1945 թ.՝ 46 %-ով<sup>220</sup>:

Ամփոփելով զենքի և զինամթերքի, ռազմահանդերձանքի, հրետանային և ինժեներական գույքի, բանակային կապի միջոցների արտադրության գծով Հայաստանի պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների 1942 թ. ցուցանիշները, պետք է եզրահանգել, որ դրանք գոհացուցիչ էին: Ինչպես վերը նշվեց, թեև տարվա ընթացքում արտադրվեց զենքի ընդամենը մեկ տեսակ (50 մմ-ոց վաշտային ականանետ), սակայն կրկնապատկվեց արտադրվող զինամթերքի, հրետանային գույքի և բանակային կապի միջոցների տեսականին: Վաշտային ականանետներից բացի՝ Հայաստանի պաշտպանական արդյունաբերության առաջատար Ձեր-

<sup>217</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945), т. 2 187-188:

<sup>218</sup> Տե՛ս Ավագյան Վ., նշվ. աշխ., էջ 92:

<sup>219</sup> Տե՛ս Մանուկյան Հ., նշվ. աշխ., էջ 57-58:

<sup>220</sup> Տե՛ս Կոզմոյան Կ., Ալավերդի, Ե., 1966, էջ 93:

Ժինսկու անվան մեքենաշինական գործարանում մինչև 1942 թ. ավարտն արտադրվեց 82 մմ-ոց բեկորային ականների և հրկիզող անթաղանթ թերմիտային ավիառումբերի համապատասխանաբար՝ 6700 և 92.100 պատյան: Հայարդիտրիորդի, Անտառարդժողկոմատի, Անտառարդմիության ձեռնարկություններում, Երևանի թիվ 447 և շարժիչների վերանորոգման գործարաններում 1942 թ. արտադրվեց «ՊՏՍ» հակատանկային և «ՊՊՍ» հակահետևակային ականների համապատասխանաբար՝ 18.300 և 26.000 պատյան, 15.000 «ՅԱՍ-5», 23.800 «ՅԱՍ-5Ա» և «ՏՄԴ-Բ» տեսակի հակատանկային ականների պատյան: Նույն ժամանակահատվածում Երևանի թիվ 742 գործարանում արտադրվեցին դյուրավառ եղանակով լցված 89.500 շիշ և 86.400 քրոմային բռնկիչներ, «Արզնի» գործարանում՝ «ՈԻՎ» տեսակի 114.600 պարզեցված պայթուցիչներ: Ռազմապաշտպանական պատվերներ կատարող Հայաստանի այլ ձեռնարկություններում, ֆաբրիկաներում և գործարաններում պատրաստվեցին 82 մմ-ոց ականներ ու դյուրավառ եղանակով լցված շշեր դարսելու համար 4300 փայտյա հատուկ արկղեր, ապակյա շշերի գործարանում՝ դյուրավառ եղանակով լցված շշերի համար 62.000 ապակյա սրվակ և այլն: Տարվա ընթացքում շարունակվեց ականանետի բեռնապարկերի, ատրճանակի պատյանների, հրացանի ուսազոտիների, հրացանի և ականանետի փողի պլաստմասայից խցանների, ատրճանակ-զնդացրի փայտյա խզակոթերի, ինչպես նաև հրետանային և ինժեներական գույքի, բանակային կապի միջոցների (հրետանու և հրանոթի վարպետի համար գործիքների լրակազմով պայուսակներ, սակրավորի բահի կոթեր, ամրաշինության գործիքներ, բարձր հաճախականության ռադիոների ալեհավաքներ, «ՏՍՏ-Ֆ» տեսակի միկրոհեռախոսների պլաստմասայից խոսափողերի պատյաններ և մասեր, հեռախոսային կաբելի դաշտային կոճեր և այլն) արտադրությունը<sup>221</sup>:

<sup>221</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 327–330: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, ք. 3–4, 9:

Թեև Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական պատվերներ կատարող արդյունաբերական ձեռնարկությունները 1942 թ. հիմնականում կատարեցին վերադաս մարմինների բարդ և պատասխանատու առաջադրանքները, սակայն դեռևս ոչ բոլոր դժվարություններն էին հաղթահարված: Հանրապետության պաշտպանական ոլորտի արդյունաբերական որոշ ձեռնարկություններում դեռևս առկա էր բարձր որակավորում ունեցող ինժեներատեխնիկական կադրերի, այլ մասնագետների պակաս, նկատվում էր արտադրական գործընթացների նկատմամբ ոչ պատշաճ ուշադրություն, արտադրանքի որակի հետ կապված ներքին խնդիրներ ու բացթողումներ, մերթընդմերթ զգալի չափերի էր հասնում արտադրական խտտանը և այլն: Այս ամենը, ինչպես նաև ռազմական արտադրանքի համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների սակավությունը, երբեմն իսպառ բացակայությունը, արտաքին ոչ լիարժեք մատակարարումները հանգեցնում էին զենքի ու ռազմամթերքի մի քանի տեսակների գծով արտադրական պլանների թերակատարմանը, իսկ զինամթերքի որոշ տեսակների արտադրությունը հանրապետությունում այդպես էլ չիրացվեց: Իրավացի է հետազոտող Ա. Գրիգորյանցը, երբ վերջինիս պատճառների թվում նշում է հետևյալի մասին. «Պատերազմի տարիներին հանրապետության արդյունաբերությունում նկատվեցին տրամագծորեն հակառակ երկու գործընթաց: Մեկ կողմից՝ տեղի էր ունենում արդյունաբերական արտադրության շարունակական ընդլայնում (առաջին հերթին պաշտպանական նշանակության ոլորտում, որն անձնակազմի, այդ թվում տեխնիկական մասնագետների համար հանդիսանում էր նոր ոլորտ), մյուս՝ ինժեներատեխնիկական կադրերի թվաքանակի անընդհատ կրճատում, նրանց որակական կազմի փոփոխություն»: Ուստի մասնագիտական ցածր որակավորում ունեցող նորեկների մեծ մասը սկզբնական շրջանում չէին կարողանում կատարել արտադրական պլանները, ինչն անդրադառնում

էր աշխատանքի ընդհանուր արտադրողականության վրա<sup>222</sup>: Այդ առումով, եզրակացնում է հետազոտողը, բարձր մասնագիտացում ունեցող կադրերի պակասի պատճառով ժանր դրություն էր ստեղծվել հատկապես պաշտպանական ոլորտի ձեռնարկություններում, մասնավորապես Ալավերդու պղնձահանքային կոմբինատում, Ձերժինսկու անվան գործարանում, Կիրովականի քիմիական գործարանում, այլ ձեռնարկություններում, որոնք պատերազմի տարիներին արտադրանքի կարևոր տեսակներ էին մատակարարում ռազմական արդյունաբերության ձեռնարկություններին<sup>223</sup>:

Նշվածը, անշուշտ, չի կարող նսեմացնել այն ահռելի աշխատանքն ու նշանակալի ձեռքբերումները, որոնք արձանագրվեցին Խորհրդային Չայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտում Չայրենական պատերազմի առաջին փուլում:

### 2.2.3. Ռազմական արտադրության կազմակերպումը 1943–1944 թթ.

Ստալինգրադի ճակատամարտում Խորհրդային զորքերի հաղթանակով (1943 թ. փետրվարի 2–ին) Չայրենական պատերազմում արմատական բեկում արձանագրվեց. վերացավ գերմանաֆաշիստական ուժերի և Թուրքիայի կողմից Կովկասին ու Անդրկովկասին սպառնացող վտանգը: Ուստի տարածաշրջանի, այդ թվում Չայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններին տրվող ռազմական պատվերները հետզհետե նվազեցին: 1943 թվականից մինչև պատերազմի ավարտը Չայաստանում ամբողջությամբ դադարեցվեց վաշտային ականանետների, զենքի մասերի, զինամթերքի որոշ տեսակների, հրետանային և ինժեներական գույքի արտադրությունը:

<sup>222</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ.աշխ., էջ 212–213:

<sup>223</sup> Նույն տեղում, էջ 214:

«1943 թ. առաջին եռամսյակում ռազմամթերքների արտադրության պլանի մասին» ԽՍՀՄ ՊՊԿ–ի 1943 թ. հունվարի 5–ի որոշման համաձայն՝ ՉԽՍՀ Ժողկոմխորհի «Չամատեղ նիստը» հունվար–փետրվար ամիսներին ընդունեց մի շարք որոշումներ հանրապետության ձեռնարկություններում ռազմամթերքի արտադրության մասին: Մասնավորապես հունվարի 11–ի որոշմամբ Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանին հանձնարարվեց ընթացիկ ամսում պատրաստել 82 մմ–ոց բեկորային ականների 15.000 պատյաններ, իսկ Երևանի մեխանիկական և շարժիչների վերանորոգման գործարաններին՝ 76 մմ–ոց արկերի պատյաններ, համապատասխանաբար՝ 2000 և 3000 քանակով: Լենինականի մեխանիկական գործարանի հատուկ արտադրամասում և Կիրովականի քիմգործարանի մեխանիկական արհեստանոցում պետք է արտադրվեին «ՌԳ–33» և «ՌԳ–42» տեսակի ձեռքի նռնակների պատյաններ. համապատասխանաբար՝ 15.000 և 10.000 քանակով: Ընդունված որոշումների համաձայն՝ նախատեսվում էր փետրվար ամսից սկսած ավելացնել արտադրվող ռազմամթերքի քանակը: Առաջադրանքների կատարումը ժամանակին ապահովելու համար անձնական պատասխանատվություն էր դրվում ձեռնարկությունների տնօրենների վրա. Ձերժինսկու անվան մեքենաշինական՝ Վ. Սարգսյանի, Երևանի մեխանիկական՝ Ա. Շտիկյանի, Երևանի շարժիչների վերանորոգման՝ Ստեցենկոյի, Լենինականի մեխանիկական՝ Ջաքարյանի և Կիրովականի քիմգործարանի՝ Ս. Մելքունյանի: Վերջիններիս հանձնարարվեց հսկողություն սահմանել արտադրության որակի նկատմամբ, իսկ արտադրական խտտանը բացառելու նպատակով՝ բացահայտել ու վերացնել պատճառները: «Չամատեղ նիստի» որոշման այլ կետերով հանձնարարականներ ստացան ռազմական արտադրանքի համար արտադրանյութեր (թուջ, պողպատ, երկաթ, թիթեղ, անտառափայտ, քիմի-

կատներ և այլն) մատակարարող մի շարք ձեռնարկությունների ղեկավարները<sup>224</sup>։

ՀԽՍՀ ժողկոմխորհի «Համատեղ նիստի» 1943 թ. փետրվարի 8-ի որոշմամբ Հայաստանի գործարաններում թողարկված ռազմական արտադրանքը պետք է ուղարկվեր Ադրբեջան և Վրաստան ու լիցքավորվեր այնտեղ տեղակայված հատուկ գործարաններում։ Այսպես, 82 մմ-ոց բեկորային ականները լիցքավորվելու էին Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության Բաքվի թիվ 610, իսկ 76 մմ-ոց արկերը և ձեռքի նռնակները՝ Նավթուղի թիվ 316 գործարաններում<sup>225</sup>։ Այսպիսով, ինչպես նշել ենք, Հայրենական պատերազմի տարիներին արդյունավետ համագործակցություն ծավալվեց Հայաստանի և հարևան խորհրդային հանրապետությունների պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների միջև ռազմական արտադրության բնագավառում։

Բացի ռազմամթերքի վերը նշված տեսակների արտադրությունից՝ Հայաստանի գործարաններում 1943 թ. շարունակվեց հակատանկային «3ԱՄ-5Ա» և «ՏՄԴ-Բ» տեսակի ականների պատյանների, դրանց համար հատուկ դարսելու արկղերի և փայտյա խցանների արտադրությունը։ «Համատեղ նիստի» 1943 թ. մայիսի 15-ի և հուլիսի 15-ի որոշումներով հաստատվեցին արտադրության պլանները։ Իրենց ենթակայության տակ գտնվող ձեռնարկություններում նշված տեսակի ականների արտադրությունը կազմակերպելու հանձնարարականներ ստացան Հայանտառարդ ժողկոմի տեղակալ Ս. Մինասբեկյանը, Հայարդխորհրդի նախագահության նախագահ Ս. Առաքելովը, Լենինականի քաղխորհրդի գործկոմի նախագահ Ս. Պետրոսյանը, հանրապետության ներգործողկոմատի ուղղիչ-աշխատանքային գաղութների միավորման պետ Ս. Հարությունյանը, Երևանի թիվ 447 գործարանի տնօրեն Խաչատրյանը, շարժիչների վերանորոգման գործարանի տնօրեն Ստեփեն-

<sup>224</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 172, ց. 2, գ. 23, թ. 2 և շրջ. 9 և շրջ.։

<sup>225</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 9։

կոն։ Նշենք, որ մայիսի 15-ի որոշումով ռազմապաշտպանական արտադրությունում ներգրավված բանվորներին ու աշխատողներին հատկացվում էր լրացուցիչ ուժեղացված սնունդ, իսկ ծխողներին՝ ամսական 200 գրամ ծխախոտ<sup>226</sup>։

Հանրապետության ձեռնարկություններում ռազմամթերքի և դրանց մասերի, ականների, ականների համար հատուկ դարսելու արկղերի և փայտյա խցանների, ռազմական այլ արտադրանքի արտադրության 1943 թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների պլանները հաստատվեցին ՀԽՍՀ ժողկոմխորհի «Փոքր ժողկոմխորհի նիստի» համապատասխանաբար՝ 1943 թ. հուլիսի 28-ի և հոկտեմբերի 27-ի, որոշումներով։ Համաձայն դրանց՝ Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանում արտադրվող 82 մմ-ոց բեկորային ականների համար 7500 հատուկ դարսելու արկղեր և ականների համար 55.000 խցաններ պատրաստելու հանձնարարականներ ստացան հանրապետության ներգործողկոմատի ուղղիչ-աշխատանքային գաղութների միավորման արհեստանոցները։ Որոշման այլ կետերով խստիվ արգելվեց կրճատել ռազմամթերք արտադրելու նպատակով հատկացված մետաղների, վառելանյութերի, քիմիկատների և այլ նյութերի քանակը, դրանք օգտագործել այլ նպատակների համար։ Նման դեպքերը բացառելու նպատակով հանձնարարվեց մեղավորներին ենթարկել դատական պատասխանատվության<sup>227</sup>։

Փաստաթղթերից տեղեկանում ենք նաև, որ ռազմամթերք արտադրող ձեռնարկություններին արտադրանյութ մատակարարողներին խրախուսելու նպատակով նրանց միջև կազմակերպված էր սոցիալիստական մրցություն, որի հաղթողները ստանում էին գունարային պարգևատրում։ Սոցիալիստական մրցության և պարգև-

<sup>226</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 473, թ. 1-3, գ. 486, թ. 1-2։

<sup>227</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 172, ց. 2, գ. 23, թ. 44 և շրջ. 45, 51 և շրջ.։

ատրման կարգը հաստատված էր ԽՍՀՄ ՊՊԿ-ի 1943 թ. ապրիլի 6-ի և հունիսի 4-ի որոշումներով<sup>228</sup>:

ՀԽՍՀ ժողկոմխորհի «Համատեղ նիստի» որոշումներում, ինչպես նշեցինք, հաճախ անդրադարձ էր կատարվում ռազմական արտադրությունում արտադրական խոտանը վերացնելու, արտադրանքի որակի նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանելու անհրաժեշտության մասին: Պատերազմի տարիներին ռազմապաշտպանական արտադրանք թողարկող Հայաստանի ձեռնարկություններում խոտանի դեպքերը զանգվածային բնույթ թեև չէին կրում, սակայն խոտան ապրանքներ երբեմն արտադրվում էր: Այսպես, օրինակ՝ Ձերժինսկու անվան գործարանի տնօրեն Վ. Սարգսյանին (պատճենը՝ Կարմիր բանակի հրետանային գլխավոր վարչության ռազմական ներկայացուցչի օգնական տեխնիկ-էլեյտենանտ Բատյայկինին) 1943 թ. հուլիսի 17-ին ուղղված գրությունում Անդրկովկասյան ռազմաճակատի շտաբին կից Կարմիր բանակի Հրետանային գլխավոր վարչության լիազոր ինժեներ-մայոր Սիմոնիկը մասնավորապես նշում է, որ հուլիսի 9-ին Սարգսյանին և իրեն ուղղված գրություններում Բատյայկինը տեղեկացրել է, որ գործարանում մինչ այսօր նկատվում են դեպքեր, որոնցով խախտված են 82 մմ-ոց ականների համար արտադրվող մետաղների և այլ նյութերի տեխնիկական չափորոշիչները, դրանք չեն համապատասխանում գծագրերին, որակի պահանջներին: Բացի այդ, մետաղը թույլատրվել է օգտագործման առանց մեխանիկական փորձարկման, անգամ՝ առանց որակի վերահսկողության վարչության պետի և գործարանում ռազմական ներկայացուցչի գիտության: Իսկ փորձարկումների արդյունքներն էլ բացահայտել են մետաղի անբավարար որակական հատկանիշները: «Փաստերը ապացուցում են, – շարունակում է Սիմոնիկը, – որ գործարանի գլխավոր ինժեները փոխարինում է որակի վերահսկողության վարչության պետի գործարույթները, խախտում ռազմական արդյունաբերու-

<sup>228</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 44 շրջ.:

յան ձեռնարկություններում Պաշտպանության ժողկոմի ռազմական ներկայացուցչի կանոնադրությունը, որը հաստատված է ԽՍՀՄ ժողկոմխորհի կողմից: Դրանով իսկ նպաստում է արտադրության կազմալուծմանը և Կարմիր բանակի համար արտադրվող ռազմամթերքի որակի իջեցմանը»: Սիմոնիկը գործարանի տնօրեն Սարգսյանին հորդորում է «առավել կտրուկ միջոցներ ձեռնարկել արտադրության մեջ նկատված անկարգությունները վերացնելու համար»<sup>229</sup>:

«Կտրուկ միջոցներ», իհարկե, ձեռնարկվեցին, սակայն ռազմական արտադրանքի որակի հետ կապված խնդիրներ գործարանում առաջանում էին նաև հետագայում: Ինչպես նշել ենք, արտադրական խնդիրներ գոյություն ունեին նաև ռազմապաշտպանական նշանակության արտադրանք թողարկող հանրապետության այլ ձեռնարկություններում:

Այդուհանդերձ, ԽՍՀՄ ռազմական տնտեսության պատմության մեջ 1943 թ. համարվեց բեկման տարի: Խորհրդային բանակի ծանրակշիռ հաղթանակների հետ միասին այդ տարին նշանավորվեց ռազմական տնտեսության ամրապնդմամբ և զարգացմամբ: Դա նկատելի էր նաև Խորհրդային Հայաստանում: Կառավարության կողմից իրականացված համալիր միջոցառումների արդյունքում (առկա հզորությունների վերաբաշխում, դրանց համակենտրոնացում, ձուլարանների աշխատանքների հզորացում և այլն) սկսեց արագ աճել հանրապետության խոշոր արդյունաբերության կարևոր ճյուղերից մեկի՝ մետաղամշակման արտադրանքը: Արդեն 1943 թ. հանրապետության արդյունաբերական արտադրանքի մեջ մետաղամշակման արտադրանքի տեսակարար կշիռը բարձրացավ 8,5 %-ի՝ 1940 թ. 4,4 %-ի դիմաց: Արդյունաբերության այդ ճյուղը պատերազմի տարիներին առավելագույն աճ արձանագրեց 1944 թ.<sup>230</sup>:

<sup>229</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 22, ք. 89:

<sup>230</sup> Տե՛ս Аллахвердян Г., նշվ. աշխ., էջ 6:

1943 թ. երկրորդ կեսից վերսկսվեց պատերազմի սկզբին ժամանակավորապես սառեցված ձեռնարկությունների շինարարությունը: Հայկական ԽՍՀ-ում առաջինը վերսկսվեց, ինչպես արդեն նշել ենք, Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի շինարարությունը, այնուհետև՝ ռետինադղերի, պլաստմասաների, կաբելի և այլ գործարանների: Միաժամանակ աշխատանքներ ծավալվեցին մետաղամշակման արդյունաբերության արմատական վերակառուցման և խոշոր մեքենաշինության՝ հաստոցաշինության և էլեկտրամեքենաշինության կազմակերպման ուղղությամբ:

1944 թ. հանրապետության տնտեսական կյանքում նշանակալի իրադարձություն էր ԽՍՀՄ Պաշտպանության պետկոմի 1944 թ. հուլիսի 11-ի՝ Կիրովականում ազոտային գործարան կառուցելու, և օգոստոսի 6-ի՝ Երևանի թիվ 722 գործարանում ռազմական թռիչքադաշտերի համար կոմպրեսորային կայաններ արտադրելու մասին որոշումները: Ի կատարումն դրանց՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն 1944 թ. օգոստոսի 8-ին և սեպտեմբերի 12-ին հաստատեց համապատասխան միջոցառումների ծրագիրը: Հանձնարարվեց օբյեկտների շինարարական և սարքավորումների տեղադրման աշխատանքներն ավարտել 1944 թ. 4-րդ եռամսյակի վերջին: ԽՍՀՄ ականանետային սպառազինության ժողկոմատի Երևանի թիվ 722 գործարանի տնօրեն Պրիխոդկոն հանձնարարվեց սեպտեմբերին ավարտել կոմպրեսորային կայանների արտադրության համար արտասահմանից ստացված 19 հաստոցների տեղադրումը, իրականացնել որոշումներից բխող այլ միջոցառումներ: Կոմպրեսորային կայանների շարային արտադրությունը նախատեսվում էր սկսել 1944 թ. դեկտեմբերից<sup>231</sup>:

Հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններում ռազմամթերքի արտադրությունը շարունակվեց նաև 1944 թ., սակայն խիստ սահմանափակ քանակով:

<sup>231</sup> Ст'я Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), т. 2, 281, 287:

Այսպես, համաձայն ռազմամթերքի արտադրության 1944 թ. առաջին և երկրորդ եռամսյակների պլանների, որոնք հաստատվեցին ՀԽՍՀ ժողկոմխորի «Համատեղ նիստի»<sup>232</sup> 1944 թ. փետրվարի 8-ի և մայիսի 17-ի որոշումներով, Երևանի մեխանիկական գործարանում ամսական արտադրվելու էր 76 մմ-ոց արկերի ընդամենը 2000-ական պատյան: Արտադրանքն ամբողջությամբ պետք է մատակարարվեր խորհրդային պաշտպանական արդյունաբերության թիվ 114 գործարանին (գտնվելու վայրը պարզել չի հաջողվել – Կ.Խ.): Ի դեպ, գործարանի ղեկավարները զգուշացվում էին, որ հանրապետությունից դուրս առաքվող արտադրանքը պետք է արտադրվի առաջնահերթ կարգով<sup>233</sup>: Համապատասխան որոշումներով հաստատվեցին նաև 82 մմ-ոց բեկորային ականների, զինամթերքը դարսելու համար հատուկ արկերի արտադրության պլանները:

Ամփոփելով 1943–1944 թթ. հանրապետությունում արտադրված ռազմամթերքի, ռազմապաշտպանական այլ արտադրանքի ցուցանիշները՝ պետք է փաստել, որ այդ տարիներին արտադրվեց ռազմամթերքի ընդամենը վեց տեսակ, որոնցից երեքի՝ 76 մմ-ոց արկերի, «ՌԳ-33» ու «ՌԳ-42» տեսակի ձեռքի նռնակների պատյանների, արտադրությունը կազմակերպվեց առաջին անգամ: Նշված տարիներին ընդհանուր առմամբ արտադրվեցին 226.200 82 մմ-ոց բեկորային ականներ և 22.200 76 մմ-ոց արկեր, 166.700 «ՌԳ-33» և «ՌԳ-42» տեսակի ձեռքի նռնակներ, 126.000 «ՅԱ-5Ա» և «ՏԱԴ-Բ» տեսակի հակատանկային ականներ, ինչպես նաև ականներ ու արկեր դարսելու համար 34.000 փայտյա հատուկ արկեր:

<sup>232</sup> Նշենք, որ նիստերը նախագահում էր ՀԽՍՀ ժողկոմխորի և «Համատեղ նիստի» նորանշանակ նախագահ Աղասի Սարգսյանը, որն այդ պաշտոնում 1944 թ. փետրվարի 1-ին փոխարինել էր Արամ Փիրուզյանին:

<sup>233</sup> Ст'я ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 531, թ. 1, գ. 543, թ. 1–2:

Պատերազմի ավարտական փուլում՝ 1945 թ. առաջին ամիսներին, հանրապետությունում ռազմաճակատի համար զենք և ռազմամթերք չի արտադրվել:

Հանրագումարի բերելով պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերության զարգացման, նրանում պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների ձևավորման, հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման հիմնական արդյունքները՝ պետք է արձանագրել, որ դրանք հիմնականում տպավորիչ են: Պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում գործադրված նոր ձեռնարկությունների և արտադրական հզորությունների, ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման մասին ամփոփ տեղեկություններ ներառված են ՀԽՍՀ ժողկոմխորհի պատրաստած «Հանրապետության արդյունաբերության հիմնական ցուցանիշների մասին» տեղեկանքում: 1945 թ. հունիսի 22-ով թվագրված և Անդրկովկասյան ռազմական օկրուգ ներկայացված այդ փաստաթղթում արձանագրված է, որ պատերազմի տարիներին հանրապետությունում կառուցվել է 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր, այդ թվում ինքնաթիռաշինական, շարժիչների վերանորոգման, կոմպրեսորային, ավտոդողերի, պարկային գործվածքների, քիմիադեղագործական և այլն: Պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերությունն իրացրեց արտադրանքի շուրջ 300 նոր տեսակի թողարկումը, որոնց զգալի մասն ուներ ռազմապաշտպանական նշանակություն, այդ թվում 10 անուն զինամթերքի, 1՝ զենքի, 6՝ կապի միջոցների, 47՝ գունակատնտեսական և իրային գույքի, 20՝ քիմիական նյութերի, 3՝ ինժեներական ծառայության գույքի, 6՝ հրետանային գույքի և այլն<sup>234</sup>: Ռազմապաշտպանական պատվերներ կատարող ձեռնարկություններում պատերազմի տարիներին արտադրվեց զինվորական հա-

<sup>234</sup> Стен Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 310–311: Стен նաև՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, ք. 39–40:

զուստի և գույքի ավելի քան 50 տեսակ<sup>235</sup>: Ռազմապաշտպանական նշանակություն ունեցող արտադրանքի թողարկմանը մասնակցեցին հանրապետության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը, շուրջ հինգ տասնյակ մեծ ու փոքր գործարաններ և ֆաբրիկաներ, արտադրական այլ ձեռնարկություններ ու կազմակերպություններ: Ռազմապաշտպանական հիմնական արտադրության մեջ զբաղված անձանց թվաքանակը, համաձայն պաշտոնական տվյալների, հասնում էր 3600–ի<sup>236</sup>: Այսպես, օրինակ՝ Չերժինսկու անվան Երևանի մեքենաշինական–հաստոցաշինական գործարանում ռազմապաշտպանական արտադրության մեջ զբաղված էր 150 մարդ, ԽՍՀՄ ռետինե արդյունաբերության ժողկոմատի Երևանի ՍԿ «Սովպրեն» թիվ 742 գործարանում՝ 100, ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի Երևանի թիվ 447 գործարանում՝ 50, Երևանի շարժիչների վերանորոգման գործարանում՝ 50, Հայարդխորհրդի ձեռնարկություններում՝ 600, ՀԽՍՀ թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում՝ 800, Տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում՝ 900, Անտառարդժողկոմատի ձեռնարկություններում՝ 150, Տեղական արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում՝ 550, Կիրովականի քիմկոմբինատում՝ 30 և այլն<sup>237</sup>:

Պատերազմի տարիներին պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների զարգացման շնորհիվ հանրապետության արդյունաբերությունում տեղի ունեցան կառուցվածքային կարևոր և արմատական փոփոխություններ, ստեղծվեցին արդյունաբերական նոր հզորություններ: Մեքենաշինական և մետաղամշակման ոլորտում սկզբնավորվեցին նոր ճյուղեր՝ հաստոցաշինությունը, ինքնաթիռաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը և այլն: Հիմնադրվեցին քիմիական արդյունաբերության և գունավոր մետաղագործու-

<sup>235</sup> Стен Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 332–334.

<sup>236</sup> Стен ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, ք. 4–9:

<sup>237</sup> Стен նույն տեղում:

թյան նոր ենթաճյուղեր՝ կարբիդի, ալյումինի, մոլիբդենի արտադրություններ: «Կարևոր էր նաև այն հանգամանքը, – ինչպես նկատում է պրոֆեսոր Գ. Գեղամյանը, – որ խոշոր, հիմնական արդյունաբերական կենտրոններից բացի՝ նոր գործարաններ և ֆաբրիկաներ էին հիմնվում նաև մի շարք շրջկենտրոններում, որով փաստորեն ուրվագծվեցին հանրապետության արդյունաբերական զարգացման հեռանկարները (Արմավիր, Արտաշատ, Արթիկ, Սպիտակ, Կոտայք, Տավուշ և այլն)»<sup>238</sup>:

Պատերազմն իրավամբ առաջացրեց պաշտպանական ճյուղի ձեռնարկությունների աշխարհագրության վիթխարի ընդարձակում խորհրդային երկրի արդյունաբերության կառուցվածքում: Հետագայում դա հնարավորություն ընձեռեց ստեղծելու նորագույն սպառազինության արտադրության նոր ճյուղեր (միջուկային զենքի, ռեակտիվ տեխնիկայի, ռադիոլոկացիոն (ռադիոտեղորոշումային) կայանների, ինքնակառավարվող համակարգերի և այլն)<sup>239</sup>: Սրանք այն ճյուղերն էին, որոնք հետպատերազմյան տարիներին համալրեցին ԽՍՀՄ–ում գործող ռազմարդյունաբերական համալիրը, որտեղ իր ծանրակշիռ մասնակցությունն ունեցավ նաև խորհրդային Հայաստանը:

#### **2.2.4. Հանրապետության գիտական ներուժը ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում**

Պատերազմի տարիներին հանրապետության պաշտպանական ոլորտի աշխատանքներում իր ծանրակշիռ մասնակցությունն ունեցավ նաև խորհրդային Հայաստանի գիտությունը: 1941 թ. նոյեմբերի 19–20–ը տեղի ունեցած ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 9–րդ պլենումը կարևոր խնդիրներ դրեց նաև հանրապետության գիտնականների

<sup>238</sup> Տե՛ս Գեղամյան Գ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., № 1, 1995, էջ 64:

<sup>239</sup> Տե՛ս Быстрова И., նշվ. աշխ., էջ 636:

և գիտության առջև: Պլենումում ընդունված բանաձևում նշվեց. «Հանձնարարել գիտական կազմակերպությունների ղեկավարներին և Արմֆանին՝ գիտահետազոտական աշխատանքներն ամբողջապես նպատակամղել ռազմաճակատի սպասարկմանը», ուսումնասիրություններ կատարել տեղական հումքի նոր տեսակներ հայտնաբերելու, ձեռնարկությունների լրացուցիչ կարողությունները բացահայտելու ուղղությամբ և այլն: Հանձնարարվեց նաև խթանել արդյունաբերական ձեռնարկությունների ինժեներատեխնիկական աշխատողների, գյուտարարների և նորարարների նախաձեռնությունները՝ ուղղված արդյունաբերական հզորությունների ավելացմանը, Կարմիր բանակին մատակարարելու համար արտադրանքի նոր տեսակների մշակմանն ու թողարկ անը<sup>240</sup>:

Եվ իրոք, առանց գիտատեխնիկական աջակցության հանրապետությունն ի զորու չէր ամենասեղմ ժամկետներում ավարտելու տնտեսության վերակառուցումը, առավելագույնս արդյունավետ օգտագործելու արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական կարողությունները: Պատերազմի սկզբից ևեթ Հայաստանի ակադեմիական և բուհական համակարգի գիտահետազոտական ինստիտուտներն, ամբիոններն ու լաբորատորիաները նոր եռանդով ներգրավվեցին այն խնդիրների մշակմանն ու իրականացմանը, որոնք առաջնակարգ նշանակություն ունեին պատերազմի պայմաններում երկրի պաշտպանունակության ամրապնդման, ռազմական արտադրանքի կատարելագործման, բանակի մարտունակության բարձրացման համար: Հայ գիտնականներն իրենց ուսումնասիրություններով ու գյուտերով, նորարարական առաջարկություններով նշանակալի ավանդ ունեցան հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձևավորման և զարգացման գործում:

<sup>240</sup> Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 103–104:

Դեռևս պատերազմի սկզբին հայ քիմիկոսների ջանքերով ստեղծվեց երկու տիպի դյուրավառ հեղուկների խառնուրդ, որը լցնելով շշերի մեջ կարելի էր օգտագործել թշնամու տանկերն այրելու համար: Հայտնագործության մասին տեղեկացնելով Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատարությանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը նշում է, որ Արմֆանի գիտնականների օգնությամբ «Սովպրեն» քիմկոմբինատում հնարավոր է պատրաստել շուրջ 100.000 դյուրավառ հեղուկով լցված շշեր<sup>241</sup>:

1941 թ. նոյեմբերի 13-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն, իսկ 14-ին՝ ՀԽՍՀ Ժողկոմխորի «Համատեղ նիստը» որոշում ընդունեցին նման շշերի պատրաստման մասին, «Սովպրեն» կոմբինատի տնօրեն Ա. Ղազարյանին հանձնարարվեց մինչև դեկտեմբերի 10-ը պատրաստել 80.000 շիշ<sup>242</sup>:

Արմֆանի քիմիական ինստիտուտում հայ գիտնականները հայտնագործեցին ռեակտիվ այնպիսի նյութեր և բաղադրիչներ, որոնք կարևոր էին որակյալ սինթետիկ կաուչուկ, մետաղներ, ակտիվացված ածուխ, խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության համար կարևոր այլ նյութեր ստանալու համար: Հայ քիմիկոսներին հաջողվեց կազմակերպել տեղական հույժից պլաստմասաների ստացման անչափ արդյունավետ եղանակը, որը շատ արագ ներդրվեց արդյունաբերության մեջ: Նրանց եռանդուն գործունեության արդյունքում մշակվեց նաև ֆերրոսիլիցիում կարևոր նյութի ստացման եղանակը: Երևանի և Կիրովականի քիմկոմբինատներում արտադրված ֆերրոսիլիցիումը հաջողությամբ օգտագործվեց մետաղագործության մեջ՝ ձուլարաններում գերաճուր գրահանյութ արտադրելու համար<sup>243</sup>: Դրա նշանակությունը

ռազմական արդյունաբերության կարիքների համար անգնահատելի է:

Ոչ պակաս կարևոր էր տրինիտրոբենզոլ քիմիական նյութի ստացման յուրահատուկ եղանակը, որն Արմֆանի քիմիական ինստիտուտում մշակեց պրոֆեսոր Վաչե Իսագուլյանը: Դա, որպես պայթուցիկ նյութ, օգտագործվում էր ռազմամթերքի արտադրության մեջ տրոտիլի փոխարեն, քանի որ որակական հատկանիշներով գերազանցում էր վերջինիս: Հայ գիտնականի հայտնագործության մասին շուտով հայտնի դարձավ Մոսկվայում, ԽՍՀՄ ռազմամթերքների ժողկոմատում: Ակադեմիկոս Ի. Օրբելուն 1943 թ. հոկտեմբերի 11-ին ուղղված նամակում ժողկոմի տեղակալ Կ. Գամովը նշում է պրոֆեսոր Վ. Իսագուլյանի գիտական աշխատանքները շարունակելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու և ֆինանսավորելու անհրաժեշտության մասին: Ժողկոմի տեղակալը դա հիմնավորում է տրինիտրոբենզոլի ստացման նոր եղանակի «արդյունաբերական հեռանկարային նշանակությամբ»: Գամովը նաև տեղեկացնում է, որ ԽՍՀՄ ռազմամթերքների ժողկոմատը որոշել է աջակցել և ֆինանսավորել Իսագուլյանի աշխատանքը<sup>244</sup>:

Նորարական հայտնագործություններ և գյուտեր կատարվում էին ոչ միայն ակադեմիական և բուհական միջավայրում, այլև հանրապետության արտադրական տարբեր ձեռնարկությունների լաբորատորիաներում: Այսպես՝ Երևանի «Արարատ» գործարանի կենտրոնական լաբորատորիայի մասնագետ նորարարներ Պոպովի և Ջամիլադյանի ջանքերով պատերազմի տարիներին մշակվեց քիմիական նոր նյութի արտադրության տեխնոլոգիա: Խոսքը «Էմալիտ» աերոլաքի մասին է, որը լայնորեն օգտագործվեց ավիաարդյունաբերության մեջ նախկինում օգտագործվող թանկարժեք և

<sup>241</sup> Տե՛ս Ավետիսյան Հ. և ուրիշ., նշվ. աշխ., էջ 97:

<sup>242</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 98: Տե՛ս նաև՝ Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 100–101:

<sup>243</sup> Տե՛ս Գարիբջանյան С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 14:

<sup>244</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 59–60: Նաև՝ Գарибджанян С., Документы об организации академической науки в Армении в годы Великой Отечественной войны (1942–1944), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1995, № 1, էջ 242:

դեֆիցիտային նյութերի փոխարեն: Աերուլաքն առաջինը փորձարկեցին և սկսեցին օգտագործել Երևանի և Թբիլիսիի ավիացիոն գործարանները, այնուհետև նաև այլ գործարաններում և ավիացիոն զորամասերում: Այդ զորամասերից մեկից «Արարատ» գործարան ուղարկված նամակում մասնավորապես նշվում է. «Ձեր լաբորատորիայում ստացված մեկուսիչ լաքի նմուշը հաջողությամբ անցավ փորձարկումները և ամբողջությամբ բավարարում է մեր պահանջներին»<sup>245</sup>:

Կենսաբանական, բժշկագիտական և դեղագործական կարևոր ուսումնասիրություններ կատարվեցին Երևանի բժշկական ինստիտուտի դեղաբանական և օրգանական քիմիայի ամբիոններին կից գործող գիտաարտադրական հատուկ լաբորատորիաներում: Այստեղ ստեղծվեցին և արտադրվեցին բժշկական մի շարք պատրաստուկներ, դեղամիջոցներ, քիմիական տարբեր ռեակտիվներ, որոնք անհրաժեշտ էին մարտական թունավոր նյութեր հայտնաբերելու, դրանցից պաշտպանվելու համար և այլն: Նշենք, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ապագա ակադեմիկոս Արմենակ Մնջոյանի ղեկավարությամբ գործող Երևանի բժշկական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնի արդյունավետ գործունեության արդյունքում արդեն 1943 թ. ամռան սկզբին այստեղ կազմակերպվեց ավելի քան 20 տեսակի դեղամիջոցների (այդ թվում ցավազրկող) և 40 ռեակտիվների ու ինդիկատորների արտադրություն: Ամբիոնի գործունեությունը բարձր գնահատականի արժանացավ Կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի հրամանատարության կողմից<sup>246</sup>: «Բանակի և ռազմածովային նավատորմի պատվերների կատարման գործում Երևանի մի շարք ձեռնարկությունների կոլեկտիվներին զգալի օգնություն ցույց

<sup>245</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 227–228: Տե՛ս նաև՝ Մանուկյան Դ., նշվ. աշխ., էջ 61:

<sup>246</sup> Տե՛ս Гарибджанян С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 13:

տվեցին Երևանի մի խումբ ֆիզիկոսներ՝ Նորայր Քոչարյանի գլխավորությամբ»<sup>247</sup>:

Հայաստանի գիտության ներուժը կարևորվում էր նաև պաշտպանական ոլորտում գիտական խմբերի համամիութենական համագործակցության ասպարեզում: Այսպես, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահ ակադեմիկոս Ի. Օրբելուն 1942 թ. ապրիլի 29–ին ուղղված նամակում ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ ակադեմիկոս Ե. Չուրակովը հայտնում է, որ անչափ կարևոր պաշտպանական առաջադրանք կատարելու նպատակով ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի կարգադրությամբ Երևան է գործուղվել ԽՍՀՄ ԳԱ էներգետիկայի ինստիտուտի մասնագետների խումբը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Դ. Դավթյանի գլխավորությամբ: «Նկատի ունենալով առաջադրանքի անչափ կարևորությունը երկրի պաշտպանության համար, – նշում է Չուրակովը, – այն պետք է իրականացվի հնարավորինս կարճ ժամկետում: Ուստի ԽՍՀՄ ԳԱ նախագահությունը խնդրում է, որ տեղ հատկացվի լաբորատորիա կազմակերպելու համար, ինչպես նաև այն ապահովվի անհրաժեշտ բոլոր նյութերով ու սարքավորումներով, էլեկտրաէներգիայով, արհեստանոցներով, սպասարկող անձնակազմով, ինչպես նաև հարկավոր է լաբորատորիայի աշխատակիցներին ապահովել բնակելի տարածքով»<sup>248</sup>:

Պատերազմի սկզբին Երևանի պետական համալսարանին կից ստեղծված Ֆիզիկայի ինստիտուտում եղբայրներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները 1942 թ. սկսեցին տիեզերական ճառագայթների ուսումնասիրությունը, կատարելով նոր հայտնագործություններ: 1942 թ. օգոստոսին Արագած լեռան բարձրունքին նրանց ուժերով կազմակերպվեց տիեզերական ճառագայթների ուսումնասիրություններ կատարող ամենաբարձրադիր կայանը ԽՍՀՄ–ում: Հետագայում աշխատանքները շարունակվեցին ՀԽՍՀ նորա-

<sup>247</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Սահակյան Մ., Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Ե., 1988, էջ 16–18:

<sup>248</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 47:

ատեղծ Գիտությունների ակադեմիայի համակարգում 1943 թ. վերջին կազմավորված ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտում, որը 1946 թ. վերակազմակերպվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտի: Ալիխանյան եղբայրների այս ուսումնասիրությունները նպաստեցին հետպատերազմյան տարիներին ՀԽՍՀ-ում տիեզերագիտության զարգացմանը, գիտական արդյունքների ներդրմանը ռազմական արդյունաբերությունում:

Արմֆանի գիտնականները կարևոր ուսումնասիրություններ կատարեցին նաև Անդրկովկասի ռազմաճակատի շտաբի պատվերներով և նյութական օժանդակությամբ: Այսպես, ՀԽՍՀ ժողկոմխորի «Համատեղ նիստը» 1943 թ. փետրվարի 8-ին որոշում ընդունեց «Անդրկովկասյան ռազմաճակատի համար հատուկ քարտեզագրական աշխատանքներ կատարելու մասին»: Արմֆանի գիտական կազմակերպություններին հանձնարարվեց կազմել ՀԽՍՀ տարածքի անցանելիության և թաքստոցների քարտեզներ, ինչպես նաև պատրաստել տարածքի աշխարհագրական-տնտեսական պատկերի ընդհանուր նկարագրեր<sup>249</sup>:

Երկրաբանական-աշխարհագրական ուսումնասիրությունները, որոնք իրականացնում էին Արմֆանի երկրաբանության ինստիտուտի գիտաշխատողները, ներառվեցին նաև ինստիտուտի 1944 թ. գիտական թեմատիկայի մեջ: Դրա նպատակահարմարության մասին է նշվում Անդրկովկասի ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Ի. Տյուլենևի կողմից 1943 թ. հոկտեմբերի 25-ին Գ. Հարությունյանին ուղղված նամակում: Նշելով ինստիտուտի օգտակար աշխատանքների մասին, ինչը դրսևորվել է «բարձր որակավորում ունեցող մասնագետների» կողմից երկրաբանական, Հայաստանի ու նրան հարակից տարածքների անցանելիության և թաքստոցների քարտեզներ (որոնք ունեն օպերատիվ նշանակություն) կազմելու գործում, Տյուլենևը խնդրում է հետազայում նույն-

պես զարգացնել ինստիտուտի երկրաբանական-աշխարհագրական աշխատանքները, շարունակել կազմել նոր քարտեզներ: Անդրկովկասի ռազմաճակատի հրամանատարը ցանկալի է համարում ընդարձակել աշխատանքների ոլորտը. կազմել ռազմավարական հանքային հումքի քարտեզներ, նշելով այն հանքավայրերը, որոնք հնարավոր կլինի շահագործել ինչպես ռազմաճակատի, այնպես էլ ժողտնտեսության կարիքների համար: Համոզված լինելով, որ ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի գիտաշխատողները նշված աշխատանքները կկատարեն հաջողությամբ, գեներալ Տյուլենևը Հարությունյանին խնդրում է նախատեսել և հատկացնել անհրաժեշտ ֆինանսավորում<sup>250</sup>:

Ուշագրավ է, որ 1943 թ. նոյեմբերին Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումով հայ գիտնականներն առավել հիմնարար աշխատանքներ ծավալեցին ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև ծառայած արտադրական գործընթացների կատարելագործման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Այդ ուսումնասիրություններից հատկապես կարևոր էր պոտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը: Այն մշակեց Հայաստանի ԳԱ երկարամյա պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը՝ իր իսկ առաջ քաշած ինվարիանտության սկզբունքի հիման վրա: Տեսությունն արագորեն լայն կիրառություն ստացավ գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում, հատկապես ռազմական նպատակներով, լայնորեն օգտագործվեց գիշերային նշանառության օպտիկական սարքերի թողարկման ասպարեզում<sup>251</sup>:

Այսպիսով, պատերազմի տարիներին գիտության տարբեր ոլորտների մասնագետների, հատկապես երկրաբանների, քիմիկոսների, ֆիզիկոսների, կենսաբանների ու դեղագործների հաջո-

<sup>249</sup> Տե՛ս Գարիբձյանյան Ս., Документы об организации академической науки в Армении в годы Великой Отечественной войны (1942–1944), էջ 242, նույնի՝ Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), էջ 57:

<sup>250</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 60–61:

<sup>251</sup> Арутюнян К., Саакян М., Участие сотрудников Национальной Академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941–1945), Е., 2001, с. 10–11.

ղությունները տեսանելի են ռազմապաշտպանական նշանակու-  
թյուն ունեցող տարբեր բնագավառներում: Նրանց գիտական հե-  
տազոտությունների արդյունքները նպաստեցին երկրի պաշտպա-  
նունակության ամրապնդմանը, խորհրդային բանակի մարտունա-  
կության բարձրացմանը, պատերազմում խորհրդային ժողովուրդ-  
ների հաղթանակին:

## ՉԼՈՒՄ ԵՐՐՈՐԴ

### **ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈԱՅ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ (1945–1960–ԱԿԱՆ ԹԹ.)**

#### **3.1. Գերմանական ռազմավարի դերը խորհրդային Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման գործում**

Հետպատերազմյան առաջին տարիներին խորհրդային երկրի  
քայքայված տնտեսության վերականգնման, ինչպես նաև բոլոր  
տեսակի պաշարների ու միջոցների ավելացման հիմնական աղբյուր  
հանդիսացան ռազմատուգանքների (ռեպարացիաների) գծով  
Գերմանիայից, ինչպես նաև նրան դաշնակից երկրներից նախա-  
տեսված «հատուկ ներմուծումները»՝ ռազմավարը: Դեռևս 1945 թ.  
սկզբին ԽՍՀՄ կառավարությունը արտգործժողովուրդի տեղակալ Ի.  
Մայսկու նախագահությամբ ստեղծեց մի հանձնաժողով, որը հաշ-  
վարկեց պատերազմում ֆաշիստների կողմից ԽՍՀՄ-ին հասցված  
վնասը, նյութական կորուստների ընդհանուր չափը, մշակեց նաև  
Գերմանիայի ռազմատնտեսական զինաթափման ծրագիրը<sup>252</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմում պարտություն  
կրած ֆաշիստական Գերմանիային ներկայացվելիք ռազմատու-  
գանքի չափի և հաղթողների միջև դրանց բաշխման հարցը  
քննարկման առարկա դարձավ պատերազմում դաշնակից երեք  
մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկա-

<sup>252</sup> Стів Быстрова И., Военно-экономическая политика СССР: от «демилитаризации» к гонке вооружений, «Сталинское десятилетие холодной войны: факты и гипотезы», էջ 173:

վարներ Իոսիֆ Ստալինի, Ֆրանկլին Ռուզվելտի և Ուինսթոն Չերչիլի երկրորդ հանդիպման ընթացքում<sup>253</sup>, որը կայացավ 1945 թ. փետրվարի 4–12–ը Յալթայում (Ղրիմ):

Ի թիվս այլ հարցերի՝ դաշնակիցները պայմանավորվեցին ոչնչացնել գերմանական սպառազինությունը, ռազմական սարքավորումները, արգելել ռազմական արտադրությունը, վերահսկողություն սահմանել գերմանական ողջ արդյունաբերության վրա, Գերմանիային՝ որպես վտանգավոր մրցակցի, դուրս մղել համաշխարհային շուկաներից: Դաշնակիցները լավ էին ուսանել ոչ վաղ անցյալի պատմության դասերը, երբ Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Գերմանիան ռազմատուգանքի գերակշիռ մասը վճարել էր փողով և չէր զրկվել ռազմական արդյունաբերություն ունենալու իրավունքից, ինչից հետագայում օգտվեցին նացիստները և ընդամենը երկու տասնամյակ անց աշխարհը ներքաշեցին նոր պատերազմի մեջ:

Կոնֆերանսում գերմանական ռազմատուգանքի հարցի շուրջ թե՛ քննարկումներ ծավալվեցին, ուստի վերջնական որոշում չընդունվեց: Սակայն խնդրի վերաբերյալ 1945 թ. փետրվարի 11–ին ստորագրված հատուկ ամփոփիչ արձանագրությունում նշվեց, որ Գերմանիան պարտավոր է փոխհատուցել պատերազմի ընթացքում դաշնակից ժողովուրդներին պատճառած վնասն առաջին հերթին այն երկրներին, որոնք կրել են պատերազմի ողջ ծանրությունը<sup>254</sup>: Դաշնակիցների որոշմամբ երեք պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմավորվելու էր միջդաշնակցային ռեպարացիոն հանձնաժողով, որը գործելու էր Մոսկվայում<sup>255</sup>: Ինչ վերաբերում է ռազմատուգանքի ընդհանուր չափին,

<sup>253</sup> Առաջինը տեղի է ունեցել Թեհրանում 1943 թ. նոյեմբերի 28–ից դեկտեմբերի 1–ը:

<sup>254</sup> Стен Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг. Том 4. Крымская конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (4–11 февраля 1945 г.). Сборник документов, МИД СССР, М., 1979, т. 243, 278:

<sup>255</sup> Стен Москвы տեղում:

ապա խորհրդային և ամերիկյան պատվիրակությունները նախնական համաձայնության եկան հետևյալում. «Մոսկովյան ռեպարացիոն հանձնաժողովն իր աշխատանքների նախնական փուլում որպես հիմք կընդունի խորհրդային կառավարության առաջարկն այն մասին, որ ռեպարացիաների ընդհանուր գումարը... պետք է կազմի 20 մլրդ. դոլար, և որ այս գումարի 50 %-ը պետք է անցնի խորհրդային Միությանը»<sup>256</sup>: Բրիտանական կողմը գտնում էր, որ մինչ հանձնաժողովի կողմից հարցի քննարկումները սկսելը, ճիշտ չէ նշել ռեպարացիաների կոնկրետ թվերը<sup>257</sup>: Այս հարցում, սակայն, վճռական էր տրամադրված խորհրդային ղեկավար Ի. Ստալինը և Ու. Չերչիլի հետ բանավեճում նա խնդիրը դրեց բավականին կտրուկ, անգամ հեզմեց. «Ի՞նչ է, կոնֆերանսը ցանկանում է, որ ռուսները ռեպարացիաներ ընդհանրապես չստանան»<sup>258</sup>:

Կոնֆերանսին մասնակցող խորհրդային պատվիրակության փորձագետները Ստալինի կարգադրությամբ պարզ հաշվարկների օգնությամբ ապացուցեցին, որ Գերմանիան ի վիճակի է վճարելու ռեպարացիաների նշված չափը, քանի որ մինչպատերազմյան տարիներին սպառազինության վրա ծախսել է տարեկան մինչև 6 մլրդ. դոլար: Խորհրդային կողմի փաստարկներն առավել քան համոզիչ էին, ուստի Չերչիլը ստիպված էր տեղի տալ և ընդունել, որ «Այո, դա շատ կարևոր նկատառում է»<sup>259</sup>: Ռեպարացիաների խնդիրը տեղափոխվեց երեք դաշնակից պետությունների ղեկավարների Պոտսդամի (Բեռլինի) կոնֆերանս (1945 թ. հուլիսի 17–ից օգոստոսի 2–ը), որի օրակարգում էին հետպատերազմյան Գերմանիայի ապառազմականացման, ըստ էության՝ Գերմանիայի զինված ուժերի արձակման, լիակատար զինաթափման, ռազմական արդյունաբերության վերացման հարցերը:

<sup>256</sup> Նույն տեղում, էջ 278–279:

<sup>257</sup> Стен Москвы տեղում:

<sup>258</sup> Նույն տեղում, էջ 215:

<sup>259</sup> Նույն տեղում, էջ 81:

Պոտսդամում դաշնակիցների միջև դարձյալ սուր բանավեժ ծավալվեց ռազմական տուգանքների չափի և միմյանց միջև դրանց բաշխման սկզբունքների շուրջ: Ամերիկյան պատվիրակությունը, որը գլխավորում էր ԱՄՆ նորընծա նախագահ Չարլի Թրումենը, Պոտսդամում փոխել էր իր դիրքորոշումը՝ հանդես գալով երկրներից յուրաքանչյուրի համար ռազմատուգանքի կոնկրետ չափ սահմանելու դեմ: Դա պատճառաբանվում էր նրանով, որ Դրիմի կոնֆերանսից հետո Գերմանիայում մեծ ավերածություններ են տեղի ունեցել, նրանից մի քանի մարզեր են օտարվել, ուստի նախկինում սահմանված ռազմատուգանքների չափն այժմ իրատեսական չէ: Մեծ Բրիտանիայի պատվիրակությունը հայտարարեց, որ ձեռնպահ է մնում ռազմատուգանքների հարցում որևէ առաջարկությունից<sup>260</sup>, դրանով, փաստորեն, պաշտպանելով ամերիկյան կողմին: Գործնականում սա նշանակում էր, որ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ձգտում էին պահպանել Գերմանիայի ռազմական արդյունաբերությունը, որը հիմնականում կենտրոնացած էր երկրի արևմտյան իրենց վերահսկողության տակ գտնվող շրջաններում: Խորհրդային կողմը, սակայն, շարունակեց պնդել ռազմատուգանքի մասին իր նախկին առաջարկությունը: Ստալինը հայտարարեց, որ պատերազմն ահռելի վնաս է հասցրել Խորհրդային Միությանը, ուստի անհրաժեշտ է, որ հատուցվի նրա կորուստների առնվազն 1/20 մասը<sup>261</sup>:

Արդյունքում կոնֆերանսի մասնակիցները համաձայնվեցին, որ դաշնակից յուրաքանչյուր պետության կողմից ռազմատուգան-

<sup>260</sup> St'v Sovetskij Sojuz na mezhdunarodnykh konferencijax perioda Velikoj Otechestvennoj vojny 1941-1945 g. Tom 6. Berlin'skaja (Pot'sdam'skaja) konferencija rukovoditelej trekh sojuznykh derzjav - CCCP, SSHA i Velikobritanii (17 ijulja - 2 avgusta 1945 g.). Sbornik dokumentov, MID CCCP, M., 1984, էջ 226-227, 255:

<sup>261</sup> St'v նույն տեղում, էջ 236:

քը գանձվի իր իսկ ռազմակալման գոտուց<sup>262</sup>: Սակայն նկատի ունենալով, որ Գերմանիայի արևելյան տարածքների արդյունաբերական զարգացվածությունն էականորեն զիջում է արևմտյանին, դաշնակիցները նաև փոխզիջումային որոշում մշակեցին. ԽՍՀՄ-ը իբրև ռեպարացիաներ ստանալու էր ոչ միայն իր ռազմակալման գոտուց, այլև արևմտյան գոտիների արդյունաբերական սարքավորումների 25 %-ից<sup>263</sup>: Դրա դիմաց Խորհրդային կողմը զիջումների գնաց այլ հարցերում, մասնավորապես հայտարարեց, որ որևէ հավակնություն չունի այն ոսկու նկատմամբ, որը Գերմանիայում զավթել էին դաշնակից զորքերը: Պոտսդամի բանակցությունների արդյունքում 1945 թ. օգոստոսի 1-ին ստորագրված եզրափակիչ արձանագրության «Գերմանիայից ստացվող ռեպարացիաները» բաժնում հատուկ նշվեց, որ «արդյունաբերական կապիտալ սարքավորումների առգրավումները սկսվելու են այնքան արագ, որքան հնարավոր է, և կավարտվեն որոշման ընդունումից երկու տարվա ընթացքում»<sup>264</sup>: Կոնֆերանսում նշվեց նաև ֆաշիստական ռազմագերիների՝ որպես աշխատուժի, օգտագործման մասին<sup>265</sup>:

<sup>262</sup> Դրիմի կոնֆերանսի որոշումներով Գերմանիան և նրա մայրաքաղաք Բեռլինը բաժանվել էին ռազմակալման 4 գոտիների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի վերահսկողությամբ:

<sup>263</sup> St'v Berlin'skaja (Pot'sdam'skaja) konferencija rukovoditelej trekh sojuznykh derzjav - CCCP, SSHA i Velikobritanii (17 ijulja - 2 avgusta 1945 g.), էջ 435:

<sup>264</sup> St'v նույն տեղում, էջ 435-436:

<sup>265</sup> Երկրորդ աշխարհամարտի տարիներին Խորհրդային Միությանը գերի ընկած ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների որոշ տվյալներով մինչև 2 մլն հասնող ռազմագերիները, որոնց մեջ գերմանացիներից բացի կային նաև ավստրիացիներ, ռումինացիներ, իտալացիներ, ֆիններ և այլ ազգերի ներկայացուցիչներ, տեղաբաշխվեցին Միության գրեթե բոլոր անկյուններում: 1943 թ. փետրվարի սկզբին Ստալինգրադի ճակատամարտում Խորհրդային բանակի հաղթանակից հետո ռազմագերիների առաջին խմբերը ժամանեցին նաև Խորհրդային Ղալաստան: Որպես բանվորական ուժ նրանց հիմնականում օգտագործում էին շինարարական աշխատանքներում, սակայն մի մասին ընդգրկեցին հանրապետության արդյունաբերության մեջ: Ռազմագերիները, որոնց թվում էին տարբեր ոլորտի մասնագետներ, նոր թափ հաղորդեցին մայրաքաղաք Երևանում 1941 թվականից ընթացող «Ղաղ-

Այսպիսով, ռազմատուգանքի հարցում խորհրդային կողմի վարած կոշտ և նպատակաուղղված քաղաքականությունը ԽՍՀՄ-ի համար ապահովեց բավականին շոշափելի արդյունքներ: Դրանց իրական չափի, կոնկրետ տեսականու և ԽՍՀՄ տարածքում տեղաբաշխման մասին տեղեկությունները տասնամյակներ շարունակ պետական գաղտնիք էին: Խորհրդային Միության կողմից Գերմանիայից ստացված ռազմատուգանքի չափերի մասին ամբողջական տվյալները հասանելի դարձան միայն 1990-ական թվականներին, երբ ԽՍՀՄ փլուզումից հետո այդ ամենը մասամբ գաղտնագերծվեց: Ռուսաստանի հետազոտողներ Ս. Սեմիրյազայի և Բ. Կնիշևսկու կողմից հրապարակված ԽՍՀՄ կառավարության «Ռազմավարի գլխավոր վարչության» պաշտոնական տվյալների համաձայն՝ միայն արդյունաբերական հզորությունների գծով Գերմանիայից ձեռք բերված ռազմավարը կազմել է շուրջ 400.000 երկաթուղային վագոն, այդ թվում՝ 72.000 վագոն շինանյութ, 2885 գործարան, 96 էլեկտրակայան, 340.000 հաստոց, 200.000 էլեկտրաշարժիչ և այլն: Ռազմակալման խորհրդային գոտուց առաջին հերթին արտահանվեցին ռազմական գործարանների, ավիացիոն, մետաղագործական, քիմիական, էլեկտրատեխնիկական և այլ ձեռնարկությունների սարքավորումները<sup>266</sup>: Ընդհանուր առմամբ, «երկու տարվա ընթացքում գերմանական և ճապոնական 4786, այդ թվում ռազմական արդյունաբերության 655 ձեռնարկություններից տարհանվել է շուրջ 1 միլիոն վագոն տարատեսակ սարքավորումներ»<sup>267</sup>:

թանակ» կամրջի շինարարությանը, աշխատեցին Արարատի ցեմենտի գործարանում, «Արթիկտուֆի» և այլ հանքերում, մասնակցեցին 1945 թ. սկսված Մատենադարանի հիմքերի կառուցման աշխատանքներին: Ռազմագերիները Հայաստանում մնացին մինչև 1948 թ., երբ հայտարարված համաներմամբ ազատ արձակվեցին և վերադարձան իրենց երկրները:

<sup>266</sup> St'u Семиряга М., Как мы управляли Германией, М., 1995, Кнешеvский Б., Добыча. Тайны германских репараций, М., 1994.

<sup>267</sup> St'u Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 235:

Ռազմատուգանքների գծով ձեռնարկությունների և սարքավորումների տարհանման գործնական խնդիրներով զբաղվում էր ԽՍՀՄ ժողկոմխորհին կից Հատուկ կոմիտեն, ինչպես նաև տնտեսական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնաժողովները: Նրանք կազմում էին ձեռնարկությունների, գիտահետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների ցուցակները, որոնք ի հաշիվ ռեպարացիաների ենթակա էին ԽՍՀՄ տեղափոխելու<sup>268</sup>:

Ի թիվս խորհրդային մյուս հանրապետությունների՝ «գերմանական ռազմավարի» իր չափաբաժինը ստացավ նաև Խորհրդային Հայաստանը՝ տեղական արդյունաբերությունը վերազինելու, նոր գործարաններ և արտադրամասեր հիմնելու համար: Հատկացումները կատարվեցին ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշումներով: Այսպես՝ 1946 թ. ապրիլի 9-ի թիվ 797-319 «գաղտնի» որոշմամբ ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարությանը հատկացվեցին գերմանական 4 ձեռնարկությունների արտադրական հոսքեր: Դրանց սարքավորումների ապամոնտաժման աշխատանքները վերահսկելու, սարքավորումներն ընդունելու և դեպի հանրապետություն փոխադրելու նպատակով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանի հանձնարարությամբ 1946 թ. ապրիլի 18-ին Բեռլին մեկնեց չորս ինժեներից բաղկացած խումբ՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Միութենական կառավարությունում հանրապետության մշտական ներկայացուցիչ Գուրգեն Չոլախյանի գլխավորությամբ<sup>269</sup>:

<sup>268</sup> St'u Быстрова И., Военно-экономическая политика СССР: от «демилитаризации» к гонке вооружений, էջ 173-174:

<sup>269</sup> St'u ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 45, ք. 378-383: Խորհրդահայ պետական, կուսակցական գործիչ, արտադրության հմուտ կազմակերպիչ Գուրգեն Տիգրանի Չոլախյանը ծնվել է 1909 թ. Ալեքսանդրապոլում: 1928 թ. ավարտել է Երևանի արդյունաբերական տեխնիկումը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Ֆ. Չերժինսկու անվան Երևանի հաստոցաշինական գործարանում՝ որպես արտադրատեխնիկական բաժնի պետ: 1932-1939 թթ. սովորել է Մոսկվայի Ն. Բաումանի անվան բարձրագույն տեխնիկական ուսումնարանում, որտեղ պատրաստում էին արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտի

Նշենք, որ 1946 թ. ապրիլի 4-ի որոշումով ՀԽՍՀ ժողկոմխորիը հավանության էր արժանացրել նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահության առաջարկությունը՝ գիտատեխնիկական գրականություն և լաբորատոր սարքավորումներ ձեռք բերելու նպատակով ակադեմիայի անդամ Վաչե Իսազուլյանցին և գիտաշխատող Գեորգի Տեր-Ստեփանովին Գերմանիա գործուղելու մասին<sup>270</sup>:

ԽՍՀՄ կառավարության որոշումով Հայաստանին հատկացվել էին Գերմանիայի տնտեսապես զարգացած Թյուրինգիա դաշնային հողի (երկրամասի) Ձուլ քաղաքում գտնվող հեծանիվների մասեր արտադրող «Լուկ և Վագներ» ֆիրմայի (330 միավոր սարքավորումներով) և նույն երկրամասի Այզենախ քաղաքում տեղակայված «Մեսսերշմիդտ» ռազմական ինքնաթիռների համար ավիամասեր արտադրող «Ունիոն» ֆիրմայի (295 միավոր սարքավորումներով) մեխանիկական գործարանները, Բրանդերբուրգի դաշնային երկրամասի Շտորկով քաղաքում գտնվող «Հերման Շտորկե» ֆիրմայի մեխանիկական արհեստանոցը (79 միավոր սարքավորումներով) և Սաքսոնիայի մարզի Էրենֆրիդերսդորֆ քաղաքում

թարձր որակավորում ունեցող մասնագետներ: Չուգահեռ աշխատել է գիտահետազոտական ինստիտուտում որպես կոնստրուկտոր: Վերադառնալով Երևան՝ կրկին աշխատանքի է անցել Ֆ. Չերժինսկու անվան գործարանում: 1939 թ. նշանակվել է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության ժողկոմ: Հայրենական պատերազմի տարիներին Գ. Չուլախյանը եղել է ՀԽՍՀ ժողկոմխորիի, ժողտնտխորիի նախագահի տեղակալ, վերահսկել հանրապետության արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտը: Պատերազմի ավարտից հետո՝ 1945–1947 թթ., Գ. Չուլախյանը ԽՍՀՄ կառավարությունում Հայկական ԽՍՀ մշտական ներկայացուցիչն էր: 1948–1955 թթ. զբաղեցրել է Երևանի թիվ 447 գործարանի (1954 թվականից՝ «Հայլեկտրագործարան») տնօրենի պաշտոնը: 1955 թ. ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ: 1957 թ. աշխատանքի է անցնել ՀԽՍՀ ժողտնտխորիում՝ որպես էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության բաժնի պետ: 1961 թ. նշանակվել է ՀԽՍՀ ժողտնտխորիի նախագահի տեղակալ, 1963 թ.՝ նախագահ: 1966–1974 թթ. ղեկավարել է Երևանի միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտը: Մահացել է 1992 թ.:

<sup>270</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 26, գ. 592, թ. 1:

գտնվող «Ռոբերտ Հետցկե» ֆիրմայի գույպաների ֆաբրիկան (60 միավոր սարքավորումներով):

Ժամանելով Գերմանիա, Հայաստանի ներկայացուցիչները պարզել են, որ Միութենական կառավարության ապրիլի 9-ի որոշմամբ հանրապետության համար սարքահանվող ձեռնարկությունների, այդ թվում «Լուկ և Վագներ» գործարանի և «Ռոբերտ Հետցկե» գույպաների ֆաբրիկայի ապամոնտաժման աշխատանքները ռազմավարային հատուկ բրիգադների և ԽՍՀՄ նախարարությունների ներկայացուցիչների կողմից սկսվել են դեռևս մարտ ամսից:

Տեղեկացնելով այդ մասին Հայաստանի իշխանություններին, Գ. Չուլախյանը նշում է նաև, որ «Լուկ և Վագներ» գործարանը նախատեսվում է սարքահանել ոչ ամբողջությամբ, քանի որ որոշ սարքեր պետք է շարունակեն ապահովել գործարանում ոչ մեծ քանակով արտադրանքի թողարկում: Գերմանիայում խորհրդային ռազմական վարչակազմի հրահանգի համաձայն՝ արգելվել էր սարքահանել նաև «Ունիոն» գործարանը: «ԲՄՎ» ավտոմեքենաների գործարանի հետ կոոպերատիվ համագործակցությամբ վերջինս շարունակելու էր կատարել ռազմատուգանքների գծով պատվերներ: Հայկական պատվիրակությունը տեղում պարզել է նաև, որ գոյություն չունեն Հայաստանին հատկացված «Հերման Շտորկե» ֆիրմայի մեխանիկական արհեստանոցների սարքավորումները, քանի որ դեռևս 1945 թ. օգոստոսին դրանք սարքահանվել և տարհանվել են խորհրդային տանկային մի բանակի կողմից<sup>271</sup>:

Այսպիսով, ըստ ՀԽՍՀ պատվիրակության տվյալների՝ հանրապետությանը հատկացված 4 ձեռնարկություններից իրականում միայն երկուսն էին ենթակա ապամոնտաժման՝ այն էլ ոչ ամբողջությամբ: Չհանդուրժելով նման իրավիճակը՝ պատվիրակության ղեկավար Գ. Չուլախյանը Գերմանիայում խորհրդային ռազմական

<sup>271</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 45, թ. 378–379:

վարչակազմի ղեկավարության, ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից Գերմանիայի գծով Հատուկ կոմիտեի լիազոր գեներալ-մայոր Ն. Ժուկովի և խորհրդային օկուպացիոն զորքերի Ռազմավարային վարչության առջև (գերմանական ձեռնարկությունների սարքահանման և տարահանման հարցերը կարգավորվում էին նշված երեք կազմակերպությունների միջոցով) բարձրացնում է գերմանական այլ ձեռնարկությունների սարքավորումներով Հայաստանին փոխհատուցելու հարցը: Վերջինիս դրական լուծումը ձեռք է բերվում մեծ դժվարությամբ<sup>272</sup>: Վերը նշված կազմակերպությունների ղեկավարների կարգադրության համաձայն՝ գերմանական երկու ձեռնարկությունների փոխարեն Հայաստանին հատկացվում են երեք նոր ձեռնարկություններ, որոնք նախօրոք ընտրել էր հայկական պատվիրակությունը: Դրանք էին՝ Թյուրինգիայի մարզի Ցելլա-Մելիս քաղաքի «Մաքս Շիլլինգ» գործիքաշինական գործարանը (322 միավոր սարքավորումներով), Բրանդենբուրգի երկրամասի Լուկենվալդե քաղաքի «Ռիխարդ Քիբուրգ» ֆիրմայի էլեկտրալուսավորող պիտույքակազմի գործարանը (96 միավոր սարքավորումներով), նույն երկրամասի Լիբերոգե քաղաքի «Ալբերտ Օտտո» ֆիրմայի մեխանիկական գործարանը (43 միավոր սարքավորումներով): Ավելին, Գ. Չոլախյանի համառության շնորհիվ թույլտվություն է ստացվում լրացուցիչ սարքահանել նաև «Լուկ և Վազներ» գործարանի մնացած բոլոր հաստոցները: Այսպիսով, ՀԽՍՀ պատվիրակության ու նրա ղեկավարի հաստատակամության շնորհիվ ԽՍՀՄ կառավարության որոշմամբ Հայաստանի համար նախատեսված 4 ձեռնարկությունների 764 միավոր սարքավորումների փոխարեն սարքահանվում են 5 ձեռնարկությունների 1092 միավոր սարքավորումներ: 1946 թ. ապրիլ-մայիս ամիսներին դրանք փաթեթավորվում և պատրաստվում են բեռնափոխադրման դեպի խորհրդային Հայաստան: Համաձայն գեներալ-մայոր Ն. Ժուկովի

<sup>272</sup> Տե՛ս Հայաստանի Ժողովուրդի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 116:

կարգադրության՝ ռազմավարը մտցվում է հունիս ամսվա բեռնափոխադրումների պլանի մեջ<sup>273</sup>:

Գերմանիայում գտնվող հայ մասնագետները զուգահեռ հետևել են նաև Հայաստան առաքվող այլ ձեռնարկությունների սարքավորումների ապամոնտաժման աշխատանքներին: Հայաստանի իշխանություններին նրանք տեղեկացնում են, որ 1946 թ. մայիսի 31-ի դրությամբ (բացի ավելի վաղ բեռնված և Հայաստան ուղարկված սարքավորումներից) ԽՍՀՄ գերատեսչական տարբեր նախարարությունների գծով սարքահանվել և հանրապետության համար բեռնվել են հետևյալ ձեռնարկությունները.

1. Ջոներֆելդ քաղաքում գտնվող «Հայնցման» մեքենաշինական գործարանը՝ Ավտոմոբիլային արդյունաբերության նախարարության գծով (գործարանի հաստոցները հատկացվելու էին Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններին):

2. Մյուքենբերգ քաղաքի «Յենովերկ» ֆիրմայի քիմիական գործարանը՝ Քիմիական արդյունաբերության նախարարության գծով (գործարանի բարձրարժեք սարքերը տեղադրվելու էին Կիրովականի քիմիական գործարանում):

3. Կաբելի գործարանը՝ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր մայրաքաղաք Երևանում):

4. Սաքսոնիայի մարզի Մյուգելն քաղաքի հախճասալիկների ու ճենապակյա իրերի և Միտվայդա քաղաքի կերամիկական խողովակների գործարանները՝ Շինանյութերի արտադրության նախարարության գծով (հատկացվելու էին Լենինական քաղաքին):

5. Տոլխայմա քաղաքի «Շլիտտեր» ֆիրմայի գուլպաների ֆաբրիկան՝ 16 կոտտոն-մեքենաներով (բամբակի մշակման մեքենաներ)՝ Թեթև արդյունաբերության նախարարության գծով (հատկացվելու էին Երևանի և Լենինականի կարի ֆաբրիկաներին):

<sup>273</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 45, թ. 379-380:

6. Մեքլենբուրգի մարզի Մալխով քաղաքի մահուդի ֆաբրիկան՝ Տեքստիլ արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

7. Մեքլենբուրգի մարզի Շտրալզունդ քաղաքի գարեջրի գործարանը՝ Սննդարդի նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

1946 թ. հունիս ամսվա բեռնափոխադրումների պլանի մեջ ներառված էին գերմանական հետևյալ ձեռնարկությունները.

1. Օրանենբուրգ քաղաքի պղնձալեկտրալուծության գործարանը՝ Գունավոր մետաղագործության նախարարության գծով (տեղադրվելու էր Ալավերդու պղնձածուլական համալիրում):

2. Լաուտա քաղաքի «Լաուտավերկ» ալյումինի կոմբինատի մասնաշենքի մետաղյա կառուցվածքը՝ Գունավոր մետաղագործության նախարարության գծով (Քանաքեռի ալյումինի գործարանի համար):

3. Շտրալզունդ քաղաքի «Կառլ Բեկեր» լաբեզունավորման գործարանը՝ Տեղական արդյունաբերության նախարարության գծով (տեղադրվելու էր Երևանում):

4. «Ադոլֆ Լանգ» հաստոցաշինական գործարանը՝ Հաստոցաշինության նախարարության գծով (Չերժինսկու անվան գործարանի համար):

Բացի նշված ձեռնարկություններից և սարքավորումներից՝ ԽՍՀՄ տեքստիլ արդյունաբերության նախարար Ի. Սեդինի լրացուցիչ կարգադրությամբ՝ Հայաստան փոխադրելու նպատակով առանձնացվում են Լայպցիգ քաղաքում գտնվող նուրբ բրդյա մանվածքային ֆաբրիկայի սարքավորումները: Ն. Ժուկովի հրահանգով դրանք մտցվում են առաջնահերթ բեռնափոխադրումների պլանի մեջ և Հայաստան տեղափոխվում անմիջապես՝ 1946 թ. հունիսին<sup>274</sup>:

<sup>274</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 380–381:

Գերմանիայում աշխատանքներն ավարտելուց հետո Գ. Չոլախյանը վերադառնում է Մոսկվա, որտեղ կատարում էր Միութենական կառավարությունում ՀԽՍՀ մշտական ներկայացուցչի պարտականությունները: Գործուղման արդյունքների վերաբերյալ Մոսկվայում 1946 թ. հունիսի 4–ին պատրաստած հանգամանալի հաշվետվության մեջ՝ ուղղված ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին, Չոլախյանը ներկայացնում է ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարության գծով ստացվող գերմանական ձեռնարկությունների սարքավորումների տեխնիկական բնութագրերը: Նա անհրաժեշտ է համարում, որ Հայաստանում անհապաղ իրականացվեն նախապատրաստական մի շարք միջոցառումներ՝ ստացվող ամբողջական գործարաններն ու դրանց սարքավորումներն ընդունելու, դրանք տեղադրելու համար համապատասխան կառույցներ հատկացնելու և արդյունավետ օգտագործելու համար:

Ըստ Չոլախյանի կողմից ներկայացված նյութերի՝ «Լուկ և Վագներ» գործարանը, որն ունեցել է 3500 քմ արտադրական տարածք, մասնագիտացված էր հեծանիվների ոտնակներ և այլ մասեր պատրաստելու գործում: Դրանք մատակարարվել են պատրաստի հեծանիվներ արտադրող գործարաններին ինչպես Գերմանիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, անգամ Հարավային Ամերիկայում: Չոլախյանը նշում է, որ Հայաստանում գործարանի օգտագործումը նույն նպատակներով, ինչ Գերմանիայում, նպատակահարմար չէ այն պարզ պատճառով, որ ԽՍՀՄ հեծանիվների գործարաններն իրենք են պատրաստում ոտնակներ և հեծանիվների համար անհրաժեշտ այլ մասեր: Որպես հմուտ մասնագետ և փորձառու կառավարիչ՝ Չոլախյանը առաջարկում է այդ գործարանը լրացնել մի քանի հաստոցներով ու մեքենաներով և կարգի բերել Հայաստանում հեծանիվների ամբողջական արտադրությունը: Ավելին, Չոլախյանը Մոսկվայում բանակցություններ է վարում ԽՍՀՄ ավտոմոբիլային արդյունաբերության նախարարությունում և հավաստիացումներ ստանում, որ Հայաստանում պատրաստի

հեծանիվներ թողարկելու համար միութենական կառավարությունը գործարանին կհատկացնի բոլոր անհրաժեշտ հաստոցներն ու սարքավորումները:

«Սաքս Շիլլինգ» գործիքաշինական գործարանն արտադրել է մետաղահատ գործիքներ՝ շաղափներ, պարուրահան և այլն, և, ինչն առավել կարևոր է՝ միջաձգիչ սարքեր, որոնց արտադրությունը պահանջում էր արտադրական բարձր կուլտուրա: Գործարանը պատրաստել է նաև եռաչափ ինքնակենտրոնաձիգ կաղապարներ խառատային և պտուտակային հաստոցների համար: «Ընդհանրապես, – նշում է Չոլախյանը, – Հայաստան ներկրվող այլ գործարանների համեմատ, սա համարում եմ ամենալավն ու արդիականը... Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանում մետաղահատ գործիքները հազվագյուտ են և անհրաժեշտ բոլոր ձեռնարկություններին»<sup>275</sup>:

«Ռիխարդ Քիբուրգ» գործարանը Գերմանիայում պատրաստել է էլեկտրալուսավորող տարբեր սարքավորումներ, ներքնակարանային լուսավորման համար սեղանի լամպեր, ջահեր, այլ սարքեր: Նկատի ունենալով, որ Հայաստանում բացակայում է նշված ապրանքների մասնագիտացված արտադրություն, Չոլախյանը նպատակահարմար է համարում գործարանի սարքավորումներն օգտագործել նույն արտադրանքն թողարկելու համար:

«Ռոբերտ Չետցկե» գուլպաների ֆաբրիկայից արտահանվել են բարձր արտադրողականության բոլոր 63 կոտտոն–մեքենաները և 54 օժանդակ այլ մեքենաներ: Չոլախյանը նշում է, որ այդ մեքենաներն ունեն բավականին բարդ կառուցվածք և համարվում են լավագույնը տեխնիկայի ասպարեզում: Նա տեղեկացնում է, որ նմանատիպ 16 մեքենաներ ՀԽՍՀ թեթևարդի նախարարության համար բեռնվել են նաև Տոլխայմ քաղաքի «Շլիտտեր» ֆաբրիկայից: Այսպիսով, Հայաստանը ստանում էր 79 կոտտոն–մեքենաներ: Պատկերավոր լինելու համար նշենք, որ Գերմանիայում ԽՍՀՄ

թեթև արդյունաբերության նախարարության լիազորի տեղեկացմամբ՝ մինչև պատերազմն ամբողջ ԽՍՀՄ–ում կար ընդամենը 110 կոտտոն–մեքենա: Նկատի ունենալով մեքենաների բարդ կառուցվածքը, Չոլախյանը նպատակահարմար է համարում, որպեսզի հանրապետության տրիկոտաժի ֆաբրիկաներից մի խումբ աշխատողներ գործուղվեն Գերմանիա՝ աշխատանքային գործընթացին տիրապետելու և հմտություններ ձեռք բերելու նպատակով: Նա նաև առաջարկում է թույլտվություն ստանալ և Գերմանիայից Հայաստան գործուղել փորձառու վարպետների՝ սարքավորումները տեղում հավաքելու և կարգավորելու համար:

«Ալբերտ Օտտո» գործարանը, որը պատրաստել է գլանման մեքենաներ և այլ արտադրանք, ուներ ունիվերսալ լրակազմ սարքավորումներ, որոնք հնարավոր էր օգտագործել ցանկացած նշանակությամբ մեխանիկական գործարաններում<sup>276</sup>:

Նշված տեղեկություններից բացի՝ Չոլախյանը հաշվետվությանը կցում է Հայաստան փոխադրվող գործարանների կողմից նախկինում թողարկված որոշ ապրանքատեսակների կատալոգները (տեղեկատուները): Հինգ էջանոց հաշվետվության վերջում տեղեկացնելով, որ սարքավորումները Երևան և Հայաստանի մյուս քաղաքներ կհասնեն 1946 թ. հունիս և հուլիս ամիսների ընթացքում, Չոլախյանը հայտնում է, որ սարքահանվող բոլոր օբյեկտներում իր կողմից նշանակվել են պատասխանատուներ Գերմանիա գործուղված հայ ինժեներների կազմից, որոնք ուղեկցելու են զնացքները մինչև Հայաստան: Ընդհանուր ղեկավար է նշանակվել Լենինականի տեղական արդյունաբերության գլխավոր ինժեներ Հարությունյանը, որը մնալու է Գերմանիայում մինչև բոլոր սարքավորումների փոխադրումների ավարտը<sup>277</sup>:

Այսպիսով, Երկրորդ աշխարհամարտի ռազմաճակատներում հերոսական մասնակցության, ԽՍՀՄ հաղթանակի համար հար-

<sup>275</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 381–382:

<sup>276</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 381–383:

<sup>277</sup> Տե՛ս նույն տեղում:

յուրհազարավոր զոհեր տալու դիմաց Խորհրդային Հայաստանը ստացավ «գերմանական ռազմավարի» իր չափաբաժինը: Գերմանիայից Հայաստան տեղափոխված ռազմավարի շնորհիվ շեշտակի վերելք ապրեց հանրապետության արդյունաբերությունը, հատկապես՝ ծանր, նրա ձեռնարկությունները համալրվեցին թանկարժեք և արդիական նոր սարքավորումներով: Մայրաքաղաք Երևանում կազմակերպվեց կարելի գործարանը, շահագործման հանձնվեցին լաքերի ու ներկերի, էլեկտրալամպերի (1951 թ.) գործարանները, Քանաքեռի նորակառույց ալյումինի գործարանը համալրվեց մետաղյա նոր կառուցվածքներով: Թեթև արդյունաբերության ոլորտում գործարկվեցին Երևանի նուրբ բրոյա գործվածքների և մահուդի գործարանները (1951 թ.), Երևանի մետաքսե գործվածքների գործարանը (1952 թ.): Գերմանիայի Շտրալզունդ քաղաքի գարեջրի գործարանից Հայաստան տեղափոխված սարքավորումների հենքի վրա 1952 թվականից սկսեց գործել «Երևանի գարեջրի թիվ 1 գործարանը»:

Երևանից բացի՝ «գերմանական ռազմավարի» հենքի վրա արդյունաբերության նոր ճյուղեր հիմնադրվեցին հանրապետության այլ շրջաններում: Լենինականում սկսեց բուռն զարգացում ապրել հաստոցաշինությունը, շահագործման հանձնվեցին հղկիչ մեքենաների գործարանը, հեծանիվների գործարանը (հետագայում վերակառուցվեց կենցաղային սառնարանների գործարանի): Բազմապատկվեցին քաղաքի տեքստիլ-տրիկոտաժի արդյունաբերության հզորությունները, Լենինականի տեքստիլի կոմբինատը դարձավ Անդրկովկասի խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Մինչև 1988 թ. ավերիչ երկրաշարժը կոմբինատում գործում էին ավելի քան 76.000 իլիկներ և շուրջ 2300 ավտոմատ գործող հաստոցներ: Արդյունաբերական հզոր ձեռնարկություններ էին քաղաքի մանվածքային, գուլպաների և տրիկոտաժի ֆաբրիկաները: Լենինականում զարկ տրվեց շինանյութերի արտադրությանը. հիմնվեցին հախճասալիկների և ծենապակյա իրերի, կերամիկական խողովակների գործարաններ: Նոր, որակյալ և արդիական սարքա-

վորումներով համալրվեցին Կիրովականի քիմիական արդյունաբերության գործարանները, տրիկոտաժի ֆաբրիկան, քաղաքի այլ ձեռնարկությունները: Պղնձաէլեկտրալուծությային արտադրության գերհզոր սարքավորումներով ավելացան Ալավերդու և Կապանի պղնձածուլական գործարանները:

Այս ամենի շնորհիվ հետպատերազմյան առաջին տարիներին ՀԽՍՀ արդյունաբերությունը զարգանում էր արագացված տեմպերով և աճի մակարդակով Խորհրդային Միությունում առաջիններից էր: Այդ մասին են վկայում հետևյալ ցուցանիշները: Եթե 1940 թ. համեմատությամբ 1950 թ. սկզբին ԽՍՀՄ-ում մեքենաշինության և մետաղամշակման ոլորտի աճը կազմել է 215 %, իսկ ամբողջ արդյունաբերությանը՝ 173, ապա Խորհրդային Հայաստանում՝ 720 և 249 %<sup>278</sup>: Այսպիսով, Հայաստանի մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության աճի ցուցանիշը գերազանցում էր միջին միութենականը գրեթե 3,5 անգամ, և այս ցուցանիշով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ անվիճելի առաջատար էր: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ 1940 թ. Հայաստանում ուղորտը գտնվում էր զարգացման ցածր աստիճանին:

Նշելի է, որ մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության աճի ցուցանիշով 1950 թ. սկզբի դրությամբ միութենական հանրապետությունների մեջ երկրորդը Ուզբեկական ԽՍՀ-ն էր, որի ցուցանիշը կազմում էր 653 %, երրորդ տեղում էր Խորհրդային Ադրբեջանը՝ 316 %-ով, չորրորդ՝ Վրաստանը՝ 299 %-ով: ԽՍՀՄ արդյունաբերական շրջանների մեջ անվիճելի առաջատար էր Արևմտյան Սիբիրի տարածաշրջանը. մեքենաշինության և մետաղամշակման աճն այստեղ կազմել էր 903 %, իսկ ամբողջ արդյունաբերությանը՝ 314 %<sup>279</sup>:

Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը Հայաստանում պահպանվեցին նաև

<sup>278</sup> Տե՛ս Розенфельд С., Клименко К., նշվ. աշխ., էջ 415:

<sup>279</sup> Տե՛ս նույն տեղում:

հետագա տարիներին: Այսպես, 1950 թ. համեմատությամբ 1958 թ. արդյունաբերության այդ ճյուղերն հանրապետությունում աճել էին 432 %-ով (ԽՍՀՄ-ում՝ 324), իսկ համեմատությամբ 1940 թ.՝ 3109 (ԽՍՀՄ-ում՝ 684)<sup>280</sup>:

Այսպիսով, հետպատերազմյան շուրջ մեկ և կես տասնամյակում արդյունաբերության, հատկապես՝ նրա մեքենաշինության և մետաղամշակման ճյուղի աճի տեմպերով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների մեջ Հայաստանը կայուն առաջատար էր, և զիջում էր միայն Արևմտյան Սիբիրի տարածաշրջանին: Նախանշվեցին Հայաստանի արդյունաբերության զարգացման հիմնական ուղիները, ավելացավ խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում հանրապետության ներգրավվածությունը:

### 3.2. Խորհրդային ՌԱՀ-ի կազմակերպման և զարգացման առաջնահերթությունները, կառավարման համակարգը

Հայրենական պատերազմի ավարտից անմիջապես հետո ԽՍՀՄ ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց երկրի տնտեսությունը վերականգնելու, այն խաղաղ հիմքերի վրա փոխադրելու ուղղությամբ: «Սպառազինության արտադրանքի կրճատման կապակցությամբ արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ՊՊԿ-ի 1945 թ. մայիսի 26-ի որոշումով վերակառուցման էր ենթակա նաև երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը: Նախատեսվում էր մի շարք ձեռնարկությունների փոխադրումը քաղաքացիական արտադրանքի ամբողջական կամ մասնակի արտադրության<sup>281</sup>: Իհարկե, դա չէր վերաբերվում ՌԱՀ-ի այն ոլորտներին, որոնք ներգրավված էին միջուկային զենքի, զենիթահրթիռային սպառազինության և ռադիոտեղորոշումային նորագույն տեխնիկայի ստեղծման աշխատանքներում: Այդ սպառա-

<sup>280</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 462:

<sup>281</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 194:

զինության կատարելագործմանն էին միտված ԽՍՀՄ կառավարության 1946 թ. մի շարք որոշումները. մայիսի 13-ի՝ «Ռեակտիվ սպառազինության հարցերի մասին», հուլիսի 10-ի և օգոստոսի 24-ի՝ ռադիոտեղորոշումային արդյունաբերության զարգացման մասին<sup>282</sup>: Որոշումները խթանեցին հետպատերազմյան առաջին տարիներին ԽՍՀՄ-ում, այդ թվում խորհրդային Հայաստանում, սարքաշինության, էլեկտրոնային, էլեկտրամեխանիկական, ռադիոտեխնիկական, արտադրության այլ ճյուղերի զարգացումը: Ինչ վերաբերում է «ատոմային ծրագրին», ապա արդեն 1949 թ. օգոստոսին տեղի ունեցավ խորհրդային առաջին ատոմային ռումբի հաջողված փորձարկումը: Իսկ 1950 թ. խորհրդային առաջին «Ռ-1» տակտիկական հրթիռներն ընդունվեցին սպառազինության բանակում և դրվեցին մարտական հերթապահության:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով միջազգային լարվածությունն աշխարհում ամբողջությամբ չլիցքաթափվեց: Միջազգային հարաբերություններում ձևավորվող Յալթա-Պոտսդամյան նոր համակարգը չէր կարող արագ փոփոխվող աշխարհի կայունության ամուր երաշխիք հանդիսանալ: ԽՍՀՄ ռազմավարական հավակնությունները Գերմանիայում, Արևելյան Եվրոպայում և Բալկաններում, Մերձավոր Արևելքի տարածաշրջանում շահերի լուրջ բախում առաջացրեցին ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ նրա հարաբերություններում: Ինչպես նշել ենք, լարված էին շարունակում մնալ խորհրդաթուրքական հարաբերությունները:

Ռազմաքաղաքական երկու հզոր դաշինքների՝ ՆԱՏՕ-ի և «Վարշավայի պայմանագրի կազմակերպության» ձևավորումով սառը պատերազմը վերջնականապես մտավ «սպառազինության մրցավազքի», առաջին հերթին՝ միջուկային և հոթիռային զենքի, զերլարված շրջափուլ: Հակադիր դաշինքների առաջատար երկրներ հանդիսացող ԱՄՆ-ում և ԽՍՀՄ-ում սկսվում են վերջնականապես ձևավորվել ռազմաարդյունաբերական համալիրները, այն

<sup>282</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 233, 254: Տե՛ս նաև՝ Быстрова И., նշվ. աշխ., էջ 559:

տեսքով, որը բնորոշ էր 1950–1980–ական թվականների ՌԱՀ–երին: Ռուսաստանցի հետազոտող Ա. Բեզբորոդովն իրավացիորեն նկատում է, որ հետպատերազմյան տասնամյակներին իր ձևավորմամբ և կայուն զարգացմամբ խորհրդային ՌԱՀ–ը «պարտական էր» աշխարհում ընթացող ռազմատեխնիկական հեղափոխությանը, սառը պատերազմի պայմաններում քաղաքական երկու հակադիր համակարգերի միջև ընթացող պայքարին<sup>283</sup>:

Միջազգային լարվածության աճի նոր միտումները կողմերից պահանջում էին ռազմական ծախսերի հաստատուն ավելացում, ռազմաարդյունաբերության հետագա ծավալում և զարգացում: Ուստի հետպատերազմյան առաջին տարիների խորհրդային տնտեսության ապառազմականացման և նրանում ռազմապաշտպանական ծախսերի նվազեցման միտումները կարճ տևեցին, մինչև 1949 թ., երբ աշխարհաքաղաքական նոր իրողությունները (Բեռլինյան ճգնաժամ, ՆԱՏՕ–ի կազմավորում, 1950–1953 թթ. Կորեական պատերազմ և այլն) խորհրդային ղեկավարությանը ստիպեցին արագացնել ռազմական ծրագրերի իրականացումը, ավելացնել ռազմական արտադրությունը: Հայտնի է, օրինակ, որ Կորեական պատերազմի տարիներին ԽՍՀՄ–ը մեծածավալ ռազմական օգնություն էր տրամադրում Կորեայի ժողովրդադեմոկրատական հանրապետությանը:

1950–ական թթ. սկզբից ԽՍՀՄ–ում արձանագրվում է ռազմական ծախսերի և ներդրումների հաստատուն աճ, միջոցները հիմնականում ուղղվում էին «ատոմային ծրագրի» իրականացմանը, ռեակտիվ տեխնիկայի, ինքնաթիռների, ռադիոտեղորոշումային համակարգերի, զենիթահրթիռային սպառազինության կատարելագործմանն ու շարային արտադրությանը: Դա ապահովելու նպատակով խորհրդային ղեկավարությունը խնդիր դրեց 1951–1955 թթ. ստեղծել արտադրական հավելյալ հզորություններ, վերակա-

ռուցել գործարանները, շարունակել նոր արտադրամասերի շինարարությունը և այլն<sup>284</sup>:

ԽՍՀՄ–ում ռազմական ծախսերի և արտադրության նշանակալի կրճատում արձանագրվեց միայն խորհրդային առաջնորդ Ի. Ստալինի մահից հետո՝ 1953 թ., երբ ավարտվեց նաև Կորեական պատերազմը: 1954–1958 թթ. խորհրդային երկրի համար դարձան ռազմական ծախսերի կրճատման բացառիկ տարիներ. այդ շրջանում դրանք կրճատվեցին մինչև 1 մլրդ ռուբլիով, զուգահեռ կրճատվեց նաև խորհրդային բանակի ու ռազմական նավատորմի անձնակազմը՝ մինչև 3 մլն մարդով<sup>285</sup>: Ռազմական ոլորտի հերթական «լիցքաթափումը», սակայն, դարձյալ կարճ տևեց:

Դեռևս 1953–1955 թթ. խորհրդային ղեկավարությունը սկսել էր մշակել «սոցիալիստական ճամբարի» երկրների պաշտպանական արդյունաբերության զարգացման միասնական պլանի և սպառազինման միասնական համակարգի ստեղծման ծրագիրը: 1955 թ. սկսած, երբ ի պատասխան 1954 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ ՆԱՏՕ–ի անդամ դառնալու, ԽՍՀՄ–ի նախածեռնությամբ և գլխավորությամբ կազմավորվեց սոցիալիստական երկրների «Վարչավայի պայմանագրի կազմակերպություն» ռազմաքաղաքական դաշինքը, ընդլայնվեցին խորհրդային ռազմական առաքումներն այդ երկրներ: Խորհրդային գաղտնի փաստաթղթերում դրանց մասին տեղեկատվությունը սկսեցին նշել առանձին տողով՝ «այդ թվում ժողովրդադեմոկրատական երկրների համար» ձևակերպմամբ: Նույն տարիներին ԽՍՀՄ–ը ձեռնամուխ եղավ սոցիալիստական մի շարք երկրների ԶՕՊ–ի միասնական համակարգի ստեղծմանը: 1958 թ. դրանք սպառազինվեցին խորհրդային զենիթահրթիռային «Ս–75», «Կուբ», «Կրուգ» համակարգերով<sup>286</sup>:

<sup>284</sup> Ст'ю Быстрова И., Военно-экономическая политика СССР: от "демилитаризации" к гонке вооружений, էջ 182:

<sup>285</sup> Ст'ю Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980-е годы), էջ 252–253:

<sup>286</sup> Ст'ю նույն տեղում, էջ 327–328, 358:

<sup>283</sup> Ст'ю Безбородов А., Власть и ВПК в СССР (середины 40-х – середины 70-х годов), "Сталин и холодная война", էջ 94–95:

Նշենք, որ ռազմական նորագույն այս տեխնիկայի արտադրության մեջ ներգրավված էին Խորհրդային Հայաստանի մի քանի ձեռնարկություններ, որտեղ պատրաստվում էին լրակազմ սարքեր և հանգույցներ<sup>287</sup>:

1950-ական թթ. սկզբից ԽՍՀՄ-ը սկսեց խոշոր դեր խաղալ նաև գեների վաճառքի համաշխարհային շուկայում: Տարեցտարի աճում էին նրա կողմից սպառազինության մատակարարումները «երրորդ աշխարհի» զարգացող երկրներ, այդ թվում Սիրիա, Իրաք, Եգիպտոս, Հնդկաստան, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Կուբա, Հարավային Աֆրիկայի երկրներ և այլն:

Խորհրդային նոր առաջնորդ, ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի օրոք (1953–1964 թթ.) ԽՍՀՄ-ում 1957 թ. ձեռնարկված վարչատնտեսական, այսպես կոչված, «խրուշչովյան ռեֆորմներում», երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության, ՌԱՀ-ի կառավարման խնդիրներն առանցքային տեղ էին գրավում: «ԽՍՀՄ ժողտնտեսության 1958 թ. զարգացման պետական պլանի և պետբյուջեի նախագիծը կազմելու ժամկետների և կարգի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. հուլիսի 10-ի թիվ 815 որոշումով կենտրոնական և միութենական համապատասխան գործադիր մարմիններին հանձնարարվում էր օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նախապատրաստել և կենտրոնական վերադաս մարմիններին ներկայացնել 1958 թ. համար ռազմական տեխնիկայի և գույքի, ղեկավարվող ռեակտիվ սպառազինության արտադրության պլանների նախագծերը: Հանձնարարվում էր նաև հայտեր ներկայացնել պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների համար սարքավորումների և նյութերի, համալրող մասերի, դրանց չափաքանակների մասին և այլն: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումով պաշտպանական արդյունաբերության ճյուղերի միութենական նախարարությունները, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության և Պետական անվտան-

<sup>287</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 483, թ. 3–10, նաև՝ ֆ. 1, ց. 126, գ. 4, թ. 11–13:

գության կոմիտեի (ՊԱԿ) հետ համատեղ, պարտավորեցվում էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Պետպլանին ներկայացնել ռազմական տեխնիկայի գծով գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական հիմնարար աշխատանքների պլանների նախագծերը<sup>288</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. օգոստոսի 24-ի հրահանգի համաձայն՝ միութենական հանրապետությունները պարտավոր էին սահմանված կարգով ԽՍՀՄ Պետպլան ներկայացնել սպառազինման, ռազմամթերքների, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական գույքի արտադրության և մատակարարման պլանի կատարման մասին հաշվետվություններ: Ի կատարումն այդ հրահանգի՝ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1957 թ. սեպտեմբերի 26-ին հանձնարարում է ՀԽՍՀ ժողտնտխորհին յուրաքանչյուր ամսվա 7-ին ՀԽՍՀ Պետպլան ներկայացնել ԽՍՀՄ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարություններին չպատկանող հանրապետական ձեռնարկությունների սպառազինման, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական գույքի արտադրության և մատակարարման պլանի կատարման վերաբերյալ հաշվետվություններ: Իր հերթին, ՀԽՍՀ Պետպլանին հանձնարարվում է յուրաքանչյուր ամսվա 10-ին նշված հաշվետվությունները ներկայացնել ԽՍՀՄ Պետպլան<sup>289</sup>:

Խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության կատարելագործմանն ու զարգացմանը, նրա կարողությունների բազմապատկմանն էր միտված «Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1957 թ. օգոստոսի 10-ի թիվ 956–439 «խիստ գաղտնի» որոշումը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Բուլգանինի ստորագրությամբ այդ որոշմամբ նախատեսվում էին հրատապ միջոցառումներ-

<sup>288</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, թ. 52–56:

<sup>289</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 47, թ. 1:

րի համալիր ծրագրեր պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների հետագա զարգացումն ապահովելու նպատակով: Խնդիր էր դրվում հասնել հայրենական ռազմական տեխնիկայի գերազանցությանն արտասահմանյանի նկատմամբ:

ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը միութենական ժողտնտխորհների (որոնց ղեկավարման ոլորտում էին գտնվում պաշտպանական արդյունաբերության ճյուղերի ձեռնարկությունները և կազմակերպությունները), նաև ԽՍՀՄ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարությունների գործունեության գերխնդիրն էր համարում ռազմական ինքնաթիռների, հրթիռային սպառազինության և այլ տեսակի ռազմական տեխնիկայի համար նորագույն հատուկ սարքերի և նյութերի ստեղծումը, դրանց շարային արտադրությունը: Նաև՝ պաշտպանական ոլորտի արդյունաբերական ձեռնարկությունների մոբիլիզացիոն հզորությունների շեշտակի ավելացումը<sup>290</sup>: Որոշմամբ ժողտնտխորհները, ԽՍՀՄ ավիացիոն, պաշտպանական, նավաշինության և ռադիոտեխնիկական արդյունաբերության նախարարությունները խիստ պատասխանատվություն էին կրում, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պահանջներին համապատասխան, նոր տեսակի ռազմական և հատուկ տեխնիկայի մշակման, գիտահետազոտական և փորձարարական տրոլկտորական աշխատանքների զարգացման, կազմակերպությունների և ձեռնարկությունների փորձնական արտադրանքի, տեխնոլոգիական կարգապահության, խտանի հայտնաբերման ու վերացման, բարձր որակի արտադրանք թողարկելու համար: Նաև՝ տնտեսական շրջանների պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների համագործակցության, միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդների ժողտնտխորհների հետ միասին կառավարության կողմից հաստատված հսկիչ թվերի սահ-

<sup>290</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, ք. 66:

մաններում ռազմական արտադրանքի տարեկան և հեռանկարային ծրագրերը մշակելու համար և այլն<sup>291</sup>:

«Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշումով սահմանվում էր, որ ռազմական տեխնիկայի պատրաստման, փորձարկման, շարային արտադրության մեջ ներմուծման, նաև մոբիլիզացիոն հզորություններ պատրաստելու հարցերում արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունները ղեկավարվում են պաշտպանական ճյուղերի համապատասխան նախարարությունների կարգադրություններով՝ ժողտնտխորհների միջոցով: Միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդներին և ժողտնտխորհներին, պաշտպանական արդյունաբերության ճյուղային նախարարություններին, պաշտպանական ձեռնարկությունների, գիտահետազոտական ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների ղեկավարներին հանձնարարվում էր ապահովել պաշտպանական աշխատանքների խիստ զաղտնիությունը՝ ղեկավարվելով ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1956 թ. ապրիլի 28-ի թիվ 555-331 որոշմամբ<sup>292</sup>:

Հարկ է նշել, որ սառը պատերազմի առաջին տարիներից խորհրդային արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտը սկսեց մեկուսանալ, առանձնանալ արդյունաբերության քաղաքացիական արտադրանքի ոլորտից: Ռազմական ոլորտի գիտական և արտադրական գործընթացները գաղտնի պահելու, ինչպես նաև սպառազինության հատուկ արտադրություն կազմակերպելու նպատակով ՌԱՀ-ի կազմում գտնվող կազմակերպությունների և ձեռնարկությունների համար հաստատվեց տարբեր առանձնահատկություններով հատուկ ռեժիմի մի քանի մակարդակ: Ցածրը ներկայացնում էին փակ ձեռնարկությունները և, այսպես կոչված, «փոստային արկղերը» (փ/ա), որոնք աշխատում էին մեծ քաղաք-

<sup>291</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 67-68:

<sup>292</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 69:

ների տարածքում: Հաջորդ մակարդակը՝ արտաքին տեսքից սովորական քաղաքներն ու բնակեցված տարածքներն էին, ուր արտասահմանցիների մուտքն արգելված էր: Վերջապես, ամենաբարձր մակարդակը՝ ԽՍՀՄ որոշ շրջաններում առաջ եկած, այսպես կոչված, «փակ քաղաքներն» էին, որոնք անմիջականորեն առնչվում էին միջուկային մշակումների հետ և պատկանում էին ատոմային գերատեսչությանը՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության նախարարությանը: Դրանց թիվն ամբողջ երկրում տասն էր<sup>293</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. փետրվարի 9-ի թիվ 126-52 որոշմամբ հաստատված «Պետական գաղտնիք պարունակող կարևորագույն տեղեկությունների ցանկի» համաձայն՝ ԽՍՀՄ ռազմապաշտպանական ոլորտի կազմակերպությունների և ձեռնարկությունների, դրանց մասնաճյուղերի տեղաբաշխման, հատուկ սպառազինության արտադրության վերաբերյալ գլխավոր պլանները և ամփոփ տվյալները, այնտեղ աշխատող բանվորների, ծառայողների, ինժեներատեխնիկական աշխատողների թվաքանակը և այլն համարվում էր խիստ գաղտնի և պետք է կրեր «խիստ գաղտնի հատուկ կարևորության» կամ «խիստ գաղտնի» գրիֆը: Նույնը վերաբերում էր առանձին գիտահետազոտական ինստիտուտների, կոնստրուկտորական բյուրոների և հրաձգարանների գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների ամփոփ պլաններին, ռազմական կարևոր նշանակություն ունեցող հայտնագործություններին, գյուտարարություններին և այլն: Գաղտնիության կարգը տարածվում էր նաև ժողովրդադեմոկրատական երկրներին հատուկ տեսակի սպառազինության մատակարարման մասին ամփոփ տվյալների, նաև այն տեղեկությունների վրա, որոնք բնութագրում են ԽՍՀՄ-ի գիտատեխնիկական և այլ

<sup>293</sup> Ст'ю Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 600-601:

օգնությունը՝ տեղում սպառազինության հատուկ տեսակներ արտադրելու համար և այլն<sup>294</sup>:

Խորհրդային Հայաստանում «փակ քաղաքներ» չկային, բայց գոյություն ունեին փակ կազմակերպություններ և ձեռնարկություններ, «փոստային արկղեր»: Ուստի «գաղտնիության ռեժիմի» պահպանման խնդիրը գտնվում էր հանրապետության ղեկավարության ուշադրության ներքո:

ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1963 թ. փետրվարի 14-ի թիվ 208-76 որոշմամբ Նախարարների խորհրդին առընթեր Պետանվտանգության կոմիտեին, ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանը, միութենական հանրապետությունների Նախարարների խորհուրդներին տրվում էին մի շարք կարգադրություններ և հանձնարարականներ՝ հատուկ կարևորության պաշտպանական արտադրության գաղտնիության ռեժիմի պահպանման, ռազմական արտադրության կազմակերպման հետ կապված այլ խնդիրների գծով և այլն: Ի կատարումն այս որոշման՝ ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1963 թ. ապրիլի 12-ի համատեղ նիստում լսում են «Գաղտնիության ռեժիմի ուժեղացման մասին» հարցը: Արձանագրվում է, որ հանրապետության ժողտնտխորհի այն ձեռնարկություններում, որոնք կենտրոնական վերադաս մարմինների պատվերներով միութենական արդյունաբերության պաշտպանական ճյուղերի համար արտադրում են ռազմական տեխնիկայի լրակազմ սարքավորումներ ու ապրանքներ, գաղտնիության ռեժիմի պահպանման, աշխատանքների ծածկագրման ու քողարկման գործում դեռևս առկա են լուրջ թերություններ: ՀԽՍՀ ժողտնտխորհը, Գիտությունների ակադեմիան, նախարարությունների և գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող ձեռնարկությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկում հակառակորդի կողմից ռադիոտեխնիկական, լուսանկարչական, հեռուստատեսային և այլ միջոցներով հե-

<sup>294</sup> Ст'ю ՀԱԱ, ֆ. 1, ց. 39, գ. 59, թ. 9-31:

տախուզում անցկացնելու հնարավորությունը վերացնելու համար: Նշվում է, որ ՀԽՍՀ ժողովնտխորհի, Գիտությունների ակադեմիայի, նախարարությունների և գերատեսչությունների ռեժիմային հիմնարկություններում և ձեռնարկություններում, գիտահետազոտական ինստիտուտների հատուկ կոնստրուկտորական բյուրոներում դեռ առկա է ինժեներատեխնիկական աշխատողների և բանվորների արտահոսք, ինչը նպաստում է օբյեկտների տեղաբաշխման գաղտնազերծմանը և կատարվող գաղտնի բնույթի աշխատանքների բացահայտմանը: Հատուկ կարևորության պաշտպանական օբյեկտների տեղաբաշխման գաղտնիությունը չի ապահովում նաև ձեռնարկությունների նյութատեխնիկական մատակարարման գոյություն ունեցող կարգը: Իբրև լուրջ թերություն՝ նշվում է նաև այն, որ վերադաս գերատեսչությունների հետ ռադիոհեռագրային գաղտնի գրագրություն վարող ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկությունները խախտում են գոյություն ունեցող կարգը. նախագծերի մշակման, պաշտպանական տեխնիկայի հատուկ տեսակների փորձարկման և արտադրման առաջադրանքների կատարման մասին հեռագրերն ու ֆոտոհեռագրերն ուղարկում են առանց գաղտնիության մասին հատուկ նշագրման և այլն<sup>295</sup>:

Հանրապետության պաշտպանական ոլորտի կազմակերպություններում և ձեռնարկություններում նշված թերությունները վերացնելու, գաղտնիության ռեժիմն ամրապնդելու, հատուկ ռեժիմային և ռազմական օբյեկտների ծածկագրման և քողարկման աշխատանքները բարելավելու նպատակով՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը որոշում են.

• Պարտավորեցնել ժողովնտխորհի, Գիտությունների ակադեմիայի, նախարարությունների և գերատեսչությունների, ձեռնարկությունների և հիմնարկությունների ղեկավարությանը արդյունաբերության պաշտպանական ճյուղերի համար մշակվող և պատ-

րաստվող համալրող մասերի արտադրման աշխատանքներում ուժեղացնել պետական գաղտնիքների պահպանությունն ապահովելու ուղղված աշխատանքները: Առավելագույնս սահմանափակել պետական գաղտնիքներին թույլատրվող անձանց շրջանակը, ընդունել անհրաժեշտ միջոցներ՝ հատուկ կարևորության «խիստ գաղտնի» և «գաղտնի» փաստաթղթերը պատրաստելու աշխատանքները և այդ փաստաթղթերին ծանոթանալու կարգը բարելավելու համար: Փակ նիստերի և խորհրդակցությունների ժամանակ հատուկ կարևորության «խիստ գաղտնի» և «գաղտնի» հարցերի քննարկումներում կրճատել ներգրավված անձանց շրջանակը:

• Պարտավորեցնել ժողովնտխորհին, նախարարություններին և գերատեսչություններին հատուկ կարևորության պաշտպանական և ռազմական օբյեկտների շինարարության և տեղաբաշխման վայրերի ընտրությունը կատարել ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ հաշվի առնելով գաղտնիության ռեժիմի և հնարավոր բնական քողարկման պահանջները:

• Սահմանել, որ հատուկ կարևորության ռազմական օբյեկտների կառուցման համար հողատարածքներ տրամադրելու մասին որոշումներն ընդունվում են ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության, միջին մեքենաշինության նախարարության, արդյունաբերության պաշտպանական ճյուղերի պետկոմների հայտերի հիման վրա:

• Սահմանել, որ կառուցվող կամ գոյություն ունեցող հատուկ կարևորության պաշտպանական և ռազմական օբյեկտների մոտակայքում տրամադրվող հողատարածքները, որտեղ կառուցվելու են բնակելի և այլ շենքեր, ենթակա են համաձայնեցման շահագրգիռ պետկոմների, նախարարությունների և գերատեսչությունների, նաև ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի մարմինների հետ:

<sup>295</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 126, գ. 5, թ. 45:

• Պարտավորեցնել ժողտնտխորհին, նախարարություններին և գերատեսչություններին հատուկ կարևորության պաշտպանական և ռազմական օբյեկտների շինարարությունը սկսելուց առաջ իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ գաղտնիության ռեժիմը պահպանելու համար:

• 1963 թ. ապրիլից բոլոր տեղագրական և այլ քարտեզներում, պլաններում, ուրվագծերում և վերարտադրումներում հատուկ պայմանական նշաններով լրացնել այն հողակտորները, որոնք զբաղեցված են պաշտպանական և ռազմական օբյեկտների կողմից:

• Պարտավորեցնել ժողտնտխորհին երկամսյա ժամկետում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի հաստատմանը ներկայացնել իր ենթակայության տակ գտնվող և ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ու արդյունաբերության պաշտպանական ճյուղերի պետկոմների պատվերներով արտադրանք թողարկող ձեռնարկությունների և հիմնարկությունների գաղտնիության ռեժիմի կազմակերպման միջոցառումների մասին:

• Պարտավորեցնել Անդրկովկասյան երկաթգծի Երևանի բաժանմունքին սահմանել պատշաճ կարգ ու կանոն պաշտպանական արդյունաբերության ռեժիմային ձեռնարկությունների բեռների փոխադրման, փաստաթղթերի ձևակերպման և պահպանման գործում և այլն<sup>296</sup>:

1950-ական թթ. վերջին ԽՍՀՄ ժողտնտեսության զարգացման հնգամյա ծրագրերից անցում կատարվեց յոթնամյա ծրագրի: 1959 թ. սկզբին տեղի ունեցած ԽՄԿԿ 21-րդ համագումարն ընդունեց երկրի ժողովրդական տնտեսության զարգացման 1959-1965 թթ. յոթնամյա պլանը, որում դրված էր մեծախոստում կարգախոս՝ «հասնել և անցնել» ԱՄՆ-ին: Իհարկե, խորհրդային ղեկավարությունն առաջին հերթին նպատակ ուներ հասնել ռազմական գեռակշռության, իսկ դա հնարավոր էր բացառապես նորագույն սպա-

<sup>296</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 46-49:

ռազինության, այդ թվում միջուկային, հրթիռային և ռազմական տեխնիկայի կատարելագործման, ռազմական ծախսերի և արտադրանքի շեշտակի ավելացման միջոցով:

1957 թ. հոկտեմբերի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի նախագահությունը հանձնարարել էր քայլեր ձեռնարկել հրթիռային տեխնիկայի արտադրության զարգացման առաջնահերթությունները մշակելու ուղղությամբ<sup>297</sup>: Նշենք, որ ԽՍՀՄ-ում հրթիռային տեխնիկայի զարգացման առաջնության կողմնակից էր անձամբ Ն. Խրուշչևը, որը գտնում էր, որ ապագա պատերազմում վճռական է լինելու հրթիռային-միջուկային զենքը<sup>298</sup>:

ԽՍՀՄ ռազմական հզորությունն ամրապնդելու նպատակով արդեն 1959 թվականից երկրի ռազմապաշտպանական արդյունաբերությունն իրացնում է մի քանի նոր տիպի հրթիռների և կառավարվող արկերի, ռազմական նորագույն այլ տեխնիկայի թողարկումը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1960 թ. մարտի 31-ի որոշման մեջ նշվում է, որ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով խորհրդային բանակին ամբողջությամբ մատակարարվել են «Ս-75» զենիթահրթիռային համակարգեր, չկառավարվող ռեակտիվ սպառազինություն, ռադիոտեղորոշումային կայանքներ, սուզանավեր, նորագույն ռազմական այլ տեխնիկա<sup>299</sup>: Այս ամենը նպաստեց, որպեսզի 1959 թ. վերջին ԽՄԿԿ Կենտկոմի հատուկ որոշումով ԽՍՀՄ զինված ուժերի համակարգում ստեղծվեն նոր՝ «Ստրատեգիական նշանակության հրթիռային զորքեր»:

«Սպառազինությունների մրցավազքի» հերթական փուլին նպաստում էր նաև միջազգային հարաբերություններում 1950-ական թթ. վերջին 1960-ական թթ. սկզբին լարվածության աճը:

<sup>297</sup> Տե՛ս Быстрова И., Военно-промышленный комплекс СССР на международной арене, «Отечественная история», М., 2006, № 2, էջ 62:

<sup>298</sup> Տե՛ս Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 247:

<sup>299</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 297, 303:

Բեռլինյան ճգնաժամի 1958–1961 թթ. հերթական փուլը հանգուցալուծվեց միայն 1961 թ. երկրորդ կեսին, երբ օգոստոսի 13–ին Արևմտյան Բեռլինի շուրջը կառուցվեց սառը պատերազմի ամենաակնառու խորհրդանիշը հանդիսացող «Բեռլինյան պատը»: Արևելք–Արևմուտք, ԽՍՀՄ–ԱՄՆ ռազմաքաղաքական առճակատումն իր գագաթնակետին հասավ 1962 թ. Կարիբյան (Կուբայական) ճգնաժամի շրջանում, երբ աշխարհը հայտնվել էր կործանարար միջուկային պատերազմի շեմին: Այսպիսով, պատահական չէր, որ ԽՍՀՄ–ում ռազմական ծախսերի առավել բարձր տեմպեր արձանագրվեցին 1961–1965 թթ., երբ միջին տարեկան աճը կազմեց 7,6 %<sup>300</sup>, իսկ ՌԱԳ–ի ճյուղերում կապիտալ ներդրումներն ավելացան 30 %-ով<sup>301</sup>:

Այսպիսով, ընդունելի է հիմնախնդրի ռուսաստանցի մի շարք հետազոտողների այն պնդումը, որ 1945–1964 թթ. ժամանակաշրջանը համարվում է ԽՍՀՄ ՌԱԳ–ի ձևավորման ավարտի շրջանը:

1960–ական թվականների կեսերից ԽՍՀՄ–ը հայտնվեց սոցիալ–տնտեսական հերթական ճգնաժամի առջև, ուստի ձեռնարկվեցին համալիր տնտեսական բարեփոխումներ, որոնց հիմնավորումը տվեց ԽՍՀՄ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումը: Պաշտպանական արդյունաբերության զարգացման հիմնական առաջնահերթությունները 1966–1970 թթ., որոնք հայտնի են իբրև ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինի տնտեսական ռեֆորմի տարիներ, ՌԱԳ–ի ոլորտում «ատոմային ծրագրի» հետ զուգահեռ առաջին դիրքերում շարունակում էին մնալ «հրթիռատիեզերական և ինքնաթիռային տեխնիկայի», «բոլոր տեսակի հրթիռային սպառազինության ռադիոսարքերի, ռադիոտեղորոշումային, ռադիոհետախուզման և այլ հատուկ սարքերի» արտադրությունը: Դրանցից հետո՝ հրթիռային պինդ վառելիքը, պայթու-

<sup>300</sup> Стів Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 254:

<sup>301</sup> Стів Симонов Н., նշվ. աշխ., էջ 304–305:

ցիկ նյութերը, զինամթերքը, նավաշինությունը, զրահատանկային տեխնիկան և այլն<sup>302</sup>:

«Սպառազինության արտադրանքի կրճատման հետևանքով արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ՊՊԿ–ի 1945 թ. մայիսի 26–ի վերը հիշատակված որոշումով վերակառուցման էր ենթակա նաև ռազմապաշտպանական արդյունաբերության կառավարման համակարգը: Փոփոխությունների արդյունքում կրճատվեցին պաշտպանական ոլորտի ժողկոմատները՝ լուծարվեցին ԽՍՀՄ ռազմամթերքների, ականանետային սպառազինության և տանկային արդյունաբերության ժողկոմատները: Ռազմական արտադրության կազմակերպումն այսուհետ կենտրոնացվելու էր ԽՍՀՄ սպառազինության, ավիացիոն, նավաշինության արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտային մեքենաշինության ժողկոմատներում (1946 թ. մարտից՝ նախարարություններ): Դրանց զուգահեռ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից գործում էին 1945 թ. օգոստոսին ստեղծված Զատուկ կոմիտեն և Առաջին գլխավոր վարչությունը (ատոմային ծրագրեր), ատոմային, ռեակտիվ տեխնիկայի, ռադիոլոկացիայի հարցերով կոմիտեներ<sup>303</sup>:

Ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը, ինչպես նշել ենք, խորհրդային ողջ ժամանակաշրջանում գտնվում էր երկրի կուսակցական–քաղաքական ղեկավարության, նաև՝ խորհրդային իրավապահ և անվտանգության մարմինների (ՆԳՆ, ՊԱԿ) աջալուրջ հսկողության ներքո: Վերջիններս իրենց գործառույթներով հանդիսանում էին խորհրդային ՌԱԳ–ի կարևոր մասը: Նրանց իրավասության ոլորտում էր ձեռնարկությունների և կազմակերպութ-

<sup>302</sup> Стів Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 260:

<sup>303</sup> Стів Симонов Н., նշվ. աշխ., էջ 194: Стів նաև՝ Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 237, 240:

Բեռլինյան ճգնաժամի 1958–1961 թթ. հերթական փուլը հանգուցալուծվեց միայն 1961 թ. երկրորդ կեսին, երբ օգոստոսի 13–ին Արևմտյան Բեռլինի շուրջը կառուցվեց սառը պատերազմի ամենաակնառու խորհրդանիշը հանդիսացող «Բեռլինյան պատը»: Արևելք–Արևմուտք, ԽՍՀՄ–ԱՄՆ ռազմաքաղաքական առճակատումն իր գագաթնակետին հասավ 1962 թ. Կարիբյան (Կուբայական) ճգնաժամի շրջանում, երբ աշխարհը հայտնվել էր կործանարար միջուկային պատերազմի շեմին: Այսպիսով, պատահական չէր, որ ԽՍՀՄ–ում ռազմական ծախսերի առավել բարձր տեմպեր արձանագրվեցին 1961–1965 թթ., երբ միջին տարեկան աճը կազմեց 7,6 %<sup>300</sup>, իսկ ՌԱՀ–ի ճյուղերում կապիտալ ներդրումներն ավելացան 30 %–ով<sup>301</sup>:

Այսպիսով, ընդունելի է հիմնախնդրի ռուսաստանցի մի շարք հետազոտողների այն պնդումը, որ 1945–1964 թթ. ժամանակաշրջանը համարվում է ԽՍՀՄ ՌԱՀ–ի ձևավորման ավարտի շրջանը:

1960–ական թվականների կեսերից ԽՍՀՄ–ը հայտնվեց սոցիալ–տնտեսական հերթական ճգնաժամի առջև, ուստի ձեռնարկվեցին համալիր տնտեսական բարեփոխումներ, որոնց հիմնավորումը տվեց ԽՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումը: Պաշտպանական արդյունաբերության զարգացման հիմնական առաջնահերթությունները 1966–1970 թթ., որոնք հայտնի են իբրև ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Կոսիգինի տնտեսական ռեֆորմի տարիներ, ՌԱՀ–ի ոլորտում «ատոմային ծրագրի» հետ զուգահեռ առաջին դիրքերում շարունակում էին մնալ «իրթիռատիեզերական և ինքնաթիռային տեխնիկայի», «բոլոր տեսակի իրթիռային սպառազինության ռադիոսարքերի, ռադիոտեղորոշումային, ռադիոհետախուզման և այլ հատուկ սարքերի» արտադրությունը: Դրանցից հետո՝ իրթիռային պինդ վառելիքը, պայթու-

<sup>300</sup> Стів Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 254:

<sup>301</sup> Стів Симонов Н., նշվ. աշխ., էջ 304–305:

ցիկ նյութերը, զինամթերքը, նավաշինությունը, զրահատանկային տեխնիկան և այլն<sup>302</sup>:

«Սպառազինության արտադրանքի կրճատման հետևանքով արդյունաբերության վերակառուցման միջոցառումների մասին» ԴԴԿ–ի 1945 թ. մայիսի 26–ի վերը հիշատակված որոշումով վերակառուցման էր ենթակա նաև ռազմապաշտպանական արդյունաբերության կառավարման համակարգը: Փոփոխությունների արդյունքում կրճատվեցին պաշտպանական ոլորտի ժողկոմատները՝ լուծարվեցին ԽՍՀՄ ռազմամթերքների, ականանետային սպառազինության և տանկային արդյունաբերության ժողկոմատները: Ռազմական արտադրության կազմակերպումն այսուհետ կենտրոնացվելու էր ԽՍՀՄ սպառազինության, ավիացիոն, նավաշինության արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտային մեքենաշինության ժողկոմատներում (1946 թ. մարտից՝ նախարարություններ): Դրանց զուգահեռ ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից գործում էին 1945 թ. օգոստոսին ստեղծված Դատուկ կոմիտեն և Առաջին գլխավոր վարչությունը (ատոմային ծրագրեր), ատոմային, ռեակտիվ տեխնիկայի, ռադիոլուկացիայի հարցերով կոմիտեներ<sup>303</sup>:

Ռազմապաշտպանական արդյունաբերության ոլորտը, ինչպես նշել ենք, խորհրդային ողջ ժամանակաշրջանում գտնվում էր երկրի կուսակցական–քաղաքական ղեկավարության, նաև՝ խորհրդային իրավապահ և անվտանգության մարմինների (ԼԳՆ, ՊԱԿ) աջալուրջ հսկողության ներքո: Վերջիններս իրենց գործառույթներով հանդիսանում էին խորհրդային ՌԱՀ–ի կարևոր մասը: Նրանց իրավասության ոլորտում էր ձեռնարկությունների և կազմակերպութ-

<sup>302</sup> Стів Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 260:

<sup>303</sup> Стів Симонов Н., նշվ. աշխ., էջ 194: Стів նաև՝ Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), т. 2, 237, 240:

յունների, այլ օբյեկտների պահպանության, կադրերի, հետախուզության, հակահետախուզության և այլ հարցերը:

Պատերազմից հետո ՌԱՀ-ի կառավարման գործառույթներն իրականացնում էր ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի 1949 թ. հուլիսի 10-ի որոշումով ստեղծված Մեքենաշինության բաժինը (1953 թվականից՝ Պաշտպանական արդյունաբերության բաժին) և Կենտկոմի համապատասխան քարտուղարը<sup>304</sup>:

1953 թ. Ի. Ստալինի մահից հետո Ն. Խրուշչովի ղեկավարման տասնամյակում ԽՍՀՄ-ում հետևողականորեն իրականացվեց ժողտնտեսության կառավարման ապակենտրոնացման քաղաքականություն: ԽՍՀՄ-ում սպառազինության արտադրության ծրագրերը կենտրոնացված էին ԽՍՀՄ միջին մեքենաշինության (ատոմային ծրագիրը), պաշտպանական արդյունաբերության (մինչև 1953 թ.՝ սպառազինության), 1954 թ. ստեղծված ռադիոտեխնիկական, ավիացիոն և նավաշինության արդյունաբերության նախարարություններում<sup>305</sup>:

1957 թ. ձեռնարկված «խրուշչովյան ռեֆորմներով» երկրի արդյունաբերությունը ղեկավարվելու էր ոչ թե ճյուղային (նախարարությունների միջոցով), այլ տարածքային սկզբունքի հիման վրա: Ստեղծվեցին տեղական ժողտնտխորհներ, որոնք անմիջականորեն ենթարկվում էին համամիութենական նախարարությանը: Արդյունքում լուծարվեցին 141 համամիութենական և հանրապետական նախարարություններ, որոնց փոխարեն ստեղծվեցին 105 ժողտնտխորհներ: Դրանով փորձ էր կատարվում ընդլայնելու միութենական հանրապետությունների իրավունքներն ու տնտեսավարման լիազորությունները:

Ինչպես նշել ենք, ռեֆորմները չշրջանցեցին նաև խորհրդային ՌԱՀ-ը, նպաստեցին վերջինիս կառավարման ապակենտրոնաց-

<sup>304</sup> Стів Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 456:

<sup>305</sup> Стів Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие, էջ 63:

մանը, նաև պաշտպանական և քաղաքացիական ձեռնարկությունների միջև սերտ կապերի հաստատմանը, ՌԱՀ-ի աշխարհագրական շրջանակների ընդլայնմանը: Տնտեսության մյուս ճյուղերի նման պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները ևս հանձնվեցին տեղական ժողտնտխորհներին: ԽՍՀՄ-ում գիտատեխնիկական միասնական քաղաքականություն իրականացնելու, ՌԱՀ-ի ոլորտում գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից ստեղծվեցին ավիացիոն, պաշտպանական տեխնիկայի, մեքենաշինության, նավաշինության, ավտոմատացման, ռադիոէլեկտրոնիկայի, ատոմային էներգիայի օգտագործման և այլ պետկոմներ<sup>306</sup>:

ՌԱՀ-ի կառավարման համակարգում իրականացվող ռեֆորմների շրջանակներում ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1957 թ. օգոստոսի 13-ին որոշում է ընդունում «Արդյունաբերական ձեռնարկություններում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների կրճատումների մասին»: Նույն որոշմամբ հաստատվում է «Արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների, բաժինների և արտադրամասերի պետերի, վարպետների պատասխանատվությունը մատակարարվող ռազմական արտադրանքի որակի և արդյունաբերական ձեռնարկություններում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների մասին Կանոնադրությունը»<sup>307</sup>: Այն տարածվում էր միութենական նախարարությունների և ժողտնտխորհների արդյունաբերական բոլոր այն ձեռնարկությունների և կազմակերպությունների վրա, որոնք ռազմական պատվերներ են կատարում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության համար: «Կանոնադրությամբ» արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները պատասխանատու էին Պաշտպանության նախարարությանը

<sup>306</sup> Стів Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 254:

<sup>307</sup> Стів ՀԱԱ, ֆ. 1, ց. 37, գ. 39, ք. 70-71:

մատակարարվող վատորակ կամ տեխնիկական պայմաններին չհամապատասխանող արտադրանքի համար: Այդ դեպքում՝ ձեռնարկությունների ղեկավարները, բաժինների և արտադրամասերի պետերը, վարպետները, հաստատված կարգի համաձայն, ենթարկվելու էին դատական և նյութական պատասխանատվության: «Կանոնադրությունում» նշվում էր բազմաթիվ այլ պարտականությունների մասին ևս, նաև՝ Պաշտպանության նախարարության ռազմական ներկայացուցիչների պատասխանատվության և իրավունքների<sup>308</sup>:

Ապակենտրոնացման քաղաքականությանը զուգահեռ խորհրդային ՌԱՀ-ի կառավարման համակարգում հետպատերազմյան տարիներին հետևողականորեն ամրապնդվում էր 1957 թ. ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահությանը կից ստեղծված ռազմաարդյունաբերական հանձնաժողովի համակարգող դերը, նրա միջոցով էին անցնում ոլորտի բոլոր արմատական որոշումները: Հանձնաժողովը փոխարինեց դեռևս 1951 թվականից ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից գործող ռազմական և ռազմաարդյունաբերական հարցերով բյուրոն<sup>309</sup>: ՌԱՀ-ի հանձնաժողովի ստեղծումից ի վեր այն հաջորդաբար գլխավորել են խորհրդային ազդեցիկ գործիչներ Գ. Ուստինովը (1957–1963), Լ. Սմիրնովը (1963–1985), Յու. Մասլյուկովը (1985–1988) և Ի. Բելոուսովը (1988–1991):

Խորհրդային տարիներին գերզաղտնի պայմաններում գործող ՌԱՀ-ի հանձնաժողովի հիմնական խնդիրներն ու գործառույթները ներկայացված են ոլորտի մասնագետների կողմից հեղինակված՝ «Հայրենական ռազմաարդյունաբերական համալիրը» կոլեկտիվ աշխատությունում: Նշենք դրանցից մի քանիսը.

<sup>308</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 72–79:

<sup>309</sup> Տե՛ս Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие, էջ 62–63:

- սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիական տեսակների ստեղծման աշխատանքների կազմակերպում և համակարգում,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի աշխատանքների համակարգում,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի օպերատիվ կառավարում և գործունեության վերահսկում,

- ԽՍՀՄ Պետպլանի և պաշտպանության նախարարության հետ համատեղ սպառազինության ծրագրերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրման ու թողարկման հնգամյա և տարեկան պլանների նախապատրաստում՝ վերադաս մարմինների կողմից հաստատելու համար,

- արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ռազմատեխնիկական համագործակցության հարցերով արտաքին տնտեսական կապերի համակարգում և այլն:

Հանձնաժողովի կողմից վերջնական տեսքի բերված որոշումների նախագծի տարբերակն ուղարկվում էր ԽՄԿԿ Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության բաժին, որտեղ այն ենթարկվում էր լրացուցիչ ճշգրտումների: Դրանից հետո փաստաթղթերն ընդունվել են ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի համատեղ որոշումներով: Դրանք կրում էին գաղտնիության տարբեր աստիճանի գրիֆներ և, սահմանված կարգին համաձայն, ուղարկվում էին շահագրգիռ գերատեսչություններին: Հետաքրքիր է, որ հետպատերազմյան ողջ ժամանակաշրջանում հանձնաժողովի նիստերն անց են կացվել Մոսկվայի Կրեմլի «Օվալ» դահլիճում, շաբաթը մեկ անգամ պարբերությամբ<sup>310</sup>:

Ն. Խրուշչովի պաշտոնանկությունից հետո, երբ կասեցվեցին նաև «խրուշչովյան ռեֆորմները», 1964 թ. վերջերից սկսվում է ՌԱՀ-ի համակարգի ձեռնարկությունների հերթական «հավաքագրումը» կենտրոնացված ճյուղային նախարարություններում:

<sup>310</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 100–103:

ԽՍՀՄ-ում 1965 թ. իրականացվող նոր ռեֆորմների արդյունքում վերականգնվում է արդյունաբերության կառավարման ճյուղային համակարգը, ամրապնդվում է նաև կենտրոնացված պլանային կառավարման համակարգը: Խորհրդային ՌԱԳ-ում ուժեղանում էր ԽՄԿԿ Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության բաժնի համակարգող դերը:

Շուտով վերջնականապես ձևավորվում է պաշտպանական արդյունաբերության նախարարությունների, այսպես կոչված, «իննյակը», որոնցում հիմնականում կենտրոնացված էին ռազմական արտադրանք թողարկող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները: Դրանք էին՝ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության, պաշտպանական արդյունաբերության, նավաշինության արդյունաբերության, քիմիական արդյունաբերության, էլեկտրոնային արդյունաբերության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, ընդհանուր մեքենաշինության (այստեղ կենտրոնացված էին հրթիռատիեզերական տեխնիկայի ստեղծման աշխատանքները), ռադիոարդյունաբերության, միջին մեքենաշինության նախարարությունները: Վերջիններիս հարում էին 10 կից նախարարություններ՝ իրենց այն ձեռնարկություններով, որոնք արտադրում էին ռազմական և քաղաքացիական նշանակության արտադրանք: Ոլորտի քաղաքական և տնտեսական ղեկավարումը ապահովում էին ԽՄԿԿ Կենտկոմի հատուկ բաժինները (պաշտպանական արդյունաբերության և վարչական մարմինների), իսկ անվտանգության խնդիրները՝ ՆԳՆ-ն և ՊԱԿ-ը: Նորագույն ռազմական տեխնիկայի զարգացման կազմակերպչական, գիտատեխնիկական ապահովության հարցերով զբաղվում էին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը, նրա համապատասխան պետկոմները, Պետպլանը, Ֆինանսների նախարարությունը, Գիտությունների ակադեմիան<sup>311</sup>:

<sup>311</sup> Стів Быстрова И., Советский военно-промышленный комплекс: проблемы становления и развития (1930-1980-е годы), էջ 255-256:

Խորհրդային ՌԱԳ-ի կառավարման նշված համակարգը գրեթե անփոփոխ տեսքով գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ-ի կազմալուծումը 1991 թ.:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային իրադրությունն աշխարհում շարունակում էր լարված մնալ: Վերջինս նպաստում էր հետպատերազմյան առաջին տասնամյակներին խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության աննախադեպ զարգացմանը: Այդ տարիներին ձևավորվեցին ԽՍՀՄ ռազմատնտեսական քաղաքականության և ՌԱԳ-ի առաջնահերթությունները, կատարելագործվեց նրա կառավարման համակարգը: Ինչպես նշում է հետագոտող Ի. Բիստրովան, «Ընդհանուր առմամբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին երկու տասնամյակները հանդիսացան ԽՍՀՄ-ում ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման հիմնադիր փուլը: Այդ տարիներին մշակվեցին ռազմական նոր դոկտրինի և ռազմավարության հիմքերը, որը տիրապետում էր ԽՍՀՄ-ում մինչև 1970-ական թթ., ստեղծվեց գիտական և արտադրական հզոր բազա սպառազինության բոլոր տեսակների և համակարգերի հետագա զարգացման համար»<sup>312</sup>: Նշված ժամանակաշրջանում խորհրդային ՌԱԳ-ը ներկայանում էր իբրև ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական համակարգի հիմքը, որոշիչ էր դառնում նրա դերը նաև խորհրդային երկրի կուսակցական-պետական կյանքում:

<sup>312</sup> Նուն տեղում, էջ 260:

### 3.3. ՀԽՍՀ արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների ներգրավվածությունը խորհրդային ՌԱՀ-ում և նրանց արտադրանքը

Հետպատերազմյան առաջին իսկ տարիներից խորհրդային Հայաստանում արագացված տեմպերով սկսվում է իրագործվել ռազմական նշանակության ապրանքների նոր տեսակների արտադրությունը, առաջին հերթին զարկ է տրվում էլեկտրամեքենաշինական, սարքաշինական, էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը: Արդեն հետպատերազմյան առաջին հնգամյակում խորհրդային Հայաստանում շահագործման հանձնվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, այդ թվում Երևանի էլեկտրամեքենաշինական, կոմպրեսորների, կաբելի, փոքր հիդրոտուրբինների, Քանաքեռի ալյումինի և Կիրովականի ազոտական հանքանյութերի գործարանները և այլն: Այդ ձեռնարկությունների արտադրության ծավալը չէր սահմանափակվելու միայն հանրապետության պահանջարկով, այլ պետք է բավարարեր նաև խորհրդային երկրի տնտեսական այլ շրջանների պահանջարկը: Հանրապետությունում մեքենաշինության և սարքաշինության բոլոր ճյուղերի համալիր զարգացումը, աշխատանքի արտադրողականության աճին զուգահեռ, պետք է ապահովեր նաև նոր աշխատատեղերի ստեղծումը՝ հանրապետությունում նշանակալիորեն աճող բնակչության, հատկապես՝ բարձր որակավորում ունեցող բանվորների և ինժեներատեխնիկական կադրերի համար:

Էլեկտրամեքենաշինության բուռն զարգացման հիմքերը Հայաստանում դրվեցին արդեն 1946 թ.: Այսպես, ԽՍՀՄ մեքենաշինության և սարքաշինության նախարարության Երևանի թիվ 722 գործարանը, որն, ինչպես նշել ենք, դեռևս պատերազմի ավարտական փուլում մասնագիտացվել էր ռազմական թռիչքադաշտերի համար կոմպրեսորային «ԱԿՍ-7» կայաններ թողարկելու մեջ, կենտրոնա-

կան ռազմական գերատեսչության պատվերներով 1946 թ. գարնանից վերսկսում է կայանների արտադրությունը<sup>313</sup>:

Շարունակում էր ռազմական արդյունաբերության պատվերներ կատարել 1940 թ. աշնանը հիմնադրված Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանը: ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարար Մ. Խրունիչևի 1946 թ. մայիսի 10-ի հրամանով գործարանին հանձնարարվում է շտապ կազմակերպել էլեկտրական տրանսֆորմատորների և գեներատորների արտադրությունը: Ընդ որում՝ եթե 1946 թ. համար նախապես առաջարկվում էր արտադրել 100 տրանսֆորմատորներ և 30 գեներատորներ, ապա նախարարի հուլիսի 4-ի հրամանով արտադրության պլանը կտրուկ բարձրացվում է՝ մինչև 835 տրանսֆորմատորի և 500 գեներատորի: Վերջինս ծանր դրության առջև է կանգնեցնում գործարանի անձնակազմին: 1946 թ. օգոստոսի սկզբին Մ. Խրունիչևին (պատճենը՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանին) ուղղված նամակում գործարանի տնօրեն Հախնազարովը հայտնում է, որ գործարանն ի վիճակի չէ կատարելու նման ծավալների աշխատանք, քանզի առկա են արտադրության կազմակերպման հետ կապված բազում չլուծված խնդիրներ: Նշելով, որ նման առաջադրանքների ստացումը «տհաճ անակնկալ էր» գործարանի ղեկավարության համար, և որ դրանց կատարման համար հարկավոր է իրականացնել գործարանի արմատական վերակառուցում, Հախնազարովը դժգոհում է, որ արտադրության պլանները կազմելիս իր կարծիքը ոչ ոք չի հարցրել: Գործարանի տնօրենը առաջարկում է իջեցնել պլանները և շտապ կարգավորել կազմակերպչական, մոնտաժային, մատակարարման և մի շարք այլ հրատապ խնդիրները<sup>314</sup>:

Հայտնի է, որ պատերազմի ավարտից հետո տարբեր տեսակետներ առաջացան Երևանի թիվ 447 գործարանի հետագա մաս-

<sup>313</sup> Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց. 26, գ. 215, թ. 42:

<sup>314</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 115, թ. 212-215:

նագիտացման հարցում, վարկածների թվում էր նաև գործարանի հիմքի վրա Հայաստանում ուղղաթիռների կամ տանկերի արտադրության կազմակերպումը: Սակայն Մոսկվայում ամենևին էլ հակված չէին միութենական հանրապետություններում նման գործարանների կառուցմանը, գլխավոր հակառակորդների թվում էր անձամբ Լ. Բերիան, որը պատերազմից հետո էլ շարունակում էր վերահսկել խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության գլխավոր ծյուղերը<sup>315</sup>: Խորհրդային կառավարության որոշմամբ Երևանի թիվ 447 գործարանն ամբողջությամբ մասնագիտացվեց էլեկտրատեխնիկական արտադրանք թողարկող ձեռնարկության և 1947 թ. փոխանցվեց ԽՍՀՄ էլեկտրաարդյունաբերության նախարարությանը:

1948 թ. գործարանի տնօրեն է նշանակվում արտադրության փորձառու և հնուտ կազմակերպիչ Գուրգեն Չոլախյանը, որը ղեկավարում է գործարանը մինչև 1955 թ.: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1951 թ. դեկտեմբերի 15-ի որոշմամբ գործարանը շուտով իրացնում է խորհրդային ռազմական տեխնիկայի և սպառազինության, մասնավորապես ռադիոտեղորոշումային կայանների սնուցման համար տարբեր հզորության ուժային էլեկտրատրանսֆորմատորների, գեներատորների, շարժական էլեկտրակայանների արտադրությունը<sup>316</sup>: Արդեն 1954 թ. ռազմական էլեկտրատեխնիկայի արտադրական պլանի համաձայն՝ գործարանն արտադրելու էր 150 շարժական էլեկտրակայաններ, 800 սնուցման ազդեցատներ, էլեկտրագեներատորների համար կառավարման 4600 վահանակներ և այլն: Ռազմական նշանակություն ունեցող արտադրանքից բացի՝ գործարանը թողարկելու էր լայն գործառության ապրանքներ՝ 210 հազար սեղանի լամպեր, 75 հազար էլեկտրաարդուկներ և այլն<sup>317</sup>:

<sup>315</sup> Տե՛ս Հայաստանի Ժողովուրդի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 8-9:

<sup>316</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 135-136:

<sup>317</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 34, գ. 66, ք. 74:

Թիվ 447 գործարանում արտադրված ռազմական նշանակության արտադրանքը մատակարարվում էր ԽՍՀՄ ռազմաարդյունաբերության համակարգում գործող մի շարք գործարաններին, այդ թվում Օդեսայում տեղակայված թիվ 783 և Գորկում՝ թիվ 197: Այդ մասին տեղեկանում ենք ԽՄԿԿ Գորկու մարզկոմի քարտուղար Դ. Սմիրնովի կողմից 1954 թ. նոյեմբերի 3-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանին ուղղված նամակից: Նրանում նշվում է, որ թիվ 447 գործարանը վերջին շրջանում դադարեցրել է թիվ 197 գործարանին մատակարարել «Ա-6,25» տիպի ազդեցատներ, որոնք օգտագործվում են որպես էլեկտրական սնուցիչներ ռազմական տեխնիկայի ռադիոտեղորոշումային կայանների և համակարգերի համար: Պարզվում է, որ տարվա կտրվածքով գործարանը չէր մատակարարել 70 ազդեցատներ, ինչպես նաև չէր փոխանակել գործարանին վերադարձված 12 խոտանված ազդեցատները: Հաշվի առնելով Գորկու թիվ 197 գործարանի կողմից ռազմական արտադրանքի տարեկան պլանի կատարման հատուկ կարևորությունը, մարզկոմի քարտուղարը խնդրում է աջակցել և ապահովել ազդեցատների մատակարարումը մինչև 1954 թ. դեկտեմբերի 5-ը: Հայաստանի իշխանությունների միջամտության արդյունքում մինչև տարվա ավարտը թիվ 197 գործարանին մատակարարվում է ազդեցատների տարեկան ամբողջ չափաքանակը, նաև՝ խոտանվածների փոխարեն<sup>318</sup>:

1954 թ. թիվ 447 գործարանը վերանվանվեց Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի՝ «Հայէլեկտրագործարան»: Տարեցտարի աճում էր գործարանի ներգրավվածությունը խորհրդային ՌԱՀ-ում: Այսպես, ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության 1958 թ. հունվարի 5-ի և 9-ի որոշումներով Հայէլեկտրագործարանը պետք է պատրաստեր և միութենական ռազմաարդյունաբերության մի շարք ձեռնարկություններին մատակարարեր հատուկ նշանակության միկրոամպերմետրեր, միլիվոլտմետրեր և լոգոմետ-

<sup>318</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 160:

րեր<sup>319</sup>: Իսկ ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության 1958 թ. հոկտեմբերի 3-ի որոշումով Հայլեկտրագործարանը, միութենական մի շարք ձեռնարկությունների թվում, ռազմապաշտպանական ոլորտի համար բացառիկ կարևոր նշանակության Կույբիշևի ժողտնտխորհի թիվ 511 գործարանի շահագործումն արագացնելու նպատակով պետք է մատակարարեր էլեկտրաուժային տրանսֆորմատորներ, էլեկտրական այլ սարքավորումներ<sup>320</sup>:

Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1187-507 որոշման՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը, Կենտկոմի քարտուղար Ս. Թովմասյանի և կառավարության նախագահ Ա. Քոչինյանի ստորագրությամբ 1959 թ. դեկտեմբերի 4-ին ընդունում են «խիստ զաղտնի» և «հատուկ կարևորության» թիվ 138 որոշումը, որով ՀԽՍՀ ժողտնտխորհի Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանը հաստատում են իբրև հրթիռների համար վրագետնյա սարքավորումներ արտադրելու գլխամասային գործարան: Վերջինիս ղեկավարությանը հանձնարարվում է ստեղծել համապատասխան հզորություններ՝ էլեկտրական ուժային սարքավորումներ, շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ և բարձր հաճախականության գեներատորներ թողարկելու համար: 1960-1961 թթ. համար արտադրության ծավալը կազմելու էր տարեկան 30 մլն. ռուբլի<sup>321</sup>: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. հոկտեմբերի 2-ի և 1960 թ. հոկտեմբերի 27-ի որոշումներով Հայլեկտրագործարանը 1960 և 1961 թթ. ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանը պետք է մատակարարեր համապատասխան՝ 105 և 215 լրակազմ «ՊՏՊ-180» շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ երկու «2ՊԼ-6» կցասայլերի հիմ-

<sup>319</sup> Տե՛ս Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 144-145:

<sup>320</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 38, գ. 49, ք. 83-84:

<sup>321</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 126, գ. 2, ք. 26-27:

քի վրա՝ ղեկավարվող հրթիռային սպառազինության համար<sup>322</sup>: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1959 թ. դեկտեմբերի 7-ի որոշումով Հայլեկտրագործարանը խորհրդային ռազմաարդյունաբերության թիվ 283 գործարանին պետք է մատակարարեր լոգոմետրեր և միակցման տուփեր<sup>323</sup>:

Խորհրդային Հայաստանում էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացմանը զուգահեռ 1950-ական թթ. վերջերից բուռն առաջընթաց ապրեցին նաև ռազմական սարքաշինությունը և ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը: Այդ ճյուղերի հետագա զարգացմանն էին միտված ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի մի շարք որոշումները, այդ թվում 1958 թ. հունվարի 29-ի որոշումը՝ սարքաշինության<sup>324</sup> և 1961 թ. հունիսի 9-ի՝ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության<sup>325</sup> հետագա զարգացման մասին:

Երևանի մետաղակերամիկայի և կիսահաղորդիչների գործարանի հիմքի վրա 1958 թ. ստեղծվեց «Տրանզիստոր» ձեռնարկությունը: Այստեղ ԽՍՀՄ-ում առաջիններից մեկը 1960-1961 թթ. կազմակերպվեց ռադիոէլեկտրոնային ապրանքների՝ կիսահաղորդչային ուժային դիոդների, տրիոդների (տրանզիստորների) և տիրիստորների արտադրություն: Կիսահաղորդչային սարքերի օգտագործումը ռազմական կապի միջոցներում և ռադիոտեղորոշումային համակարգերում հնարավորություն տվեցին կատարելագործել խորհրդային ռազմական տեխնիկան: Ռադիոլամպերի համեմատությամբ կիսահաղորդչային սարքերը փոքրածավալ էին և բավականին ամուր, դրանք կարևոր դեր խաղացին էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ), նոր սերնդի ռազմական տեխնիկայի,

<sup>322</sup> Տե՛ս Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 147-148: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 89, ք. 61-62:

<sup>323</sup> Տե՛ս Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 148:

<sup>324</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 145:

<sup>325</sup> Տե՛ս Заробян Н., Яков Заробян и его эпоха, Е., 2008, էջ 141:

հրթիռաշինության զարգացման գործում<sup>326</sup>: «Տրանզիստոր» ձեռնարկության արտադրանքը խորհրդային տարիներին մեծ պահանջարկ ուներ, այն առաքվում էր Ռուսաստանում (Մոսկվա, Նովոսիբիրսկ, Ուֆա, Կիրով, Պենզա, Սարատով և այլն) և Ուկրաինայում (Կիև, Դնեպրոպետրովսկ, Նիկոլաև) տեղակայված ռազմապաշտպանական արդյունաբերության գործարաններ, գիտաարտադրական միավորումներ (ԳԱՄ) և այլն<sup>327</sup>:

Երևանից բացի՝ սարքաշինական ձեռնարկություններ հիմնվեցին նաև հանրապետության այլ քաղաքներում: Նախկին կոոպերատիվ արհեստագործական արտելների հիմքի վրա 1957 թ. Լենինականում կազմակերպվեց սարքաշինական գործարան, 1958 թ. հիմնվում է Սևանի էլեկտրական չափիչ սարքերի գործարանը, Կիրովականի էլեկտրոնային մանրակերտ սարքերի «Ավտոմատիկա» գործարանը և այլն: Ի կատարումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1958 թ. հոկտեմբերի 29-ի կարգադրության՝ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1958 թ. դեկտեմբերի 9-ի որոշումով պարտավորեցնում է ՀԽՍՀ Ժողովուրդի խորհրդին՝ 1959 թ. առաջին եռամսյակից «Ավտոմատիկա» գործարանում սկսել փոքրածավալ ավտոմատ էլեկտրոնային հաշվիչ-որոշիչ սարքերի մի շարք տեսակների շարային թողարկումը: Նույն որոշումով Երևանի սարքաշինական գործարանում կազմակերպվելու էր ծովային միլիմետրների և լոգոմետրների շարային արտադրություն<sup>328</sup>: ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության նախարարության Կիրովականի «Ավտոմատիկա» ԳԱՄ-ի գործարաններում (այդ թվում Սևանի էլեկտրական գործադիր մեխանիզմների) ռազմապաշտպանական պատվերներով խորհրդային տարիներին թողարկել են կիսահաղորդիչներ, ուղղեցուցիչներ, տարբեր տիպի ուժեղացուցիչներ, միապտույտ էլեկտրական գործադիր մեխանիզմներ և այլն: Արտադրանքն առաքվել է Մոսկվայում, Մոսկվայի մարզի

<sup>326</sup> «Հայաստան» հանրագիտարան, Ե., 2012, էջ 501:

<sup>327</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 201, գ. 641, ք. 67-68:

<sup>328</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 77, գ. 156, ք. 1-2:

Գորլովկա, Բոլշո, Լուկինո, Օդինցովո, Ուկրաինայի Կիև, Սևաստոպոլ քաղաքներում տեղակայված գործարաններին և ձեռնարկություններին<sup>329</sup>:

Հետպատերազմյան տարիներին խորհրդային ռազմապաշտպանական ոլորտում շարունակեց ծանրակշիռ ներդրում ունենալ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը: Արդեն հետպատերազմյան առաջին հնգամյակի վերջին Կիրովի անվան գործարանը շահագործման հանձնեց նոր արտադրանքի՝ էմուլսիային պոլիբլոբոպրենային կաուչուկի արտադրամասը, որն անվանվեց «Նաիրիտ»: Նոր տեսակի կաուչուկի տեխնոլոգիան մշակվել էր գործարանի մասնագետների կողմից, գլխավոր ինժեներ Է. Տեր-Գրիգորյանի և գործարանի կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիայի պետ, ինժեներ Ն. Կարապետյանի գլխավորությամբ: Դա հնարավորություն տվեց ավելացնել ռազմապաշտպանական կարիքների համար որակյալ կաուչուկի արտադրությունը գրեթե չորս անգամ, իսկ ինքնարժեքը նվազեց 8,4 անգամ<sup>330</sup>:

Կիրովականի ազոտային հանքանյութերի գործարանին կից 1946 թ. կառուցված էլեկտրոլիզի գործարանում 1950-ական թթ. սկսվեց սինթետիկ կորունդի, մելամինի, երկրի ռազմապաշտպանական կարիքների և ռազմական տեխնիկայի համար նախատեսված քիմիական այլ նյութերի արտադրություն: Այստեղ էր արտադրվում «ատոմային և ջրածնային ռումբերի պատրաստման համար անհրաժեշտ բաղադրամաս հանդիսացող, այսպես կոչված, «ծանր ջուրը», առանց որի հնարավոր չէր արձակել նշված ռումբերը»<sup>331</sup>: ԽՍՀՄ «միջուկային ծրագրի» պատասխանատուների կողմից հաստատված պլանի համաձայն՝ 1952-1971 թթ. գործարանում տարեկան արտադրվել է 3600 կգ «ծանր ջուր», 20 տարում՝ 72.000 կգ<sup>332</sup>:

<sup>329</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 183, 198, գ. 641, ք. 104:

<sup>330</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 290-291:

<sup>331</sup> Ասժատրյան Ե., նշվ. աշխ., էջ 36:

<sup>332</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 216-218:

Կիրովականի Մյասնիկյանի անվան Կարմիր դրոշի շքանշանակիր քիմիական կոմբինատի «Ռուբին» գործարանում խորհրդային տարիներին արտադրվել են ռազմապաշտպանական նշանակության մի քանի տասնյակ տիպի ապրանքներ, այդ թվում էլեկտրոնիկայի ինտեգրալ միկրոսխեմաների ստեղծման համար մոնոբյուրեղներ, նոնաքարային լազերային միաբյուրեղներ և այլն: Դրանք օգտագործվում էին խորհրդային ռադիոտեղորոշումային կայաններում և պաշտպանական տեխնիկայի լազերային սարքերում՝ նշանառուի համակարգերում լազերային ճառագայթը կառավարելու համար<sup>333</sup>: Նշենք, որ ճշգրիտ տեխնիկական քարերի Արգնիի գործարանում նույն տարիներին կազմակերպվեց առաջին ռուբինյան գեներատորների արդյունաբերական արտադրությունը, որից հետո՝ նոնաքարայինը<sup>334</sup>: Ռազմապաշտպանական արդյունաբերության ճյուղերի կարիքների համար բարդ կառուցվածքով սինթետիկ մոնոբյուրեղների արտադրություն կազմակերպվեց նաև ԽՍՀՄ ավտոմատացման միջոցների սարքաշինության և կառավարման համակարգերի նախարարության Նոր Զաճնի հայկական «Սապֆիր» արտադրական միավորումում<sup>335</sup>:

Արդեն հետպատերազմյան 13 տարիների ընթացքում հանրապետությունում կառուցված և շահագործման հանձնված 200 նոր արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը սպասարկում էր երկրի ռազմաարդյունաբերական ոլորտը: Հայաստանում 1958 թ. արտադրվում էր բարձր որակի մոլիբդեն, պոլինձ, ալյումին, կաուչուկ, քիմիական տարբեր նյութեր, պլաստմասսաներ, էլեկտրագեներատորներ, տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, կոմպրեսորներ, հիդրոտուրբիններ, կաբելներ, ճշգրիտ էլեկտրասարքավորումներ, հրակայուն նյութեր և այլն: Այդ ար-

<sup>333</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>334</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, Ե., 1994, էջ 81:

<sup>335</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 181, գ. 473, ք. 2-3, գ. 620, ք. 176:

տադրանքի գերակշիռ մասն ունեցող ռազմապաշտպանական նշանակություն:

1960 թ. սկսած խորհրդային Հայաստանի մասնակցությունը ԽՍՀՄ ՌԱԳ-ում ձեռք է բերում որակական նոր, առավել կանոնակարգված և հաստատագրված բնույթ, և դա շնորհիվ նախորդ տարիների տպավորիչ արդյունքների: Այսուհետ Հայկական ԽՍՀ-ի յուրաքանչյուր հաշվետու տարվա ռազմական արտադրանքի վերաբերյալ ստուգիչ-հսկիչ առաջադրանքներն ընդունվում են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի փակ նիստերում՝ ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ «Հաշվետու տարվա համար ռազմական տեխնիկայի արտադրության գծով ստուգիչ-հսկիչ առաջադրանքների մասին» համապատասխան որոշումների: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումներով և հանձնարարականներով նիստերի արձանագրությունները «խիստ զաղտնի» գրիֆով ուղարկվում էին Հատուկ բաժին՝ «Հատուկ թղթապանակ» («Особая папка») վերտառությամբ: Դրանք, ինչպես նշել ենք, սկսեցին աստիճանաբար զաղտնագերծվել միայն ԽՍՀՄ փլուզումից հետո:

Այսպես, ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. հունիսի 28-ի՝ «1961 թ. հաշվետու տարվա համար ռազմական տեխնիկայի արտադրության ստուգիչ առաջադրանքների մասին» որոշման, որով ԽՍՀՄ պաշտպանության նախարարությանը հանձնարարվում է մեկ ամսվա ընթացքում միութենական հանրապետություններին ներկայացնել ռազմական տեխնիկայի և նրա համար հատուկ համալրող մասերի մատակարարման հայտեր, ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1960 թ. հուլիսի 30-ի որոշմամբ ՀԽՍՀ ժողովնախորհին տալիս են 1961 թ. հաշվետու տարվա համար ռազմական տեխնիկայի և գույքի արտադրանքի գծով ներքոնշյալ առաջադրանքները: Ռազմամթերքների մասեր. ինժեներական ականների պատյաններ՝ 60.000 և պայթուցիչներ՝ 120.000 հատ, ռազմական էլեկտրա-

տեխնիկա. էլեկտրադիզելային սնուցման ազրեգատներ ռադիոտեղորոշումային կայանների և ռազմական կապի միջոցների համար՝ 3100 հատ, բարձր լարման արդյունաբերական ցանցերին միացման տրանսֆորմատորային ենթակայաններ ղեկավարվող ռեակտիվ սպառազինության համար՝ 200 լրակազմ, ռազմադաշտային կաբելներ՝ 25.000 կմ, նաև ռազմական գույքի այլ տեսակներ, հունք և նյութեր՝ ԽՍՀՄ Պետպլանի կողմից հաստատված համապատասխան անվանացանկով և քանակով<sup>336</sup>։

Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. հոկտեմբերի 27-ի որոշումների՝ 344 Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1960 թ. դեկտեմբերի 2-ին հաստատում են ՀԽՍՀ-ում 1961 թ. արտադրվող և մատակարարվող ռազմական տեխնիկայի և համալրող մասերի թողարկման պլանը, համաձայն թիվ 1 և 2 հավելվածների։ Նույն որոշմամբ հաստատվում է նաև 1961 թ. նավաշինության համար համալրող սարքավորումների արտադրանքի պլանը։ Այսպես, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերով հրթիռային ղեկավարվող սպառազինության համար Հայաստանի ձեռնարկությունները մատակարարելու էին 200 լրակազմ շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ երկու կցասայլերի հիմքի վրա։ Համաձայն հաստատված առաջադրանքների, Հայաստանից Խորհրդային Ռուսաստան, Ուկրաինա և Վրաստան պետք է մատակարարվեին տարբեր տեսակի լոգոմետրեր, աղաչափիչների լրակազմեր, էլեկտրաջերմային դիզելային լրակազմեր և այլն։ Իր հերթին, ռազմական նշանակության որոշ արտադրանքի տեսակներ լրակազմելու համար Հայաստանն Ուկրաինայից ստանալու էր ռադիոընդունիչներ և մասեր աղաչափիչների լրակազմի համար, իսկ Ռուսաստանից՝ հոսանքափոխարկիչներ և այլն<sup>337</sup>։

<sup>336</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 2, թ. 34-36։

<sup>337</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 60-67։

Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. դեկտեմբերի 26-ի որոշումների՝ 374 Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1961 թ. փետրվարի 1-ին հաստատում են 1961 թ. հաշվետու տարվա համար ռազմական էլեկտրատեխնիկայի, գույքի և ռազմամթերքների մասերի արտադրության և առաքման հերթական առաջադրանքները։ Համաձայն դրանց՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի պաշտպանական տեխնիկայի գծով պետկոմի պատվերներով, Ուկրաինական ԽՍՀ-ում տեղակայված ռազմական գործարաններին Հայաստանը պետք է մատակարարեր 60.000 հավատանկային «SU-57» ականի պատյան (առանց լիցքավորման) և 120.000 «ՄԿ-3-57» պայթուցիչ<sup>338</sup>։

Նշենք, որ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1961 թ. հունվարի 23-ի հրահանգով ՀԽՍՀ ժողտնտխորիը ժամանակավորապես ազատվում էր ռազմական ժամանակներում ռազմամթերքների լիցքավորման համար մոբիլիզացիոն հզորություններ ստեղծելու նախկինում հաստատված առաջադրանքների կատարումից։ Մասնավորապես՝ Լուսավանի երկաթբետոնե ապրանքների գործարանում դադարեցվելու էր հակատանկային «SU-57», նաև՝ տարբեր տեսակի ավիառումբերի լիցքավորումը<sup>339</sup>։

Ի կատարումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. հունվարի 21-ի որոշման՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1961 թ. փետրվարի 2-ի կարգադրությամբ ՀԽՍՀ ժողտնտխորհի ենթակայությամբ գործող ձեռնարկությունները 1961 թ. ընթացքում պետք է թողարկեին ծովային կատարմամբ էլեկտրական սարքավորումներ և նավաշինության հատուկ սարքեր։ Դրանք առաքվելու էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նավաշինության գծով պետկոմի թիվ 402 և 893, Խաբարովսկի ժողտնտխորհի թիվ 199 գործարաններ, որտեղ կառուցվում էին խորհրդային նորագույն սուզանավեր։ Այսպես, ՀԽՍՀ ժողտնտխորհի Լենինականի սարքաշինական գործա-

<sup>338</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 1-5։

<sup>339</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 353, թ. 1-2։

րանը «Պ-6» և «Պ-12» տեսակի 63 լրակազմ փոխարկիչներ պետք է առաքեր թիվ 402 գործարան և 80 լրակազմ՝ թիվ 199 գործարան։ Երևանի սարքաշինական գործարանը պետք է առաքեր 38 հատ «ԿԱ-54» միակցման տուփեր թիվ 402 գործարան և 6 հատ՝ թիվ 199 գործարան<sup>340</sup>։

Նշենք, որ ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. հոկտեմբերի 27-ի որոշումով Երևանի սարքաշինական գործարանը 1961 թ. առաջին եռամսյակից խորհրդային ռազմական նավաշինության կարիքների համար պատրաստում և մատակարարում էր տարբեր տիպի լոգոմետրեր, որոնց նախագիծը պատրաստվել էր ԽՍՀՄ կառավարության ավտոմատացման և մեքենաշինության պետկոմի թիվ 218 պետական մասնագիտական հատուկ կոնստրուկտորական բյուրոյի կողմից։ Լոգոմետրերից գործարանին չէր հաջողվել իրացնել միայն «ԼԱ-01» տիպի լոգոմետրերի թողարկումը։ 1961 թ. հունիսի 26-ին ԽՍՀՄ Կենտկոմ և ԽՍՀՄ կառավարություն ուղղված նամակում հայտնելով այդ մասին, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ջարոբյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը տեղեկանցում են, որ թիվ 218 բյուրոյի հետ գործարանի համատեղ աշխատանքի ընթացքում պարզվել է, որ կոնստրուկտորական բացթողումների պատճառով դրանց շարային արտադրությունը կազմակերպել հնարավոր չէ։ Ուստի պատվիրատուի հետ համաձայնությամբ դրանք փոխարինվել են այլ տիպի լոգոմետրերի արտադրությամբ<sup>341</sup>։

ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. նոյեմբերի 27-ի որոշումների համաձայն՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1961 թ. դեկտեմբերի 18-ին հաստատում են արդեն 1962 թ. համար ռազմական տեխնիկայի լրակազմող ապրանքների արտադրանքի թողարկման և մատակարարման

<sup>340</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 356, թ. 1-3։

<sup>341</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 41, գ. 85, թ. 100։

պետք է համաձայն դրա՝ կառավարվող ռեակտիվ սպառազինության և ռազմական նավաշինության լրակազմող սարքավորումների գծով «Կրուզ» զենիթահրթիռային համակարգը լրակազմելու, հետախար գործողության հրթիռների վրագետնյա սարքավորումների առանձին հանգույցների մոնտաժի և փորձարկումների համար ՀԽՍՀ Ժողտնտխորհի ձեռնարկությունները ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով պետք է թողարկելին և առաջինն Ռուսաստանում, Ուկրաինայում և Վրաստանում տեղակայված ռազմաարդյունաբերական ձեռնարկություններին ընդհանուր 204 լրակազմ «ՊՏՊ-180» շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ երկու «2ՊՆ-6» կցասայլերի հիմքի վրա, տարբեր մակնիշի էլեկտրական սնուցման ազրեգատներ, էլեկտրաշարժիչների մեխանիզմներ և այլն։ Ռազմական նավաշինության համար՝ լոգոմետրեր, աղաչափիչների, թերմոէլեկտրոնային դիզելային շարժիչների լրակազմեր, փոխակերպիչներ, միակցման տուփեր, ժովային կատարմամբ էլեկտրական պոմպեր, էլեկտրական այլ սարքավորումներ<sup>342</sup>։

ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1962 թ. ապրիլի 18-ի որոշումով Երևանի ժամացույցի գործարանին հանձնարարվում է ստեղծել մոբիլիզացիոն կարողություններ մեխանիկական պայթուցիչներ («ՄԿ-57» տեսակի, տարեկան՝ 400.000, «ՄԿ-3-57»՝ 600.000 հատ) արտադրելու համար։ Նույն որոշումով ՀԽՍՀ Ժողտնտխորհին հանձնարարվում է 1962 թ. 4-րդ եռամսյակում և 1963 թ. հանրապետության ձեռնարկություններում, մասնավորապես Երևանի և Լենինականի սարքաշինական գործարաններում պատրաստել տարբեր տեսակի հատուկ էլեկտրական սարքավորումներ (միակցման տուփեր, մագնիսական էլեկտրոնային լոգոմետրեր, միլիվոլտմետրեր, աղաչափիչների լրակազմեր և այլն)՝ ԽՍՀՄ նավաշինության պետկոմի թիվ 402, Խաբարովսկի թիվ 199, Վոլգո-Վյատսկի Ժողտնտխորհի «Կրասնոյե Սորմովո»,

<sup>342</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 126, գ. 3, թ. 132-150։

Լենինգրադի ժողովրդային թիվ 189, 194 և 196 նավաշինական գործարաններին (որտեղ կառուցվում են նոր սերնդի սուզանավեր) մատակարարելու համար<sup>343</sup>։

Լենինականի սարքաշինական գործարանը ռազմածովային նավատորմի և սուզանավաշինության համար թողարկում էր տարբեր տեսակի հոսանքափոխարկիչներ, աղաչափիչներ, վիսկոզաչափիչներ, եղանակի արհեստական սարքեր, խոնավ խցիկ, սուզանավերի լաբաներկ ծածկույթը հսկելու և այլ սարքեր։ Խորհրդային սուզանավաշինության զարգացմանը զուգահեռ գործարանին տրվող առաջադրանքների ծավալների տարեց տարի կտրուկ ավելացումը ծանր դրության մեջ էր դրել գործարանի անձնակազմին։ ԴԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ջարոբյանին և ԴԽՍՂ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանին 1962 թ. սեպտեմբերի 18-ին ուղղված նամակում ԴԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Գ. Ղարիբջանյանը հայտնում է, որ ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. հունիսի 10-ի և 1962 թ. հունվարի 24-ի որոշումներով նախատեսված է 1962-1965 թթ. գործարանում թողարկել հույժ կարևոր նշանակության և 11 նոր տեսակի սարքեր։ Տեղեկացնելով, որ «Գործարանի այդպիսի մեծ արտադրական անվանակարգը ստեղծում է աշխատանքի ծանր պայմաններ և թույլ չի տալիս կազմակերպելու նոր տեսակի սարքերի արտադրություն», Ղարիբջանյանը նշում է գործարանը վերակառուցելու և ընդարձակելու հրատապ անհրաժեշտության մասին։ Նա հայտնում է, որ դեռևս 1962 թ. ապրիլի 24-ին ԴԽՍՂ Նախարարների խորհուրդը հարցի վերաբերյալ խնդրանքով դիմել է ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գ. Ուստինովին։ Վերջինս թեև ընդառաջել է, համապատասխան ցուցումներ տվել, սակայն մինչ օրս խնդիրները չեն կարգավորվել և ձեռ-

<sup>343</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 4, ք. 43-48, գ. 5, ք. 63-67։

նարկությունը նախկինի պես գտնվում է աշխատանքային ծանր պայմաններում<sup>344</sup>։

Ի կատարումն ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. սեպտեմբերի 11-ի և ԴԿԿ Կենտկոմի ու ԴԽՍՂ Նախարարների խորհրդի 1962 թ. հունվարի 17-ի որոշումների՝ ԴԽՍՂ Նախարարների խորհրդի 1962 թ. հունիսի 22-ի կարգադրությամբ հաստատվում է մինչև 1965 թ. ներառյալ ԴԽՍՂ ձեռնարկություններում ռազմական տեխնիկայի և գույքի արտադրության համար մոբիլիզացիոն հզորություններ ստեղծելու ծրագիրը։ Ըստ այդմ՝ ռազմամթերքի մասերի գծով նախատեսվում է պատրաստել 480.000 հակատանկային «ՏՄ-57» ականներ (առանց լիցքավորման), 220.000-ը՝ Ձերժինսկու անվան Երևանի հաստոցաշինական, 260.000-ը՝ Երևանի կոմպրեսորային գործարաններում, Երևանի ժամացույցի գործարանում՝ «ՄՎ-57» և «ՄՎ-3-57» տեսակի պայթուցիչներ՝ ընդհանուր 1.000.000 հատ քանակով, Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանում՝ բամբակյա թաղանթանյութ (ցելյուլոզ) (օգտագործվելու էր 1963-1970 թվականներին ԴԽՍՂ-ում հրթիռային պինդ վառելիք, վառող և պայթուցիկ նյութեր արտադրելու համար)<sup>345</sup>։ Նշենք, որ «Պոլիվինիլացետատ» արտադրական միավորումը ռազմապաշտպանական նպատակներով արտադրել է նաև պատրաստի արտադրանք՝ «ՊՎԱ-դիսպերսիա» և «ՊՎԱ-բիսեր» սոսինձներ, պոլիվինիլային սպիրտ և այլն<sup>346</sup>։

1961-1965 թթ. ռազմական արտադրանքի պլանով մեծ ծավալի աշխատանքներ էին նախատեսված Դայաստանի ռազմապաշտպանական ոլորտի առաջատար Դայլեկտրագործարանի համար։ Այստեղ ռազմական էլեկտրատեխնիկայի գծով պետք է պատրաստվեին վրագետնյա հատուկ էլեկտրաուժային սարքավորումներ, ռադիոտեղորոշումային կայաններ և ռազմական կապի միջոցներ՝ «Կրուզ», «Կուբ», «Դալ», «Ս-75Ս» («Վոլխով»), «Ս-120»,

<sup>344</sup> Տե՛ս ԴԱԱ, ֆ. 113, ց. 89, գ. 273, ք. 7-9։

<sup>345</sup> Տե՛ս ԴԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 6, ք. 27-29։

<sup>346</sup> Տե՛ս ԴԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 171։

«Ս-125» («Նևա»), առավել կատարելագործված «Ս-200» խորհրդային զենիթահրթիռային նորագույն համակարգերը լրակազմելու համար: Մասնավորապես՝ բալիստիկ հրթիռների արձակման, նշանակետը հայտնաբերող և ուղղություն տվող «Բրոնյա» ռադիոտեղորոշումային կայանների էլեկտրասնուցման համակարգերի համար տարբեր հզորությամբ գազատուրբինային ազրեգատներ, 320 կիլովատ հզորությամբ էլընթացային ենթակայաններ, փոփոխական հոսանքի գեներատորներ, շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ բարձր լարման արդյունաբերական ցանցերին միանալու համար, ստացիոնար և ավտոմատացված դիզելային ազրեգատներ գազատուրբինային շարժիչների կազմում, նաև դեկավարման կողային սարքավորումներ և այլն:

Համաձայն պլանի՝ քիմիական պաշտպանության միջոցների գծով Հոկտեմբերյանի և Արտաշատի բամբակազտիչ գործարաններում արտադրվելու էր մի քանի տոննա բամբակյա փափկամազ, իսկ Կիրովականի քիմկոմբինատում՝ 6500 տոննա մեկամինցիանուրիդ<sup>347</sup>: Քիմիական այդ նյութն օգտագործվում է որպես հավելում քիմիական և ռադիացիոն ներագոեցությունից ռազմական տեխնիկայի պաշտպանության համակարգում օգտագործվող ռեզինատեխնիկական իրերում, դրանք դարձնելով առավել հրակայուն:

1961–1965 թթ. ՀԽՍՀ-ում ռազմական տեխնիկայի և գույքի արտադրության համար մոբիլիզացիոն հզորություններ ստեղծելու և զարգացնելու ծրագրով նախատեսված պլանները յուրաքանչյուր առանձին տարվա համար ճշգրտվում և որոշ փոփոխություններով ու լրացումներով հաստատվում էին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համատեղ որոշումներով: Օրինակ, 1962 թ. դեկտեմբերի 1-ի և 1963 թ. ապրիլի 29-ի նիստերում հաստատվում է 1963 թ. ռազմական տեխնիկայի և համալրող մա-

<sup>347</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 77, գ. 483, թ. 1–10, նաև՝ ֆ. 1, գ. 126, գ. 4, թ. 11–13, գ. 6, թ. 27–29:

ների, հատուկ միջոցների առանձին հանգույցների և սարքերի արտադրման և առաքման պլանը<sup>348</sup>, 1964 թ. փետրվարի 4-ի, ապրիլի 28-ի և օգոստոսի 7-ի նիստերում՝ 1964–1965 թթ.<sup>349</sup>: Իսկ 1965 թ. հունվարի 26-ի նիստում ՀԿԿ Կենտկոմի բյուրոն և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը, ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1964 թ. դեկտեմբերի 25-ի որոշումների, ՀԽՍՀ Ժողովուրդների ձեռնարկությունների 1965 թ. հաշվետու տարվա համար ռազմական տեխնիկայի և գույքի, ռեակտիվ սպառազինության համար հանքահորային և վրազետնյա էլեկտրաուժային սարքավորումների թողարկման և մատակարարման ճշտված պլանի հետ միասին հաստատում են նաև հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկություններին 1966 թ. համար տրվող ռազմական արտադրանքի հանձնարարականները<sup>350</sup>: Դրանք տարվա ընթացքում ճշգրտվում և վերջնական հաստատվում են ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1966 թ. փետրվարի 4-ի նիստում<sup>351</sup>:

1964–1965 թթ. ռազմական արտադրանքի պլանով նախատեսվում էր ռազմատեխնիկական գույքի, հատուկ միջոցների առանձին հանգույցների և լրակազմ ապրանքների մատակարարումը նաև սոցիալիստական և տնտեսական առումով թույլ զարգացած երկրներին: Այսպես, ՀԽՍՀ Ժողովուրդների ձեռնարկություններն էլեկտրական սնուցման ազրեգատներ պետք է առաքեին Լեհաստան՝ 11, Կուբա՝ 8, Իրաք՝ 10, Գանա՝ 5 հատ, նաև՝ Կորեայի Ժողովրդադեմոկրատական և Մոնղոլիայի Ժողովրդական հանրապետություններ<sup>352</sup>:

Հետպատերազմյան տարիներին խորհրդային Հայաստանում պարբերաբար իրականացվում էին ռազմապաշտպանական, քա-

<sup>348</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 126, գ. 4, թ. 165–167, գ. 5, թ. 63–65:

<sup>349</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 13–23, 35–39, 46–55:

<sup>350</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 9–20, 47–50, գ. 8, թ. 7–14:

<sup>351</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 1–3:

<sup>352</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 77, գ. 655, թ. 1–3, գ. 738, թ. 1–3:

ղաքացիական պաշտպանության, մորիլիզացիոն պաշարների ստեղծման և կուտակման միջոցառումներ, կառուցվեցին բաքստոցներ, ապաստարաններ և այլն: Ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1962 թ. փետրվարի 19-ի և 1963 թ. նոյեմբերի 4-ի որոշումների՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1963 թ. մայիսի 7-ին և նոյեմբերի 30-ին ընդունում են որոշումներ «Ձանգվածային ոչնչացման զենքից բնակչության պաշտպանության հանրապետության պատրաստվածության բարձրացման մասին» և «Ձանգվածային ոչնչացման զենքից հանրապետության բնակչության պաշտպանության միջոցառումների մասին»: Դրանցով մասնավորապես նախատեսվում էր Երևանում, Լենինականում և հանրապետության այլ բնակավայրերում կառուցել բաքստոցներ և ապաստարաններ. Երևանում 610` 80 տեղանոց և 525` 40, Լենինականում՝ 120` 80, 100` 40 տեղանոց և այլն<sup>353</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, հետպատերազմյան տարիներին ռազմական արտադրանքի մեծ ծավալների աշխատանքներ էր իրականացնում Երևանի Հայէլեկտրագործարանը: Վերջինս հրատապ էր դարձրել գործարանը վերակառուցելու, ընդլայնելու և զարգացնելու անհրաժեշտությունը: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Դ. Ուստինովին 1963 թ. հոկտեմբերի 23-ին ուղղված նամակում Հայաստանի իշխանությունները մտահոգություն են հայտնում, որ Հայէլեկտրագործարանում ռազմական տեխնիկայի նոր և բարդ ապրանքների թողարկումը նախատեսված ծավալներով պահանջում է իրականացնել հատուկ միջոցառումներ, մասնավորապես՝ կազմակերպել մեկուսացված արտադրական ցիկլով փակ արտադրամաս: Ուստի ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը ստիպված է հարց բարձրացնել՝ Հայէլեկտրագործարանի տարածքն ընդլայնելու և 1964 թ. հանրապետությանը լրացուցիչ հատկացումներ կատարելու մասին: Նախատեսվում էր

<sup>353</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 5, ք. 108, 173-174:

կազմակերպել ռազմական նշանակության հատուկ էլեկտրական ազրեզատներ թողարկելու արտադրամաս, նաև՝ զագատուրբինա-յին ազրեզատների անհրաժեշտ փորձարկումներն իրականացնելու համար կառուցել փորձարարական համալիր: Նամակում համարձակորեն նշվում է, «որ կապիտալ ներդրումներ չհատկացնելու դեպքում՝ խնդրում ենք ազատել հանրապետությունը ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. սեպտեմբերի 11-ի թիվ 864-369 որոշմամբ նախատեսված հատուկ կարևորության ռազմական տեխնիկայի կարողությունների արտադրությունից և հանձնարարել ԽՍՀՄ Ժողովնախորհին՝ վերանայելու Հայէլեկտրագործարանի 1964-1965 թթ. ռազմական տեխնիկայի արտադրության և մատակարարման պլանները»<sup>354</sup>:

Հայաստանի իշխանությունների հիմնավորված հարցադրումը շուտով բավարարվում է: Դրա արդյունքում 1964 թ վճռական է դառնում Հայէլեկտրագործարանի զարգացման համար, բարելավվում են աշխատանքի պայմանները, սկսվում է տրանսֆորմատորների և խոշոր էլեկտրական մեքենաների արտադրությունների վերատեղաբաշխումը, ընդլայնվում արտադրանքի տեսականին: Ձարգացման զագաթնակետին Հայէլեկտրագործարանը հասավ 1973 թ., երբ Համամիութենական էլեկտրատեխնիկական ինստիտուտի Երևանի մասնաճյուղի, Լենինականի կոմպրեսորների գործարանի, Երևանի փոշեմետաղագործական գործարանի և Վայքի մասնաճյուղի հետ միասին ստեղծվեց ավելի քան 14.000 աշխատողով «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումը: Ընդլայնելով տեսականին և ավելացնելով արտադրանքի ծավալները, «Հայէլեկտրամեքենա»-ն դարձավ ԽՍՀՄ էլեկտրամեքենաշինության խոշորագույն արտադրական միավորումներից մեկը և երկար տարիներ հանդիսանում էր տարբեր հզորությամբ գեներատորների և ուժային տրանսֆորմատորների գլխամասային նշակողը և արտադրողը:

<sup>354</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 43, գ. 48, ք. 78-81:

1960-ական թթ. հանրապետական իշխանությունները սկսեցին առավել կարևորել ռազմապաշտպանական ոլորտի արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերի և առանձին արտադրամասերի ստեղծումը հանրապետության տարբեր շրջաններում: Կենտրոնական իշխանությունների հետ համատեղ ձեռնարկած համալիր միջոցառումների արդյունքում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Լենինականի միկրոէլեկտրաշարժիչների և կոնդենսատորների (կուտակիչների), Արթիկի վակուումային էլեկտրական վառարանների, Մարալիկի մագնիսային արագացուցիչների<sup>355</sup> և հիդրոապարատների, Ստեփանավանի բարձր հաճախականության էլեկտրասարքավորումների<sup>356</sup>, Կիրովականի բարձր ջերմաստիճանային տաքացուցիչների, Դիլիջանի «Իմպուլս», Ապարանի ռադիոտեխնիկական իրերի, Արզնիի ճշգրիտ տեխնիկական քարերի, Զրազդանի սարքաշինական, Չարենցավանի հաստոցաշինական, Սևանի ապակեթելերի (էլեկտրամեկուսիչների), Կամոյի (Գավառ) կաբելի և սարքաշինական («Կամոսարք») <sup>357</sup>, կոնդենսատորների գործարաններն ու արտադրամասերը:

<sup>355</sup> Մարալիկի մագնիսային արագացուցիչների գործարանը հետագայում վերակազմակերպվեց իբրև Երևանի «Լույս» արտադրական միավորման մասնաճյուղ:

<sup>356</sup> ԽՍՀՄ կապի նախարարության «Հայարդկապ» արտադրատեխնիկական միավորման Ստեփանավանի փորձարարական գործարանն արտադրել է հեռախոսային կապի մասեր և սարքեր, տարբեր տիպի ռադիոմասեր և ալեհավաքներ, էլեկտրական սնուցման սարքեր, մեկուսիչներ, փոխակերպիչներ, «Կոմպլեկս» տիպի մոբիլ ռադիոկայաններ և այլն: Արտադրանքն առաքվել է Ռուսաստանում և Ուկրաինայում տեղակայված տարբեր ձեռնարկություններ և գործարաններ (տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 173, 184, գ. 641, ք. 108):

<sup>357</sup> 1962 թ. Կամոյում հիմնադրված ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության և սարքաշինության նախարարության Երևանի «էլեկտրասարք» գործարանի մասնաճյուղը 1965 թ. վերակազմավորվում է առանձին ձեռնարկության և մասնագիտանում ջերմակարգավորիչների արտադրության մեջ: Խորհրդային տարիներին ձեռնարկության արտադրանքն առաքվել է Մոսկվա, Կուրսկ, Օդինցովո, Տուլա, Կիև, Խարկով, Կաունաս, Տաշքենդ քաղաքներում տեղակայված գործարաններ (տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, ք. 91):

Հարկ է նշել, որ Քանաքեռի այլումինի գործարանում իրացված փայլաթիթեղի (Ֆոլգա) թողարկումը նպաստեց հանրապետությունում էլեկտրոլիտային կոնդենսատորների արտադրության զարգացմանը, նոր արտադրամասերի հիմնմանը: Կամոյի կոնդենսատորների գործարանի մասնաճյուղեր բացվեցին Վարդենիս և Լանջաղբյուր ավաններում: Խորհրդային Հայաստանի իշխանությունների առաջարկով ԽՍՀՄ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության նախարարությունը շուտով որոշում է հանրապետությունում գործող կոնդենսատորների գործարանների և կոնդենսատորաշինության նախագծային կոնստրուկտորական բյուրոների ներառմամբ Հայաստանում ստեղծել էլեկտրոլիտային կոնդենսատորների արտադրության «Դիպոլ» արտադրական միավորումը<sup>358</sup>:

Ի կատարումն ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1963 թ. փետրվարի 15-ի որոշման՝ ԶԿԿ Կենտկոմն ու ԴԽՍԳ Նախարարների խորհուրդը 1963 թ. ապրիլի 12-ին ԴԽՍԳ ժողտնտխորհին հանձնարարում են Աբովյան քաղաքում (նախկինում էլար գյուղ) կազմակերպել ռազմական նշանակության ռադիոչափիչ սարքերի արտադրամասեր<sup>359</sup>: 1964 թ. այստեղ բացվեց վարիստորների արտադրության ձեռնարկություն, իսկ 1965 թ. միկրոէլեկտրոնիկայի «Պոզիտոր» ԳԱՄ-ի «Սիրիուս» փորձարարական գործարանը: Ռազմապաշտպանական պատվերներով «Պոզիտոր» ԳԱՄ-ի «Սիրիուս» և «Հատիս» գործարաններում խորհրդային տարիներին արտադրվել են դիոդներ, ռեզիստորներ, հիբրիդային ինտեգրալ միկրոսխեմաներ, կիսահաղորդիչ սարքեր և այլն, այդ արտադրանքի տեսակարար կշիռը գործարանների ընդհանուր արտադրանքի մեջ կազմել է 19,45 %: Արտադրանքն առաքվել է Ռուսաստան՝ Մոսկվա, Չագորսկ, Կույբիշև, Կովրով, Կրասնոգորսկ, Կուրգան, Նիժնի Տագիլ, Ազով, Բալաշիխա, Վլադիմիր, Վոլգոգրադ, Լենինգրադ, Տուլա, Չելյաբինսկ, Իժևսկ, Պո-

<sup>358</sup> Տե՛ս Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, Ե., 2013, էջ 230-232: Տե՛ս նաև՝ Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, Ե., 2008, էջ 302-304:

<sup>359</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 5, ք. 39:

դոլսկ, Կրասնոյարսկ, Կեմերովո և այլ քաղաքներ, Ուկրաինա՝ Ուման, Լվով, Բելառուս՝ Մինսկ, Վրաստան՝ Քուբայիս, Ղազախստան՝ Ալմաթա, Ուզբեկստան՝ Տաշքենդ, Սամարղանդ, Ղրղզստան՝ Ֆրունզե (Բիշկեկ), Մոլդովա՝ Քիշինև, Լիտվա՝ Շաուլայայ, ԽՍՀՄ այլ հանրապետություններում և քաղաքներում տեղակայված ՈԱԳ-ի շուրջ 140 գործարաններ և ձեռնարկություններ, զորամասեր և այլն<sup>360</sup>։

Երևանի «Ռելե» արտադրական միավորման հիմքի վրա Եղեգնաձորում 1967 թ. բացվեց ավիացիոն և հրթիռատիեզերական արդյունաբերությունում օգտագործվող տարբեր սարքերի արտադրման գործարան։

Արդեն 1970 թ. արդյունաբերական ձեռնարկություններ կամ դրանց մասնաճյուղեր կային հանրապետության 130 բնակավայրերում։ Արդյունաբերության արագատեմպ զարգացումը, ժամանակակից արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումը նպաստում էր հանրապետության շրջանների, քաղաքների և գյուղական բնակավայրերի աննախադեպ առաջընթացին և զարգացմանը, տեղերում սոցիալ-տնտեսական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը, գործազրկության վերացմանը, խթանում էր բնակչության աճը։ Այսպես, 1961-1970 թթ. ընթացքում Աբովյան քաղաքի բնակչությունն աճեց 8, Չարենցավանինը՝ 7, Մասիսինը՝ 4, Հրազդանինը՝ շուրջ 2 անգամ<sup>361</sup>։

Այսպիսով, հետպատերազմյան առաջին տասնամյակներին ՀԽՍՀ տնտեսության և արդյունաբերության աննախադեպ զարգացումն առավելապես պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների գործունեությամբ։ Առավել տպավորիչ են հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության և էլեկտրոնային արդյունաբերության նախարարությունների ձեռնարկությունների կողմից ռազ-

<sup>360</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 199-200, գ. 641, ք. 113-120։

<sup>361</sup> Տե՛ս Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Ե., 1982, էջ 97-99։

մապաշտպանական ներդրումների գծով փաստացի սպառման ցուցանիշները։ Տարեցտարի աճելով, արդեն 1970 թ. ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության Դիլիջանի «Իմպուլս» գործարանում դրանք կազմեցին 6,563, Աբովյանի «Իզմերիտել»<sup>362</sup> գործարանում՝ 6,194, Երևանի «Ռելե»<sup>363</sup> գործարանում՝ 8,292, «Էլեկտրոն» գործարանում՝ 12,837, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (ԵրՄՍԳՀԻ) փորձարարական գործարանում՝ 9,962 մլն ռուբլի։ Ընդհանուր՝ 43,848 մլն ռուբլի։ ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության Երևանի «Էրեբունի» ԳԱԱ-ում<sup>364</sup> 13,406, Հրազդանի ռադիոտեխնիկական իրերի գործարանում՝ 2,808, Աբովյանի կիսահաղորդիչ սարքերի գործարանում՝ 4,211, Լենինականի «Օմեգա» ռեզիստորների գործարանում՝ 3,152, Կամոյի էլեկտրոլիտ կոնդենսատորների գործարանում՝ 5,177, «Նեյտրոն» փորձարարական գործարանում՝ 0,148 մլն ռուբլի և այլն։ Ընդհանուր՝ 34,876 մլն

<sup>362</sup> «Իզմերիտել» գործարանում խորհրդային տարիներին թողարկվել են հաճախություն չափող սարքեր, օսցիլոգրաֆներ (տատանգրիչ), կայունացուցիչներ, էլեկտրասնուցման սարքեր և այլն։ Դրանք առաքվել են Ռուսաստանի՝ Մոսկվա, Լենինգրադ, Ռոստով, Վորոնեժ, Կասպիյսկ, Օրյոլ, Իժևսկ, Նովոսիբիրսկ, Չագորսկ, Բառնաուլ, Ալեքսանդրով և այլն, Ուկրաինայի՝ Կիև, Դնեպրոպետրովսկ, Խարկով, Ղազախստանի՝ Ալմաթա, Բելառուսի՝ Մինսկ, Ալուցկ, Լիդա, Ուզբեկստանի՝ Տաշքենդ, Մոլդովայի՝ Քիշինև, Բելգի քաղաքներում տեղակայված չափիչ սարքավորումների, էլեկտրատեխնիկական և ռադիոսարքաշինական գործարաններ և ձեռնարկություններ (տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 641, ք. 103)։

<sup>363</sup> Հայկական «Ռելե» արտադրական միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել են տարբեր տիպի էլեկտրամագնիսական ռելեներ։ Ռազմապաշտպանական արտադրանքի տեսակարար կշիռը միավորման ձեռնարկությունների ընդհանուր արտադրանքի մեջ կազմել է 72,9 % (տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 190)։

<sup>364</sup> «Էրեբունի» ԳԱԱ-ն իր մեջ ներառում էր Երևանի՝ «Մասիվ» և «Նորք», Դուկասյանի (Աշոցք) և Էջմիածնի՝ «Ռաստր» գործարանները։ Խորհրդային տարիներին այստեղ արտադրվել են էլեկտրական տարբեր ռադիոմասեր և սարքեր, որոնցով լրակազմվել է ռազմաարդյունաբերության տարբեր գործարաններում պատրաստվող ռազմական տեխնիկական և սպառազինությունը, այդ թվում ռազմական ինքնաթիռների կողային սարքավորումները, ռազմական կապի միջոցները և այլն (տե՛ս ԶԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 143)։

ռուբլի: Իսկ արդեն 1971 թ. պլանով նախատեսվում էր նախարարությունների հայաստանյան ձեռնարկությունների ռազմապաշտպանական պատվերների գծով ներդրումների ծավալն ավելացնել 110,9 մլն ռուբլիով<sup>365</sup>:

Խորհրդային Հայաստանում կազմակերպված ռազմապաշտպանական արտադրության բարդ և պատասխանատու գործընթացը թեև արձանագրեց նշանակալի հաջողություններ, սակայն, ամբողջությամբ հարթ չէր: Ոլորտում ընդգրկված որոշ ձեռնարկություններ և արտադրամասեր երբեմն թերակատարում էին հաստատված պլանները, թողարկում խոտան և անորակ արտադրանք, ձգձգում մատակարարումները խորհրդային ՌԱՀ-ի ձեռնարկություններին: Այսպես, ՀԽՍՀ Ժողտնտխորհի նախագահ Ե. Ասցատրյանին, պատճենը՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ջարոբյանին և ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Հրթիռային սպառազինման գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Ն. Կուզնեցովին 1961 թ. փետրվարի 2-ին հասցեագրված նամակում Կիևի Ժողտնտխորհի թիվ 679 գործարանի տնօրեն Յաստրեբովը հայտնում է Երևանի Ճշգրիտ էլեկտրասարքերի գործարանում արտադրվող հատուկ տեսակի էլեկտրաչափիչ սարքերի ցածր որակի և թերի մատակարարումների մասին: Դրա հետևանքով վտանգված էր թիվ 679 գործարանում հրթիռային սպառազինության արտադրման պլանը: Հատուկ կազմավորված հանձնաժողովի կողմից անորակ սարքերի ստուգումների արդյունքում պարզվել է, որ դրանց շարքից դուրս գալու պատճառը հավաքման տեխնոլոգիայի խախտումն է: «Սարքերի զննման արդյունքում նրանցից գրեթե բոլորում հայտնաբերվել են օտար առարկաներ (արձիճի կտորներ, գալարատաշեղ, մետաղի փոշի և այլն)», – նշվում է նամակում:

1960 թ. հուլիսին Երևանի Ճշգրիտ էլեկտրասարքերի գործարան են գործուղվել թիվ 679 գործարանի ներկայացուցիչներ, որոնք գործարանի տնօրենի հետ միասին ընդունել են համապա-

<sup>365</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 7, ք. 43–44:

տասխան միջոցառումների ծրագիր արտադրանքի որակը բարելավելու համար: Դրանից հետո գործարանը որոշ ժամանակով բարելավել է թողարկվող սարքերի որակը, սակայն ծրագրի հիմնական կետերը մնացել են անկատար, ինչը հետագայում դարձյալ հանգեցրել է խոտան սարքերի կտրուկ աճին: Հաշվի առնելով նշված փաստերը, թիվ 679 գործարանի տնօրենը թախանձագին խնդրում է ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի ապագայում գործարանը ժամանակին և որակյալ սարքեր մատակարարի, հակառակ դեպքում՝ ինքը ստիպված է լինելու հարց բարձրացնել մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար<sup>366</sup>:

Թերացումներ էին առկա նաև ՀԽՍՀ ռազմապաշտպանական ոլորտի մի քանի այլ ձեռնարկություններում, ուստի խնդիրը հատուկ ըննարկման առարկա է դառնում ՀԿԿ Կենտկոմի քարտուղարության 1961 թ. մայիսի 26-ի նիստում: Լսելով հանրապետության ձեռնարկություններում ռազմական տեխնիկայի ու հատուկ արտադրանքի արտադրության և մատակարարումների պլանների կատարման մասին, Կենտկոմի քարտուղարությունը նշում է, որ 1960 թ. և 1961 թ. չորս ամիսների ընթացքում ՀԽՍՀ Ժողտնտխորհի որոշ ձեռնարկություններ տապալել են հատուկ արտադրանքի և ռազմական տեխնիկայի ապրանքների արտադրության ու մատակարարումների պլանները: Նման ձեռնարկությունների թվում նշվում են Երևանի «Ռելե» գործարանը, Երևանի կաբելի գործարանը, Երևանի սարքաշինական գործարանը, Հայէլեկտրագործարանը, Հիդրոպոմպերի գործարանը, Լենինականի սարքաշինական գործարանը և այլն: ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը նշում է նաև, որ ՀԽՍՀ Պետպլանն ու Ժողտնտխորհը չեն ապահովել պատշաճ հսկողություն արտադրական պլանների կատարման, ռազմական տեխնիկայի և հատուկ արտադրանքի մատակարարման նկատմամբ: Քարտուղարությունը որոշում է պարտավորեցնել

<sup>366</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 89, ք. 26–28:

ժողովն Խորհրդին և նրա ձեռնարկությունների ղեկավարներին՝ ընդունելու անհապաղ միջոցներ նոր ռազմական տեխնիկայի և հատուկ միջոցների արտադրությունն իրացնելու, դրանք պլանով նախատեսված ժամկետներում և քանակներով թողարկելու և մատակարարելու համար: ՀԽՍՀ Պետպլանին ու ժողովն Խորհրդին հանձնարարվում է մեկամսյա ժամկետում ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ռազմական տեխնիկա և հատուկ միջոցներ արտադրող ձեռնարկություններին լրակազմող սարքավորումներով և հումքով ապահովելու համար, ինչպես նաև ուժեղացնել ժողովն Խորհրդի Առաջին բաժնի և տեխնիկական տեսչության աշխատանքները ռազմական տեխնիկայի ապրանքների արտադրման և որակի նկատմամբ մշտական հսկողություն ապահովելու համար: Պարբերաբար, ոչ ուշ քան եռամսյակը մեկ, ժողովն Խորհրդի նիստերում լսել արտադրության և ռազմական տեխնիկայի հատկացումների մատակարարման պլանի կատարման մասին, իսկ բացահայտված թերությունները վերացնելու համար՝ կիրառել համապատասխան միջոցներ և խստագույնս պատասխանատվության ենթարկել արտադրությունը տապալող մեղավորներին: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով մատակարարումները ժամանակին չապահովելու համար Հայէլեկտրագործարանի տնօրեն Ռ. Օհանյանը և «Ռելե» գործարանի տնօրեն Ա. Կիրակոսյանը զգուշացվում են<sup>367</sup>:

Նշենք, որ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1961 թ. մայիսի 20-ի որոշմամբ Երևանի «Ռելե» գործարանը դասվում էր իբրև պաշտպանական արդյունաբերության ճյուղի ձեռնարկություն<sup>368</sup>: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Դ. Ուստինովին 1961 թ. հոկտեմբերի 3-ին ուղղված նամակում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ս. Մովսեսյանը հայտնում է, որ «Ռելե» գործարանի աշխատանքները բարելավելու նպատա-

կով ՀԽՍՀ ժողովն Խորհրդին ընդունել է մի շարք կազմակերպչական միջոցներ, փոխել է գործարանի ղեկավարությունը, նշանակել ավելի փորձառու և հմուտ կադրերի: Միաժամանակ, Դ. Ուստինովի հանձնարարությամբ, սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում գործարանում հատուկ հանձնաժողովի կողմից վերանայվել և կարգավորվել են ռելեների մատակարարման հարցերը, մշակվել անհրաժեշտ միջոցառումներ արտադրվող ռելեների աշխատանքի բարձր հուսալիությունն ապահովելու և մատակարարումները կանոնակարգելու համար<sup>369</sup>:

Հանրապետության որոշ ձեռնարկություններում ռազմական նշանակության անորակ արտադրանքի թողարկման խնդիրը, սակայն, արագ չկարգավորվեց: Շարունակում էր թերակատարել պլանները և որոշակի քանակությամբ անորակ սարքեր թողարկել Երևանի ՃՂԳԻԽ էլեկտրասարքերի գործարանը: 1962 թ. պլանով նախատեսված 5291 հատ սարքի փոխարեն գործարանը ժողովն Խորհրդի Կիևի թիվ 679 գործարանին առաքել էր ընդամենը 517 սարք, որից 7-10 %-ը կազմել էր խտտան: Այդ մասին 1963 թ. փետրվարի 26-ի գրությամբ հայտնելով ՀԽՍՀ ժողովն Խորհրդի նախագահ Ե. Ասցատրյանին, պատճենը՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Հրթիռային սպառազինության գլխավոր վարչության պետ Ա. Սեմյոնովին, ժողովն Խորհրդի Կիևի տնտեսական շրջանի նախագահ Լիսնյակը խնդրում է շտապ միջոցներ ձեռնարկել գործարանի նկատմամբ, որ ապահովվի որակյալ հաշվիչ-որոշիչ սարքերի արտադրությունը<sup>370</sup>:

Ռուսաստանի Պենզա քաղաքում տեղակայված ԽՍՀՄ ՈԱՀ-ի փ/ա Ա-1426 ձեռնարկության ղեկավարությունը 1970 թ. օգոստոսի սկզբներին ահագանգում էր ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանին, Երևանի ՃՂԳԻԽ էլեկտրասարքերի գործարանի ղեկավարությանը և վերջինիս վերադասին՝ ԽՍՀՄ կառավարվող

<sup>367</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 126, գ. 3, թ. 38-40:

<sup>368</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 89, գ. 235, թ. 12:

<sup>369</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 10-11:

<sup>370</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 43, գ. 48, թ. 1-2:

համակարգերի և ավտոմատացման միջոցների նախարարության «Գլխելեկտրասարք» վարչության պետ Կ. Իյունինին, որ փ/ա Ա-1426 ձեռնարկությունում ամբողջությամբ կասեցված է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերով «Վոզդուխ-1Պ» հույժ կարևոր արտադրանքի հանգույցների հավաքումը: Պատճառը նրանում է, որ Երևանի ճշգրիտ էլեկտրասարքերի գործարանը ժամանակին և հաստատված քանակներով չի մատակարարել պահանջվող համալրող էլեկտրասարքերը: Փ/ա Ա-1426 ձեռնարկության ղեկավարությունն ակնկալում էր խնդրում ղեկավար մարմինների աջակցությունը, նշելով, որ հակառակ դեպքում գործարանը չի կարող կատարել իր վրա դրված անչափ կարևոր առաջադրանքը<sup>371</sup>:

Ռազմական նշանակության արտադրանքի թողարկման խնդիրներ ուներ նաև Երևանի «էլեկտրաշարժիչ» գործարանը: Այսպես, ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարար Ա. Անտոնովին, պատճենը՝ Ռադիոարդյունաբերության նախարար Վ. Կալմիկովին և ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Կ. Ղամբարյանին, 1968 թ. օգոստոսի 14-ին ուղղված նամակում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) սպառազինման գծով հրամանատարի տեղակալ, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-գնդապետ Ա. Պոնոմարյովը նշում է, որ «էլեկտրաշարժիչ» գործարանը պարբերաբար չի կատարում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կողմից պատվիրված էլեկտրաշարժիչների մատակարարման պլանը: Այսպես, 1968 թ. առաջին կիսամյակում գործարանը պետք է թողարկեր 3740 էլեկտրաշարժիչ, սակայն փաստացի մատակարարվել է 2067, իսկ 1968 թ. հուլիսին՝ 600 հատի փոխարեն մատակարարվել է ընդամենը 88 էլեկտրաշարժիչ: Վերջինիս հետևանքով վտանգված էր ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության գործարանների կողմից թողարկվող ռազմական

<sup>371</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 50, գ. 57, ք. 76:

ռադիոտեղորոշումային կայանների և համակարգերի արտադրությունը: Նամակում նշվում է, որ գործարանի կողմից պլանների թերակատարումն առաջին հերթին պայմանավորված է գործարանի ցածր տեխնիկական և արտադրական կազմակերպչական մակարդակով, թույլ է կարգապահությունը, առկա են մի շարք այլ թերություններ: Մատակարարվող էլեկտրաշարժիչների ցածր որակի պատճառով դրանց մեծ մասը խոտանվում է պատվիրատուի ընդունման ժամանակ: Նկատի ունենալով վերոշարադրյալը, Պոնոմարյովը խնդրում է գործարանում հաստատել պատշաճ կարգ ու կանոն, հստակություն մտցնել էլեկտրաշարժիչների արտադրության պլանավորման մեջ, սահմանել հատուկ հսկողություն գործարանի կողմից մատակարարումները ժամանակին կատարելու համար և այլն<sup>372</sup>:

ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահին 1971 թ. մարտի 16-ին ուղղված հեռագրում Մոսկվայի փ/ա Մ-5262 ձեռնարկության տնօրեն Վիտկինը տեղեկացնում է, որ Երևանի «էլեկտրաշարժիչ» գործարանը պարբերաբար տապալում է էլեկտրական շարժիչների առաքման պլանը: Դրա պատճառով փ/ա Մ-5262 ձեռնարկությունը չէր կարողանում կատարել ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերով ռադիոտեղորոշումային կայաններ պատրաստելու պլանը: Վիտկինը խնդրում է ինքնաթիռով շտապ Մոսկվա ուղարկել տարբեր մակնիշի 170 հատ շարժիչներ, իսկ մնացած խմբաքանակը՝ մինչև ամսվա վերջը: Հայաստանի կառավարությունը 1971 թ. մարտի 18-ին գործարանի տնօրեն Ռ. Օթարովից բացատրություններ է պահանջում հունվար-փետրվար ամիսներին շարժիչների մատակարարումը տապալելու վերաբերյալ<sup>373</sup>:

Հաստատված ժամանակամիջոցում ռազմական նշանակության արտադրանք մատակարարելու խնդիրներ ուներ նաև Երևանի «Էլեկտրաշարժիչ» գործարանը:

<sup>372</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 48, գ. 49, ք. 63-64:

<sup>373</sup> Տե՛ս ՀՍՍ, ֆ. 113, ց. 181, գ. 7, ք. 30:

նում տեղակայված փ/ա Ա-7835 ձեռնարկությունը: 1970 թ. օգոստոսի 12-ին ՀԿԿ Կենտկոմ ուղղված գրությունում Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալ Ա. Վիննիչենկոն հայտնում է, որ փ/ա Ա-7835 ձեռնարկության կողմից կիսահաղորդիչ կափույրեր չմատակարարելու պատճառով Կիևի «Էլեկտրասարք» գործարանը 1970 թ. 2-րդ եռամսյակում չի ապահովել պաշտպանական կարևոր կառույցի կառավարման ավտոմատացված համակարգի պատրաստումը և մատակարարումը: Նշելով, որ փ/ա Ա-7835 ձեռնարկությունը պարբերաբար չի կատարում պայմանավորվածությունները, Հայաստանի իշխանություններից Ա. Վիննիչենկոն խնդրում է անհապաղ քայլեր ձեռնարկել և պարտադրել ձեռնարկությանը ժամանակին կատարելու ստանձնած պարտավորությունները: Սակայն, ինչպես պարզ է դառնում Երևանի փ/ա Ա-7835 ձեռնարկությունից ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ Կ. Ղանբարյանին 1970 թ. օգոստոսի 21-ին ուղղված գրությունից, ձեռնարկությունը 1970 թ. ապրիլի 1-ի դրությամբ Կիևի «Էլեկտրասարք» գործարանին առաքել էր 570 հատ կիսահաղորդիչ կափույր: «Էլեկտրասարք» գործարանում, սակայն, ոչ համապատասխան ջերմաստիճանի պայմաններում սարքերի սխալ փորձարկումներ կատարելու հետևանքով դրանց մի մասը վնասվել և վերադարձվել է փ/ա Ա-7835 ձեռնարկությանը, ինչի մասին կազմվել է համապատասխան արձանագրություն<sup>374</sup>:

Այդուհանդերձ, վերը բերված փաստերը, ոլորտում առկա թերություններն ու բացասական որոշ երևույթները, որոնք բնորոշ էին խորհրդային տնտեսությանը, չեն կարող ստվերել այն վիթխարի աշխատանքը, որ իրականացվել է խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տասնամյակներին: Այդ շրջանում հանրապետությունն ամբողջությամբ ներգրավվեց խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում, այստեղ ձևավորվեցին

<sup>374</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 50, գ. 57, ք. 77-78:

ուլորտի մի շարք ձեռնարկություններ և արտադրամասեր, որտեղ թողարկվում էին ռազմական նորագույն բարդ տեխնիկայի և սպառազինության համար ժամանակակից համալրող մասեր և սարքավորումներ, երկրի պաշտպանության ամրապնդման և խորհրդային բանակի համար անհրաժեշտ գույք և միջոցներ: Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում գտնվող ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք: Վերջինս բնորոշ էր նաև խորհրդային մյուս հանրապետություններին՝ բացառությամբ, խորհրդային Ռուսաստանի և, մասամբ, Ուկրաինայի: Դա խորհրդային ՌԱՀ-ի ընդգծված առանձնահատկություններից էր՝ ռազմական համակարգերի վերջնական ու ամբողջական արտադրանքի բացառումը ոչ միայն մեկ գործարանային համալիրի շրջանակներում, այլև միութենական ազգային մեկ հանրապետությունում: Կենտրոնական իշխանությունների նպատակը հստակ էր՝ որ ամբողջ երկիրը գտնվի տնտեսական սերտ ու փոխադարձ կոոպերատիվ կապերի մեջ, իսկ հանրապետությունները զերծ մնան ինքնաբավ միավորներ դառնալու հնարավորությունից:

### 3.4. Հանրապետության գիտության ներդրումը խորհրդային ՌԱՀ-ում

1950-1960-ական թթ. խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում խորհրդային Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների հետ ծանրակշիռ ներգրավվածություն ունեցան նաև գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորական ինստիտուտները, լաբորատորիաները, խորհրդային Հայաստանի գիտության՝ հատկապես ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրամեխանիկայի, մաթեմատիկայի, աստղաֆիզիկայի ճյուղերը: Առանց վերջիններիս զարգացմանը հնարավոր

չէր լուրջ հաջողությունների հասնել հանրապետության արդյունաբերության այնպիսի ճյուղերում, ինչպիսին էին ճշգրիտ սարքաշինությունն ու մեքենաշինությունը, ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արդյունաբերությունը և այլն:

1950–ական թթ. սկզբին հանրապետության գիտությունը մասնակից էր դառնում ԽՍՀՄ «միջուկային ծրագրին», որի առաջնահերթությունն անվիճարկելի էր: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1954 թ. մայիսի 3–ի կարգադրությամբ ռազմական նպատակների համար միջուկային ֆիզիկայի ուղղությամբ աշխատանքների հետագա զարգացման նպատակով ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտում, որի հիմնադիր տնօրենն էր ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ա. Ալիխանյանը, ստեղծվեց միջուկային ֆիզիկայի լաբորատորիա: Լաբորատորիայի կազմակերպման պատասխանատվությունը դրվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդի վրա: Վերջինս 1954 թ. մայիսի 25–ի որոշումով ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանին հանձնարարեց լաբորատորիայի համար նախատեսել և առանձնացնել անհրաժեշտ սարքավորումներ: Կառավարության որոշմամբ ԳԱ–ի կապիտալ ներդրումների ծավալը 1954 թ. համար ավելացվեց 300 հազ. ռուբլով, իսկ ՀԽՍՀ ֆինանսների նախարարությանը և Պետալլանին հանձնարարվեց հանրապետության 1955 թ. բյուջեում և կապիտալ ներդրումների պլանում ԳԱ–ի համար նախատեսել լրացուցիչ միջոցներ լաբորատորիայի համար անհրաժեշտ սարքավորումներ և նյութեր ձեռք բերելու համար<sup>375</sup>: Ստեղծումից ի վեր ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտը (1962 թվականից՝ ԽՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) կարևոր ներդրում ունեցավ հանրապետությունում գիտության այդ ոլորտի զարգացման, համամիութենական նշանակություն ունեցող ռազմապաշտպանական կարևոր ծրագրերի իրականացման գործում:

<sup>375</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 41, գ. 13, թ. 1–2:

ԽՍՀՄ ՌԱԴ–ի համակարգում հետպատերազմյան տարիներին կարևոր մասնակցություն ունեցավ 1956 թ. Երևանում բացված Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը: Էլեկտրոնային հաշվողական մեքենաների առաջին լաբորատորիան Խորհրդային Հայաստանում ստեղծվել էր դեռևս 1952 թ.: Ոլորտում տարվող աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանի, Արտաշես Շահինյանի և Անդրանիկ Իոսիֆյանի նախաձեռնությամբ ՀԽՍՀ կառավարությունը ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև հանդես էր եկել Երևանում նման ինստիտուտ ստեղծելու առաջարկությամբ: Գաղափարը հավանության արժանացավ և ԽՄԿԿ Կենտկոմի ու ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1955 թ. նոյեմբերի 11–ի թիվ 897 որոշմամբ, դրան հաջորդած ԽՍՀՄ սարքաշինության և ավտոմատացման միջոցների նախարարության 1956 թ. օգոստոսի 14–ի թիվ 129 հրամանով հիմնվեց Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՄՄԳՀԻ)<sup>376</sup>: Ինստիտուտի առաջին տնօրենը 1956–1960 թթ. մեծանուն գիտնական, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Սերգեյ Մերգելյանն էր: Վերջինիս թեկնածությունն առաջարկել էր անձամբ Յա. Ջարոբյանը, որը մեծ ներդրում ունեցավ ինստիտուտի հիմնադրման և զարգացման գործում<sup>377</sup>:

Նորաստեղծ ինստիտուտի գիտահետազոտական և փորձարարական ստորակտորական աշխատանքների առաջնահերթություններն էին էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) և դրանց հիման վրա հատուկ նշանակության կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱԴ, ռուսերեն՝ автоматические системы управления (АСУ)) նախագծումը և ստեղծումը: Դրանք նախատեսվում էր օգտագործել ինֆորմացիայի մշակման և կառավարման

<sup>376</sup> Տե՛ս Հովհաննիսյան Գ., Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքների հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները, «Հայկական բանակ», Ե., 2008, № 1, էջ 58:

<sup>377</sup> Տե՛ս Заробян Н., նշվ. աշխ., էջ 52–56:

լայն շրջանի խնդիրների լուծման համար, առաջին հերթին՝ ԽՍՀՄ գինված ուժերում և ռազմապաշտպանական ոլորտում:

Խորհրդային տարիներին արտադրվող հաշվողական տեխնիկայի լավագույն օգտագործման և մաթեմատիկական ապահովման ուղղությամբ Երևանի կոլեկտիվին նշանակալի աջակցություն էր ցույց տալիս հանրապետությունում հաշվողական տեխնիկայի և կիրառական մաթեմատիկայի զարգացման նպատակով Հայաստանի ԳԱ և Երևանի պետական համալսարանի հաշվողական կենտրոնի հիմքի վրա 1957 թ. ստեղծված ՀԽՍՀ ԳԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը (ԻԱՊԻ): Ինստիտուտն արդյունավետ համագործակցում էր Սոսկվայի էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի գիտահետազոտական կենտրոնի, ՃՀգրիտ մեխանիկայի ու հաշվողական տեխնիկայի ինստիտուտի և Ավտոմատացված սարքավորումների գիտահետազոտական ինստիտուտի հետ:

Հետպատերազմյան խորհրդային ՌԱՀ-ի առաջնահերթություններից էր, ինչպես նշել ենք, ռեակտիվ և զենիթահրթիռային տեխնիկայի, ռադիոտեղորոշումային համակարգերի զարգացումը: Դրանց կատարելագործմանն էր միտված «Ռեակտիվ սպառազինության հարցերի մասին» ԽՍՀՄ կառավարության 1946 թ. մայիսի 13-ի որոշումը, որով նախատեսվում էր հիմնել գիտահետազոտական մի շարք կենտրոններ<sup>378</sup>: ԽՍՀՄ-ում զենիթահրթիռային նորագույն տեխնիկայի նախագծման և ստեղծման աշխատանքներում ընդգրկվեց 1956 թ. ակադեմիկոս Ա. Իոսիֆյանի նախաձեռնությամբ Հայէլեկտրագործարանի հատուկ կոնստրուկտորական բյուրոյի հիմքի վրա կազմակերպված էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի (ԷՄՀԳՀԻ) հայկական մասնաճյուղը, որի ղեկավարն էր ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վադիմ Ալեքսեևսկին: Ի կատարումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1960 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 1157-487 որոշման՝

<sup>378</sup> Տե՛ս Симонов Н., նշվ. աշխ., էջ 233:

ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանի կարգադրությամբ մասնաճյուղը հաստատվեց ԽՍՀՄ-ում իբրև գլխամասային կազմակերպություն և ներգրավվեց զորային (ծածկագիրը՝ «Օսա») և ծովային (ծածկագիրը՝ «Օսա-Մ») զենիթային միջոցների, կառավարվող ռեակտիվ զենքի ստեղծման համամիութենական ծրագրում՝ ինքնավար էլեկտրասնուցման համակարգեր նշակելու և պատրաստելու գծով<sup>379</sup>:

ԷՄՀԳՀԻ-ի հայկական մասնաճյուղի փորձարարական-ստրուկտորական, գիտահետազոտական և տեխնոլոգիական բազաների հետագա զարգացման նպատակով ՀԽՍՀ Ժողովուրդի 1962 թ. փետրվարի 20-ին պարտավորեցնում է մասնաճյուղի տնօրեն Վ. Ալեքսեևսկուն նախկին «Միսկոմբինատի» բազայի տարածքի շինություններում և զետեղարաններում կազմակերպել լաբորատոր-հետազոտական, կոնստրուկտորատեխնոլոգիական և փորձարարարտադրական տեղամասեր: Այստեղ ռազմական նպատակների համար ստեղծվելու և փորձարկվելու էին հատուկ կոշտ քիմիական վառելանյութեր, հետազոտվելու էր դրանց օգտագործման դեպքում ռեակտիվ շարժիչների քարշող ուժի բնույթը, նաև արևային կիսահաղորդչային մարտկոցների աշխատանքները և այլն, պատրաստվելու էին բարձր ջերմաստիճանի մեկուսիչներ, հաղորդիչներ և մագնիսական նյութեր<sup>380</sup>: 1965 թ. մասնաճյուղը վերակառուցվեց որպես Կոմպլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ (ԿԷՀԳՀԻ): Վերջինիս լաբորատորիայի կազմակերպումն իրականացվեց ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության «Հրազդան» գործարանում, որտեղ արտադրվում էին ԿԱՀ-եր<sup>381</sup>: Ինստիտուտում ռազմական նորագույն տեխնիկայի համար մշակվեցին էլեկտրամեխանիկական մեքենաներ, տարբեր հզորության փոխակերպիչներ, տրանսֆորմատորներ, գեներատորներ, զազատուրբինա-

<sup>379</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 77, գ. 335, թ. 1-2:

<sup>380</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 89, գ. 273, թ. 1:

<sup>381</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 181, գ. 156, թ. 8:

յին ազրեգատներ, շարժական էլեկտրասնուցման համակարգեր և այլ էլեկտրասարքավորումներ: Դրանց արտադրությունը հիմնականում կազմակերպվել է Հայէլեկտրագործարանում, որը, ինչպես նշել ենք, ուղրտի առաջատարն էր ԽՍՀՄ-ում:

ԽՍՀՄ-ում գիտության և տեխնիկայի զարգացմանը, գիտություն-արդյունաբերություն կապերի խորացմանը նպաստեցին ԽՄԿԿ Կենտկոմի 1959 թ. հունիսյան պլենումի որոշումները: Ներկայացնելով երկրում գիտատեխնիկական առաջընթացի ուղիները՝ պլենումը հատուկ մատնանշեց գիտահետազոտական աշխատանքների զարգացման կարևորությունը, արդյունաբերական ձեռնարկություններին կից գիտահետազոտական, կոնստրուկտորանախագծային ինստիտուտների, լաբորատորիաների, փորձարարական արտադրությունների ստեղծման, դրանք նոր սարքավորումներով համալրելու անհրաժեշտության մասին: Թեև հասկանալի պատճառներով չէր բարձրաձայնվում, բայց երկրում թափ հավաքող գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն առաջին հերթին ծառայելու էին ռազմական նպատակներին և կիրառություն էին գտնելու ռազմական արդյունաբերության ուղրտում: Ինչպես նկատում է ակադեմիկոս Յ. Մաթևոսյանը, «ԽՍՀՄ-ում գիտության հզոր վերելքը խթանվում էր գիտատար արդյունաբերության շարունակական զարգացմամբ, ընդսմին գիտական հետազոտություններն առաջին հերթին պահանջված էին ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) կողմից»<sup>382</sup>:

1959 թ. հունիսյան պլենումի հրահանգների համաձայն՝ Հայաստանի իշխանությունները համալիր որոշումներ ընդունեցին հանրապետությունում մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության և այլ ուղրտներում գիտահետազոտական աշխատանքների աշխուժացման, արդյունավետության

<sup>382</sup> Մաթևոսյան Յ., Ռազմաարդյունաբերական համալիրը և հիմնարար գիտությունը, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 43:

բարձրացման, գիտություն-արդյունաբերություն կապերի ամրապնդման մասին<sup>383</sup>:

Այսպիսով, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ի, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տնտեսության և արդյունաբերության զարգացման հիմքում շեշտը դրվում էր արդյունաբերության գիտատար ճյուղերի ստեղծման և զարգացման, գիտություն-տնտեսություն կապերի ամրապնդման վրա: Հանրապետությունում կարճ ժամանակամիջոցում կազմակերպվեցին գիտաարտադրական միավորումներ, գիտահետազոտական նոր ինստիտուտներ և նախագծակոնստրուկտորական բյուրոներ, համամիութենական գիտահետազոտական ինստիտուտների մասնաճյուղեր և այլն: Դրանց թիվը 1965 թ. հասավ 80-ի: Ուղրտը համալրվեց գիտական և ինժեներատեխնիկական բարձրորակ կադրերով, որոնց գործունեության արդյունքում հանրապետությունում շուտով մշակվեցին բազմաթիվ նոր էլեկտրատեխնիկական սարքավորումներ, ստուգիչ-չափող սարքեր, կիսահաղորդիչ և մետաղակերամիկական ապրանքներ, հոսանքի ավտոմատ կարգավորիչներով թեթևաքաշ, բայց մեծ հզորությամբ շարժական էլեկտրակայաններ, տեղական լեռնային ապառներից ապակի, ապակյա մանրաթելեր և այլն, կազմակերպվեց դրանց արտադրությունը<sup>384</sup>:

Պետության կողմից իրականացվող քաղաքականությունը խթանեց Հայաստանի տնտեսության զարգացումը, նպաստեց հանրապետությունում ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, ճշգրիտ սարքաշինության զարգացմանը: Դա հանրապետությանը հնարավորություն էր տալիս զգալի ներդրում ունենալ խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում, ԽՍՀՄ ՁՈՒ, Ռազմածովային նավատորմի (ՌԾՆ) և ՌՕՈՒ-ի, ռազմական նորագույն տեխնիկայի համալրման համար կառավարման ավտոմատացված համակարգեր, ղեկավարման վահա-

<sup>383</sup> Տե՛ս Григорьянц А., նշվ. աշխ., էջ 253-254:

<sup>384</sup> Տե՛ս նույն տեղում:

նակներ, էլեկտրագեներատորներ, շարժական էլեկտրակայաններ և այլ արտադրանք նախագծելու, արտադրելու և փորձարկելու, շահագործման հանձնելու գործում:

1950–1960–ական թթ. Խորհրդային Հայաստանում զարգացման առավել բարձր տեմպեր արձանագրվեցին հատկապես ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում, որի առաջատար կենտրոն դարձավ, ինչպես նշել ենք, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով ինստիտուտի աշխատակիցները սկսեցին նախագծել հատուկ նախանշանակման ապարատ-ծրագրային համալիրներ, կառավարման ավտոմատացված համակարգեր և այլն: Տարիների ընթացքում ինստիտուտը դարձավ ԽՍՀՄ-ում այդ բնագավառի գլխամասային ձեռնարկություն: Ինստիտուտում ստեղծվեցին փորձարարական առանձին արտադրամասեր՝ նախագծված հանգույցների, հիշողության և արտաքին սարքերի, էլեկտրասնուցման աղբյուրների փորձանմուշներ պատրաստելու համար: Արտադրամասերը շուտով միավորվեցին ինստիտուտին կից ստեղծված ԵրՄՄԳՀԻ-ի փորձարարական գործարանում (1960 թ.)<sup>385</sup>: Այստեղ թողարկվում էին սարքերի և մեքենաների միայն փորձարարական նմուշները, իսկ հիմնական արտադրությունը կազմակերպվում էր հանրապետությունից դուրս ԽՍՀՄ ՌԱՀ-ի տարբեր գործարաններում:

1957–1960 թթ. ինստիտուտում հաջողությամբ իրականացվեցին ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ունեցող «Վոլնա» (գլխավոր նախագծող՝ Գ. Բելկին) և «Կորունդ» (Օ. Ցյուպա) մասնագիտացված մինիէլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ՄԷՀՄ) նախագծման աշխատանքներ: 1958–1963 թթ. նախագծվեցին «Հրազդան» (Ե. Բրուսիլովսկի) և ԽՍՀՄ-ում առաջին երկրորդ սերնդի «Հրազդան-2» (Ե. Բրուսիլովսկի) և «Հրազդան-3» (Վ. Ռու-

<sup>385</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 188:

սանկիչ) ունիվերսալ (բազմակողմանի) էլեկտրոնային հաշվիչ մեքենաները<sup>386</sup>: Դրանց շարային արտադրությունը կազմակերպվեց ինստիտուտի փորձարարական և 1963 թ. կազմակերպված Երևանի «էլեկտրոն» արտադրական միավորման գործարաններում:

ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1962 թ. սեպտեմբերի 5-ի թիվ 930–404 և դրան հաջորդած ՀԿԿ Կենտկոմի ու ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումների համաձայն՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1962 թ. հոկտեմբերի 23-ին պարտավորեցրեց ՀԽՍՀ ժողտնտխորհի նախագահ Ե. Ասժատյանին նախապատրաստել «Հրազդան-3» էլեկտրոնային բազմակողմանի հաշվիչ մեքենաների շարային արտադրությունը: Խնդրի վերաբերյալ կայացրած որոշումների մեջ հատուկ արձանագրվեց, որ «Երկրի ժողտնտեսության կարիքների և պաշտպանության համար տեղեկությունների մշակման համակարգերն այսուհետ հիմնականում պետք է կառուցվեն ունիվերսալ հաշվիչ մեքենաների հիմքի վրա»<sup>387</sup>:

Տարեցտարի աճում էին նաև ոլորտին տրամադրվող ֆինանսական միջոցները: ՀԽՍՀ արդյունաբերության պաշտպանական ճյուղերի արտադրության մեջ կապիտալ ներդրումների ծավալը ռադիոէլեկտրոնային և կապի արդյունաբերության գծով 1963 թ. զարման սկզբի դրությամբ կազմեց համապատասխանաբար 4,30 և 0,18 մլն ռուբլի<sup>388</sup>:

1963 թ. օգոստոսին ԵրՄՄԳՀԻ-ի տնօրեն նշանակվեց Խորհրդային Հայաստանի ապագա վարչապետ, այնուհետև ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը: Մինչ այդ՝ 1959 թվականից, Ֆ. Սարգսյանը վարում էր ինստիտուտում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Հրթիռահրետանային գլխավոր վարչության ավագ գինվորական ներկայացուցչի պաշտոնը, միաժամանակ վերահսկում Երևանի մյուս ձեռնարկություններում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով կատարվող ռազմա-

<sup>386</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 189–190:

<sup>387</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 4, ք. 108–109:

<sup>388</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 5, ք. 10:

պաշտպանական աշխատանքները<sup>389</sup>: 1950–ական թթ. վերջին և 1960–ական թթ. սկզբին ինչպես ԵրՄՄԳՀԻ–ում, այնպես էլ ռազմական պատվերներ կատարող Երևանի մյուս ձեռնարկություններում կազմակերպվեցին ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հատուկ ռազմական ներկայացուցչություններ:

Ֆ. Սարգսյանի պաշտոնավարումը ինստիտուտում անմիջապես նշանավորվեց զգալի հաջողությամբ, ինչն անմիջապես բարձրացրեց ինստիտուտի վարկանիշը և այն ճանաչելի դարձրեց ամբողջ խորհրդային երկրում: Ինչպես վկայում է Ֆ. Սարգսյանը, ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության հանձնարարականով ինստիտուտը մշակեց և կազմակերպեց դեպի Լուսին թռիչք ղեկավարող սարքի՝ «ԲՈՍ» հեռահաղորդակցական տեղեկության մշակման համակարգի (զլխավոր նախագծող՝ Ա. Բուչուկյան), արտադրությունը: Ընդ որում, մինչ այդ, երկու տարի անընդմեջ առանց վերջնական արդյունքի այդ խնդրով զբաղվում էր ԽՍՀՄ ռադիոէլեկտրոնային արդյունաբերության ամենախոշոր գործարաններից մեկը: Այդպիսով վտանգված էր դեպի Լուսին թռիչք կազմակերպելու անչափ կարևոր պետական ծրագիրը: Ինստիտուտն առաջադրանքը կատարեց նշանակված ժամկետից շուտ<sup>390</sup>:

Ֆ. Սարգսյանի նախաձեռնությամբ ինստիտուտում առաջադրվեցին և լուծվեցին գիտատեխնիկական, արտադրական և կազմակերպչական կարևոր խնդիրներ: Դրանք ապահովեցին այնպիսի հեռանկարային ուղղությունների զարգացումը, ինչպիսիք էին երրորդ սերնդի «Նաիրի» շարքի միկրոծրագրային ղեկավարմամբ փոքր մեքենաների ստեղծումը: Վերջինս ապահովեց ինստիտուտի լիարժեք մասնակցությունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով հատուկ նշանակության ԿԱԳ–երի ստեղծման պետական ծրագրին:

<sup>389</sup> Տե՛ս Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը (Հուշեր), Ե., 2001, էջ 50–54:

<sup>390</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 60–61:

«Նաիրի» շարքի առաջին ներկայացուցչի նախագծումը ԵրՄՄԳՀԻ–ում սկսվել էր դեռևս 1962 թ., դրա առանձնահատկությունը՝ կառավարման և ավտոմատացված ծրագրավորման կազմակերպումն էր միկրոծրագրային սկզբունքով: Դա հնարավորություն տվեց զգալիորեն պարզեցնել մեքենայի շահագործումը, փոքրացնել չափերը, բարձրացնել հուսալիությունը: Ինստիտուտում 1963–1971 թթ. նախագծված «Նաիրի–1», «Նաիրի–2», «Նաիրի–3», «Նաիրի–3–1» բազմակողմանի հաշվիչ մեքենաները (զլխավոր նախագծող՝ Զ. Հովսեփյան) շարային արտադրության ներդրվեցին ԵրՄՄԳՀԻ–ի փորձարարական և «Էլեկտրոն» գործարաններում, ավելի մեծ չափերով՝ Կազանի ԷՀՄ–ների և Բաքվի գործարաններում: «Նաիրի» շարքի մեքենաների նախագծման համար հայ գիտնականների խումբն արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի (1971 թ.):

ԿԱԳ–երի ստեղծման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով 1967 թ. ԵրՄՄԳՀԻ–ում ստեղծվեց գիտական խոշոր ստորաբաժանում<sup>391</sup>, որտեղ մշակվեցին երկրի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք արտադրատեսակներ:

Ինչպես նշում է Ֆ. Սարգսյանը, ԽՍՀՄ ավտոմատացված սարքերի ԳՀԻ–ի տնօրեն ակադեմիկոս Վ. Սեմենիխինը 1967 թ. նախապատրաստում էր ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության որոշում, որով միութենական ԳՀԻ–ներից մեկին հանձնարարվելու էր

<sup>391</sup> Հայաստանի անկախացումից հետո՝ 1992 թ., ԵրՄՄԳՀԻ–ից առանձնացված գիտական այս և մի քանի այլ ստորաբաժանումների հիմքի վրա ստեղծվեց Երևանի ավտոմատացված կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտը (ներկայումս՝ «ԵրԱԿԳՀԻ» ՓԲԸ): Նույն թվականին ինստիտուտի փորձարարական գործարանը վերակազմավորվեց առանձին ձեռնարկության (ներկայումս՝ «ԵրՄՄԳ» ՓԲԸ): Ունենալով համապատասխան աշխատանքների կատարման բազմամյա փորձ՝ ինստիտուտը ձեռնամուխ է եղել ՀՀ պաշտպանության նախարարության պատվերների կատարմանը: Մասնավորապես, այստեղ նորոգվում, վերականգնվում և մարտական հերթափոխի են դրվում հատուկ նախանշանակման կարևոր ռազմատեխնիկական համալիրներ (տե՛ս Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 58):

մասնակցել ԽՍՀՄ ԶՈՒ կառավարման ավտոմատացված գլոբալ համակարգ ստեղծելու աշխատանքներին: Վերջինս երկրի պաշտպանության ամրապնդման համար ունենալու էր բացառիկ նշանակություն: Եվ ահա, Ֆ. Սարգսյանի գործուն միջամտությամբ, ռազմական ծրագրի շրջանակներում բազային ԷՀՄ-ների և համալիրների ստեղծումը հանձնարարվեց ԵրՄՍԳՀԻ-ի կուլեկտիվին<sup>392</sup>:

Այսպիսով, ԽՍՀՄ կառավարության հանձնարարությամբ 1968 թ. ինստիտուտը նպատակաուղղված սկսեց մասնակցել ԽՍՀՄ ՌՕՈՒ-ի համար ԿԱՀ-երի ստեղծման աշխատանքներին: Ինստիտուտը մշակեց և իրականացրեց գերժամանակակից ռազմական տեխնիկայի համար նախատեսված ԿԱՀ-երի փորձարկումներ, որոնց դրական արդյունքների հիման վրա համակարգերն ընդունվեցին սպառազինության և դրվեցին մշտական մարտական հերթապահության<sup>393</sup>:

ԵրՄՍԳՀԻ-ում մշակված ԷՀՄ-ների և ԿԱՀ-երի արտադրության համար հետպատերազմյան տասնամյակներում հանրապետությունում ձևավորվեցին մի շարք գիտաարտադրական միավորումներ, ձեռնարկություններ և գործարաններ՝ «Էլեկտրոն», «Բազալտ», «Մարս», Դիլիջանի «Իմպուլս», Կիրովականի էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի «ԷՀՏ», «Հրազդան», «Պոզիտոր», «Էլեկտրասարք», «Ֆերիտ», «Ռեզիստոր», «Արաքս» և այլն: Դրանցից շատերը հանրապետության տարբեր շրջաններում մասնաճյուղեր ունեին: Միութենական նշանակության այդ կառույցների նախագծման աշխատանքներում կաևոր ներդրում է ունեցել 1966 թ. հիմնադրված ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր վարչության «Հայկոմուննախագիծ» ինստիտուտը<sup>394</sup>:

ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդունաբերության համար մեծ ծավալի գիտական աշխատանքներ է կատարել 1960 թ. հիմ-

<sup>392</sup> Տե՛ս Սարգսյան Ֆ., նշվ. աշխ., էջ 61-62:

<sup>393</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 74:

<sup>394</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 7, ք. 166:

նադրված ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը: Այստեղ մշակվել են բարձր հաճախականության ընդունիչ համակարգեր տարբեր ալիքների տիրույթում ռադիոճառագայթների ընդունման համար, նաև բարձր ճշգրտության սարքեր՝ տարբեր շարժվող օբյեկտների և ռադիոէլեկտրոնային այլ միջոցների ավտոմատ ղեկավարման համար և այլն: Ռազմական նշանակության սարքերը խորհրդային տարիներին առաքվել են Մոսկվայում, Լենինգրադում, Ռոստովում, Կալինինգրադում տեղակայված ռադիոկապի, տիեզերական, սարքաշինական գիտաարտադրական ձեռնարկություններին<sup>395</sup>:

1966 թ. Երևանում հիմնադրվեց Միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտը (ՄԷԳՅԻ), որի տնօրենը 1966-1974 թթ. Գուրգեն Չոլախյանն էր: ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարի 1969 թ. մարտի 26-ի հրամանով ինստիտուտին կից կազմակերպվում է գործարան՝ փ/ա Մ-5293 ծածկագրով<sup>396</sup>: Ինստիտուտի հիմքի վրա 1979 թ. կազմակերպվեց Երևանի «Գամմա» ԳԱՄ-ը, որը խորհրդային ՌԱՀ-ի առաջատար ձեռնարկություններից էր ավտոմատացված հսկիչ-չափիչ սարքեր, ճկուն մագնիսական սկավառակներով հիշողության սարքեր, ինտեգրալ միկրոսխեմաներ, ռազմական նշանակության այլ ապրանքներ մշակելու և արտադրելու գծով<sup>397</sup>:

ԽՍՀՄ ՌԱՀ-ի համար ռազմական նշանակության գիտական մշակումներ էր կատարում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1968 թ. սեպտեմբերի 20-ի թիվ 407 որոշմամբ և ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարի 1969 թ. փետրվարի 20-ի թիվ 087 հրամանով Երևանում կազմակերպված «Ագաթ» կենտրոնական ԳՀԻ-ի մասնաճյուղը՝ փ/ա Պ-6509 ծածկագրով: Մասնաճյուղի վրա դրված հիմնական խնդիրներն էին՝ ԽՍՀՄ ռազմածովային

<sup>395</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, ք. 102:

<sup>396</sup> Տե՛ս Հայաստանի ժողտնտխորհի վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան, էջ 333, 337:

<sup>397</sup> Տե՛ս «Հայաստան» հանրագիտարան, էջ 501:

նավատորմի նորագույն ռազմական տեխնիկայի համար հատուկ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մշակումն ու ստեղծումը, նաև ԿԱՀ-երի արտադրությունը: ԽՍՀՄ նավաշինության նախարարության «Ազաթ» ԿԳՀԻ Երևանի մասնաճյուղի մշակումներն արտադրության էին ներդրվելու մասնաճյուղի համար որպես արտադրական բազա կառուցվող «Բազալտ» սարքաշինական գործարանում<sup>398</sup>: Վերջինիս շինարարությունը ՀԽՍՀ Աբովյանի շրջանի Ջրվեժ բնակավայրում սկսվել էր ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1969 թ. սեպտեմբերի 1-ի թիվ 715-250 որոշումով: Գործարանի տնօրինությունը կազմակերպվում է ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարար Բ. Բուտոմայի 1971 թ. հունիսի 8-ի հրամանով<sup>399</sup>: Խորհրդային տարիներին այստեղ արտադրված սարքերն ու սարքավորումները առաքվել են միութենական տարբեր քաղաքներում (Լենինգրադ, Ուլյանովսկ, Սարատով, Տագանրոգ, Կիև, Սևաստոպոլ և այլն) տեղակայված խորհրդային ՌԱՀ-ի ձեռնարկություններ<sup>400</sup>:

1960-ական թթ. սկզբից Հայաստանի գիտությունը մասնակից էր դառնում նաև խորհրդային տիեզերական ծրագրին, որտեղ առանցքային տեղ էր գրավում ռազմական բաղադրիչը: Այսպես, ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1959 թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1388-618 և 1960 թ. հունիսի 23-ի թիվ 715-296 որոշումների, ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը ՀԽՍՀ ԳԱ-ին հաստատում են իբրև ԽՍՀՄ-ում տիեզերական տարածքն իրացնող գլխադասային կազմակերպություններից մեկը: ԳԱ-ին հանձնարարվում է 1960-1961 թթ. իրականացնել գիտական հետազոտություններ արհեստական արբանյակների և տիեզերական հրթիռների, էլեկտրառեակտիվ օբյեկտների շարժիչների համար արևից էներգիա ստանալու հատուկ նշանակության սարքավորումներ ստեղծելու նպատակով: Ծրագրի պատ-

<sup>398</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 85, ք. 90-91, գ. 76, ք. 8:

<sup>399</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 7, ք. 164:

<sup>400</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, ք. 87:

վիրատուներն էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից Պաշտպանական տեխնիկայի և Ավտոմատացման ու մեքենաշինության պետկոմների ենթակայության տակ գործող մի շարք հատուկ կոնստրուկտորական բյուրոները: ՀԽՍՀ ԳԱ-ից բացի՝ պաշտպանական նշանակություն ունեցող այդ ծրագրում ընդգրկված էին ԽՍՀՄ Նախարարների խորհրդին կից Ավիացիոն տեխնիկայի և Ավտոմատացման ու մեքենաշինության պետկոմները, ԽՍՀՄ ԳԱ էներգետիկայի ինստիտուտը, Ուզբեկական ԽՍՀ ԳԱ-ն և այլն<sup>401</sup>:

1960 թվականից ՀԽՍՀ ԳԱ-ում սկսեցին իրականացվել արտամթնոլորտային աստղաֆիզիկական հետազոտություններ՝ բարձրաթռիչք հրթիռների և երկրի արհեստական արբանյակների օգտագործմամբ: Բյուրականի աստղադիտարանում մշակված ոչ մեծ հրթիռային աստղադիտարանի («Կ-1» համակարգ) առաջին թողարկումը իրականացվեց 1961 թ.: Հետագա տարիներին այդ աշխատանքներն ընդարձակվեցին, ուստի 1965 թ. ԳԱ-ի նախագահությունը նպատակահարմար գտավ կազմակերպելու Բյուրականի աստղադիտարանի տիեզերական հետազոտությունների գծով նոր մասնաճյուղ: ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարար Ս. Չվերևի հրամանով այստեղ 1967 թ. ստեղծվում է ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության «Աստրո» հատուկ կոնստրուկտորական բյուրոն: Վերջինս բավականին արդյունավետ մասնակցություն ունեցավ համամիութենական մի շարք կարևոր ծրագրերում, այդ թվում «Սայլուտ» տիեզերանավի «Օրիոն» ուղեծրային աստղաֆիզիկական աստղադիտարանի ստեղծման աշխատանքներում<sup>402</sup>:

Հետազոտությունները ծավալվելու և առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ ՀԿԿ Կենտկոմի համաձայնությամբ, ՀԽՍՀ ԳԱ-ն և ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարությունը շուտով դիմում են ԽՍՀՄ Նախարարների խորհրդին՝

<sup>401</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 2, ք. 28-29, 42:

<sup>402</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 51, գ. 70, ք. 87-88:

Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի մասնաճյուղը և «Աստրո» ՅԿԲ-ն Արտամթնոլորտային հետազոտությունների ինստիտուտի վերականգնելու առաջարկով: Ինստիտուտի գիտական ղեկավարումն իրականացնելու էր ԳԱ-ն, իսկ տեխնիկական ղեկավարումն ու նյութատեխնիկական ապահովումը՝ ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարությունը:

ԽՍՀՄ ռազմարդյունաբերական ոլորտը համակարգող Դ. Ուստինովին 1971 թ. դեկտեմբերի 2-ին ուղղված նամակում ՅԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, հիմնավորելով ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունը, նշում է, որ ինստիտուտի գիտատեխնիկական գործունեությունը պետք է զարգանա երկու հիմնական ուղղությամբ: Առաջին. հրթիռների ուղեծրային ավտոմատ աստղադիտարանների, տիեզերական կայանների, Լուսնի վրա աստղադիտարանի օգտագործմամբ արտամթնոլորտային աստղաֆիզիկական դիտումների անցկացում էլեկտրաճանաչիսական տատանումների բնագավառում: Երկրորդ. արտամթնոլորտային փորձարկումների անցկացման և կառավարման համակարգերի համար պիտանի հատուկ աստղաֆիզիկական ապարատների մշակում և արտադրություն: Նամակի վերջում Քոչինյանը հայտնում է, որ «ՅԿԿ Կենտկոմը պաշտպանում է ԶԽՍՀ ԳԱ նախագահության և ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության առաջարկությունն արտամթնոլորտային հետազոտությունների ինստիտուտ ստեղծելու մասին և խնդրում է այդ հարցում Ձեր աջակցությունը»: Ստանալով ԽՍՀՄ Կենտկոմի դրական համաձայնությունը, ՅԿԿ Կենտկոմի բյուրոն 1972 թ. հունվարի 6-ին որոշում է ստեղծել Արտամթնոլորտային հետազոտությունների ինստիտուտ<sup>403</sup>: Ինստիտուտի, ինչպես նաև Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի տիեզերական հետազոտությունների գծով մասնաճյուղի և «Աստրո» ՅԿԲ-ի գիտական ղեկա-

<sup>403</sup> Տե՛ս Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, էջ 365-367: Տե՛ս նաև՝ ԶԱԱ, ֆ. 1, ց. 51, գ. 70, ք. 88-89, ց. 52, գ. 14, ք. 23:

վարն էր վաստակաշատ գիտնական, ԶԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Գուրզադյանը:

Այսպիսով, հայ գիտնականների, հայաստանյան գիտական կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը նպաստեց Խորհրդային Զայաստանում էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրոնիկայի և սարքաշինական բազմաթիվ գործարանների հիմնադրմանը: Դրա շնորհիվ հետպատերազմյան առաջին տասնամյակներին հանրապետությունը ծանրակշիռ մասնակցություն ունեցավ ԽՍՀՄ ռազմատեխնիկական առաջընթացին: Վերջինս նպաստեց Խորհրդային ՌԱՀ-ի կայուն և աննախադեպ զարգացմանը, ռազմական նորագույն տեխնիկայի, սպառազինության կատարելագործմանը, զինված ուժերի մարտունակության բարձրացմանը և, ընդհանրապես, երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱՀ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
1970–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

**4.1. Գիտության ներդրումը**

**խորհրդային ռազմապաշտպանական և տիեզերական  
արդյունաբերության ոլորտում գիտատեխնիկական  
առաջընթացի պայմաններում**

1970–ական թվականների սկզբին համաշխարհային գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման նոր միտումները նպաստեցին ԽՍՀՄ–ում գիտատեխնիկական զարգացման առաջնահերթությունների փոփոխմանը, հետզհետե ձևավորվեց ոլորտում պետության նոր քաղաքականությունը: Այն միտված էր խորհրդային գիտությունն ու տեխնիկան դուրս բերել ավելի բարձր մակարդակի, աստիճանաբար հասնել և անցնել աշխարհի առաջատար երկրներին: Նշված ժամանակաշրջանում խորհրդային Միության տնտեսության ամենազարգացած ճյուղը շարունակում էր ճնշված ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերությունը, ուստի պատահական չէ, որ գիտատեխնիկական առաջընթացի կիզակետում հայտնվեցին արդյունաբերության նշված ոլորտի շրջանակներում իրականացվող գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական աշխատանքները: Երկրի պաշտպանունակության ամրապնդման և ռազմական տեխնիկայի նորագույն նմուշների ստեղծման խնդիրը ԽՍՀՄ–ում միշտ դասվել է առաջնայինների շարքում, ռազմական արտադրանքի արտադրության իրացումն ու թողարկումը հանձնարարվել է առավել սարքավորված, որպես կանոն, գաղտնի գործող ինստիտուտներին և կազմակերպություններին: Դրանց էին հատկացվում ֆինանսա-

կան, նյութատեխնիկական հիմնական միջոցները, այստեղ է, որ առավելագույն սերտ կապեր էին հաստատվում գիտության և արտադրության միջև: Խորհրդային ղեկավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում ՌԱՀ–ի ձեռնարկություններում աշխատելու համար որակյալ, բարձր մասնագիտացում ունեցող կադրերի պատրաստման խնդիրն: ՌԱՀ–ի ոլորտում կենտրոնացված էին երկրի գիտատեխնիկական լավագույն կադրերը և ճշակումները, այստեղ էին իրականացվում գիտահետազոտական և փորձարարական ստրուկտուրական բոլոր աշխատանքների 3/4–ը<sup>404</sup>:

1970–ական թթ. սկզբից ԽՍՀՄ ՌԱՀ–ում ավելանում է խորհրդային Հայաստանի գիտության տարբեր ճյուղերի մասնակցությունը: «1971–1975 թթ. երկրի պաշտպանության համար հիմնարար և որոնողական աշխատանքների հնգամյա պլանի մասին» ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմարդյունաբերական հանձնաժողովի 1970 թ. նոյեմբերի 25–ի և դրան հաջորդած ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1971 թ. փետրվարի 24–ի որոշումներով հանրապետությունում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀԽՍՀ ԳԱ–ին, գիտահետազոտական կազմակերպություններին, ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարություններին հանձնարարվում է իրականացնել ռազմական տեխնիկայի և սպառազինության զարգացմանն ուղղված մի շարք հետազոտություններ: Մասնավորապես, ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով ՀԽՍՀ ԳԱ ինստիտուտները, Երևանի պետհամալսարանի և Պոլիտեխնիկական ինստիտուտի լաբորատորիաներն ու ամբիոններն իրականացնելու էին շարժվող օբյեկտներ հայտնաբերելու համար ռադիոսարքեր մշակելու, ԷՀՄ–ների և ԿԱՀ–երի

<sup>404</sup> Ст'я Отечественный военно–промышленный комплекс и его историческое развитие, էջ 21–22:

կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքներ<sup>405</sup>:

1970-ական թթ. սկզբներին ԵրՄՄԳՀԻ-ում հայ գիտնականների ջանքերով հաջողությամբ իրականացվեցին ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի, խորհրդային նորագույն ռազմական տեխնիկայի համար ԷՀՄ-ների և ԿԱՀ-երի նոր տեսակների ստեղծման աշխատանքները, մշակվեց և շահագործման հանձնվեց հատուկ նշանակության երկմեքենայական հաշվողական համալիրը՝ «65ս112» արտադրատեսակը (զլխավոր նախագծող՝ Ռ. Աթոյան): Վերջինիս ճկուն կառուցվածքն ապահովում էր համակարգի կենսունակությունն ամենաբարդ պայմաններում, անգամ ներքին և արտաքին առանձին սարքերի տեխնիկական միջոցների խափանման դեպքում: «65ս112» արտադրատեսակի տեխնիկական և շահագործման բարձր բնութագրերը, նաև պետական փորձարկումների դրական գնահատականները հիմք հանդիսացան, որ այն օգտագործվի ԽՍՀՄ-ում մի շարք զինվորական նշանակության տարածքային ԿԱՀ-երի համալրման համար<sup>406</sup>:

ԵրՄՄԳՀԻ-ի գիտական անձնակազմը տարեցտարի կատարելագործում էր ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի տեխնիկական ցուցանիշներն ու տվյալները, փորձում հետ չմնալ համաշխարհային գիտության և տեխնիկայի զարգացումներից: Ինստիտուտում 1970-ական թթ. կեսերին և 1980-ական թթ. սկզբին պատրաստվեցին «Նաիրի-3-3» (զլխավոր նախագծող՝ Ա. Գեռլեցյան), «Նաիրի-4», «Նաիրի-4-1» (Գ. Օհանյան), «Նաիրի-4-Վ» և «Նաիրի-4-Վ/Ս» (Վ. Կարապետյան, Յ. Սարգսյան) ԷՀՄ-ներ և դրանց հիմքի վրա համապատասխան համակարգեր: «ԵՄ-1045» և կատարելագործված «ԵՄ-1046» (Ա. Քուչուկյան) ԷՀՄ-ների հիմքի վրա մշակվեցին երկմեքենայական («Վ4-2Մ-45», «Վ4-2Մ-46»), նաև՝ առաջին երկպրոցեսորային («Վ4-2Պ-45», «Վ4-2Պ-46») և

<sup>405</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 103, գ. 11, թ. 1-10:

<sup>406</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 200-201:

երեքմեքենայական («Վ4-3Մ-45», «ՄՎ4-46») (Ա. Քուչուկյան) համալիրները, ԽՍՀՄ-ում առաջին «ԵՄ-2345» (Ա. Քուչուկյան) մատրիցային պրոցեսորը, կազմակերպվեց դրանց շարային արտադրությունը: «ԵՄ-1045» և «ԵՄ-1046» մեքենաները և դրանց հիմքի վրա ստեղծված համալիրները կազմում էին ԵՄ-ԷՀՄ միացյալ համակարգի ԽՍՀՄ-ում արտադրված մեքենաների 40 %-ը և շուրջ 10 տարի արտադրվեցին Կազանի ԷՀՄ-ների և Երևանի «Էլեկտրոն» գործարաններում<sup>407</sup>: Ֆ. Սարգսյանը վկայում է, որ այդ մեքենաներն արտակարգ հուսալի էին և հիմնականում օգտագործվեցին հատուկ նշանակման ԿԱՀ-երում ռազմական խնդիրների լուծման համար<sup>408</sup>:

Խորհրդային հետագա տարիներին տեսական հետազոտությունների և ինժեներանախագծային մշակումների հիման վրա ԵրՄՄԳՀԻ-ում երկրում առաջին անգամ ստեղծվեցին անշարժ և շարժական կատարումներով բազմապրոցեսորային և երկպրոցեսորային մագնիսային ԿԱՀ-եր (արտադրատեսակ «65ս120», նախագծող՝ Ռ. Աթոյան): Համակարգը նախատեսված էր ԽՍՀՄ զինված ուժերի մի շարք տեսակների մասնագիտացված տարածքային ԿԱՀ-երի մեջ «65ս112» հնացած արտադրատեսակը փոխարինելու համար: Ինստիտուտում շուտով մշակվեց և մշտական շահագործման հանձնվեց տարածքային հատուկ մասնագիտացված նոր ԿԱՀ՝ «65ս643» արտադրատեսակը (Ռ. Աթոյան): Տարածքային ԿԱՀ-երի ստեղծումը, պետական փորձարկումների դրական արդյունքների հիման վրա դրանց շարային արտադրության կազմակերպումը, ռազմական օբյեկտներում և խորհրդային զինված ուժերում ներդրումը ցույց տվեցին, որ ԽՍՀՄ-ում լուծված է պետական նշանակության հիմնախնդիր: Դրա համար ինստիտուտը պարզևատրվեց «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, իսկ մի շարք աշխատողներ արժանացան Լենինյան, ԽՍՀՄ պետա-

<sup>407</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 189-191, 195-196:

<sup>408</sup> Տե՛ս Սարգսյան Ֆ., նշվ. աշխ., էջ 66:

կան այլ բարձր մրցանակների, պարգևատրվեցին շքանշաններով և մեդալներով<sup>409</sup>:

1980-ական թթ. երկրորդ կեսին տաղանդավոր գիտնական Ռ. Աթոյանի գլխավորությամբ ԵրՄՄԳՀԻ-ում մշակվեց «Սևան» բազմապրոցեստրային հաշվողական համալիրը, որի հիմքի վրա ստեղծվեցին Յեռավոր և Ռազմական օդանավագնացության հրամանատարական կետերի ԿԱԳ-եր, «Օստրով» հաղորդագրությունների փոխանցման վերջնական կայանը և այլն<sup>410</sup>: Ինստիտուտում մշակվեց ռազմական նշանակության ԿԱԳ-երում օգտագործվող «Նաիրի-41» ՄԷՀՄ-ն, որն իր հիմնական տեխնիկական բնութագրերով չէր գիջում խորհրդային նմանատիպ ՄԷՀՄ-ներին և նույն դասի ռազմական նշանակության ԷՀՄ-ներին: «Նաիրի-41» ՄԷՀՄ-ների հաստատում և շարժական կատարման տարբերակներով արտադրությունը կազմակերպվեց «Հրազդանմեքենա» ձեռնարկությունում<sup>411</sup>:

Հայաստանում ԿԱԳ-երի ստեղծման և կատարելագործման, էլեկտրատեխնիկական արդյունաբերության կազմավորման, բարձր որակավորում ունեցող գիտատեխնիկական կադրեր և ինժեներներ պատրաստելու գործում նշանակալի ավանդ ունի վաստակաշատ գիտնական Ա. Իոսիֆյանը, որը ռազմական նշանակության մի շարք համակարգերի գլխավոր կոնստրուկտորն էր, ղեկավարել է «Օմեգա», «Մետեոր» և այլ ծրագրերի աշխատանքները<sup>412</sup>:

ԵրՄՄԳՀԻ-ի տնօրեն Ս. Սեմերջյանի կողմից 1983 թ. սեպտեմբերի 29-ին ՀԽՍՀ կառավարությանն ուղղված նամակից տեղեկանում ենք, որ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1983 թ. հուլիսի 27-ի որոշմամբ և դրան հաջորդած ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության

<sup>409</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 200-201:

<sup>410</sup> Տե՛ս «Հայաստան» հանրագիտարան, էջ 503-504:

<sup>411</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 411, ք. 44<sup>ա</sup>:

<sup>412</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 152-153:

Նախարարի 1983 թ. օգոստոսի 26-ի հրամանով ինստիտուտին հանձնարարվել է աշխատանքներ սկսել բազմաընթաց միաշարք ԷՀՄ-ների խորհրդային մոդելներից մեկի՝ «Էլբրուս» բազմապրոցեստրային համակարգի մշակման, «Էլեկտրոն» և «Հրազդանմեքենա» արտադրական միավորումներում դրանց արտադրության կազմակերպման ուղղությամբ<sup>413</sup>: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1986 թ. հուլիսի 19-ի թիվ 741 որոշմամբ ինստիտուտը հաստատվում է ԽՍՀՄ գլխամասային ձեռնարկություններից մեկը՝ ռազմական նշանակության «Ա-501» և «Ա-587» միասնական տարածքային հակահրթիռային պաշտպանության համակարգերի կազմում «Կրիլո» ԿԱԳ-ի փորձարարական նմուշ ստեղծելու համամիութենական ծրագրում: 1987 թ. նոյեմբերի 2-ին ՀԿԿ Կենտկոմը ԵրՄՄԳՀԻ-ի ղեկավարությանը հանձնարարում է «Կրիլո» թեմայի աշխատանքների կատարումը վերցնել խիստ հսկողության ներքո և յուրաքանչյուր տարվա հունվարին և հուլիսին ընթացքի մասին զեկուցել Կենտկոմին՝ մինչև ծրագրի կատարման վերջնական ավարտը 1991 թ.<sup>414</sup>: Նշենք, որ «Կրիլո» ԿԱԳ-ի ստեղծման աշխատանքներում ընդգրկված էր նաև Երևանի փ/ա Ա-7390 փակ ձեռնարկությունը<sup>415</sup>:

ԽՍՀՄ փլուզման շրջանում ԵրՄՄԳՀԻ-ում առաջացան լուրջ, գրեթե անհաղթահարելի դժվարություններ՝ կապված ինստիտուտի գործունեության հետ: Այդ մասին է նշվում ԽՍՀՄ փոխվարչապետ Յու. Մասլյուկովին, ԽՍՀՄ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Մ. Մոխսեկին, ՌՕՈՒ գլխավոր հրամանատար Ե. Շապոշնիկովին և ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Վ. Շինկոյին ուղղված՝ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի 1991 թ. օգոստոսի 16-ի զեկուցագրում: Նշելով խորհրդային ռազմարդյունաբերության ոլորտում ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունների մասին, Վ. Մա-

<sup>413</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 367, ք. 92:

<sup>414</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, ք. 20-22:

<sup>415</sup> Տե՛ս նույն տեղում ք. 52-53:

նուկյանը հայտնում է, որ այսօր էլ ինստիտուտում հեռանկարային աշխատանքներ են տարվում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության և ՌՕՈՒ-ի համար նոր սերնդի ԷՅՍ-ների («ԵՍ-1170 և «Էլբրուս-Ե»), «Կրիլո», «Դոզոր-Վ», «Դվին» շարժական ԿԱԴ-երի, ռազմական նշանակության այլ արտադրատեսակների մշակման և ստեղծման ուղղությամբ: Դրանց հիմնական արտադրողներն են ԵրՄՄԳՀԻ-ի փորձարարական գործարանը և «Էլեկտրոն» արտադրական միավորումը, որոնք կազմել են նորաստեղծ «Սևան» ԳԱՄ-ը<sup>416</sup>: Ինստիտուտը շարունակում է մասնակցել ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կապի համակարգի ստեղծման աշխատանքներին, ավարտին է հասցվել «Օստրով-Պ» կոմուտացիոն կայանի մշակումը, որն ընդունվել է սպառազինության, իսկ մի քանի ծրագրային համակարգեր գտնվում են պետական փորձարկման փուլում:

Ձեկուցագրի վերջում տեղեկացնելով, որ ներկայումս ԵրՄՄԳՀԻ-ում նկատվում է փորձարարական ստորուկտորական աշխատանքների և ռազմական պատվերների ծավալների զգալի կրճատում, ինչի հետևանքով վտանգված է համամիութենական պետական հեռանկարային ծրագրերի կատարումը, Վ. Մանուկյանը վստահեցնում է, որ Հայաստանի կառավարությունը շարունակելու է ԽՍՀՄ ռազմաարդյունաբերության շրջանակներում իրակա-

<sup>416</sup> ԽՍՀՄ ռազմաարդյունաբերության նախարարության «Սևան» գիտաարտադրական միավորումում խորհրդային տարիներին պատրաստվել են ռազմական կապի միջոցների ապահովման համար տարբեր տիպի մոտ երեք տասնյակ սարքեր: Դրանք մեծ քանակներով մատակարարվել են ինչպես զորամասեր, այնպես էլ Մոսկվայում, Լենինգրադում, Կալուգայում, Սվերդլովսկում, Կոստրոմայում, Ռյազանում, Տոմսկում, Օմսկում, Տամբովում, Չագորսկում, Գորկիում, Բրյանսկում, Բառնաուլում, Ռոստով Դոնում, Յոզկար Օլայում (Ռուսաստան), Խմելնիցկում, Ժիտոմիրում, Իվանո-Ֆրանկովսկում, Լվովում (Ուկրաինա), Ռիգայում (Լատվիա), Տաշքենդում (Ուզբեկստան), Մինսկում (Բելառուս), Թբիլիսիում (Վրաստան), Հայաստանում («Էլեկտրոն», «Պոզիտոր», «Հրազդաններենա» և այլն) տեղակայված ռազմապաշտպանական արտադրանք քողարկող գործարաններ և ձեռնարկություններ (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 157-158, 192-195, գ. 641, ք. 163-164):

նացվող աշխատանքները և իր իրավասության սահմաններում կնպաստի դրանց կատարմանը<sup>417</sup>:

Այսպիսով, ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը 1991 թ. վերջին՝ ԵրՄՄԳՀԻ-ում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կարևոր աշխատանքներ են կատարվել: Դրանք հիմնականում իրականացվել են ԽՍՀՄ պաշտպանության, ռազմաարդյունաբերության նախարարությունների գլխավորությամբ և կազմակերպչական անմիջական ղեկավարությամբ, միութենական մի շարք գլխադասային և նմանատիպ քույր կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Խորհրդային շուրջ 35 տարիների ընթացքում ինստիտուտի գործունեությունը ոչ միայն ապահովեց երկրի ռազմաարդյունաբերության կարիքները, այլև նպաստեց Խորհրդային Հայաստանում արդյունաբերական նվազ մետաղատար և էներգատար նոր ծյուղերի ստեղծմանն ու զարգացմանը, բարձր որակավորում պահանջող աշխատանքով ապահովվեցին հազարավոր մասնագետներ:

ԽՍՀՄ-ում ռազմաֆիզիկայի և ռազմաստղագիտության, տիեզերական տարածքի հսկողության ասպարեզում գիտական հետազոտությունների, գերհեռու տիեզերական կապերի և ռազմոտելեմիկական հատուկ նշանակության համակարգերի, անտենաօպտիկական կայանքների և ռազմի ընդունիչների համասարքերի ստեղծման խոշոր կենտրոններից էր Հայաստանում կազմակերպված ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Ստանդարտների և չափիչ սարքերի կոմիտեի Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Ռազմաֆիզիկական չափումների գիտահետազոտական բաժանմունքը, որը հետագայում վերակազմավորվեց ինստիտուտի: Վերջինիս ստեղծման անհրաժեշտության մասին է նշվում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Ստանդարտների և չափիչ սարքերի կոմիտեի նախագահ Վ. Բոյցովի կողմից ԽՍՀՄ Նա-

<sup>417</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 74-76:

խարարների խորհրդի Գիտության ու տեխնիկայի կոմիտեի նախագահ, ակադեմիկոս Վ. Կիրիլինին ուղղված նամակում. «Նկատի ունենալով ամբողջ երկրի և մասնավորապես Հայկական ԽՍՀ-ի համար բաժանմունքում նշված աշխատանքի ժողովրդատնտեսական և պաշտպանական մեծ նշանակությունը, ինչպես նաև դրանց զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին առընթեր Ստանդարտների և չափիչ սարքերի կոմիտեն անհրաժեշտ են համարում Հայկական բաժանմունքը վերակազմել Ստանդարտների և չափիչ սարքերի կոմիտեին ենթակա ռադիոֆիզիկական չափումների համաձուլման գիտահետազոտական ինստիտուտի և խնդրում են ԽՍՀՄ Նախարարների խորհրդի Գիտության ու տեխնիկայի կոմիտեին՝ հնարավոր կարճ ժամկետում քննարկել և լուծել նշված ինստիտուտի կազմակերպման հարցը կոմիտեի միջոցների հաշվին»<sup>418</sup>:

Ինստիտուտի կայացումը սերտորեն առնչվում է ոլորտի ճանաչված մասնագետ Պարիս Հերունու գործունեության հետ: Դեռևս 1958 թ. Պ. Հերունու ղեկավարությամբ Բյուրականի աստղադիտարանում սկսվեցին նրա կողմից առաջարկված նոր տեսակի ալեհավաքների համակարգերի մշակման աշխատանքները, վերջնանպատակն էր՝ մեծ ռադիոաստղադիտակի ստեղծումը: Արդեն 1968 թ. Պ. Հերունին մշակեց «Մոզաիկա» կոչվող առաջին ավտոմատ ռադիոչափիչ սարքավորման համալիրի նախագիծը: Հետագայում մշակվեցին բազմատեսակ ռադարային ալեհավաքների բնութագրերի չափման համար մի շարք նոր համալիրներ: Դրանց արդյունավետությունն այնքան բարձր էր և պահանջարկն այնքան մեծ, որ ԽՍՀՄ մի քանի նախարարությունների և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնա-

ժողովի առաջարկով միութենական կառավարությունը Ռադիոֆիզիկական չափումների հատուկ բյուրոյի (ՌՀԲ) հիմքի վրա 1970 թ. նոյեմբերին Երևանում ստեղծեց Ռադիոֆիզիկական չափումների համաձուլման գիտահետազոտական ինստիտուտը (ՌՀԳՀԻ)<sup>419</sup>: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ինստիտուտը հանդիսանում էր ԽՍՀՄ գլխադասային կազմակերպություններից մեկը՝ ռադիոտեղորոշումային, նավիգացիոն, կապի (այդ թվում տիեզերական) և բոլոր այլ տեսակի վրագետնյա, նավային, ինքնաթիռային և արբանյակային ալեհավաքների բնութագրերի չափման և չափագիտության հարցերով:

Շուտով, ի կատարումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1972 թ. դեկտեմբերի 9-ի որոշումների, ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1973 թ. հուլիսի 31-ին քույլատրում են Հայաստանում ՌՀԳՀԻ-ի համար նոր մասնաշենքերի շինարարությունը: Դրանք նախատեսվում էր շահագործման հանձնել արդեն 1975 թ.: Ինստիտուտի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ինստիտուտին կից ՀԽՍՀ-ի Աշտարակի շրջանի Օրգով գյուղում ստեղծվելու էր «Ալեհավաքների չափման պետական էտալոնային կենտրոն»<sup>420</sup>: Դեռևս 1965 թ. նոյեմբերի 29-ի որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը Օրգով գյուղում ինստիտուտին հատկացրել էր 50 հեկտար տարածք՝ կենտրոնը կառուցելու նպատակով: Շինարարության նախագիծը և նախահաշվային արժեքը, որը կազմում էր 4842,7 հազ. ռուբլի, հաստատվեց ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի 1967 թ. ապրիլի 18-ի թիվ 249 կարգադրությամբ<sup>421</sup>:

Համալիրի կառուցումն ու շահագործումը խորհրդային երկրի համար ունեցավ ժողովնտեսական և ռազմապաշտպանական կարևոր նշանակություն, այստեղ տեղադրված էին գերձգրիտ

<sup>418</sup> Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, էջ 370-371: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 48, ք. 69-70:

<sup>419</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 208-209:

<sup>420</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 14, ք. 50-53:

<sup>421</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 22, ք. 100:

ալեհավաքների (ոսկեգօծված հայելիներով) աշխարհում առաջին էտալոնները: Դրանք խնամքով օգտագործելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումով արգելվում էր փոշոտող և ծխացող որևէ օբյեկտի կառուցումը կենտրոնից մինչև 5 կմ տրամագծով<sup>422</sup>:

1972 թ. Երևանում կազմակերպվեց ՌԶԳՀԻ-ի «Ալիք» փորձարարական գործարանը: Այստեղ 1972–1973 թթ. ստեղծվեց «Ուրալ» բեռնատար մեքենայի վրա շարժական կատարմամբ «Օրնամենտ» համալիրը՝ հրթիռային և ինքնաթիռային ալեհավաքների բնութագրերը չափելու համար: Ռադիոտեխնիկական տարբեր համակարգերում, այդ թվում ռազմական, ներդնելու համար ինստիտուտում մշակվեցին և ստեղծվեցին «Լուչ», «Յաչեյկա», «Կեդր», «Ձենկեր» և այլ, թվով ավելի քան 45 տեսակի համալիրներ, հաստատուն և շարժական կատարմամբ ռադիոտեղորոշումային կայաններ: Ինստիտուտի հաջողությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին<sup>423</sup>:

Ընդհանուր առմամբ՝ խորհրդային տարիներին ՌԶԳՀԻ-ում իրականացվել են ռազմապաշտպանական ոլորտի համալիր աշխատանքներ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի, ԽՍՀՄ պաշտպանության, պաշտպանական արդյունաբերության, ընդհանուր մեքենաշինության, ռադիոարդյունաբերության, ավիացիոն արդյունաբերության նախարարությունների պատվերներով: Արտադրանքի հիմնական տեսակներն էին. ռադիոտեղորոշումային համակարգերի համար տարբեր տիպի ավտոմատ չափիչ սարքերի համալիրներ, կառավարման ԿԱՀ-եր և այլն: Ռազմական նպատակներով ինստիտուտի արտադրանքի կշիռը միջինում 90 % էր<sup>424</sup>:

<sup>422</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 228, թ. 78–79:

<sup>423</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, էջ 208–211:

<sup>424</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, գ. 620, թ. 187:

1974 թ. ՀԽՍՀ ԳԱ-ի և ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության համատեղ որոշմամբ «ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ունեցող ռադիոսարքեր ստեղծելու նպատակով», Աշտարակում կազմակերպվում է «Կոմետա» ԿԳՀԻ-ի հայաստանյան մասնաճյուղը՝ փ/ա-8675 ծածկագրով: Հայաստանի կառավարության 1977 թ. հուլիսի 7-ի որոշմամբ մասնաճյուղի համար սեփական լաբորատոր և արտադրական մասնաշենքեր կառուցելու նպատակով Երևանի Շահումյանի անվան շրջանում հատկացվում է 9 հեկտար տարածք<sup>425</sup>: Սեկ այլ որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հնարավոր է համարում «Կոմետա» ԿԳՀԻ-ին 10 տարի ժամկետով վարձակալությամբ հանձնել 50 հեկտար տարածք Երևանի ֆիզիկայի ինստիտուտի «Արագած» բարձրլեռնային կայանի տարածքում: Նման խնդրանքով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանին 1978 թ. հունիսի 4-ի նամակով դիմել էր ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Պ. Պլեշակովը: Հիմնավորելով խնդրանքը՝ նախարարը հայտնում է, որ ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1976 թ. օգոստոսի 20-ի որոշմամբ ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության «Կոմետա» ԿԳՀԻ-ին հանձնարարվել է կատարել գիտահետազոտական աշխատանքներ երկրի արհեստական արբանյակների ուղեծրերի պարամետրերի չափման ճշգրիտ սարքավորումներ ստեղծելու համար: Իսկ այդ նպատակով կատարվելիք փորձարկումները հնարավոր է իրականացնել միայն ծովի մակերևույթից 2500–3000 մետր բարձրության վրա<sup>426</sup>:

1984 թ. մարտի 28-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդ ուղղված նամակում Պ. Պլեշակովը, որը նախօրոք ստացել էր ՀԽՍՀ կառավարության համաձայնությունը, հայաստանյան մասնաճյուղի աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով խնդրում է թույլատրել 1985–1987 թթ. Երևանում կա-

<sup>425</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 200, թ. 89–92:

<sup>426</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 36–38:

ռուցել «Կոմետա» ԿԳՉԻ-ի մասնաճյուղի ինժեներալաբորատոր  
նոր մասնաշենք<sup>427</sup>: ԽՍՀՄ կառավարությունը ոչ միայն դրական է  
արձագանքում խնդրանքին, այլև ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նա-  
խարարների խորհրդի 1986 թ. ապրիլի 30-ի որոշումով Երևանի  
«Կոմետա» մասնաճյուղը հաստատում է որպես ԽՍՀՄ-ում գլխա-  
մասային ձեռնարկություն: Մասնաճյուղի ինժեներալաբորատոր  
մասնաշենքի շինարարությունը, սակայն, «ընթանում է ծայրահեղ  
անբավարար տեմպերով, չէին կատարվում շինարարական կազ-  
մակերպությունների 1986 թ. պլանային առաջադրանքները»: ՀԿԿ  
Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին 1988 թ. փետր-  
վարի 12-ին ուղղված նամակում այդ մասին հայտնում է ԽՍՀՄ  
ռադիոարդյունաբերության նախարար Վ. Շիմկոն: Նախարարը  
խնդրում է հանձնարարել հանրապետության շինկազմակերպու-  
թյուններին արմատապես փոխել վերաբերմունքը «Կոմետա» մաս-  
նաճյուղի մասնաշենքի կառուցման հարցում և ապահովել պլա-  
նում նշված առաջադրանքների անվերապահ կատարումը: Ի պա-  
տասխան՝ ՀԿԿ Կենտկոմի պաշտպանական արդյունաբերության  
բաժնի վարիչ Ռ. Ստեփանյանը 1988 թ. փետրվարի 19-ին ՀԿԿ  
Կենտկոմ և Վ. Շիմկոյին ուղղված գրությունում հաստատում է մաս-  
նաշենքի կառուցման 1985-1987 թթ. պլանի տապալումը: Մի շարք  
պատճառների թվում նշելով նաև շինարարական աշխատանքների  
թերի և ոչ ժամանակին ֆինանսավորելու մասին՝ Ռ. Ստեփանյանը  
վստահեցնում է, որ կծեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցները  
շինարարությունը ժամանակին ավարտելու համար<sup>428</sup>:

Խորհրդային տարիներին «Կոմետա» ԿԳՉԻ-ի հայաստանյան  
մասնաճյուղում մշակվեցին և պատրաստվեցին ռազմապաշտպա-  
նական կարևոր կիրառություն ունեցող ռադիոսարքեր՝ սուզանա-  
վեր հայտնաբերելու համար բարձր զգայնությամբ բազմաճառա-  
գայթային համակարգեր: Դրանք հետագայում կիրառվեցին նաև

<sup>427</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 411, թ. 45-46:

<sup>428</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 87, զ. 6, թ. 23-25:

ռազմական ինքնաթիռներում և տիեզերական համակարգերի լրա-  
կազմերում<sup>429</sup>:

Տիեզերագիտական հետազոտությունների բնագավառի առա-  
ջատար կազմակերպություններից էր, ինչպես նշել ենք, «Աստրո»  
ԳԱՄ-ը: Վերջինիս կազմում 1976 թ. կազմակերպվեց «Օրբիտա»  
գործարանը<sup>430</sup>: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհր-  
դի 1975 թ. ապրիլի 16-ի որոշմամբ նախատեսվում էր 1977-1981  
թթ. ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության  
պատվերով «Աստրո» գիտաարտադրական միավորման համար  
ինժեներալաբորատոր փորձարարական մասնաշենքի, նաև՝ հան-  
րապետության ոչ մեծ քաղաքներում, օպտիկամեխանիկական ար-  
տադրամասերի և բացառիկ մաքուր ապակու արտադրամասի շի-  
նարարությունը: Ի զարգացումն նշվածի՝ ԽՄԿԿ Կենտկոմի և  
ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1980 թ. ապրիլի 24-ի որոշմամբ  
ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարությունն  
առաջադրանք է ստանում 1983-1985 թթ. ՀԽՍՀ Աբովյանի շրջանի  
Ջրվեժ ավանում իրականացնելու «Աստրո» գիտաարտադրական  
միավորման համար նախատեսված ինժեներալաբորատոր և ար-  
տադրական մասնաշենքերի 20 հազ. քմ տարածքով շինարարու-  
թյունը: 1988-1992 թթ. Ջրվեժում նախատեսվում է իրականացնել  
«Աստրո» ԳԱՄ-ի նաև երրորդ հերթի շինարարությունը՝ 30 հազ. քմ  
տարածքի վրա. դրա մասին 1985 թ. փետրվարի 4-ի գրությամբ  
Հայաստանի իշխանություններին տեղեկացնում էր ԽՍՀՄ պաշտ-  
պանական արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Կուրու-  
շինը<sup>431</sup>: Խորհրդային տարիներին «Աստրո» գիտաարտադրական  
միավորումում մշակվեցին և ստեղծվեցին տիեզերական տարածքը  
հսկող տարբեր սարքեր և համակարգեր:

Ռադիոէլեկտրոնային սարքերն առավել փոքրածավալ դարձ-  
նելու և միկրոէլեկտրոնային մոդուլներ ստեղծելու աշխատանք-

<sup>429</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, զ. 411, թ. 45-46:

<sup>430</sup> Տե՛ս նույն տեղում, զ. 186, թ. 23:

<sup>431</sup> Տե՛ս նույն տեղում, զ. 235, թ. 144-147, զ. 233, թ. 146, զ. 411, թ. 37, 39, 41:

ների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարար Է. Պերվիշինի 1978 թ. մայիսի 22-ի հրամանով 1978 թ. հունիսի 1-ին Երևանում՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համաձայնությամբ և նրա կողմից հատկացված արտադրական տարածքում, ստեղծվում է Մոսկվայի ռադիոկապի ԳՀԻ-ի հայաստանյան բաժանմունքը: Մոսկվայի ռադիոկապի ԳՀԻ-ի տնօրեն Ա. Բիլենկոյին հանձնարարվում է մինչև 1978 թ. սեպտեմբերի 30-ը ներկայացնել առաջարկություններ շինարարության, բաժանմունքը սարքավորումներով հագեցնելու և զարգացնելու հեռակարների մասին<sup>432</sup>: Մոսկվայի ռադիոկապի ԳՀԻ-ի Երևանի մասնաճյուղում խորհրդային տարիներին ռազմապաշտպանական աշխատանքներ իրականացվեցին փորձարարակոնստրուկտորական 7 թեմաներով (ժածկագրերը՝ «Հիբրիդ-322», «Հիբրիդ-321», «Հիբրիդ-317», «Արկոն», «Պրոսվետ», «Կոնտուր-Ե», «Սերվիս-5»): Մշակված սարքերը հիմնականում ներդրվեցին ռազմական և տիեզերական կապի միջոցներում: Ընդհանուր աշխատանքների մեջ ռազմապաշտպանական ուղղվածության աշխատանքները կազմել են շուրջ 30 %<sup>433</sup>:

ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության «Ալմագ» կենտրոնական կոնստրուկտորական բյուրոյի և «Ֆագոտրոն» գիտաարտադրական միավորման պատվերներով 1970-1980-ական թթ. մեծ ծավալների աշխատանքներ են իրականացվել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում: Խորհրդային ռազմական նորագույն տեխնիկայի և տիեզերական ապարատների համար գերզգայուն ռադիոընդունիչ սարքեր ստեղծելու, ԷՋՄ-ների և ԿԱՀ-երի մասերն ու հանգույցները կատարելագործելու, դրանք առավել փոքրածավալ դարձնելու նպատակով ինստիտուտում կազմակերպվեց միջճյուղային հատուկ բաժին: Այստեղ մշակված «Մխիթար» տիպի կենտրոնական կառավարման վահա-

<sup>432</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 200, թ. 34-35:

<sup>433</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 154-155:

նակի շարային արտադրությունը կազմակերպելու համար Գորիսում ստեղծվելու էր հատուկ ձեռնարկություն<sup>434</sup>:

1985-1991 թթ. ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակվել և հանձնվել են շահագործման տարբեր հաճախականություններով ռադիոչափիչ սարքերի համակարգեր, որոնք օգտագործվեցին խորհրդային տիեզերական և հատուկ կապի միջոցներում: Դրանցից «Չկար» համակարգը կիրառվում էր հակառակորդի շարժվող տրանսպորտային միջոցները հայտնաբերելու համար: Ինստիտուտի ընդհանուր աշխատանքների մեջ ռազմապաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքների ծավալը խորհրդային տարիներին կազմել է 75 %<sup>435</sup>:

Ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների պատվերներով լազերային համակարգերի մշակումներ, բարձր ճշտության սարքեր և համակարգեր են պատրաստվել նաև ԽՍՀՄ Օպտիկաֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղում կազմակերպված հատուկ կոնստրուկտորական բյուրոյում: Այդ գերձշգրիտ սարքերի միջոցով հնարավոր էր հայտնաբերել Երկիր մոլորակի մակերեսին տեղի ունեցող պայթյունների ստույգ կոորդինատները<sup>436</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1976-1982 թթ. ընդունած մի շարք որոշումներով ԵՊՀ-ի խտացված միջավայրի ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում հետազոտություններ են իրականացվել քվանտային էլեկտրոնիկայի մեջ օգտագործվող բյուրեղների աճեցման ուղղությամբ: Հետազոտությունների արդյունքում ինստիտուտի հատուկ կոնստրուկտորական բյուրոյում ստեղծվեցին նոր նյութեր և էլեմենտներ, լազերներ և լազերային համակարգեր: Աշխատանքների պատվիրատուներն էին ԽՍՀՄ

<sup>434</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 367, թ. 23-25:

<sup>435</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 196-197:

<sup>436</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 206-207:

տարբեր քաղաքներում տեղակայված փոստային արկղերը՝ Պ-6324, Ա-7023 և Գ-4097 (Մոսկվա), Ա-1561 (Նովոգորոդ), Պ-6634 (Սվերդլովսկ), Գ-4817 (Բոգոդիբսկ), Ա-7797 (Սուխում), Ա-7162 և Պ-6681 (Լենինգրադ) ձեռնարկությունները, Լենինգրադի պետական օպտիկական ինստիտուտը, Մոսկվայի ատոմային էներգիայի ինստիտուտը և այլն<sup>437</sup>։

1970-ական թթ. վերջերին ԽՍՀՄ կառավարության կողմից Խորհրդային Հայաստանը ստացել էր ռազմապաշտպանական կարևոր նշանակություն ունեցող հերթական առաջադրանքը։ 1979 թ. ամռանը ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված համատեղ նամակում ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Յու. Անդրոպովը, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, ԽՍՀՄ էլեկտրաարդյունաբերության նախարար Ա. Շոկինը նշում են, որ ժամանակակից տեխնիկական միջոցների պատրաստման գործում հայրենական գիտության նվաճումները, մասնավորապես, որակական բարձր հատկանիշներով նորագույն ՄԷՀՄ-ների մշակումները, նախադրյալներ են ստեղծել վերջիններիս օգտագործմամբ ստեղծելու բարձր հուսալիությամբ ավտոմատացված ազդանշանային ռադիոտեղորոշումային համակարգեր՝ ԽՍՀՄ պետական սահմանները հուսալի պահպանելու համար և սահմանախախտներին հայտնաբերելու ուղղությամբ։ Ի զարգացումն ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1976 թ. ապրիլի 29-ի որոշման, ՄԷՀՄ-ների հիմքի վրա բարձր հուսալիության ազդանշանային ռադիոտեղորոշումային համակարգերի օգտագործմամբ պետական սահմանների պահպանությունն ապահովելու համար, նամակագիրները նպատակահարմար են համարում դրանց նախագծումն ու ստեղծումն իրականացնել նման աշխատանքների մեծ փորձ կուտակած ՀԽՍՀ գիտաարտադրական միավորումներում։ Առաջարկվում է սահմանների ռադիոտեղորոշումային պահպանության նորագույն միջոցներով առաջին հերթին հագեցնել խորհրդաթուրքական, խորհրդաիրանական,

<sup>437</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 367, թ. 90-91։

Մակ. խորհրդաչինական պետական սահմանների հույժ կարևոր տեղամասերը։

Հավանություն տալով առաջարկությանը՝ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1979 թ. օգոստոսի կեսերին ընդունում է «ԽՍՀՄ պետական սահմանների պահպանությունը բարձր հուսալիությամբ ապահովելու նպատակով ՄԷՀՄ-ների օգտագործմամբ արդյունավետ միջոցներ ստեղծելու մասին» որոշումը։ Ըստ այդմ՝ ՀԽՍՀ գիտաարտադրական ձեռնարկություններին հանձնարարվում է ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ կնքված համաձայնագրերի հիման վրա կազմակերպել պետական սահմանների պահպանման տեխնիկական միջոցների արտադրություն։ Որպես գլխավոր կատարող հաստատվում է ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության «Պոզիստոր» արտադրական միավորումը, որտեղ ստեղծվելու էր հատուկ կոնստրուկտորական բյուրո<sup>438</sup>։

ԽՍՀՄ պետական սահմանները պահպանելու համար տեխնիկական նորագույն միջոցներ ստեղծելու և դրանց արտադրությունը կազմակերպելու համար համագործակցության առաջարկով 1979 թ. օգոստոսի 27-ին ՀԿԿ Կենտկոմ և ՀԽՍՀ կառավարություն է դիմում ԽՍՀՄ ՊԱԿ-ի սահմանապահ զորքերի գլխավոր վարչության պետ Ա. Մատրոսովը։ ԽՍՀՄ պետական սահմանների պահպանումը բարձր արդյունավետությամբ ապահովելու համար ՄԷՀՄ-ների օգտագործմամբ տեխնիկական միջոցների ստեղծման աշխատանքների ծրագրով նախատեսվում էր 1980-1983 թթ. իրականացնել մի շարք աշխատանքներ, այդ թվում գիտահետազոտական և փորձարարականստրուկտորական։

Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերի արդյունքում «Պոզիստոր» արտադրական միավորումում, Մակ «Գրանիտ», «Աստրո» և այլ ձեռնարկություններում ու մասնագիտացված կոնստրուկտորական բյուրոներում աշխույժ աշխատանքներ են ծավալվում. շուտով մշակվում և պատրաստվում է հեռահար դե-

<sup>438</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 226, թ. 23-26։

կավարմամբ ավտոմատացված «Կրեդո» ռադիոտեղորոշումային կայանը՝ վրագետնյա և ստորջրյա նպատակային շարժումները հայտնաբերելու համար: Մշակվում է օպտիկահեռուստատեսային դիտարկման համակարգ, որը հսկելու էր սահմանապահ ուղեկալի տարածքը օրվա լուսավոր ժամանակ, նաև՝ սահմանախախտներին հայտնաբերելու համար ինֆրակարմիր ազդանշանային սարք և այլն: Արդեն 1981 թ. ամռանը համակարգերը փորձարկվում են խորհրդաթուրքական և խորհրդաչինական պետական սահմանի պահպանման որոշակի հատվածներում: Փորձարկումների շնորհիվ «Էլեկտրոնիկա ՊՎ-2» ծածկագրով համակարգը կատարելագործվում է և դրվում շարային արտադրության<sup>439</sup>: Հայաստանում իրականացված աշխատանքներն արժանանում են ԽՍՀՄ ՊԱԿ-ի սահմանապահ գործերի պետի առաջին տեղակալ Վ. Գուրյանովի բարձր գնահատականին<sup>440</sup>:

1970–1980-ական թթ. խորհրդային ՌԱՀ-ի համակարգում ներգրավված էին հանրապետության գիտության նաև այլ ուղղությունները՝ քիմիան, միկրոկենսաբանությունը, դեղագիտությունը և այլն:

1970 թ. Հայաստանի ԳԱ ընդհանուր անօրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայում կազմակերպվեց ԽՍՀՄ էլեկտրոնային վակուումային ապակու գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղ: Այստեղ կարճ ժամանակահատվածում հաջողությամբ իրականացվեցին ժողտնտեսական և ռազմապաշտպանական խոշոր նշանակություն ունեցող տասը կարևոր աշխատանքներ, կազմակերպվեց հատուկ նյութերի արտադրությունը<sup>441</sup>:

ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1970 թ. սեպտեմբերի 1-ի որոշումով ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ռազմաբժշկագիտական կենտրոնական վարչության պատվերով ՀԽՍՀ ԳԱ Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քի-

<sup>439</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 26ա–29:

<sup>440</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 19:

<sup>441</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 137, ք. 45:

միայի ինստիտուտում իրականացվեցին հետազոտություններ օրգանական թունավորող նյութերից ԽՍՀՄ ԶՈՒ անձնակազմի և բնակչության պաշտպանվածության ապահովման նպատակով: Վարչության պատվերով ինստիտուտը 1971–1972 թթ. համագործակցում էր Լատվիայի ԳԱ օրգանական սինթեզի ինստիտուտի հետ դեղագործական «Տոնուս–ԼՍՏ–Ն» միջոցներ ստեղծելու գործում: Դրանք միտված էին արտակարգ պայմաններում մարտական գործողությունների ժամանակ բարձրացնել զինվորների օրգանիզմի դիմադրողականությունը, ապահովել անձնակազմի ռազմունակության երկարատև պահպանումը և այլն<sup>442</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1970 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ ինստիտուտում հետազոտական աշխատանքներ ծավալվեցին «Օբլակո–ԱՐՄ–Ն» թեմայի շրջանակներում: Ինստիտուտը կատարում էր նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարարության առաջադրանքներն ու պատվերները<sup>443</sup>:

Ի կատարումն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1976 թ. մարտի 16-ի՝ «Երկրի պաշտպանության համար 1976–1980 թթ. հիմնարար և որոնողական աշխատանքների հնգամյա պլանի մասին» որոշման՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1976 թ. մայիսի 18-ին հանձնարարում են ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտին հետազոտություններ իրականացնել խորհրդային գործերին և բնակչությանը միջուկային, քիմիական և բիոլոգիական զենքերից պաշտպանելու համար բժշկական միջոցների կատարելագործման ուղղությամբ<sup>444</sup>:

Խորհրդային Հայաստանում կազմակերպվել և գործել է Ա. Մալինինի անվան ԽՍՀՄ նյութաբանության գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը: Այստեղ ռազմապաշտպանա-

<sup>442</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 103, գ. 11, ք. 1–10:

<sup>443</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 181, գ. 76, ք. 1:

<sup>444</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 126, գ. 17, ք. 23–25:

կան նպատակներով արտադրվել է հատուկ ապակեփոշի, որն օգտագործվել է կոնդենսատորներ, ինտեգրալ սխեմաներ և միկրոէլեկտրոնիկայի այլ սարքեր պատրաստելու համար: Արտադրանքն առաքվել է Ռուսաստան. Սարատովի՝ «Ռեֆլեկտոր», Ոյազանի՝ «Պլազմա», Լենինգրադի՝ «Պրիբոր», Ուխտայի՝ «Պրոգրես», Գրոզնու՝ «Օրգտեխնիկա», Ստավրոպոլի՝ «Անալոգ», Բելառուս. Բորիսովի՝ «Էկրան», Ուկրաինա. Լվովի մարզի Դրոբիչ քաղաքի՝ «Գրանիտ» գործարաններ: Խորհրդային տարիներին Ա. Մալինինի անվան Նյութաբանության գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղի ընդհանուր արտադրանքի ծավալում ռազմապաշտպանական արտադրանքը կազմել է շուրջ 30 %<sup>445</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1979 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 347 որոշմամբ ՀԽՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտում պաշտպանական արդյունաբերության ճյուղերի համար կազմակերպվել է ոչ մետաղական նյութերի առաջնային ատեստացիոն կենտրոն: Այստեղ աշխատանքներ են իրականացվել խորհրդային «Բուրան» առաջին բազմակի օգտագործմամբ համակարգի համար: Դրանք զարգացնելու նպատակով նախատեսվում էր Աբովյանում կառուցել Միկրոբիոլոգիայի ինստիտուտի մասնաճյուղ: Այդ մասին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանին 1983 թ. հունվարի 12-ի գրությամբ հայտնում էր ԽՍՀՄ ԳԱ-ին առընթեր սինթետիկ նյութերի գիտական խորհրդի նախագահ, Լենինյան մրցանակի դափնեկիր ակադեմիկոս Ն. Ենիկոլոպովը<sup>446</sup>:

Խորհրդային տարիներին ինստիտուտում կատարվել են թեմաներ և փորձարկումներ ԽՍՀՄ ընդհանուր մեքենաշինության նախարարության «Էներգիա», ԽՍՀՄ ավիացիոն նախարարության «Մոլնիա» գիտաարտադրական միավորումների համար: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով ուսումնասիր-

<sup>445</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 160-161:

<sup>446</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 367, թ. 12:

վել են խորհրդային ռազմաօդային ուժերի տեխնիկայի և սպառազինության պահպանման ու շահագործման ընթացքում ծերացման և բիոլոգիական վնասվածքների բնույթը, մշակվել այդ գործընթացները կանխելու և դրանցից ռազմական տեխնիկան պաշտպանելու արդյունավետ միջոցներ<sup>447</sup>:

1980-ական թթ. կեսերին Հայաստանում ստեղծվեցին խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրը սպասարկող գիտահետազոտական և գիտաարտադրական նոր կազմակերպություններ: Այսպես, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի փոխնախագահ Լ. Գորշկովին 1985 թ. փետրվարի 8-ին ուղղված գրությունում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը՝ նկատի ունենալով հանրապետությունում հաշվիչ տեխնիկայի մշակման և արտադրության գծով, այդ թվում բազմակողմանի և հատուկ ԷՋՄ-ների ու ԿԱՀ-երի, կուտակված մեծ փորձն ու նշանակալի նվաճումները, առաջարկում է Երևանում ստեղծել ԽՍՀՄ ավտոմատացված սարքերի ԳՀԻ-ի մասնաճյուղ՝ փորձարարական գործարանով: Հայտնելով ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության, ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համապատասխան որոշման մասին, Ֆ. Սարգսյանը խնդրում է ցուցաբերել աջակցություն: Հաշվի առնելով ԽՍՀՄ պաշտպանության համար նման աշխատանքների անչափ կարևորությունը, հանձնաժողովը չի առարկում հանրապետությունում մասնաճյուղի (փորձարարական գործարանով) կազմակերպմանը: Այդ մասին 1985 թ. մարտի 6-ին հայտնում է Լ. Գորշկովը<sup>448</sup>:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարար Ի. Սիլակի 1985 թ. մարտի 15-ի հրամանով Երևանում կազմակերպվում է «Ավիակոնպլեքս» («Ավիահամալիր») հայկական արտադրական միավորման «Սիգնալ» փորձարարական ստրուկտուրական բյու-

<sup>447</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 202:

<sup>448</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 443, թ. 52-53:

րոն<sup>449</sup>: Խորհրդային տարիներին այստեղ մշակվել են տարբեր էլեկտրական սարքեր, ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական հատուկ տեխնիկայի համար, այդ թվում ֆիքսատորներ, լուսատուներ, «Տու-204» ինքնաթիռների համար կենսաապահովման տարբեր մասեր և այլն<sup>450</sup>:

Երևանում հիմնված ԽՍՀՄ նավաշինության նախարարության Մոսկվայի ԿԳՀԻ-ի «Ալֆա» մասնաճյուղը մասնագիտացել էր ԽՍՀՄ ռազմածովային նավատորմի համար հաշվիչ տեխնիկայի սարքերի և համակարգերի մշակումների մեջ: Այստեղ ստեղծվել են սուզանավերի հրամանատարներին և անձնակազմին վարժեցնելու համար տակտիկական վարժասարքեր՝ մարզիչ-նմանարկիչներ, և այլն<sup>451</sup>:

ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1987 թ. օգոստոսի 3-ի որոշումով Երևանում կազմակերպվեց ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարարության «Վոլնա» գիտաարտադրական միավորման մասնաճյուղը: Այստեղ մինչև 1991 թ. իրականացվեցին ռազմապաշտպանական նշանակության «ՄՍ-21» համակարգի ստեղծման «հույժ գաղտնի» գիտահետազոտական աշխատանքներ: Դրանք այնքան գաղտնի էին, որ մասնաճյուղի համար լաբորատորարտադրական և փորձարարական մասնաշենքերի շինարարության և վերակառուցման մասին ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշման մեջ հատուկ նշվում է, որ փաստաթղթերում «ՄՍ-21» համակարգի իրական անվանումը և նշանակությունը ցույց տալը խստիվ արգելված է<sup>452</sup>:

ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության հատուկ հանձնարարությունները կատարելու նպատակով նախարարի 1987 թ. օգոստոսի 7-ի հրամանով Գառնիում ստեղծվում է «Գրանիտ» հատուկ կոնստրուկտորական բյուրոյի մասնաճյուղ՝

<sup>449</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 61-62:

<sup>450</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 204-205:

<sup>451</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 675, թ. 60-67<sup>ա</sup>:

<sup>452</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 126, գ. 28, թ. 54-59, նաև՝ ֆ. 113, գ. 181, գ. 620, թ. 175:

մթնոլորտից դուրս գտնվող աստղագիտական և աստղաֆիզիկական հետազոտությունների արդյունքները մշակելու համար հատուկ սարքեր ստեղծելու նպատակով<sup>453</sup>: ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության հետ համատեղ «Գրանիտ» հատուկ կոնստրուկտորական բյուրոյում խորհրդային վերջին տարիներին իրականացվեցին «Աշոտ» անվանումով ուղեծրային հեռադիտակ ստեղծելու նախագծային մշակումներ<sup>454</sup>:

ԽՍՀՄ-ի մայրամուտին Հայաստանում գործում էին նաև մի շարք այլ գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական ինստիտուտներ և կազմակերպություններ, գիտաարտադրական միավորումներ, որտեղ իրականացվում էին ռազմապաշտպանական նշանակության կարևոր աշխատանքներ: Նշենք դրանցից մի քանիսը. Համամիութենական էլեկտրատեխնիկական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ, Ուժային կոնդենսատորաշինության համամիութենական գիտահետազոտական նախագծակոնստրուկտորական և տեխնոլոգիական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ, Լենինականի «Մագնոն» հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրո, ԽՍՀՄ էլեկտրոնային նյութերի գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ, ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության Երևանի պետական նախագծային ինստիտուտ, Սինսկի գիտահետազոտական սարքաշինական ինստիտուտի Երևանի բաժանմունք, Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի լրակազմ էլեկտրասարքավորումների նախագծակոնստրուկտորական ինստիտուտ՝ փորձարարական գործարանով և այլն:

ՀԽՍՀ վիճակագրության պետկոմի 1988 թ. հունիսի 10-ի տվյալների համաձայն՝ հնգամյակի երկու տարիների ընթացքում և 1988 թ. առաջին եռամսյակում հանրապետությունում իրականացվել են ավելի քան 3000 գիտատեխնիկական միջոցառումներ գիտ-

<sup>453</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, գ. 482, թ. 84-88:

<sup>454</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 186:

ության և տեխնիկայի նորագույն նվաճումներն հանրապետության հատուկ ձեռնարկություններում արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ: Այդպես իրացվեց 46 նոր տեսակի արտադրանքի (որոնցից 33-ը՝ առաջին անգամ ԽՍՀՄ-ում) արտադրությունը, այդ թվում՝ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության ձեռնարկությունների գծով. համապատասխան՝ 8 և 5, Կապի արդյունաբերության նախարարության՝ 3 և 3, էլեկտրոնային արդյունաբերության նախարարության՝ 2 և 1, Պաշտպանական արդյունաբերության նախարարության՝ 6 և 4: Մասնավորապես Հայաստանում տեղակայված ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության փ/ա Բ-2369 ձեռնարկությունը 1986-1987 թթ. առաջինը երկրում իրացրեց էլեկտրոնային ստեղնաշարային հաշվիչ մեքենաների և միկրոպրոցեսորային կառավարման համասարքերի արտադրությունը, էլեկտրոնային արդյունաբերության նախարարության փ/ա Գ-4973 ձեռնարկությունը՝ էլեկտրական հատուկ չափիչ սարքերի և այլն: Ընդհանուր առմամբ՝ հանրապետությունում տեղակայված հատուկ ձեռնարկությունները 1987 թ. իրացրեցին և ԽՍՀՄ-ում առաջին անգամ թողարկեցին 176,5 մլն ռուբլու նոր արտադրանք<sup>455</sup>:

Այսպիսով, ակներև է, որ ռազմապաշտպանական նպատակներով էՀՄ-ների, ՄԷՀՄ-ների, ԿԱՀ-երի, ռադիոէլեկտրոնային և էլեկտրական հատուկ սարքերի, մասերի և հանգույցների, քիմիական, դեղագործական, կենսաբանական միջոցների և այլն, մշակման, ստեղծման և արտադրման ոլորտում Խորհրդային Հայաստանի, հայ գիտնականների և մասնագետների նվաճումները բացառիկ են և տպավորիչ: Չուր չէ, որ մեր հանրապետությունը ԽՍՀՄ-ում վաստակել էր Խորհրդային «Սիլիկոնային հովտի» ամուր համբավը:

<sup>455</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 42-44:

#### 4.2. Հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերությունը Խորհրդային վերջին տասնամյակներին

Խորհրդային Հայաստանում տեղակայված ԽՍՀՄ ՌԱՀ-ի էլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, ռադիոտեխնիկական, հաշվողական տեխնիկայի, սարքաշինական, քիմիական և այլ գործարաններն ու ձեռնարկությունները 1970-ական թթ. սկզբից շարունակեցին ապահովել հանրապետության արդյունաբերության զարգացման բարձր ցուցանիշները: Հայաստանում հիմնվեցին Խորհրդային ՌԱՀ-ը սպասարկող նոր ձեռնարկություններ և կազմակերպություններ: Արտադրական լրացուցիչ տարածքներ շահագործման հանձնվեցին Երևանի փ/ա Ա-7636 և փ/ա Պ-6283, Աբովյանի փ/ա Ա-1941, Լենինականի փ/ա Գ-4067 և այլ ձեռնարկություններում: Փ/ա Պ-6181 կազմակերպության ղեկավար Ռ. Թումանյանի կողմից 1974 թ. ապրիլի 12-ին ՀԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ Գ. Մարտիրոսյանին ուղղված գրությունից տեղեկանում ենք, որ 1974-1975 թթ. կազմակերպության ձեռնարկությունները պետք է մի քանի անգամ ավելացնեն Խորհրդային զենիթահրթիռային և ռադիոտեղորոշումային համակարգերի, տիեզերական տեխնիկայի սարքավորումների համար հույժ կարևոր պաշտպանական արտադրանքի՝ նոր սերնդի կիսահաղորդչային ինտեգրալ սխեմաների, ռադիոտեխնիկական իրերի, ԿԱՀ-երի, այլ հատուկ սարքավորումների թողարկումը<sup>456</sup>:

ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1971-1972 թթ. մի քանի որոշումներով Երևանում կազմակերպված փ/ա Բ-8361 ձեռնարկությունում աշխատանքներ են սկսվում Խորհրդային ռազմական միջոցների համար «Խոլոդ», «Կլիմատ», «Դուզովեչնոստ», «Նադյոժնոստ» պայմանական անվանումներով տարբեր

<sup>456</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 85, թ. 60:

հաճախականության հատուկ էլեկտրամագնիսական շարժիչների (նաև ծովային կատարմամբ) ստեղծման ուղղությամբ<sup>457</sup>։

ԽՍՀՄ ավտոմատացման միջոցների սարքաշինության և կառավարման համակարգերի նախարար Կ. Ռուդնիկի 1972 թ. մայիսի 18-ի հրամանով և դրան հետևած 344 Կենտկոմի բյուրոյի որոշումով էջմիածին քաղաքում գտնվող Երևանի էլեկտրաճշգրիտ սարքերի գործարանի մասնաճյուղի հիմքի վրա կազմակերպվում է պլաստմասային ապրանքների և էլեկտրոնային տեխնոմետրերի արտադրություն, ռադիոտեխնիկական իրերի արտադրամաս է հիմնվում շրջանի 3այթաղ բնակավայրում<sup>458</sup>։

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության ռազմաարդյունաբերական հանձնաժողովի 1972 թ. սեպտեմբերի 27-ի որոշմամբ Երևանի փորձարարական «Հիդրոհաղորդակ» գործարանը նշանակվում է գլխամասային ձեռնարկություն խորհրդային զենիթահրթիռային համակարգերի համար նախատեսված հիդրոպոմպերի արտադրության գծով<sup>459</sup>։

ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության նախարար Լ. Կոստանդովը 1974 թ. հունիսի 3-ին 3այթաղի իշխանություններին հայտնում է, որ ԽՍՀՄ Կենտկոմի կարգադրությամբ նախարարությունը քննարկել և պատրաստել է պաշտպանական ճյուղերի կարիքները հոգալու և ժողտնտեսության մեջ օգտագործելու համար ծայրահեղ անհրաժեշտ քիմեակտիվների և բացառիկ մաքուր նյութերի արտադրության զարգացման մասին որոշման նախագիծ։ Նախարարը նշում է, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևանի քիմեակտիվների գործարանում կազմակերպել օքսիթիլի և մաքուր մակերեսային ակտիվ նյութերի արտադրություն

<sup>457</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 73:

<sup>458</sup> Տե՛ս Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, էջ 187-188: Տե՛ս նաև՝ Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, էջ 248-249:

<sup>459</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 85, թ. 29:

նը, հավաստիացնում, որ նախատեսվող արտադրական փոքր հզորությունները չեն հանգեցնի մթնոլորտի և ջրերի աղտոտմանը<sup>460</sup>։

ԽՍՀՄ պաշտպանության և պաշտպանական արդյունաբերության նախարարությունների պատվերներով ռազմական նշանակության հույժ պատասխանատու արտադրություն էր կազմակերպված 3այթաղում տեղակայված փ/ա Ա-3082, փ/ա Ա-7561, փ/ա Բ-2369 ձեռնարկություններում<sup>461</sup>։ Հատուկ արտադրանք էր թողարկում Աբովյանի փ/ա Ա-1941 ձեռնարկությունը։ Վերջինիս ղեկավարը 1973 թ. մարտի 11-ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Գ. Արզումանյանին ահազանգում է, որ օդի բարձր աղտոտվածության պատճառով հաճախ ստիպված են լինում դադարեցնել ձեռնարկության առանձին արտադրամասերի աշխատանքը։ Ռ. Թումանյանը նշում է, որ տեխնիկական պահանջներից ելնելով ձեռնարկությունը պետք է գտնվի կանաչապատ վայրում, փոշոտ տարածքներից 1,5-2 կմ շառավղով հեռու, քանի որ հատուկ արտադրանքի մեջ փոշու հատիկն անգամ անորակ է դարձնում այն։ Թումանյանը խնդրում է դադարեցնել Ջրաբերի ճանապարհներով ավազով և խճաքարով բեռնված բեռնատար մեքենաների երթևեկությունը և նշում, որ խնդիրը կարող է կարգավորվել Երևան-Սևան նոր մայրուղու կառուցումով<sup>462</sup>։

ՀԽՍՀ տարածքում ռազմավարական նշանակության գլխավոր մայրուղիների և ճանապարհների վերանորոգման ու շինարարության, դրանց օգտագործման պատրաստվածությունը բարձրացնելու, հատուկ ժամանակներում հրթիռային և ռազմական այլ տեխնիկայի թողունակությունն ապահովելու խնդիրները մշտապես կարևորվել են հանրապետության իշխանությունների կողմից։ ՀԽՍՀ կառավարության 1972 թ. ապրիլի 20-ի որոշումներով և հանձնարարականներով 1972-1975 թթ. վերանորոգման աշխա-

<sup>460</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 54:

<sup>461</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, թ. 37, նաև՝ ֆ. 113, ց. 181, գ. 200, թ. 32, գ. 302, թ. 252:

<sup>462</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 75, թ. 3-4:

տանքներ էին իրականացվելու Տեղ-Գորիս ճանապարհի առանձին հատվածներում, Փամբակի լեռնանցքի 4 կիլոմետրանոց հատվածում, «Գայլի դարպասներ»-Ախբյորփի 17 կմ երկարությամբ լեռնանցքի և Ղարախաչի 5 կիլոմետրանոց լեռնանցքի հողային հատվածով ճանապարհները վերակառուցվելու էին ամուր ծածկույթով և այլն: Մինչև 60 տոննա բեռնատարողության էին ավելացվելու հանրապետության ռազմավարական նշանակություն ունեցող կամուրջները, հույժ կարևոր մայրուղիների և ճանապարհների որոշ հատվածներում տեղադրվելու էին հսկիչ անցագրային կետեր: «Հայգիպրոտրանս» և «Երևաննախագիծ» ինստիտուտներին հանձնարարվում է համատեղ մշակել և մեկամսյա ժամկետում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի քննարկմանը ներկայացնել Երևանի շրջանցիկ ավտոմայրուղիների շինարարության նախագծի տարբերակներ<sup>463</sup>:

Նշենք, որ ՀԽՍՀ հակաօդային պաշտպանությունն ապահովվելու նպատակով 1970-ական թթ. հանրապետություն ներմուծվեց մեծ քանակությամբ ռազմական նորագույն տեխնիկա և սպառազինություն: Հայաստանի տարածքում տեղակայված էր հակաօդային պաշտպանության N զորամասի զենիթահրթիռային N բրիգադը: Վերջինիս կազմի մեջ մտնում էր զենիթահրթիռային 9 դիվիզիոն, որոնցից 3-ը զինված էին հրթիռներով և իրականացնում էին մարտական հերթապահություն: Ձենիթահրթիռային բրիգադը համալրված էր № 75 և № 125 համակարգերով, որոնք համապատասխանաբար ներառում էին մինչև 70 և 50 կմ թռիչքի հեռավորությամբ մարտական հրթիռներ և ռադիոտեղորոշումային կայաններ: Մինչև 1988 թ. № 75 համակարգի հրթիռները զինված էին միջուկային մարտազինակներով<sup>464</sup>:

<sup>463</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 103, գ. 108, ք. 1:

<sup>464</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 641, ք. 141:

1973 թ. հոկտեմբերի 12-ին ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված գրությամբ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Պ. Անիսիմովը հայտնում էր, որ հանրապետությունում գործում են ԽՍՀՄ պաշտպանական, ավիացիոն, նավաշինության, միջին մեքենաշինության, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական արդյունաբերության տասնյակ գործարաններ, ձեռնարկություններ և կազմակերպություններ, մասնագիտացված և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ և այլն<sup>465</sup>:

ՀԽՍՀ Պետպլանի մեքենաշինության բաժնի վարիչ Խ. Տեր-Մխիթարյանի կողմից պատրաստված և ՀԿԿ Կենտկոմ ներկայացված տեղեկանքի համաձայն՝ միայն ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության ձեռնարկությունների գծով ՀԽՍՀ արտադրական նշանակության 1968-1974 թթ. փոխանցիկ շինարարության ցանկում ընդգրկված էին Երևանում կառուցվող փ/ա Ա-3908, Պ-6283, Պ-6402, Ա-1354, Ա-7651, Մ-5293, Ջրվեժում՝ փ/ա Բ-8744, Էջմիածնում՝ փ/ա Ա-7314, փ/ա Բ-8607, Աբովյանում՝ փ/ա Բ-2751 և Ա-1941, Լենինականում՝ փ/ա Գ-4067, Կամոյում՝ փ/ա Խ-5965, Ապարանում՝ փ/ա Գ-4130, փ/ա Պ-6242 ձեռնարկությունները<sup>466</sup>:

Սակայն Խորհրդային Հայաստանում հիմնված ոչ բոլոր ձեռնարկությունների և նոր արտադրամասերի շինարարության տեմպերն էին գոհացուցիչ: 1973 թ. սեպտեմբերի 10-ին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի Գլխավոր մոնտաժային վարչության և հատուկ շինարարական աշխատանքների կոլեգիայում լսվում է «1973 թ. արդյունաբերության հատուկ ճյուղերի կառույցների շինարարական աշխատանքների պլանների կատարման մասին»: Նշվում է, որ հանրապետության արդյունաբերության պաշտպանական ճյուղերի կառույցների՝ ԽՍՀՄ նավաշինության, ռադիո և էլեկտրոնա-

<sup>465</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 53, գ. 73, ք. 101:

<sup>466</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 7, ք. 131-135, 198:

յին արդյունաբերության նախարարությունների Երևանի «Էլեկտրոն» և «Ռելե», Ջրվեժի սարքաշինական, Աբովյանի «Իզմերիտել», Աբովյանի ռադիոմասերի և կիսահաղորդչային սարքերի, Դիլիջանի «Իմպուլս» և այլ ձեռնարկություններում ու գործարաններում թեև աշխատանքներ են տարվել նոր արտադրամասերը ժամանակին շահագործման հանձնելու ուղղությամբ, սակայն շինարարությունն ընթանում է ոչ բավարար տեմպերով: Առավել լարված էր վիճակը «Ռելե» գործարանի արտադրամասերի շինարարության ոլորտում, անբավարար էր «Էլեկտրոն» և Աբովյանի ռադիոմասերի ու կիսահաղորդչային սարքերի գործարանների արտադրամասերի շինարարության ընթացքը: Այստեղ մոնտաժային և հատուկ շինարարական աշխատանքները կասեցված էին տարբեր շինանյութերի և սարքավորումների բացակայության պատճառով: Հաշվի առնելով արդյունաբերության հատուկ ծյուղերի կառուցների ժամանակին շահագործման հանձնելու անչափ կարևորությունը, կոլեգիան որոշում է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցառումները շինարարությունն արագացնելու նպատակով: Պլանային առաջադրանքները տապալելու դեպքում շինարարության պատասխանատուներն անհատական պատասխանատվություն էին կրելու<sup>467</sup>:

ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1971 թ. մայիսի 26-ի թիվ 307 և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1971 թ. հունիսի 14-ի թիվ 468 որոշումների համաձայն՝ 1974 թ. Երևանում (Ջրվեժում) սկսվում է միութենական «Պրոմսվյազ» («Արդկապ») գործարանի նոր արտադրամասերի շինարարությունը: Այդ մասին գործարանի տնօրեն Օ. Ղամբարյանին և ԽՍՀՄ կապի նախարար Դ. Պսուրցևին 1974 թ. հուլիսի 22-ին հաղորդում էր ԽՍՀՄ պաշտպանության նախարարության թիվ 3902 ռազմական ներկայացուցչության ղեկավար փոխգնդապետ Սարգսյանը: Պարզվում է, որ գործարանին հարկավոր էին արտադրական նոր տարածքներ ԽՍՀՄ պաշտպանության

<sup>467</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 73, թ. 17-20:

և կապի նախարարությունների, նաև ԽՍՀՄ ՊԱԿ-ի աճող պահանջարկը «Տրեզուրեց-1» և «Տրեզուրեց-2» բարձր որակի ռադիոտեխնիկական սարքավորումներով բավարարելու համար<sup>468</sup>:

Ջրվեժի «Արդկապ» գործարանի հատուկ արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է ոչ միայն միութենական հանրապետություններում տեղակայված գործարաններ և ձեռնարկություններ, այլև Բուլղարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Թուրքիա, Մոնղոլիա, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Եմեն և այլ երկրներ<sup>469</sup>: Արտասահմանյան երկրներ էին առաքվում նաև հանրապետության մի շարք այլ ձեռնարկությունների արտադրանքը: Մասնավորապես Երևանի փ/ա Ա-7043 ձեռնարկությունը մատակարարումներ էր իրականացնում Բուլղարիա, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Իրաք, Իրան, Եգիպտոս, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Մոնղոլիա, Հնդկաստան, Ցեյլոն, Եմեն, Գվինեա և Կուբա<sup>470</sup>:

1970-ական թթ. սկզբից Ջրվեժ ավանն աստիճանաբար վերածվում է ռազմարդյունաբերական ձեռնարկությունների խոշոր հանգույցի: Վերջինս հրատապ էր դարձրել ձեռնարկությունների գործունեության զաղտնիության ռեժիմի ապահովման խնդիրը: Փ/ա Բ-8607 կազմակերպության ղեկավար Ռ. Քոչարյանը 1977 թ. մայիսի 20-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ, պատճենը՝ Նախարարների խորհրդին առընթեր ՊԱԿ-ի նախագահ Հ. Միխայելյանին, ուղղված նամակում հայտնում է, որ ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության կազմի մեջ փ/ա Բ-8408 ձեռնարկությունը Ջրվեժի հանգույցում իրականացնում է արտադրության ընդարձակում: Երբաղխորհրդի որոշմամբ տրամադրված հողատարածքը, սակայն, սահմանակից է նոր կառուցվող տաքսամոտորային մարդատար ավտոմեքենաների շարժակազմի հողատարածքին:

<sup>468</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 72:

<sup>469</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 55, թ. 48:

<sup>470</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 50:

Գաղտնի ձեռնարկությանը վերջինիս այդքան մոտ գտնվելը, – հուշում է Քոչարյանը, – խոչընդոտ է հրապարակման ոչ ենթակա հատուկ արտադրատեսակների արտադրման գաղտնիության պահպանման ռեժիմի համար: Քոչարյանը դա հիմնավորում է նրանով, որ գործունեության բնույթից ելնելով տաքսու վարորդները շփվում են հանրապետություն ժամանած խորհրդային և արտասահմանյան քաղաքացիների հետ և կարող են բացահայտել հարևանությամբ գտնվող ձեռնարկությունների արտադրանքի նշանակությունը: «Պետական գաղտնիքները պահպանելուն ուղղված միջոցառումների կատարելագործման մասին» ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման պահանջները կատարելու և պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումից խուսափելու համար Ռ. Քոչարյանը խնդրում է մարդատար տաքսուպարկի կառուցման համար տրամադրել մեկ այլ տարածք, իսկ վաղօրոք այդ նպատակի համար հատկացված հողատարածքը փոխանցել փ/ա Բ-8408 ձեռնարկությանը<sup>471</sup>:

Նշենք, որ խորհրդային Հայաստանի անվտանգության, հանրապետությունում տեղակայված ռազմապաշտպանական ուղորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գաղտնիության ռեժիմի պահպանման խնդիրները մշտապես գտնվել են իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այսպես, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի կողմից 1973 թ. հուլիսի 25-ին ԽՍԿԿ Կենտկոմ ուղղված գրությունում մասնավորապես նշվում է. «Վերջին տարիներին ուժգնացել է հակառակորդի հետախուզական հետաքրքրությունը ՀԽՍՀ պաշտպանական արդյունաբերության զարգացող ճյուղերի, գիտահետազոտական ինստիտուտների, հանրապետության ռազմական օբյեկտների նկատմամբ: Ձբոսաշրջության զարգացումը, արտասահմանյան երկրների հետ տնտեսական, գիտամշակութային կապերի զարգացումը առաջ է բերել օտարերկրացիների ներհոսքի շեշտակի ավելացում»: Նրանց մեջ

<sup>471</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 52:

բացահայտվում են հակառակորդի հետախույզներ և գործակալներ: Միաժամանակ ավելացել է թուրքիայից և Իրանից սահմանախախտների թիվը: Եռապատկվել են հանրապետության բնակիչների այցելությունները կապիտալիստական երկրներ: «Խորհրդային Հայաստանի դեմ պայքարում հակառակորդը սկսել է ավելի ակտիվ օգտագործել հայ ազգայնական դաշնակցություն կուսակցության թշնամական գործունեությունը: Օգտագործելով բոլոր հնարավոր ուղիները՝ վերջինս ուժեղացնում է իր վնասարար գործունեությունը»: Կենտրոնական իշխանություններին տեղեկացնելով, որ հանրապետության 44 շրջաններից միայն 13-ում են առկա ՊԱԿ-ի շրջանային ստորաբաժանումներ, և որ դրանք չկան անգամ թուրքիայի հետ սահմանային թափնի և Ախուրյանի շրջաններում, Քոչինյանը խնդրում է հակառակորդի վնասարար գործունեության դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով քննարկել թափնում, Ախուրյանում, Աբովյանում, Ալավերդիում և Երևանի 7 շրջաններում ՊԱԿ-ի նոր բաժանումներ կազմակերպելու, հանրապետական ՊԱԿ-ի հաստիքային կազմը 60 միավորով, այդ թվում 35 սպաներով, ավելացնելու հարցը<sup>472</sup>:

1973-1974 թթ. շահագործման են հանձնվում ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1970 թ. մայիսի 8-ի թիվ 253 որոշմամբ և ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարության 1970 թ. հուլիսի 30-ի թիվ 111 հրամանով Երևանում կազմակերպված ավտոմատացված կառավարման համակարգերի «Հրազդան» գործարանի առաջին հերթի շինարարության 38,0 հազ. քմ արտադրական տարածքները: Այստեղ թռչող ապարատների, ավիացիոն սարքերի շարային թողարկում է կազմակերպվում<sup>473</sup>:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարի տեղակալ Վ. Կազակովը 1974 թ. դեկտեմբերի 12-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Լ. Սմիրնովին ուղղված զեկուցագ-

<sup>472</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 53, գ. 73, թ. 22-23:

<sup>473</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, գ. 482, թ. 61-62:

րում նշում է, որ թեև Երևանի «Յրազդան» գործարանի շինարարությունն ընթանում է արագ տեմպերով, սակայն հաշվի առնելով մոտակա տարիներին հրթիռների ԿԱՅ-երի պահանջարկի կտրուկ աճը, գործարանի առաջին հերթի շինարարությունը չի կարող ապահովել արտադրանքի պահանջվող ծավալը: Ավիացիոն արդյունաբերության նախարարությունը խնդրում է թույլատրել գործարանի երկրորդ հերթի շինարարությունը գործարանի տարածքում<sup>474</sup>:

«Յրազդան» գործարանի նոր մասնաշենքերի շինարարության և արտադրության հետագա ընդլայնման ու զարգացման գործում գործարանին տեխնիկական մեծ օգնություն ցուցաբերեցին Սոսկվայի առաջին սարքաշինական, Չեբոկսարի սարքաշինական և Տամբովի «Էլեկտրասարք» գործարանները: «Յրազդան» գործարանի համար տեխնիկական սարքավորումներ էր մատակարարում Էջմիածնի սարքաշինական գործարանը<sup>475</sup>:

Հայաստանում ավիասարքաշինությունը զարգացնելու նպատակով ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարար Ի. Սիլվակի 1981 թ. ապրիլի 6-ի հրամանով Երևանի «Յրազդան» գործարանի փորձարարական-կոնստրուկտորական բյուրոն վերակազմավորվում է Երևանի «Սիզնալ» բյուրոյի, իսկ գործարանի 2-րդ արտադրամասը՝ էլեկտրական սարքերի արտադրության Երևանի «Սելենա» գործարանի: Նույն հրամանով Արտաշատում և Հոկտեմբերյանում կազմակերպվում են «Յրազդան» գործարանի մասնաճյուղեր, Չարենցավանում կազմակերպվում է «Միկրոպրոցեսոր» գործարանը<sup>476</sup>:

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության նախարարի 1983 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 625 հրամանով Երևանի «Յրազդան» գործարանի հիմքի վրա ստեղծվում է Հայաստանի «Ավիահամալիր» արտադրական միավորումը՝ արդիական ռազմական արտադրու-

<sup>474</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 85, ք. 123:

<sup>475</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 200, ք. 44-45:

<sup>476</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 302, ք. 76-77:

թյուն կազմակերպելու նպատակով<sup>477</sup>: ԽՍՀՄ փլուզման պահին «Ավիահամալիր» արտադրական միավորումն իր կազմի մեջ ուներ 6 գործարան և մի քանի մասնաճյուղեր: Միավորումը շուտով դարձավ առաջատար ձեռնարկություն միկրոէլեկտրոնիկայի, հաշվիչ տեխնիկայի, ռոբոտատեխնիկայի, ԿԱՅ-երի նախագծման և արտադրության բնագավառում<sup>478</sup>:

Ռադիոտեղորոշումային կայանների համար շարժական ԿԱՅ-երի արտադրություն կազմակերպվեց նաև ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1977 թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ վերակառուցված Յրազդանի լեռնաքիմիական կոմբինատում<sup>479</sup>: Վերջինիս բազայի հիման վրա 1978 թ. ստեղծվեց «Յրազդանմեքենա» արտադրական միավորումը, որին 1978-1980 թթ. հատկացվեց 107,8 հազ. քմ արտադրական տարածք, կազմավորվեց շուրջ 4000 աշխատողներով կոլեկտիվ: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Յրազդանմեքենա» միավորումը մասնակցել է ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծմանը: Այստեղ թողարկվել են ռադիոէլեկտրոնային սարքավորումներ հակաօդային պաշտպանության «ՕՍԱ», «ԿՈՒԲ», «Ս-75» զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանների համար, խորհրդային զինված ուժերի տեխնիկական միջոցների ապահովման համար շարժական և ստացիոնար կապի միջոցներ<sup>480</sup>:

«Յրազդանմեքենա» միավորման արտադրությունը պահանջում էր բացառիկ մաքրության միջավայր գործարանի բոլոր արտադրամասերում: Սակայն գործարանի հարևանությամբ գտնվող ցեմենտի արտադրությունից օդ արտանետվող ցեմենտի փոշին անհնարին էր դարձնում վակուումային հիգիենա պահանջող ժամա-

<sup>477</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 482, ք. 61-62:

<sup>478</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, ք. 29-30:

<sup>479</sup> Տե՛ս Саркисян А., Армяне – военные ученые, конструкторы, испытатели и производственники 20-го века, т. 2, Е., 2005, էջ 205-206:

<sup>480</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 660, ք. 207:

նակակից գերճշգրիտ և գերզգայուն ռադիոէլեկտրոնային սարքավորումների պատրաստումը: 1981 թ. մարտի 17-ին ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարար Լ. Սմիրնովին ուղղված նամակում ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Պ. Պլեշակովը նշում է, որ խնդիրը հարկ է լուծել ցեմենտի արտադրությունը Հրազդանից այլ վայր տեղափոխելու միջոցով: Նախարարն առաջարկում է արտադրությունը կենտրոնացնել հումքի ստացման հիմնական վայրում՝ Արարատ քաղաքում<sup>481</sup>:

Ռադիոէլեկտրոնային և ռադիոտեխնիկական իրեր են արտադրվել Հրազդանի «Կեչարք» արտադրական միավորման ձեռնարկություններում: Ընդհանուր արտադրանքի ծավալում պաշտպանական պատվերներն այստեղ կազմել են 29,6 %, արտադրանքն առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում տեղակայված տասնյակ գործարաններ<sup>482</sup>:

ԽՍՀՄ սարքաշինության, ավտոմատացման միջոցների և կառավարման համակարգերի նախարարության գծով օդային բարձիկներով և ստորջրյա թևերով նավերի ստեղծման և կառուցման միութենական ծրագրում էր ներգրավված ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարության Երևանի «Էլեկտրասարք» արտադրական միավորումը: Ծրագիրը մշակվել էր ԽՍՀՄ նավաշինության արդյունաբերության նախարարության և Ռազմածովային նավատորմի կողմից: Այդ նպատակով գործարանում իրականացվեցին արտադրական տարածքների վերակառուցման աշխատանքներ, 1978–1979 թթ. միավորումը պետք է «Դվին» տեսակի տեղեկատվական համակարգերի, «Գառնի» սարքերի և նավերի ղեկավարման համակարգերի թողարկում կազմակերպեր<sup>483</sup>:

«Էլեկտրասարք» հայկական արտադրական միավորման ձեռնարկությունների արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Լիտվայում, Էստոնիայում,

<sup>481</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 324, թ. 4–6:

<sup>482</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 164, գ. 641, թ. 104–105:

<sup>483</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 186, թ. 15–19:

Ղազախստանում տեղակայված տասնյակ նավաշինական գործարաններ<sup>484</sup>: Գործարանը միլիոլտմետրեր է մատակարարել նաև Մոսկվայի Կրեմլի հրապարակում գտնվող Վ. Լենինի դամբարանի համար<sup>485</sup>:

1970–1980-ական թթ. ռազմապաշտպանական արտադրության մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորումում, որը տարիների ընթացքում դարձավ ԽՍՀՄ ռադիոտեխնիկական խոշոր ձեռնարկություններից մեկը: Վերջինիս արտադրական մասնաճյուղերը գործում էին Հայաստանի տարբեր շրջաններում՝ Կիրովականում<sup>486</sup>, Լենինականում, Էջմիածնում, Աբովյանում, Բերդում, Գորիսում, Կապանում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Էլեկտրոն» միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել են մենաշնորհային արտադրանք՝ ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի ինքնաթիռների թռիչքները և դրանց անվտանգությունն ապահովող, երկրի ցամաքային և օդային սահմաններն ու ուղիները վերահսկող ռադիոտեղորոշումային կայանների կառավարման ավտոմատացված համակարգերը համալրող ռադիոէլեկտրոնային սարքավորումներ և մասեր<sup>487</sup>: Նշենք այդ համակարգերից մի քանիսը. ռազմական ավիացիայի ինքնաթիռների, այդ թվում ճակատային և կործանիչների, շարժական «Սպլավ» կառավարման ավտոմատացված համակարգ, ավիացիոն միավորումների «Դվին», նոր տիպի ավիակիրներում տեղադրվող ռազմածովային ավիացիայի «Գազոն», օդանավակայանների թռիչքների ու վայրէջքների «Ռուբեժ» և այլ ԿԱՀ-եր, օդային տեղաշարժերի ղեկավարման «Օկտավա» բաժանորդային կետ, ՀՕՊ-ի համակարգում ռադիոտեղորոշումային վաշտը կա-

<sup>484</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, թ. 166, գ. 641, թ. 82, 97–101:

<sup>485</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 85, թ. 78–79:

<sup>486</sup> Կիրովականի էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի «ԷՀՏ» գործարանը հանդիսանում էր ճակատային ավիացիայի ԿԱՀ-երի միակ արտադրողը ԽՍՀՄ-ում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, գ. 686, թ. 38):

<sup>487</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 181, գ. 620, թ. 179:

ռավարող «Պոլե-Ա» համալիր շարժական կետ՝ ցածր բարձրությամբ թռչող նպատակակետեր հայտնաբերելու և ուղեկցելու համար, տիեզերական թռչող ապարատների տվյալների մշակման «Կոմյոր» շարժական համակարգ, տվյալների հաղորդման ցանցում օգտագործվող «Սևան» համակարգ, հեռագրային-հեռախոսային ուղիների ավտոմատացված «Օստրով» կայաններ՝ զորքերի «Ցենտր» կառավարման ավտոմատացված համակարգի համար և այլն<sup>488</sup>: «Էլեկտրոն» արտադրական միավորման արտադրանքը խորհրդային տարիներին առաքվել է Մոսկվայում, Լենինգրադում, Սվերդլովսկում, Ջագորսկում, Ռյազանում, Պեմզայում, Տաշքենդում, Երևանում («Նեյտրոն», «Չրազդանմեքենա»), ԽՍՀՄ այլ քաղաքներում տեղակայված ռազմապաշտպանական արտադրանք թողարկող գործարաններ, գիտաարտադրական միավորումներ, գիտահետազոտական ինստիտուտներ, զորամասեր և այլն<sup>489</sup>:

Երևանի «Լույս» լույսի աղբյուրների և լուսատեխնիկական առարկաների թողարկման հայկական արտադրական միավորումը, որը մասնաճյուղեր ուներ հանրապետության տարբեր շրջաններում, պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների պատվերներով խորհրդային տարիներին թողարկել է ռազմական էլեկտրատեխնիկայի արտադրանք՝ ռազմական տեխնիկայի և սարքավորումների համար տարբեր տիպի էլեկտրական լամպեր, հարվածասեսյումակայուն լուսամփոփներ և այլն: Արտադրանքը մատակարարվել է Ռուսաստանի Տուլյա, Իժևսկ, Կովրով քաղաքներում գտնվող ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարության տարբեր գործարաններին և ձեռնարկություններին, Մոսկվայի մարզի Կոլոմնա քաղաքի հատուկ կոնստրուկտորական բյուրոյին և այլն<sup>490</sup>:

<sup>488</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 660, ք. 10-12:

<sup>489</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, ք. 79-80:

<sup>490</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, ք. 151, գ. 641, ք. 82:

ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով նավաշինական գործարանների համար էլեկտրական մեխանիզմներ է արտադրել Կիրովականի «Արդվին» էլեկտրամեխանիկական ձեռնարկությունը<sup>491</sup>, իսկ Էջմիածնի «Պլաստմաս» գործարանում խորհրդային վերջին տարիներին պատրաստվել են հակատանկային ականներ<sup>492</sup>:

«ՉԽՍՉ ժողովնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին» ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1975 թ. ապրիլի 16-ի որոշմամբ ԽՍՀՄ 10-րդ հնգամյա պլանի (1976-1980) կապիտալ հատկացումներով նախատեսվում էր ՉԽՍՉ-ում, հատկապես հեռավոր շրջաններում, էլեկտրական և կապի միջոցների արտադրանքի նոր գործարաններ և մասնաճյուղեր կառուցել: ԽՍՀՄ էլեկտրոնային արդյունաբերության նախարարության 1978 թ. հունվարի 28-ի հրամանով հաստատվում է Կամոյի փ/ա Ա-3929 գործարանի կազմում Մարտունիում մասնաճյուղ կառուցելու նպատակահարմարությունը<sup>493</sup>: ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության նախարարության գծով նախատեսվում էր 1979-1980 թթ. Դիլիջանի «Իմպուլս» գործարանի մասնաճյուղերի շինարարություն Կրասնոսելսկ (Ճամբարակ) և Չամգաչի ման գյուղերում: Մարտունիում 1980 թ. սկսվելու էր տվյալների փոխանցման ապարատուրաների գործարանի շինարարությունը<sup>494</sup>:

ՉԽՍՉ Նախարարների խորհրդի 1979 թ. օգոստոսի 13-ի, 1980 թ. հունվարի 11-ի և մայիսի 11-ի որոշումներով Կապանի, Գորիսի և Աշտարակի շրջանների բնակչությանը աշխատանքով ապահովելու նպատակով նախատեսվում էր ընդարձակել Կապանում գործող կոնդենսատորների «Դիպուլ» արտադրական միավորման մասնաճյուղը, նոր մասնաճյուղեր կազմակերպել Տաթև և Օշական

<sup>491</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 660, ք. 137:

<sup>492</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, ք. 177:

<sup>493</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 200, ք. 28:

<sup>494</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 137, ք. 9:

գյուղերում<sup>495</sup>: «Դիպոլ» արտադրական միավորման ընդհանուր արտադրանքի ծավալում ռազմապաշտպանական արտադրանքը խորհրդային տարիներին կազմել է 90,3 %: Արտադրանքը առաքվել է Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Ղազախստանում, Մոլդովայում և Էստոնիայում տեղակայված շուրջ 140 գործարաններ, զորամասեր և այլն<sup>496</sup>:

Ապարանի շրջանի բնակչությանն աշխատանքով ապահովելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի 1983 թ. սեպտեմբերի 16-ի կարգադրությամբ Ապարանում հիմնվում է ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարարության Մոսկվայի փ/ա Մ-5159 կոնստրուկտորական բյուրոյի փորձարարական արտադրանքի մասնաճյուղ<sup>497</sup>: Նույն նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1984 թ. հունիսի 2-ի կարգադրությամբ Սիսիանի շրջանի Գոռհայք և Գետաթաղ գյուղերում կազմակերպվում են Երևանի «Նեյրոն» արտադրական միավորման մասնաճյուղեր<sup>498</sup>: Շրջանի Դաստակերտ ավանում բացվում է Երևանի «Լույս» հայկական արտադրական միավորման մասնաճյուղ, կազմակերպվում է ԽՍՀՄ ընդհանուր մեքենաշինության նախարարության բժշկական տեխնիկայի գործարան, որի արտադրանքի ընդհանուր ծավալում պաշտպանական արդյունաբերության ճյուղի ձեռնարկությունների պատվերները կազմել են 35 %<sup>499</sup>:

ԵրՄՍԳՀԻ-ի արտադրական բազայի վրա Երևանի ներկայիս Դավիթաշեն վարչական շրջանում 1984 թ. կազմակերպվեց կապի միջոցների «Արաքս» արտադրական միավորումը: Դա լուրջ խթան հանդիսացավ Դավիթաշենում ենթակառուցվածքների, բնակելի և

<sup>495</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 185, գ. 281, թ. 1-2, գ. 299, թ. 1, ց. 181, գ. 292, թ. 103:

<sup>496</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 620, թ. 15, գ. 641, թ. 136:

<sup>497</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 185, գ. 476, թ. 1-2, 22-26:

<sup>498</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 188, գ. 506, թ. 1-2, 15-17:

<sup>499</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 181, գ. 620, թ. 219:

սոցիալ-կենցաղային կառույցների արագացված տեմպերով շինարարության համար<sup>500</sup>:

1980-ական թթ. սկզբներից խորհրդային ՌԱՀ-ը ծանր ժամանակներ էր ապրում, ձեռնարկություններում թույլ էր արտադրական կարգապահությունը, նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը, ավելանում էր արտադրանքի խոտանը, ամբողջությամբ չէին կատարվում նախանշված առաջադրանքներն ու մատակարարումները և այլն: 1982 թ. ապրիլի 13-ին լույս է տեսնում ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ «Ռազմական տեխնիկայի և սպառազինության որակի հետագա բարելավման միջոցառումների մասին» թիվ 300-85 որոշումը: Ի կատարումն վերջինիս՝ համապատասխան որոշումներ են ընդունվում նաև ԽՍՀՄ միութենական հանրապետություններում, այդ թվում խորհրդային Հայաստանում: ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1982 թ. հունիսի 8-ի որոշումով անչափ հրատապ է համարվում հանրապետությունում արտադրվող ռազմական տեխնիկայի և սպառազինության որակի հետագա բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների անցկացումը, հանձնարարականներ են տրվում հանրապետության կառավարությանը, համապատասխան նախարարություններին, իրավապահ մարմիններին, դատախազությանը և այլն<sup>501</sup>:

ՀԽՍՀ դատախազության կողմից 1982-1983 թթ. իրականացված ստուգումների մասին է նշվում հանրապետության դատախազ Ս. Օսիայանի կողմից 1983 թ. դեկտեմբերի 30-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդ ուղարկված «Հանրապետությունում ռազմական նշանակության անորակ ապրանքների արտադրության դեմ պայքարի վիճակի մասին» զեկուցագրում: Դատախազը հայտնում է, որ ՀԽՍՀ դատախազության մարմիններն ընտրովի ստուգումներ են իրականացրել հանրապետությունում տեղակայված ռազմա-

<sup>500</sup> Տե՛ս Սարգսյան Ֆ., նշվ. աշխ., էջ 70-71:

<sup>501</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 23, թ. 29-38:

պաշտպանական ոլորտի ձեռնարկություններում: Արդյունքում պարզվել է, որ ոլորտի ձեռնարկություններում թեև որոշակի աշխատանքներ են իրականացվել արտադրանքի որակը բարձրացնելու համար, սակայն առանձին ձեռնարկություններում դեռևս առկա են գործընթացի խախտումներ: Առանձին պաշտոնյաներ թերի են կատարում իրենց պարտականությունները թողարկվող արտադրանքի բարձր որակը և հուսալիությունն ապահովելու համար, հաճախակի հաշտվում են որակի և տեխնիկական չափորոշիչների խախտման պայմանների հետ, թույլ են տալիս անորակ ապրանքների թողարկում և առաքում՝ անգամ ռազմական գերատեսչության վերահսկող մարմինների բազմակի զգուշացումներից հետո: Նշվում է, որ խախտումներ են հայտնաբերվել ԽՍՀՄ կապի միջոցների «Ռելե» հայկական արտադրական միավորման համակարգում: Անորակ սարքեր ստացող կազմակերպություններից ստացվել են հարյուրավոր վնասապահանջ բողոքներ: Միջնորդ արբիտրաժային դատարանների որոշումներով (նաև կամավոր) նրանց վճարվել է 600 հազար ռուբլի տուգանք: Հետագայում, սակայն, դարձյալ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկվել անորակ ապրանքների արտադրության պատճառները վերացնելու համար, դրանց թողարկումը նշանակալի չափերով շարունակվել է նաև 1983 թ.: «Ռելե» արտադրական միավորումը ստացել է ավելի քան 550 բողոք, վճարվել է 330 հազար ռուբլի տուգանք: Այսպիսով, ռազմական նշանակության անորակ լրակազմ ապրանքների մատակարարման պատճառով 1982 թ. և 1983 թ. 9 ամիսների ընթացքում միավորումից տուգանքի տեսքով բռնագանձվել է ավելի քան 900 հազար ռուբլի: Այնինչ, պետությանը հասցված նյութական վնասը փոխհատուցելու համար մեղավոր անձանցից գանձվել է ընդամենը 7450 ռուբլի, և այն էլ միայն բանվորներից:

Լուրջ խախտումներ են հայտնաբերվել «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում: Ստուգման արդյունքները վկայում են, որ այստեղ կիրառվող միջոցառումները չեն նպաստում խնդիրների կարգավորմանը, առանձին դեպքերում՝ թույլ է արտադրա-

կան կարգապահությունը: Անորակ և խտտան հատուկ ապրանքների մատակարարման հետևանքով 1982–1983 թթ. միավորման կողմից վճարվել է 30 հազար ռուբլի տուգանք, որից 22.464 ռուբլին, ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր Պետարբիտրաժի 1982 թ. հոկտեմբերի 3–ի որոշմամբ, գանձվել է Լենինգրադի փ/ա Ա–3686 ձեռնարկության օգտին, սակայն մեղավորներից և ոչ մեկը նյութական պատասխանատվության չի ենթարկվել:

Որոշակի թերություններ են ի հայտ եկել «Պոզիստոր» և «Ռեզիստոր» արտադրական միավորումների Էջմիածնի, Աբովյանի «Սիրիուս», Լենինականի անալիտիկ սարքերի փորձարարական «Անալիտիկսարք» և Լենինականի «Օմեգա» կոնդենսատորների գործարաններում, Պետստանդարտի շրջանային մարմինների միջոցով 1982–1983 թթ. վերջիններիս ներկայացվել է 60 բողոք: 1982 թ. և 1983 թ. 6 ամիսների ընթացքում «Սիրիուս» գործարանի կողմից մատակարարված 13 հազար տարբեր տեսակի սարքերի մասեր խտանվել և հետ են վերադարձվել: 1982 թ. և 1983 թ. 8 ամիսների ընթացքում Էջմիածնի գործարանը չի մատակարարել 36.400 ռեզիստորներ: Ուշացրած մատակարարումների հետևանքով պատճառած վնասի համար Պետարբիտրաժի 1983 թ. սեպտեմբերի 14–ի որոշմամբ Կալուգայի փ/ա Մ–5895 ձեռնարկության օգտին Լենինականի «Օմեգա» գործարանից գանձվել է 15.370 ռուբլի տուգանք: Պարբերաբար անորակ աղաչափիչներ արտադրելու և մատակարարելու համար 1982 թ. տուգանվել է «Անալիտիկսարք» գործարանը, գործարանի տնօրենից բռնագանձվել է 240 ռուբլի: Սակայն անորակ աղաչափիչների արտադրությունը շարունակվել է 1983 թ., քաղաքի դատախազի կողմից գործարան է ուղարկվել տուգանքի նոր հայտ, նրա նախաձեռնությամբ գործարանի տնօրենից, գլխավոր ինժեներից և տեխնիկական հսկողության բաժնի պետից բռնագանձվել է 625 ռուբլի տուգանք:

Ռազմական նշանակության անորակ լրակազմ ապրանքների թողարկման և մատակարարման պայմանագրային պարտավորությունների խախտումների առանձին փաստեր են հայտնաբեր-

վել «Հրազդանմեքենա», «Էլեկտրասարք», «Դիպոլ», «Իզմերիտել», «Էրեբունի» ԳԱՄ-ի գործարաններում:

ՀԽՍՀ դատախազի զեկուցագրում նշվում է, որ ստուգումների արդյունքները և փաստերի համադրումը հիմք են տալիս եզրակացնելու, որ ռազմական նշանակության անորակ ապրանքների թողարկման և մատակարարման հիմնական պատճառը՝ արտադրական գործընթացի ոչ պատշաճ կազմակերպումն է, խոտան արտադրող աշխատակիցների շրջանում նրանց անձնական պատասխանատվության մասին տարվող բացատրական ոչ բավարար աշխատանքները, ցուցաբերվող հանդուրժող վերաբերմունքը. շատերը չեն ենթարկվում օրենքով նախատեսված կարգապահական, առավել ևս՝ նյութական պատասխանատվության, թերի է ձեռնարկությունների ղեկավարների աշխատանքը մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործում և այլն:

Վերոնշյալի մասին տեղեկացնելով հանրապետության իշխանություններին՝ Ս. Օսիայանը նպատակահարմար է գտնում ռազմապաշտպանական ոլորտի արտադրական միավորումների, գործարանների և ձեռնարկությունների ղեկավարների ուշադրությունը հրավիրել նշված օրինախախտումների փաստերի վրա, պարտավորեցնել նրանց անհապաղ ընդունել համապատասխան միջոցներ և պարտադիր կատարել օրենքով նախատեսված բոլոր պահանջները՝ ռազմական նշանակության անորակ և խոտան ապրանքների արտադրության դեմ պայքարելու և մատակարարումների պայմանագրային պարտավորությունները կատարելու համար<sup>502</sup>:

Ս. Օսիայանի կողմից բարձրացված հարցերը քննարկման առարկա են դառնում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ֆ. Պետրոսյանի կողմից 1984 թ. փետրվարի 24-ին հրավիրված խորհրդակցությունում, որին մասնակցում են ՀԽՍՀ տարածքում ռազմական ապրանքներ թողարկող «Ռելե», «Հայէլեկ-

<sup>502</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 397, ք. 121-124:

տրամեքենա», «Պոզիտոր», «Հրազդանմեքենա», «Էրեբունի», «Դիպոլ», «Էլեկտրասարք», «Իզմերիտել», «Անալիտիկսարք» արտադրական միավորումների և ձեռնարկությունների գլխավոր տնօրենները, նրանց տեղակալները, արտադրության որակի գծով գլխավոր ինժեներները, տեխնիկական որակի հսկողության բաժնի պետերը, արտադրանքի ընդունման ռազմական ներկայացուցիչները, ՀԽՍՀ դատախազության և Պետստանդարտի աշխատակիցները: Խորհրդակցությունում լսվում են ՀԽՍՀ դատախազի առաջին տեղակալ Ն. Թովմասյանի, ԽՍՀՄ Պետստանդարտի ՀԽՍՀ վարչության պետի տեղակալ Ա. Կարապետյանի զեկուցումները հանրապետությունում արտադրվող ռազմական նշանակության արտադրանքի որակի, ձեռնարկությունների պատասխանատվության և այլ խնդիրների մասին: Պարզաբանումներով հանդես են գալիս ոլորտի պատասխանատուները և ձեռնարկությունների ղեկավարները: Խորհրդակցության արդյունքներն ամփոփում է ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ֆ. Պետրոսյանը:

Խորհրդակցության և ընդունված որոշումների մասին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի ծանր արդյունաբերության բաժնի կողմից պատրաստված տեղեկանքը բաժնի պետի տեղակալ Գ. Հայրապետյանի ստորագրությամբ 1984 թ. մարտի սկզբին ներկայացվում է ՀԽՍՀ դատախազություն<sup>503</sup>:

Ի կատարումն ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1980-1990 թթ. համապատասխան որոշումների՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն յուրաքանչյուր տարվա սկզբին հաստատում էր ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումները ռազմական տեխնիկայի և սպառազինության թողարկման պլանի և առաքումների, ռազմապաշտպանական արտադրամասերի շինարարության մասին<sup>504</sup>:

<sup>503</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 125-126:

<sup>504</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 23, ք. 1-3, 29-38, գ. 24, ք. 1-3, գ. 25, ք. 1-3, գ. 27, ք. 36-40 և այլն:

ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության և էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններում ռազմական տեխնիկայի և նրանց համար լրակազմ ապրանքների արտադրական կարողություններ ստեղծելու նպատակով 1980–ական թթ. հանրապետությունում շինարարական աշխատանքներ են տարվել մի շարք գործարաններում, արտադրական միավորումներում և ձեռնարկություններում՝ «Հրազդանմեքենա», Կիրովականի «ԷՅՏ», Գորիսի սարքաշինական, «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորման Կապանի և Լենինականի մասնաճյուղեր, Երևանի «Ֆերիտ» փորձարարական գործարան<sup>505</sup>, «Հայէլեկտրամեքենա», Երևանի «Կոմետա» ԿԳՀԻ–ի մասնաճյուղ և այլն: ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1987 թ. հուլիսի 6–ի թիվ 764–174 որոշման հավելվածի համաձայն՝ ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը պարտավորեցնում են արտադրական միավորումների և գործարանների ղեկավարներին ժամանակին ապահովել նշված կառույցների շինարարությունը և հսկողություն սահմանել 1987–1990 թթ. համար նախատեսված առաջադրանքների կատարման ընթացքի նկատմամբ<sup>506</sup>:

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանի վկայությամբ՝ 1986 թ. դեկտեմբերին Հայաստանում է գտնվել պաշտպանական կառույցների ուսումնասիրության հարցերով ԽՍՀՄ Կենտկոմի խումբը, որի տպավորությունները, բացառությամբ «Արաքս» գործարանի, հիմնականում տպավորիչ են եղել<sup>507</sup>:

Խորհրդային տնտեսությանը բնորոշ բացասական երևույթներն առավել խորացան 1980–ական թթ. կեսերից, երբ երկրի

<sup>505</sup> «Ֆերիտ» գործարանը ռազմական հատուկ տեխնիկայի և սպառազինության համալրման համար արտադրել է ֆերիտային տարբեր ապրանքներ, հաշվիչ տեխնիկա, էլեկտրական հանգույցներ և այլն: Արտադրանքն առաքվել է Մոսկվայում, Կիմովսկում, Պրավդինսկում, Տաշքենդում տեղակայված ռազմարդյունաբերության ձեռնարկություններ, նաև Երևանի «Հրազդանմեքենա» գործարան (տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, թ. 180, գ. 641, թ. 78):

<sup>506</sup> Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 27, թ. 6–9, գ. 28, թ. 35–42:

<sup>507</sup> Տես Дни Дни сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Е., 2010, էջ 70–79:

տնտեսությունը, այդ թվում ՌԱԳ–ը, ծանր վիճակում հայտնվեց: Դրանք վերացնելուն ուղղված խորհրդային իշխանությունների ձեռնարկած քայլերը, սակայն, հիմնականում արդյունավետ չէին և դրական տեղաշարժերի չհանգեցրեցին: Էլ ավելի խորանալով՝ դրանք շարունակվեցին մինչև ԽՍՀՄ փլուզումը: Խորհրդային ՌԱԳ–ի ոլորտում տիրող ծանր դրությունը չբարելավեց նաև «Արդյունաբերության պաշտպանական ճյուղերի աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1984 թ. նոյեմբերի 22–ի թիվ 1170–294 որոշումը, ի կատարումն որի՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1985 թ. հունվարի 7–ին ընդունեց համապատասխան որոշում<sup>508</sup>:

1980–ական թթ. երկրորդ կեսին բոլոր առումներով ծանր էր դրությունը հատկապես Խորհրդային Հայաստանում: Արդյունաբերական արտադրանքի 65 կարևորագույն տեսակներից չէր կատարվում գրեթե յուրաքանչյուր երկրորդի պլանը: 1988 թ. պայմանագրային մատակարարումներով հանրապետությունը վերջին տեղն էր գրավում ողջ ԽՍՀՄ–ում: 1981–1985 թթ. միջին տարեկանի համեմատությամբ 1986–1987 թթ. արդյունաբերության մեջ խտանի պատճառով առաջացած կորուստներն աճել էին 27 %-ով<sup>509</sup>:

1987 թ. նոյեմբերի 11–ին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանին ուղղված գրությունում ԽՍՀՄ ՀՕՊ գործերի գլխավոր հրամանատար, բանակի գեներալ Ի. Տրետյակը նշում է, որ «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման կողմից թերի է կատարվում ԽՍԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1986 թ. դեկտեմբերի 31–ի թիվ 1581–431 որոշմամբ ՀՕՊ գործերի վերազինման համար զեմիթային «Ս–300Պ» հրթիռային

<sup>508</sup> Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 126, գ. 26, թ. 1–16:

<sup>509</sup> Տես «Սովետական Հայաստան», 17 սեպտեմբերի 1988, № 225–226: Տես նաև՝ Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, Ե., 1992, էջ 10:

համակարգերի և ԿԱԳ-երի ընթացիկ տարվա պլանով նախատեսված ինքնավար էլեկտրասնուցման միջոցների մատակարարումները: Այդ պատճառով Լենինգրադի «Բոլշևիկ գործարան» արտադրական միավորումում և Կույբիշևի «Ստրոմմեքենա» գործարանում չէր կատարվում հրթիռների արծակման սարքերի արտադրության պլանը: Վտանգված էր նաև 1987 թ. մատակարարումների հաստատված պլանը: Տրեսյակը նշում է, որ «Ս-300Պ» հրթիռների համակարգերի շահագործման փորձը ցույց է տալիս, որ առավել անհուսալի են ինքնավար էլեկտրասնուցող միջոցները, ինչը հետևանք է «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորումում արտադրանքի որակի բարձրացման և հուսալիության նկատմամբ ցուցաբերվող թերի վերաբերմունքի:

ԽՍՀՄ ՀՕՊ գործերի գլխավոր հրամանատարին լուրջ անհանգստացնում էր նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կարիքների համար ԿԱԳ-երի նոր միջոցների արտադրության, մատակարարումների բնագավառում «Հրազդանմեքենա» և «էլեկտրոն» հայկական արտադրական միավորումներում տիրող ծանր դրությունը: Տրեսյակը խնդրում է Հայաստանի իշխանությունների աջակցությունը բարձրացված խնդիրները շտապ կարգավորելու համար<sup>510</sup>: Դրանք քննարկման առարկա դարձան «Հայէլեկտրամեքենա» արտադրական միավորման կուսակցական կոմիտեի 1987 թ. դեկտեմբերի 30-ի նիստում, որին մասնակցում է ԴԿԿ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Վ. Ավետիսյանը: Միավորումում արտադրական գործընթացի թերացումների և մատակարարումների չկատարման հիմնական պատճառ է նշվում գործարանի տեխնոլոգիական ոչ բավարար ապահովվածությունը, սարքավորումների և հաստոցների բարոյական և ֆիզիկական մաշվածությունը, ձեռնարկության հզորություններին չհամապատասխանող պլանների ընդունումը և այլն<sup>511</sup>: Նիստի քննարկումների և արդյունքների

<sup>510</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, ք. 8-9:

<sup>511</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 6-7:

հիման վրա 1988 թ. հունվարին մշակվում և ընդունվում է «Հայէլեկտրամեքենա» միավորման ձեռնարկություններում արտադրանքի որակը և հուսալիությունը բարձրացնելու միջոցառումների համալիր ծրագիր<sup>512</sup>:

Ուզմապաշտպանական արտադրանքի բնագավառում ծանր էր դրությունը նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում, մասնավորապես «Աստրո» ԳԱՄ-ի «Օրբիտա» գործարանում<sup>513</sup>: ԽՍՀՄ պաշտպանական արդյունաբերության նախարարի տեղակալ Պ. Ֆինոգենովին և ԴԿԿ Կենտկոմի արդյունաբերության բաժնի վարիչ Ռ. Ստեփանյանին ուղղված «Օրբիտա» գործարանի կոլեկտիվի խորհրդի 1988 թ. նամակում նշվում է ռազմական տեխնիկայի համար «1ՊԼ65» ջերմային նշանառուի շարային թողարկման 1987 թ. արտադրական պլանի և մատակարարումների տապալման մասին, ինչի հետևանքով գործարանի արտադրատեսակական գործունեությունը ճանաչվել է անբավարար: Նկատի ունենալով գործարանի ֆինանսական ծանր դրությունը՝ աշխատանքային կոլեկտիվը խնդրում է վերանայել արտադրատեսակի 1988 թ. արտադրական պլանը և նախատեսված 90 հատից իջեցնել 20-ի<sup>514</sup>:

ՀԽՍՀ առանց այն էլ ծանր սոցիալ-տնտեսական դրությունը վատթարացավ 1988 թ. կեսերից, երբ Խորհրդային Ադրբեյջանի իշխանությունների կողմից իրականացված ազգային խտրականության քաղաքականության, Սումգայիթում և այլուր կազմակերպված

<sup>512</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 10:

<sup>513</sup> «Աստրո» ԳԱՄ-ի կազմում 1976 թ. կազմակերպված «Օրբիտա» գործարանում ԽՍՀՄ պաշտպանության և պաշտպանական արդյունաբերության նախարարությունների պատվերներով արտադրվել են հատուկ նշանակության սարքեր՝ հրետանային զենքի տուրբոզեռոգիական հաշվարկիչների լրակազմեր, գիշերային տեսանելիության սարքեր և այլն: Գործարանի ընդհանուր արտադրանքի մեջ ռազմապաշտպանական նշանակության արտադրանքը կազմել է ավելի քան 50 %: Այստեղ արտադրված հատուկ նշանակության արտադրանքն առաքվել է Ռուսաստանում և Ռկրախնայում տեղակայված ռազմաարդյունաբերական տարբեր ձեռնարկություններ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 177-178, գ. 641, ք. 70):

<sup>514</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 6, ք. 31-34:

վայրագությունների արդյունքում սկսվեց հայության զանգվածային բռնագաղթը դեպի Խորհրդային Հայաստան<sup>515</sup>: Բազմահազար փախստականների առկայությունը հանրապետությունում, Ադրբեջանի կողմից պարբերաբար կիրառված Հայաստանի տնտեսական շրջափակումը, երբ հանրապետությունը զրկվեց բեռնափոխադրումների շուրջ 85 %-ից<sup>516</sup> և արտահանման ենթակա շատ արժեքավոր ապրանքներ, այդ թվում ռազմական նշանակության, մնում էին պահեստներում, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրով սպայմանավորված հանրապետությունում ծավալված գործադուլային շարժումը վերջնականապես կաթվածահար արեցին երկրի տնտեսությունը: Գործադուլներին մասնակցում էին նաև Հայաստանի տարածքում տեղաբաշխված արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների կոլեկտիվները: Այսպես, օրինակ, 1988 ամռանը գործադուլներ հայտարարեցին Երևանի «Ռելե», «Հրազդան», «Բազալտ», «Ֆերիտ», «Սելենա», «Էլեկտրոն», «Էրեբունի» ԳԱՄ-ի «Մասիվ» և «Նորք» գործարանների, «Աստրո», «Ազատ», «Լազերային տեխնիկա», «Անի» ԳԱՄ-երի, ԵրՄՄԳՀԻ-ի, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի, «Կոմետա» կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղի, «Նեյտրոն», «Նեյտրոն» կազմակերպությունների և հատուկ կոնստրուկտորական բյուրոների հազարավոր աշխատակիցներ<sup>517</sup>:

Հայաստանի անասելի ծանր դրությունն աղետալի դարձրեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը, երբ մասնակի կամ ամբողջությամբ քանդվեցին և դադարեցին գործել արդյունաբերական ավելի քան 170 գործարաններ, ձեռնարկություններ և արտադրամասեր<sup>518</sup>: Դրանց մեջ զգալի թիվ էին կազմում նաև ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունները. Լեռնի-

<sup>515</sup> Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013, էջ 85–86:

<sup>516</sup> Տե՛ս Ազիզբեկյան Ռ., նշվ. աշխ., էջ 51:

<sup>517</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 21, ք. 58:

<sup>518</sup> Տե՛ս Хачатрян К., Великий друг армянского народа – Н.И. Ръжков, Е., 2004, էջ 114:

ճականի էլեկտրատեխնիկական և միկրոէլեկտրաշարժիչների, Երևանի «Արդկապ» գործարանի Ստեփանավանի մասնաճյուղը, Կիրովականի, Սպիտակի, այլ բնակավայրերի ձեռնարկությունները<sup>519</sup>:

1985–1991 թթ. ԽՍՀՄ-ում իրագործվող «վերակառուցման» քաղաքականությունը, որը սպասված արդյունքները չտվեց, միջազգային հարաբերություններում լարվածության «լիցքաթափումը», բերեց խորհրդային ՌԱՀ-ի ամբողջական վերափոխմանը, սկսվեց ռազմական արդյունաբերական ոլորտի ձեռնարկությունների փոխարկումը քաղաքացիական արտադրության (կոնվերսիա): Վերակառուցման տարիներին մշակված կոնվերսիայի ծրագրերում բացահայտ առաջնությունը տրվեց սպառողական ապրանքների և կենցաղային տեխնիկայի թողարկմանը: Ինչպես նկատում է հետազոտող Ա. Ֆիլիտովը, «Սառը պատերազմի տարիներին ևս ՌԱՀ-ը թողարկում էր խաղաղ արտադրանք (հակառակ դեպքում ԽՍՀՄ քաղաքացիներն ուղղակի չէին կարող գոյատևել), սակայն դա, որպես կանոն, ցածր որակի և սահմանափակ անվանացանկի արտադրանք էր, ըստ էության՝ հիմնական արտադրության թափոններ: Խորհրդային ՌԱՀ-ը, միանգամայն մրցունակ լինելով ռազմական արտադրանքի ոլորտում, բոլորովին մրցունակ չէր բնակչության համար լայն օգտագործման ապրանքների արտադրման ոլորտում»<sup>520</sup>:

Հայաստանի ռազմապաշտպանական ձեռնարկություններում կոնվերսիայից բխող միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կողմից ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Ս. Մինասբեկյանի նախագահությամբ: Վերջինս 1989 թ. դեկտեմբերի 1-ին Նախարարների խորհուրդ ներկայացրեց արդյունաբերության պաշտպանական ճյուղի մի շարք ձեռնարկությունների հաջորդական կոնվերսիայի

<sup>519</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 103–104:

<sup>520</sup> Տե՛ս Филиппов А., նշվ. աշխ., էջ 247–248:

մասին ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթ: Հանձնաժողովը նշում է, որ ներկայումս հանրապետության պաշտպանական արդյունաբերության 9 ճյուղերում գործում են միութենական ենթակայությամբ 22 արտադրական միավորումներ և ձեռնարկություններ, որտեղ արտադրվող ապրանքների ընդհանուր ծավալը կազմում է հանրապետության ամբողջ մեքենաշինության արտադրանքի շուրջ կեսը: Հանձնաժողովի նախնական տվյալներով՝ այդ միավորումներից և ձեռնարկություններից 1990 թ. միայն 5-ը կարող էին իրականացնել ժողովրդական լայն սպառման ապրանքների թողարկում: Դրանք են՝ «Ավիահամալիր», «Սևան», «Արարատ» ԳԱՄ-երը, «Բազալտ» և «Արաքս» գործարանները: Մասնավորապես՝ «Բազալտ» գործարանում միջոցառումներ են մշակվել արտադրական կարողությունների մի մասը լայն սպառման ապրանքների («Ծովային մարտ») էլեկտրոնային խաղեր, կենցաղային անհատական «Սպեկտոր» համակարգիչներ, սառնախցիկներ և այլն) արտադրության փոխադրելու ուղղությամբ: Նմանօրինակ աշխատանքներ են իրականացվում «Սևան» ԳԱՄ-ում և «Արարատ» ԳԱՄ-ի Գորիսի մասնաճյուղում: Այստեղ 1990 թ. նշմարվում է բժշկական սարքավորումների և ժողովրդական սպառման մի շարք ապրանքների (մազնիտոֆոններ, հեռախոսներ, կենցաղային հաշվիչ մեքենաներ և այլն) արտադրության կազմակերպում: Համատեղ արտադրություն կազմակերպելու նպատակով ձեռնարկությունները բանակցություններ են վարում օտարերկրյա մի շարք գործընկերների հետ<sup>521</sup>:

Դրական գնահատելով փոխակերպման գործընթացը, հանձնաժողովը նշում է, որ հանրապետությունում կոնվերսիայի ուղղությամբ իրականացվող աշխատանքները սկզբնական բնույթ են կրում, իսկ դրա կազմակերպման ու իրագործման մեջ առկա են լուրջ թերություններ և բացթողումներ: Հանրապետության պաշտպանական արդյունաբերության ճյուղերի ձեռնարկությունները

<sup>521</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 620, ք. 14-16:

պատրաստ չեն անցմանը կոնվերսիային, չունեն ժողովրդական սպառման ապրանքների անհրաժեշտ պատվերներ: Արդյունքում՝ թվարկած ձեռնարկություններն աշխատում են վնասով, նկատվում է ընդհանուր արտադրության անկում:

Հանձնաժողովի կարծիքով, պետք չէր նախատեսել կոնվերսիայի անցկացում ԽՍՀՄ էլեկտրոնային, պաշտպանական արդյունաբերության, կապի նախարարությունների, հաշվիչ տեխնիկայի և ինֆորմատիկայի պետկոմի ձեռնարկություններում, որոնք արտադրատեխնիկական մեծ հնարավորություններ ունեն ռազմապաշտպանական պահանջարկ ունեցող բարձրորակ ապրանքներ թողարկելու համար:

Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովն առաջարկում է՝

1. Հանրապետության տարածքում տեղակայված պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների կոնվերսիա անցկացնելու նպատակով 1990 թ. փետրվար-մարտ ամիսներին հրավիրել հանրապետական խորհրդակցություն պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ղեկավարների, գիտական, նախագծակոնստրուկտորային կազմակերպությունների, տնտեսագիտական ուղղվածության ինստիտուտների, արտաքին տնտեսական գերատեսչությունների, ՀԽՍՀ առևտրի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

2. Պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ղեկավարներին հանձնարարել մինչև 1990 թ. հունվարի 10-ը ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովին առաջարկություններ ներկայացնել 1990-1995 թթ. ժողովրդական լայն սպառման ապրանքների թողարկման անցնելու հնարավորությունների մասին:

3. ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կոնվերսիայի հարցերով հանձնաժողովին հանձնարարել մինչև 1990 թ. փետրվարի 1-ն ընդհանրացնել ներկայացված նյութերը և առաջարկությունների

փաթեթ նախապատրաստել ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համար:

4. ՀԽՍՀ Պետպլանին հանձնարարել 1989 թ. դեկտեմբերին մասնագետներ գործուղել Բելառուսական, Լիտվայի և Էստոնական ԽՍՀ-ներ՝ անցկացված կոնվերսիայի փորձն ուսումնասիրելու համար<sup>522</sup>:

Կոնվերսիայի շրջանակներում ՀԽՍՀ իշխանությունները փորձում էին հանրապետությունում կազմակերպել լայն սպառման նոր ապրանքների արտադրություն: Այսպես՝ 1990 թ. մայիսին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովին ուղղված նամակում ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը նշում է, որ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1990 թ. ապրիլի 28-ի թիվ 23 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ նախատեսվում է ընդլայնել համագործակցությունը «Այ-Բի-Էմ» ֆիրմայի հետ և ԽՍՀՄ-ում կառուցել անհատական օգտագործման համակարգիչների արտադրության գործարան: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը խնդրում է քննարկել համակարգիչների արտադրությունը ԽՍՀՄ կապի նախարարության «Արաքս» կոմուտացիոն տեխնիկայի գործարանում (որի շինարարությունը կավարտվի 1992 թ.) կազմակերպելու հնարավորությունը: Վ. Մարգարյանցը նշում է, որ գործարանը կառուցվել է արբանյակային կապի միջոցներ արտադրելու համար, սակայն կոնվերսիայի հետևանքով ապրանքների թողարկումը հանվել է արտադրությունից, ուստի ոչ մեծ կապիտալ ներդրումներով կարելի է ավարտել շինարարությունը և գործարանը վերակառուցել անհատական համակարգիչների արտադրության՝ կրթական հաստատություններին համակարգիչներով ապահովելու նպատակով<sup>523</sup>:

1991 թ. մայիսի 17-ին ԽՍՀՄ ռադիոարդյունաբերության նախարար Վ. Շիմկոյին ուղղված նամակում ՀԽՍՀ Նախարարների

<sup>522</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 16-19:

<sup>523</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 7-8:

խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ամիրբեկյանը նշում է, որ ՀՀ կառավարությունն ամուր կանգնած է այն տեսակետին, որ ամրացվի և զարգացվի գիտատեխնիկական և արտադրական կապերը միութենական նախարարությունների և գերատեսչությունների միջև պարտավորությունները կատարելու համար: 1991-1995 թթ. սպառազինության թողարկման հաստատված ծրագրերին համապատասխան՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Հրազդանմեքենա» արտադրական միավորումում պետք է իրականացվի ՀՕՊ-ի ԿԱՀ-երի համար «Օսնովա-1» և «Պոլե» ապրանքների թողարկում, որը կազմում է ընդհանուր արտադրանքի 70 %-ը: Սակայն, - շարունակում է Ամիրբեկյանը, - երկրում իրականացվող կոնվերսիայի պայմաններում վերը նշված ապրանքների արտադրման հեռանկարը պարզ չէ, ուստի խնդրում են պարզաբանել և վերջնական պատասխան տալ «Հրազդանմեքենա» գործարանում հատուկ նշանակության ապրանքներ թողարկելու հեռանկարի մասին<sup>524</sup>:

ԽՍՀՄ մայրամուտին, Հայաստանի անկախության առաջին օրերին կառավարության կարգադրությամբ անցկացվեց հանրապետության պաշտպանական արդյունաբերության ձեռնարկություններում և գիտաարտադրական կազմակերպություններում խորհրդային տարիներին արտադրված (նաև ներկայում արտադրվող) ռազմապաշտպանական ապրանքների մասին հարցում: ՀՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գ. Վարդանյանի ստորագրությամբ բոլոր այդ ձեռնարկություններ ուղարկված 1991 թ. հոկտեմբերի 14-ի թիվ 0784 գրությամբ խնդրվում է ՀՀ Նախարարների խորհրդին հայտնել ապրանքի անունը, նրա նշանակությունը, քանակը և տոկոսն ընդհանուր արտադրանքի մեջ, նաև՝ ինչպե՞ս են կատարվում պատվերները, և եթե չեն կատարվում՝ ինչո՞ւ<sup>525</sup>:

<sup>524</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 22-23:

<sup>525</sup> Տե՛ս նույն տեղում, ք. 82:

ՀՀ պետնախարար Վ. Չիտեչյանի ստորագրությամբ 1992 թ. հունվարի 29-ի թիվ 024 լրացուցիչ գրությամբ խնդրվում է ՀՀ կառավարությանը տվյալներ ներկայացնել նաև թողարկված և թողարկվող արտադրանքի արտաքին առաքումների մասին<sup>526</sup>:

Հանրապետության ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների պատասխան գրությունների բովանդակությունից ակնառու երևում է, թե որքան ծանրակշիռ ներգրավվածություն է ունեցել Հայաստանը խորհրդային ՌԱՀ-ում: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզման շրջանում համամիութենական պաշտպանական պատվերների, ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության բազմաթիվ ապրանքների արտադրությունից հանելու և այլ պատճառներով խորհրդային ՌԱՀ-ի հայաստանյան ձեռնարկությունների և կազմակերպությունների գերակշիռ մասը 1991 թ. վերջի դրությամբ կամ պարապուրդի մեջ էր, կամ նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա<sup>527</sup>:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացումը նպաստեց հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ամրապնդմանը, իսկ ռազմաարդյունաբերության զարգացումը լուրջ խթան հանդիսացավ երկրի տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման, կենսամակարդակի բարձրացման, գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի համար: Հայաստանի ամբողջ տարածքում ձևավորվեցին արտադրական մեծ հզորություններ, տասնյակ արդյունաբերական կենտրոններ: Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %-ն այս կամ այն չափով սպասարկում էր խորհրդային ռազմական արդյունաբերությանը: ՀԽՍՀ-ն ապահովում էր համամիութենա-

<sup>526</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 66:

<sup>527</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, գ. 641, գ. 660 և այլն:

կան ՌԱՀ-ի բարձրտեխնոլոգիական, ինտելեկտուալ հատվածը: Հանրապետությունը ԽՍՀՄ-ում առաջատար դիրքեր էր զբաղեցնում համակարգչային, միկրոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, օպտիկաֆիզիկական, ՉՕՊ-ի և ավիացիոն-տիեզերական համակարգերի համալրման բաղադրիչների մշակման և արտադրության ոլորտում: Դրանում ընդգրկված տասնյակ ձեռնարկություններում, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում մշակվել և թողարկվել է համամիութենական ռազմական և տիեզերական ռադիոէլեկտրոնիկայի ընդհանուր ծավալի 30-40 %-ը:

Ռազմապաշտպանական ոլորտի զարգացվածության ընդհանուր մակարդակով Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից հետո ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 4-րդ պատվավոր տեղը: Էլեկտրատեխնիկանան մեքենաշինության արտադրության ծավալով Հայաստանը 2-րդն էր, իսկ սարքաշինությամբ՝ 5-րդը: ԽՍՀՄ ՌԱՀ-ի համակարգում ներգրավված Խորհրդային Հայաստանի աշխատողների ընդհանուր թվական աստիճանը, համեմատած հանրապետության բնակչության թվի հետ, հասնում էր զրեթե 1 %-ի, և այդ ցուցանիշով Խորհրդային Հայաստանը զիջում էր միայն նույն Ռուսաստանին, Ուկրաինային և Բելառուսին:

Իրավամբ, հետպատերազմյան տարիներին Հայաստանի տնտեսության և արդյունաբերության, գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափով պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությամբ:

ՀՀ պետնախարար Վ. Չիտեչյանի ստորագրությամբ 1992 թ. հունվարի 29-ի թիվ 024 լրացուցիչ գրությամբ խնդրվում է ՀՀ կառավարությանը տվյալներ ներկայացնել նաև թողարկված և թողարկվող արտադրանքի արտաքին առաքումների մասին<sup>526</sup>:

Հանրապետության ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարների պատասխան գրությունների բովանդակությունից ակնառու երևում է, թե որքան ծանրակշիռ ներգրավվածություն է ունեցել Հայաստանը խորհրդային ՌԱՀ-ում: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ փլուզման շրջանում համամիութենական պաշտպանական պատվերների, ֆինանսների փաստացի բացակայության, ռազմական նշանակության բազմաթիվ ապրանքների արտադրությունից հանելու և այլ պատճառներով խորհրդային ՌԱՀ-ի հայաստանյան ձեռնարկությունների և կազմակերպությունների գերակշիռ մասը 1991 թ. վերջի դրությամբ կամ պարապուրդի մեջ էր, կամ նրանց ծանրաբեռնվածությունը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա<sup>527</sup>:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացումը նպաստեց հանրապետության պաշտպանունակության և անվտանգության անրապնդմանը, իսկ ռազմարդյունաբերության զարգացումը լուրջ խթան հանդիսացավ երկրի տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման, կենսամակարդակի բարձրացման, գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացի համար: Հայաստանի ամբողջ տարածքում ձևավորվեցին արտադրական մեծ հզորություններ, տասնյակ արդյունաբերական կենտրոններ: Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %-ն այս կամ այն չափով սպասարկում էր խորհրդային ռազմական արդյունաբերությանը: ՀԽՍՀ-ն ապահովում էր համամիութենա-

<sup>526</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 641, թ. 66:

<sup>527</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 620, գ. 641, գ. 660 և այլն:

կան ՌԱՀ-ի բարձրտեխնոլոգիական, ինտելեկտուալ հատվածը: Հանրապետությունը ԽՍՀՄ-ում առաջատար դիրքեր էր զբաղեցնում համակարգչային, միկրոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, օպտիկաֆիզիկական, ՀՕՊ-ի և ավիացիոն-տիեզերական համակարգերի համալրման բաղադրիչների մշակման և արտադրության ոլորտում: Դրանում ընդգրկված տասնյակ ձեռնարկություններում, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում մշակվել և թողարկվել է համամիութենական ռազմական և տիեզերական ռադիոէլեկտրոնիկայի ընդհանուր ծավալի 30-40 %-ը:

Ռազմապաշտպանական ոլորտի զարգացվածության ընդհանուր մակարդակով Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից հետո ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 4-րդ պատվավոր տեղը: Էլեկտրատեխնիկական մեքենաշինության արտադրության ծավալով Հայաստանը 2-րդն էր, իսկ սարքաշինությամբ՝ 5-րդը: ԽՍՀՄ ՌԱՀ-ի համակարգում ներգրավված Խորհրդային Հայաստանի աշխատողների ընդհանուր թվական աստիճանը, համեմատած հանրապետության բնակչության թվի հետ, հասնում էր գրեթե 1 %-ի, և այդ ցուցանիշով Խորհրդային Հայաստանը զիջում էր միայն նույն Ռուսաստանին, Ուկրաինային և Բելառուսին:

Իրավամբ, հետպատերազմյան տարիներին Հայաստանի տնտեսության և արդյունաբերության, գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափով պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությամբ:

Ց ՈՒ Ց Ա Կ<sup>528</sup>

1990 թ. օգոստոսի դրությամբ Հայաստանում տեղակայված արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղերի միութենական նախարարությունների ենթակայությամբ ձեռնարկությունների և գործարանների, գիտաարտադրական միավորումների, գիտահետազոտական ինստիտուտների և կազմակերպությունների, հատուկ կոնստրուկտորական բյուրոների և այլն:

1. Աբովյանի «Ձենիթ» գործարան
2. Աբովյանի «Իզմերիտել» գործարան
3. Աբովյանի «Սիրիուս» գործարան
4. Աբովյանի միկրոէլեկտրոնային և կիսահաղորդիչ սարքերի գործարան
5. «Ազաթ» կենտրոնական գիտաարտադրական միավորման Երևանի մասնաճյուղ
6. Ապարանի «Արև» գործարան
7. Ապարանի «Նիզ» գործարան
8. Արզնիի «Կրիստալ» արտադրական միավորում
9. Արթիկի վակուումային էլեկտրավառարանների գործարան
10. Արթիկի «Օմեգա» կոնդենսատորների գործարան
11. Գառնիի «Գրանիտ» հատուկ կոնստրուկտորական բյուրո
12. Գորիսի «Սիկրոշարժիչ» սարքաշինական գործարան
13. Դիլիջանի «Իմպուլս» գործարան
14. Երևանի «Աստրո» գիտաարտադրական օպտիկամեխանիկական միավորում
15. Երևանի «Արաքս» կոմուտացիոն տեխնիկայի գործարան

<sup>528</sup> Տվյալները համադրվել և ցուցակը կազմվել է ըստ՝ ՀԱԱ, ֆ. 113, ց. 181, գ. 56, ք. 66-70, գ. 620, ք. 90-101, ֆ. 1, ց. 87, գ. 21, ք. 58:

16. Երևանի «Գամմա» գիտաարտադրական միավորում
17. Երևանի «Արդկապ» գործարան
18. Երևանի «Տրանզիստոր» գիտաարտադրական միավորում
19. Երևանի «Պոզիտոր» գիտաարտադրական միավորում
20. Երևանի «Սիզնալ» կոնստրուկտորական բյուրո
21. Երևանի «Հայէլեկտրամեքենա» հայկական գիտաարտադրական միավորում
22. Երևանի «Հայէլեկտրաշարժիչ» գիտաարտադրական միավորում
23. Երևանի «Լույս» լույսի աղբյուրների և լուսատեխնիկական առարկաների թողարկման հայկական արտադրական միավորում
24. Երևանի «Ալմաստ» արհեստական ալմաստների և ալմաստե գործիքների արտադրական միավորում
25. Երևանի «ԵՐԱՁ» ավտոմեքենաների գործարան
26. Երևանի «Օրբիտա» գործարան
27. Երևանի «Հիդրոհաղորդակ» արտադրական միավորում
28. Երևանի «Հաստոցանորմա» գործարան
29. Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորում
30. Երևանի «Ռելե» հայկական արտադրական միավորում
31. Երևանի «Նեյրոն» արտադրական միավորում
32. Երևանի «Նեյտրոն» արտադրական միավորում
33. Երևանի «Անի» գիտաարտադրական միավորում
34. Երևանի «Սելենա» գործարան
35. Երևանի «Հրազդան» ավտոմատացված սարքերի գործարան
36. Երևանի «Ֆերրիտ» գործարան
37. Երևանի «Ավիահամալիր» հայկական արտադրական միավորում
38. Երևանի «Լազերային տեխնիկա» գիտաարտադրական միավորում
39. Երևանի «Էլեկտրասարք» հայկական արտադրական միավորում
40. Երևանի «Կանազ» այլումինի գործարան

41. Երևանի «Վոլնա» գիտաարտադրական միավորում
42. Երևանի «Էրեբունի» գիտաարտադրական միավորում (Երևանի «Մասիվ», «Նորք», Ղուկասյանի և Էջմիածնի «Ռաստր» գործարաններով)
43. Երևանի «Ավտոմատիկա» գիտաարտադրական միավորում
44. Երևանի «Մարս» արտադրական միավորում
45. Երևանի «Նաիրիտ» գիտաարտադրական միավորում
46. Երևանի «Պոլիվինիլացետատ» արտադրական միավորում
47. Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ (ԵրՄՄԳՀԻ)
48. Երևանի միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտ
49. Երևանի ֆիզիկայի ինստիտուտ
50. Երևանի ժամացույցի գործարան
51. Երևանի ֆրեզերային հաստոցների գործարան
52. Երևանի փոշեմետաղագործության գիտաարտադրական միավորում
53. Երևանի էլեկտրաապարատների գործարան
54. Երևանի դողերի գործարան
55. Երևանի քիմռեակտիվների գործարան
56. Երևանի ռետինե տեխնիկական իրերի գործարան
57. Երևանի մաքուր երկաթի փորձարարական արդյունաբերական գործարան
58. Երևանի ճշգրիտ էլեկտրասարքերի գործարան
59. Երևանի փորձարարական էլեկտրատեխնիկական գործարան
60. Էջմիածնի «Պլաստմաս» գործարան
61. Էջմիածնի սարքաշինական գործարան
62. Իջևանի «Բենտոնիտ» կոմբինատ
63. Լենինականի «Ռեզիստոր» արտադրական միավորում
64. Լենինականի «Միկրոէլեկտրաշարժիչ» գործարան
65. Լենինականի «Մազոն» հատուկ կոնստրուկտորական-- տեխնոլոգիական բյուրո

66. Լենինականի «Օմեգա» կոնդենսատորների գործարան
67. Լենինականի «Անալիտիկսարք» գործարան
68. Լուսավանի երկաթբետոնե ապրանքների գործարան
69. Կալինինոյի «Նիտիմա» գործարան
70. «Կամոսարք» գործարան
71. Կամոյի «Գեղամա» արտադրական միավորում
72. Կամոյի «Դիպոլ» արտադրական միավորում
73. Կամոյի էլեկտրալիտիկ կոնդենսատորների գործարան
74. Կիրովականի «Արդվին» էլեկտրամեխանիկական ձեռնարկություն
75. Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի «Ռուբին» գործարան
76. Կիրովականի «Պոլիմերսոսինձ» գիտաարտադրական միավորում
77. Կիրովականի «Արդավտոմատիկա» գիտաարտադրական միավորում
78. Կիրովականի բարձրաջերմային ջեռուցիցների գործարան
79. Կիրովականի էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի գործարան
80. «Կոմետա» կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղ
81. Կոմայլեքսային էլեկտրասարքավորումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ (ԿԷՀԳՀԻ)
82. Համամիութենական լրակազմ էլեկտրասարքավորումների նախագծակոնստրուկտորական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ՝ փորձարարական գործարանով
83. Հրազդանի ռադիոբաղադրամասերի «Կեչարք» արտադրական միավորում
84. «Հրազդանմեքենա» արտադրական միավորում
85. Մալինինի անվան ԽՍՀՄ նյութաբանության գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ
86. Մարալիկի մագնիսային արագացուցիչների գործարան
87. Մարալիկի հիդրոապարատների գործարան

88. Մարտունիի «Սիզմա» գործարան
89. Մեղրիի կոնդենսատորների գործարան
90. Մինսկի գիտահետազոտական սարքաշինական ինստիտուտի Երևանի բաժանմունք
91. Մոսկվայի ռադիոկապի գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ
92. Նոր Հաճնի «Սապֆիր» հայկական արտադրական միավորում
93. Չարենցավանի «Միկրոպրոցեսոր» գործարան
94. Չարենցավանի «Ցենտրոլիտ» գործարան
95. Չարենցավանի հաստոցաշինական արտադրական միավորում
96. Չարենցավանի գործիքաշինական արտադրական միավորում
97. Ջրվեժի «Բազալտ» սարքաշինական գործարան
98. Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ (ՌԶԳԳԻ)
99. Ստեփանավանի բարձր հաճախականության էլեկտրասարքավորումների գործարան
100. Սևանի «Էլեկտրաապակիմեկուսիչ» գործարան
101. Սևանի գործադրող մեխանիզմների գործարան
102. Սևանի էլեկտրական չափիչ սարքերի գործարան
103. Տաթևի «Սլին» գործարան
104. Ուժային կոնդենսատորաշինության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ
105. Օպտիկաֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ

## ԱՄՓՈՓՈՒՄ

Թեմայի համալիր ուսումնասիրության, առաջադրված հիմնախնդիրների ամփոփման արդյունքում հանգել ենք ներքոնշյալ հիմնական եզրահանգումների:

- ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրը՝ արտադրական ձեռնարկությունների, գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորային մասնագիտացված կազմակերպությունների մի համակարգ էր, որն իրականացնում էր ռազմական տեխնիկայի, սպառազինության և ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արտադրության ու նորոգման պետական պատվերներ: Խորհրդային ՌԱՀ-ի նյութատեխնիկական և տնտեսական գլխավոր բաղադրիչն էր ռազմապաշտպանական արտադրությունը, ուստի «ՌԱՀ» հասկացությունը ԽՍՀՄ-ում համարժեք էր «ռազմապաշտպանական արդյունաբերություն», «պաշտպանական արդյունաբերություն», «պաշտպանական արդյունաբերական համալիր» հասկացություններին: Վերջինս իր մեջ ներառել և միավորել է խորհրդային արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղերի գործարաններն ու ձեռնարկությունները, գիտաարտադրական միավորումները, գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորային հաստատություններն ու կազմակերպությունները, դրանց կառավարման մարմինները:

- 1920–1930-ական թթ. համեմատաբար խաղաղ միջազգային պայմաններում ԽՍՀՄ-ում վճռական քայլեր ձեռնարկվեցին խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության ստեղծման և զարգացման, նրա կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Գործընթացի արդյունքում՝ խորհրդային իշխանության ընդամենը երկու տասնամյակներում ռազմապաշտպանական արդյունաբերությունը վերածվեց ԽՍՀՄ տնտեսության արդյունաբերական խոշոր ճյուղի, սպառազինություն ներմուծող երկրից ԽՍՀՄ-ը դարձավ սպառազինության մատակարար Եվրո-

պայի և Ասիայի մի շարք երկրների համար: Արդեն Երկրորդ աշխարհամարտի սկզբին և Չայրենական պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ-ը հիմնականում լուծել էր երկրի ռազմապաշտպանական արդյունաբերության ստեղծման կարևոր հիմնախնդիրը:

- Չայաստանի առաջին հանրապետությունից Խորհրդային Չայաստանը ժառանգեց ամբողջությամբ քայքայված և հետամնաց տնտեսություն, Խորհրդայնացման պահին երկիրը գրեթե չուներ արդյունաբերական հզորություններ, խոշոր գործարաններ ու ձեռնարկություններ, իսկ գոյություն ունեցող մի քանի փոքր արտադրամասերն ու մեխանիկական արհեստանոցները հույս էին դրվում ֆինանսական ներդրումների իսպառ բացակայության պայմաններում փլուզման եզրին էին: Ինչ վերաբերում է ռազմական արտադրանքի և ռազմական տեխնիկայի վերանորոգման ոլորտին, ապա Առաջին հանրապետության տարիներին այն կրել է սիմվոլիկ բնույթ:

- 1920–1930–ական թթ. դարձան Խորհրդային Չայաստանի արդյունաբերության աննախադեպ զարգացման տարիներ, կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին նորագույն սարքավորումներով համալրված արդյունաբերական տասնյակ գործարաններ և ձեռնարկություններ: Արդեն 1930–ական թվականների վերջին Չայաստանում առկա էր բազմաճյուղ արդյունաբերություն, ինչը հնարավորություն տվեց կենտրոնական իշխանություններին Չայրենական պատերազմի նախօրյակին Չայաստանն ընդգրկելու ԽՍՀՄ-ում ձևավորվող ռազմաարդյունաբերական համալիրում:

- Ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Չայաստանում նախապատերազմյան տարիներին անչափ կարևորվում էր ժողտնտեսությունում ռազմապաշտպանական միջոցառումների իրականացման ռազմավարությունը: ՀՍԽՉ ռազմապաշտպանական միջոցառումների ծրագիրը չէր առանձնացվում հանրապետության տնտեսության զարգացման ամբողջական ծրագրից, իսկ դրա իրականացումը լուրջ խթան հանդիսացավ

Խորհրդային Չայաստանի հետագա զարգացման և պաշտպանունակության ամրապնդման համար:

- Երկրորդ համաշխարհային և Չայրենական պատերազմների տարիներին հանդիսանալով ԽՍՀՄ-ի սահմանամերձ տարածք և ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ՝ Խորհրդային Չայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում ԽՍՀՄ-ի ռազմապաշտպանական միջոցառումներում: Չայաստանը, նրա պաշտպանունակության, ռազմական պատրաստվածության, պաշտպանական արդյունաբերության ներուժի հզորացման խնդիրները կարևորվում էին Խորհրդային ղեկավարության կողմից: Հանրապետությունում տեղակայվեցին ռազմական զգալի ուժեր և միջոցներ, ներմուծվեցին մեծ քանակությամբ սարքավորումներ և ռազմավարական հումք: Վերջինս հրատապ դարձրեց վերակառուցելու Խորհրդային Չայաստանի արդյունաբերական որոշ գործարանները և ձեռնարկությունները՝ ռազմաարդյունաբերական պատվերներ կատարելու և վնասված ռազմական տեխնիկական վերանորոգելու համար: Հանրապետությունում մեծ ուշադրություն դարձվեց բնակչությանը հակաօդային և հակաքիմիական պաշտպանության նախապատրաստելու խնդրին, նաև հակառակորդի հնարավոր ներխուժման սահմանամերձ վայրերում պաշտպանական ամրությունների շինարարությանը, ուժեղացվեց արդյունաբերական կառույցների պաշտպանությունը:

- Չայրենական պատերազմի նախօրյակին Երևանում հիմնված թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանում իրականացվեցին վնասված ռազմական ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ, Թբիլիսիում գտնվող թիվ 31 ինքնաթիռաշինական գործարանի հետ կոոպերացիայի միջոցով արտադրվեցին «Յակ-3» կործանիչների պահեստամասեր, քևեր ու շասսիներ: Գործարանում կազմակերպվեց «ՈՒՏ-2Մ» ուսումնամարզական թեթև ինքնաթիռների շարային արտադրություն: Պատերազմից հետո թիվ 447 գործարանը վերափոխվեց էլեկտրամեքենաշինական գործա-

րանի, ներդրումներ կատարվեցին շինարարությունն ավարտին հասցնելու համար:

- Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Խորհրդային Հայաստանն ամենայն պատասխանատվությամբ մասնակից դարձավ ԽՍՀՄ ռազմապաշտպանական արդյունաբերության առջև ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի կողմից դրված մեծածավալ խնդիրների լուծմանը: Հանրապետության տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու և ռազմականացնելու գործում մեծ դեր ունեցան ՀԽՍՀ կառավարությունը, կուսակցական, խորհրդային և իշխանության այլ մարմինները: Գործադիր իշխանության կարևոր գործառույթներ էր իրականացնում ՀԽՍՀ ժողկոմխորհին կից գործող պետական կարգադրիչ մարմինը՝ «Համատեղ նիստը»: Վերջինս ղեկավարում և համակարգում էր հանրապետության ռազմական տնտեսությունը, ռազմապաշտպանական արդյունաբերության աշխատանքները, ռազմական պատվերների կատարումը: Ռազմապաշտպանական նշանակության արտադրանքի, զենքի ու ռազմամթերքի թողարկմանը մասնակցեցին հանրապետության արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը, շուրջ հինգ տասնյակ գործարաններ ու ֆաբրիկաներ, մեխանիկական արհեստանոցներ, այլ ձեռնարկություններ:

- Հանրապետության արդյունաբերության ռազմականացման գործընթացն ամբողջությամբ ավարտվեց 1942 թ. կեսերին: Այդ շրջանից է, որ արծանագրվեց զենքի և զինամթերքի, դրանց մասերի, հրետանային գույքի և բանակային կապի միջոցների մասերի, ռազմահանդերձանքի, ռազմավարական հուճքի, ռազմական այլ արտադրանքի պատվերների կտրուկ աճ: Ռազմապաշտպանական պատվերների մեծ ծավալներ էր իրականացնում հանրապետության քիմիական արդյունաբերությունը՝ 1942 թ. ողջ ընթացքում թողարկելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հուճք՝ սինթետիկ կաուչուկ, հակատանկային հեղուկ վառելիք, կաուստիկ սոդա, կալցիումի ցիանամիդ, կալցիումի կարբիդ, կար-

բինոլ, մոնոքրոմատ, քլորոֆորմ, ռազմական արդյունաբերության տարբեր ոլորտների համար անհրաժեշտ այլ նյութեր: Նշված արտադրանքը կարևոր էր հատկապես ռազմական ինքնաթիռների ու տանկերի արտադրության, ռազմական նավաշինության և սուզանավաշինության, բարձրորակ ավիացիոն բեռզին և տանկային վառելիք ստանալու համար: Հայաստանում արտադրվող կաուստիկ սոդան մեծ չափերով օգտագործվում էր հատկապես Բաքվի նավթային արդյունաբերությունում: Հայաստանից Ադրբեջան առաքվում էր քիմիական այլ արտադրանք ևս, մասնավորապես քլորակիր՝ Բաքվի և նրա շրջանների հակաօդային պաշտպանությունն ապահովելու համար: Իր հերթին Խորհրդային Ադրբեջանը Հայաստան էր առաքում վառելանյութ և այլ նավթամթերք:

- Ստալինգրադի ճակատամարտում խորհրդային զորքերի հաղթանակից հետո, երբ վերացավ գերմանաֆաշիստական ուժերի և Թուրքիայի կողմից Կովկասին ու Անդրկովկասին սպառնացող վտանգը, Հայաստանի ձեռնարկություններին տրվող ռազմական պատվերները հետզհետե նվազեցին: 1943 թվականից մինչև պատերազմի ավարտը հանրապետությունում ամբողջությամբ դադարեցվեց վաշտային ականանետների, զենքի մասերի, ռազմամթերքի որոշ տեսակների, հրետանային և ինժեներական գույքի արտադրությունը: Պատերազմի ավարտական փուլում՝ 1945 թ. առաջին ամիսներին, հանրապետությունում ռազմաճակատի համար զենք և ռազմամթերք չի արտադրվել:

- Հանրագումարի բերելով պատերազմի տարիներին ՀԽՍՀ արդյունաբերության զարգացման, նրանում պաշտպանական ոլորտի ձեռնարկությունների ձևավորման, հանրապետությունում ռազմապաշտպանական արտադրանքի թողարկման հիմնական արդյունքները՝ նշենք. Խորհրդային Հայաստանում կառուցվեցին և գործադրվեցին 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր, այդ թվում ինքնաթիռաշինական, շարժիչների վերանորոգման, կոմպրեսորային, ավտոդողերի, պարկային գործվածքների, քիմիադեղագործական գործարաններ և այլն: Պատերազմի տարի-

ներին ՀԽՍՀ արդյունաբերությունն իրացրեց արտադրանքի շուրջ 300 նոր տեսակի թողարկում, որոնց զգալի մասն ունեւ ռազմապաշտպանական նշանակություն: Արդյունաբերությունը թողարկեց 10 անուն զինամթերք, 1՝ զենք (վաշտային ականանետներ), 6՝ կապի միջոցներ, 47՝ զոււնակատնտեսական և իրային զույք, 3՝ ինժեներական ծառայության և 6՝ հրետանային զույք, 20՝ քիմիական նյութ, զինվորական հագուստի տասնյակ տեսակներ և այլն: Ռազմապաշտպանական հիմնական արտադրության մեջ զբաղված անձանց թվաքանակը, համաձայն պաշտոնական տվյալների, հասնում էր 3600-ի:

- Պատերազմի տարիներին ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների զարգացման շնորհիվ հանրապետության արդյունաբերությունում տեղի ունեցան կառուցվածքային կարևոր և արձատական փոփոխություններ, ստեղծվեցին արդյունաբերական նոր հզորություններ: Մեքենաշինական և մետաղամշակման ոլորտում սկզբնավորվեցին նոր ճյուղեր՝ հաստոցաշինությունը, ինքնաթիռաշինությունը, էլեկտրամեքենաշինությունը և այլն: Հիմնադրվեցին քիմիական արդյունաբերության և զոււնավոր մետաղագործության նոր ենթաճյուղեր՝ կարբիդի, ալյումինի, մոլիբդենի արտադրություններ:

- Նախապատերազմյան և պատերազմի տարիներին հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում ծանրակշիռ մասնակցություն ունեցավ խորհրդային Հայաստանի գիտությունը: ԽՍՀՄ ՉԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմքի վրա 1943 թ. նոյեմբերին Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումով հայ գիտնականներն առավել հիմնարար աշխատանքներ ծավալեցին երկրի բնական պաշարների հայտնաբերման և արտադրության մեջ ներդնելու, ռազմապաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների առջև ծառայած արտադրական գործընթացների կատարելագործման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Նորարական հայտնագործություններ և գյուտեր կատարվում էին ոչ միայն ակադեմիական և բուհական

միջավայրում, այլև հանրապետության արտադրական տարբեր ձեռնարկությունների լաբորատորիաներում: Գիտության տարբեր ոլորտների մասնագետների, հատկապես երկրաբանների, քիմիկոսների, ֆիզիկոսների, կենսաբանների ու դեղագործների հաջողությունները տեսանելի են ռազմապաշտպանական նշանակություն ունեցող տարբեր բնագավառներում: Նրանց գիտական հետազոտությունների արդյունքները նպաստեցին երկրի պաշտպանունակության ամրապնդմանը, խորհրդային ռազմական տեխնիկայի և միջոցների կատարելագործմանը, բանակի մարտունակության բարձրացմանը:

- Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խորհրդաթուրքական, իսկ պատերազմի ավարտական փուլում նաև ԽՍՀՄ-Արևմուտք ռազմաքաղաքական դիմակայության ոլորտում էր հայտնվել 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագրով թուրքիային անցած հայկական տարածքների (Կարս, Սուրմալու, Արդահան) ԽՍՀՄ-ին վերադարձնելու հարցը: Սակայն պատերազմում ԽՍՀՄ-ի երբեմնի դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, վճռականապես հանդես եկան թուրքիային պաշտպանելու դիրքերից: Պատմական տվյալ ժամանակաշրջանում խնդիրը ներքաշվեց ԽՍՀՄ-ի և Արևմուտքի առճակատման, սկսվող սառը պատերազմի գաղափարական, ռազմավարական և քաղաքական հակամարտության ոլորտը, ինչն էլ կանխորոշեց խորհրդային կողմի համար նրա բացասական ելքը. հայկական տարածքները մնացին թուրքիայի հանրապետության կազմում:

- Երկրորդ աշխարհամարտի և Հայրենական պատերազմի ռազմաճակատներում հերոսական մասնակցության, ԽՍՀՄ հաղթանակի համար հարյուրհազարավոր զոհեր տալու դիմաց խորհրդային Հայաստանը ստացավ «գերմանական ռազմավարի» իր մասնաբաժինը: Հետպատերազմյան առաջին տարիներին գերմանական տարբեր գործարաններից և ձեռնարկություններից ստացված հարյուրավոր հաստոցների ու սարքավորումների, մետաղական կոնստրուկցիաների, այլ հզորությունների շնորհիվ հանրա-

պետության արդյունաբերության ձեռնարկությունները վերազինվեցին և համալրվեցին բանկարժեք ու արդիական նոր սարքավորումներով: Դա հնարավորություն տվեց հանրապետությունում զարգացնել արդյունաբերական նոր ճյուղերը՝ էլեկտրամեքենաշինությունը, էլեկտրատեխնիկական սարքաշինությունը և այլն, ամրապնդվեց երկրի ներգրավվածությունը խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում:

- Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային իրադրությունն աշխարհում շարունակում էր լարված մնալ: Վերջինս նպաստեց հետպատերազմյան առաջին տասնամյակներին խորհրդային ռազմապաշտպանական արդյունաբերության աննախադեպ զարգացմանը: Սառը պատերազմի առաջին տարիներից խորհրդային արդյունաբերության ռազմապաշտպանական ոլորտը սկսեց մեկուսանալ, առանձնանալ արդյունաբերության քաղաքացիական արտադրանքի ոլորտից: Ընդհանուր առմամբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող առաջին երկու տասնամյակները հանդիսացան ԽՍՀՄ-ում ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորման ավարտի շրջանը: Այդ տարիներին մշակվեցին ռազմական նոր դոկտրինի և ռազմավարության հիմքերը, ստեղծվեց գիտական և արտադրական հզոր բազա սպառազինության բոլոր տեսակների և համակարգերի հետագա զարգացման համար:

- Հետպատերազմյան տարիներին կատարելագործվեց խորհրդային ՌԱՀ-ի կառավարման համակարգը, ձևավորվեց ռազմապաշտպանական արդյունաբերության նախարարությունների, այսպես կոչված, «իննյակը», որոնցում հիմնականում կենտրոնացված էին ԽՍՀՄ-ում ռազմական արտադրանք թողարկող պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունները: Դրանք էին՝ ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության, Պաշտպանական արդյունաբերության, Նավաշինության արդյունաբերության, Քիմիական արդյունաբերության, էլեկտրոնային արդյունաբերության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, Ընդհանուր մեքենաշին-

ության, Ռադիոարդյունաբերության, Միջին մեքենաշինության նախարարությունները: Ոլորտի քաղաքական և տնտեսական ղեկավարումը ապահովում էին ԽՍՀՄ Կենտկոմի հատուկ բաժինները, իսկ անվտանգության խնդիրները՝ ՆԳՆ-ն և ՊԱԿ-ը: Խորհրդային ՌԱՀ-ի կառավարման նշված համակարգը գրեթե անփոփոխ տեսքով գոյություն ունեցավ մինչև ԽՍՀՄ-ի կազմալուծումը:

- Հետպատերազմյան տարիներին խորհրդային ռազմապաշտպանական ոլորտում շարունակեց ծանրակշիռ ներդրում ունենալ Հայաստանի քիմիական արդյունաբերությունը: Կիրովականի ազոտային հանքանյութերի գործարանին կից 1946 թ. կառուցված էլեկտրոլիզի գործարանում 1950-ական թթ. սկսվեց սինթետիկ կորունդի, մելամինի, երկրի ռազմապաշտպանական կարիքների, խորհրդային բանակի և ռազմական տեխնիկայի համար նախատեսված քիմիական այլ նյութերի արտադրությունը: Այստեղ էր արտադրվում ատոմային և ջրածնային ռումբերի պատրաստման համար անհրաժեշտ բաղադրամաս հանդիսացող, այսպես կոչված, «ծանր ջուրը», առանց որի հնարավոր չէր արձակել նշված ռումբերը:

- Հետպատերազմյան առաջին տասնամյակներին խորհրդային Հայաստանում արագացված տեմպերով իրագործվում է ռազմական սպառման ապրանքների նոր տեսակների արտադրությունը, առաջին հերթին զարկ է տրվում էլեկտրամեքենաշինության և սարքաշինության, էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը: Արդեն հետպատերազմյան 13 տարիների ընթացքում հանրապետությունում կառուցված և շահագործման հանձնված 200 նոր արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը սպասարկում էր երկրի ռազմաարդյունաբերական ոլորտը: Հայաստանում արտադրվում էր բարձր որակի կաուչուկ, պղինձ, մոլիբդեն, ալյումին, քիմիական տարբեր նյութեր, պլաստմասսաներ, էլեկտրագեներատորներ, տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, կոմպրեսորներ, հիդրոտուրբիններ, կաբելներ, ճշգրիտ էլեկտրասարքավորումներ, հրակայուն

նյութեր և այլն: Այդ արտադրանքի գերակշիռ մասն ունենալու ռազմապաշտպանական նշանակություն:

- 1960 թ. սկսած խորհրդային Հայաստանի մասնակցությունը ԽՍՀՄ ՌԱՀ-ում ձեռք է բերում որակական նոր, առավել կանոնակարգված և հաստատագրված բնույթ: Այսուհետ ՀԽՍՀ-ի յուրաքանչյուր հաշվետու տարվա ռազմական արտադրանքի վերաբերյալ ստուգիչ-հսկիչ առաջադրանքներն ընդունվում են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի փակ նիստերում: ՀԽՍՀ-ում ռազմական տեխնիկայի և սպառազինության, գույքի և միջոցների արտադրության պլանները յուրաքանչյուր առանձին տարվա համար պարբերաբար ճշգրտվում և որոշ փոփոխություններով ու լրացումներով հաստատվում էին ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշումներով:

- 1960-ական թթ. հանրապետությունն ամբողջությամբ ներգրավվեց խորհրդային ՌԱՀ-ում, այստեղ ձևավորվեցին ոլորտի մի շարք ձեռնարկություններ և արտադրամասեր, որտեղ թողարկվում էին ռազմական նորագույն բարդ տեխնիկայի և սպառազինության համար համալրող մասեր և սարքավորումներ, երկրի պաշտպանության ամրապնդման և խորհրդային բանակի համար ռազմամթերքների մասեր. հակատանկային և ինժեներական ականների պատյաններ, պայթուցիչներ, ռազմական գույքի այլ տեսակներ ու միջոցներ: Հայաստանի ռազմապաշտպանական ոլորտի առաջատար Հայէլեկտրագործարանում արտադրվեցին վրագետնյա հատուկ էլեկտրաուժային սարքավորումներ, շարժական տրանսֆորմատորային ենթակայաններ և գազատուրբինային ագրեգատներ՝ խորհրդային զենիթահրթիռային նորագույն համակարգերը՝ «Կրուգ», «Կուբ», «Դալ», «Ս-75Ս» («Վոլխով»), «Ս-120», «Ս-125» («Նևա»), «Ս-200» լրակազմելու համար:

- 1970-1980-ական թթ. ռազմապաշտպանական արտադրության մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Երևանի «Էլեկտրոն» հայկական արտադրական միավորումում, որը տարի-

ների ընթացքում դարձավ ԽՍՀՄ ռադիոտեխնիկական խոշոր ձեռնարկություններից մեկը: Վերջինիս արտադրական մասնաճյուղերը գործում էին Հայաստանի տարբեր շրջաններում՝ Կիրովականում, Էջմիածնում, Աբովյանում, Կապանում, Գորիսում, Լենինականում, Բերդում: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով «Էլեկտրոն» միավորման ձեռնարկությունները խորհրդային տարիներին թողարկել են մենաշնորհային արտադրանք՝ ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի ինքնաթիռների թռիչքները և դրանց անվտանգությունն ապահովող, երկրի ցամաքային և օդային սահմաններն ու ուղիները վերահսկող ռադիոտեղորոշումային կայանների ԿԱՀ-երը համալրող ռադիոէլեկտրոնային սարքավորումներ և մասեր:

- ԽՍՀՄ սարքաշինության, ավտոմատացման միջոցների և կառավարման համակարգերի նախարարության գծով օդային բարձիկներով և ստորջրյա թևերով նավերի ստեղծման և կառուցման միութենական ծրագրում էր ներգրավված Երևանի «Էլեկտրասարք» արտադրական միավորումը: Թռչող ապարատների համար ԿԱՀ-երի արտադրություն կազմակերպվեց Երևանի «Հրազդան» գործարանում: Արդիական ռազմական արտադրություն կազմակերպելու նպատակով գործարանի հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի «Ավիահամալիր» արտադրական միավորումը:

- ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծմանն է մասնակցել «Հրազդանմեքենա» միավորումը: Այստեղ թողարկվել են ռադիոէլեկտրոնային սարքավորումներ հակաօդային պաշտպանության «ՕՍԱ», «ԿՈՒԲ», «Ս-75» զենիթահրթիռային համակարգերի ռադիոտեղորոշումային կայանների համար, շարժական և ստացիոնար կապի միջոցներ խորհրդային զինված ուժերի տեխնիկական միջոցների ապահովման համար:

- Խորհրդային Հայաստանում արտադրված ռազմատեխնիկական գույքի, հատուկ միջոցների առանձին հանգույցների և լրակազմ ապրանքների որոշ տեսակներ ԽՍՀՄ ՌԱՀ-ի գործարաններ

րից և ձեռնարկություններից բացի՝ արտահանվել են սոցիալիստական և տնտեսական առումով թույլ զարգացած երկրներ՝ Բուլղարիա, Յունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Իրաք, Իրան, Եգիպտոս, Վիետնամ, Հյուսիսային Կորեա, Մոնղոլիա, Հնդկաստան, Ցեյլոն, Եմեն, Գվինեա, Կուբա, Գանա և այլն:

- Հայաստանի իշխանությունները կարևորում և խթանում էին ռազմապաշտպանական ոլորտի արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների մասնաճյուղերի և առանձին արտադրամասերի ստեղծումը հանրապետության տարբեր շրջաններում: Ժամանակակից արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցումը նպաստում էր հանրապետության շրջանների, քաղաքների և գյուղական բնակավայրերի աննախադեպ առաջընթացին և զարգացմանը, տեղերում սոցիալ-տնտեսական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը, գործազրկության վերացմանը, բնակչության աճին: Կենտրոնական իշխանությունների հետ համատեղ ձեռնարկած համալիր միջոցառումների արդյունքում խորհրդային ՌԱՀ-ը սպասարկող ձեռնարկություններ հիմնվեցին Լենինականում, Արթիկում, Մարալիկում, Ստեփանավանում, Կիրովականում, Դիլիջանում, Իջևանում, Բերդում, Ապարանում, Հրազդանում, Չարենցավանում, Աբովյանում, Նոր Հաճնում, Արզնիում, Դուկասյանում, Էջմիածնում, Աշտարակում, Օշականում, Վեդիում, Սևանում, Կամոյում, Վարդենիսում, Մարտունիում, Կապանում, Մեղրիում, Գորիսում, Տաթևում, Տեղում, Կորնիձորում, Սիսիանում, Գոռհայքում, Դաստակերտում և այլն:

- Հետպատերազմյան տասնամյակներին խորհրդային ՌԱՀ-ի համակարգում ՀԽՍՀ արդյունաբերական ձեռնարկությունների հետ մեկտեղ ծանրակշիռ ներգրավվածություն ունեցան հանրապետության գիտահետազոտական, նախագծակոնստրուկտորային հաստատությունները, գիտության ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, էլեկտրա-

մեխանիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, միկրոկենսաբանության, դեղագիտության և այլ ճյուղերը:

1960-ական թթ. սկզբից հանրապետության գիտությունը մասնակից էր դառնում խորհրդային տիեզերական ծրագրին, որտեղ առանցքային տեղ էր գրավում ռազմական բաղադրիչը: ՀԽՍՀ ԳԱ-ում իրականացվեցին արտամթնոլորտային աստղաֆիզիկական հետազոտություններ բարձրաթռիչք հրթիռների և երկրի արհեստական արբանյակների օգտագործմամբ: Տիեզերական տարածքի հսկողության ասպարեզում գիտական հետազոտությունների, գերհեռու տիեզերական կապերի և ռադիոտեխնիկական հատուկ նշանակության համակարգերի, անտենաօպտիկական կայանքների և ռադիոընդունիչների համասարքերի ստեղծման խոշոր կենտրոններից էր Հայաստանում կազմակերպված Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Ռադիոֆիզիկական չափումների գիտահետազոտական բաժանմունքը, որը հետագայում վերակազմավորվեց ինստիտուտի: Տիեզերագիտական հետազոտությունների բնագավառի առաջատար կազմակերպություններից էին «Աստրո» ԳԱՄ-ը, Օպտիկաֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը, «Գրանիտ» հատուկ կոնստրուկտորական բյուրոն և այլն:

- Խորհրդային Հայաստանում առավել բարձր ցուցանիշներ արձանագրվեցին հատկապես ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում, որի առաջատար կենտրոն դարձավ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՄՄԳՀԻ): Ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը ԵրՄՄԳՀԻ-ում ռազմապաշտպանական նշանակություն ունեցող կարևոր աշխատանքներ իրականացվեցին ԽՍՀՄ ռազմաօդային ուժերի, խորհրդային նորագույն ռազմական տեխնիկայի համար ԷՀՄ-ների և ԿԱՀ-երի նոր տեսակների ստեղծման ուղղությամբ: Խորհրդային շուրջ 35 տարիների ընթացքում ինստիտուտի գործունեությունը ոչ միայն ապահովեց երկրի ռազմաարդյունաբերության կարիքները, այլև

նպաստեց հանրապետությունում արդյունաբերական նվազ մետաղատար և էներգատար նոր ճյուղերի ստեղծմանն ու զարգացմանը:

- Խորհրդային տարիներին «Կոմետա» ԿԳՅԻ հայաստանյան մասնաճյուղում մշակվեցին և պատրաստվեցին ռազմապաշտպանական կարևոր կիրառություն ունեցող ռադիոսարքեր՝ սուզանավեր հայտնաբերելու համար բարձր զգայնությամբ բազմաճառագայթային համակարգեր: Դրանք կիրառվեցին նաև ռազմական ինքնաթիռներում և տիեզերական համակարգերի լրակազմերում: 1970–1980–ական թթ. մեծ ծավալների աշխատանքներ են իրականացվել ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, Երևանի «Ազաթ», «Ալֆա», «Գամմա», «Սևան», «Վոլնա» գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում, «Սիզմալ» կոնստրուկտորական բյուրոյում, Լենինականի «Մագնոն» հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրոյում և այլն:

- Ռազմապաշտպանական նպատակներով, խորհրդային ռեակտիվ և հրթիռային նորագույն տեխնիկան համալրելու համար ԷՅՄ–ների, ՍԷՅՄ–ների, ԿԱՀ–երի, դեկավարման վահանակների, էլեկտրատեխնիկական սարքավորումների, ռադիոէլեկտրոնային հատուկ այլ սարքերի, միջոցների և հանգույցների, քիմիական, դեղագործական, կենսաբանական միջոցների մշակման և ստեղծման ոլորտում Խորհրդային Հայաստանի, հայ գիտնականների և մասնագետների նվաճումները բացառիկ են: Իրավամբ, հանրապետությունը ԽՍՀՄ–ում վաստակել էր խորհրդային «Սիլիկոնային հովտի» ամուր համբավը:

- Հայաստանի տարածքում գտնվող ոչ մի արտադրական ձեռնարկություն չէր թողարկում զենքի ու զինամթերքի, ռազմական տեխնիկայի և սպառազինության վերջնական արտադրանք: Դա խորհրդային ՌԱՀ–ի ընդգծված առանձնահատկություններից էր՝ ռազմական համակարգերի վերջնական ու ամբողջական արտադրանքի բացառումը ոչ միայն մեկ գործարանային համալիրի շրջա-

նակներում, այլև միութենական մեկ հանրապետությունում, բացառությամբ Խորհրդային Ռուսաստանի: Կենտրոնական իշխանությունների նպատակը հստակ էր՝ որ ամբողջ երկիրը գտնվի տնտեսական սերտ ու փոխադարձ կոոպերատիվ կապերի մեջ, իսկ հանրապետությունները զերծ մնան ինքնաբավ միավորներ դառնալու հնարավորությունից:

- Խորհրդային Հայաստանում կազմակերպված ռազմապաշտպանական արտադրության բարդ և պատասխանատու գործընթացը թեև արձանագրեց նշանակալի հաջողություններ, սակայն ամբողջությամբ հարթ չէր: Ոլորտում ընդգրկված որոշ գործարաններ և արտադրամասեր երբեմն թերակատարում էին հաստատված պլանները, թողարկում խոտան և անորակ արտադրանք, ձգձգում մատակարարումները խորհրդային ՌԱՀ–ի ձեռնարկություններին: Խորհրդային տնտեսությանը բնորոշ բացասական այդ երևույթներն առավել խորացան 1980–ական թթ. սկզբներից, երբ խորհրդային տնտեսությունը, այդ թվում ՌԱՀ–ը, ծանր ժամանակներ էին ապրում: Առկա բացասական երևույթները վերացնելուն ուղղված խորհրդային իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը, սակայն, հիմնականում արդյունավետ չէին և դրական տեղաշարժերի չհանգեցրին: Էլ ավելի խորանալով՝ դրանք շարունակվեցին մինչև ԽՍՀՄ–ի փլուզումը:

- 1985–1991 թթ. «վերակառուցման» քաղաքականությունը, միջազգային հարաբերություններում լարվածության «լիցքաթափումը» բերեց ԽՍՀՄ ՌԱՀ–ի ամբողջական վերափոխմանը, սկսվեց ռազմական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների փոխարկումը քաղաքացիական արտադրության (կոնվերսիա): Կոնվերսիայի ծրագրերում բացահայտ առաջնությունը տրվեց սպառողական ապրանքների և կենցաղային տեխնիկայի թողարկմանը: Սակայն միանգամայն մրցունակ լինելով ռազմապաշտպանական արտադրանքի ոլորտում, խորհրդային ՌԱՀ–ը բոլորովին անմրցունակ գտնվեց բնակչության համար լայն օգտագործման ապրանքների արտադրման ոլորտում:

• Խորհրդային Հայաստանում իրականացվեցին ռազմապաշտպանական, քաղաքացիական պաշտպանության, մորփլիզացիոն պաշարների ստեղծման և կուտակման մի շարք միջոցառումներ, կառուցվեցին թաքստոցներ, ապաստարաններ և այլն: Հատուկ ժամանակներում ՀԽՍՀ տարածքում ռազմավարական նշանակության ավտոճանապարհների օգտագործման պատրաստվածությունը բարձրացնելու, նրանցով հրթիռային և ռազմական այլ տեխնիկայի թողունակությունն ապահովելու նպատակով՝ ՀԽՍՀ կառավարության որոշումներով և հանձնարարականներով վերանորոգվեցին հանրապետության գլխավոր մայրուղիներն ու ճանապարհները, կամուրջները: ՀԽՍՀ հակաօդային պաշտպանությունն ապահովելու նպատակով հանրապետության տարածքում տեղակայված էր հակաօդային պաշտպանության N զորամասի զենիթահրթիռային N բրիգադը: Վերջինիս կազմի մեջ մտնում էր զենիթահրթիռային 9 դիվիզիոն, որոնցից 3-ը զինված էին հրթիռներով և իրականացնում էին մարտական հերթապահություն: Ջենիթահրթիռային բրիգադը համալրված էր № 75 և № 125 համակարգերով, որոնք համապատասխանաբար ներառում էին մինչև 70 և 50 կմ թռիչքի հեռավորությամբ մարտական հրթիռներ և ռադիոտեղորոշումային կայաններ: Մինչև 1988 թ. № 75 համակարգի հրթիռները զինված էին միջուկային մարտագլխիկներով:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանում ռազմապաշտպանական միջոցառումների անցկացումը նպաստեց հանրապետության պաշտպանունակության և անվտանգության ամրապնդմանը, իսկ ռազմաարդյունաբերության զարգացումը լուրջ խթան հանդիսացավ երկրի տնտեսության և արդյունաբերության զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, բնակչության աճի և զբաղվածության ապահովման, կենսամակարդակի բարձրացման համար: Հայաստանի ամբողջ տարածքում ձևավորվեցին արտադրական մեծ հզորություններ, տասնյակ արդյունաբերական կենտրոններ: Հանրապետության արտադրական բոլոր հզորությունների շուրջ 40 %-ն այս կամ այն չափով սպասարկում էր Խորհրդային

ռազմական արդյունաբերությանը: ՀԽՍՀ-ն ապահովում էր համամիութենական ՌԱՀ-ի բարձրտեխնոլոգիական, ինտելեկտուալ հատվածը: Հանրապետությունը ԽՍՀՄ-ում առաջատար դիրքեր էր զբաղեցնում համակարգչային, միկրոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային, օպտիկաֆիզիկական, ՀՕՊ-ի և ավիացիոն-տիեզերական համակարգերի համալրման բաղադրիչների մշակման և արտադրության ոլորտում: Դրանում ընդգրկված տասնյակ ձեռնարկություններում, գիտահետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններում մշակվել և թողարկվել է համամիութենական ռազմական և տիեզերական ռադիոէլեկտրոնիկայի ընդհանուր ծավալի 30-40 %-ը: Ռազմապաշտպանական ոլորտի զարգացվածության ընդհանուր մակարդակով Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից հետո ԽՍՀՄ-ում զբաղեցնում էր 4-րդ պատվավոր տեղը: Էլեկտրատեխնիկան մեքենաշինության արտադրության ծավալով Հայաստանը 2-րդն էր, իսկ սարքաշինությամբ՝ 5-րդը: ԽՍՀՄ ՌԱՀ-ի համակարգում ներգրավված Խորհրդային Հայաստանի աշխատողների ընդհանուր թվական աստիճանը, համեմատած հանրապետության բնակչության թվի հետ, հասնում էր գրեթե 1 %-ի, և այդ ցուցանիշով Խորհրդային Հայաստանը զիջում էր միայն Նույն Ռուսաստանին, Ուկրաինային և Բելառուսին:

Իրավամբ, Խորհրդային տարիներին Հայաստանի տնտեսության և արդյունաբերության, գիտության աննախադեպ զարգացումը մեծ չափով պայմանավորված էր հանրապետության ռազմապաշտպանական ոլորտի ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությամբ:

## РЕЗЮМЕ

В монографии на основе многочисленных рассекреченных архивных документов, исторических свидетельств, опубликованных сборников документов и материалов, а также научной литературы впервые в армянской историографии обобщенно и всесторонне изучается проблема участия отраслей военно-оборонной промышленности и науки Советской Армении в военно-промышленном комплексе (ВПК) СССР в 1922–1991 годах. В исследовании рассмотрены также вопросы организации и проведения в Советской Армении военно-оборонных мероприятий.

Кроме научно-практического значения актуальность исследования выражается в том, что в деле организации и развития ВПК Республика Армения в рамках ОДКБ тесно сотрудничает с некоторыми странами бывшего СССР, в первую очередь – с Российской Федерацией. Страны осуществляют комплексные мероприятия по укреплению обороноспособности Армении, в частности – создается совместная система противовоздушной обороны (ПВО).

В монографии показывается, что с приходом к власти большевики стали уделять особое внимание вопросам обороноспособности и развития военно-оборонной промышленности Советской России. Уже к концу 1920 г. в стране были заложены основы централизованной системы управления военной промышленностью, что стало залогом ускоренного развития отрасли. В сравнительно мирный период 1920–1930-ых гг. Советский Союз предпринял решительные шаги для становления и развития военно-оборонной промышленности, и уже к

началу Великой Отечественной войны задача создания советского военно-промышленного комплекса была практически решена.

На момент советизации экономика Армении находилась в крайне истощенном состоянии, а промышленность представляла собой пару медеплавильных заводов и полуразрушенных механических мастерских с устаревшими и изношенными средствами производства. В течение же двух десятилетий советской власти выработка электроэнергии в республике по сравнению с досоветским периодом увеличилась в 67 раз, были созданы и введены в действие большие промышленные мощности, заложены новые отрасли промышленности – химическая, машиностроительная и т.д. Уже к началу 1940 г. по сравнению с 1913 г. объем промышленной продукции в республике вырос в 8,7, а продукция машиностроительной и металлообрабатывающей промышленности – в 15 раз.

Одним из ведущих предприятий военно-химической промышленности СССР становится Ереванский завод синтетического каучука – СК “Совпрен”. Производство каучука в Советской стране имело принципиальнейшее значение, ведь столь важный для военного производства материал СССР закупал по высокой цене из-за границы. Тем самым, армянский каучук должен был в скором времени ограничить зависимость Советов от его импорта. Первую продукцию хлоропренового каучука СК “Совпрен” выработал в марте 1940 г., в самый разгар Второй мировой войны.

Создание разветвленной промышленности в Советской Армении в 1920–1930-ых гг. и ее развитие стало основой для вовлечения республики в военно-оборонные мероприятия Закавказского военного

округа СССР и в оборонно-промышленный комплекс страны в годы Второй мировой и Великой Отечественной войн.

Являясь приграничной территорией СССР, Советская Армения воспринималась как территория вероятных военных действий и, одновременно, как заслон против возможной турецкой агрессии против СССР. Накануне Великой Отечественной войны Советский Союз рассматривал Турцию как потенциального противника и вынашивал определенные планы. Милитаризация Турции при весомой поддержке Франции и Великобритании не могла не беспокоить советское руководство. Оно приступило к наращиванию военного потенциала в Закавказье, с начала 1940 г. в Закавказский военный округ стали перебрасываться авиационные части военных истребителей и бомбардировщиков, а также артиллерийские и танковые части из других военных округов страны. В основном эти силы перебрасывались в Советский Азербайджан, но доставалось также и Армении с Грузией. В этом контексте, вопросы обороноспособности Армении, наращивания ее военно-промышленного потенциала находились в центре постоянного внимания советского руководства и военного командования.

С началом Второй мировой войны высшее руководство СССР стало уделять особое внимание развитию советской авиационной промышленности и военного самолетостроения. Вскоре перед советским руководством стал вопрос о необходимости срочной реконструкции и переоборудования старых предприятий, а также основания новых, расширения географии самолетостроительных заводов, их строительства в отдаленных южных районах страны, в частности на

Кавказе и в Закавказье. По заданию Политбюро ЦК ВКП(б) правительство СССР 19-го сентября 1940 г. принимает решение о строительстве самолетостроительного завода в Советской Армении – в Ереване. Исходя из режима секретности, ужесточенного в СССР в связи с началом войны, заводу присваивается № 447 – как особо секретному предприятию военно-оборонной промышленности. Работы по планированию и строительству завода № 447 осуществлялись под особым руководством и надзором Наркомата авиационной промышленности СССР. О ходе строительства лично руководителю страны И. Сталину еженедельно докладывал первый секретарь ЦК компартии Армении Г. Арутюнян. Строительство завода, которое должно было быть завершено к февралю 1942 года, в связи с началом Великой Отечественной войны было временно остановлено. Однако, уже с середины 1942 г. работы по строительству завода были возобновлены, а уже с осени – на заводе ремонтировались неисправные военные самолеты и истребители. Согласно постановлению Государственного комитета обороны СССР от 8-го октября 1943 г. и приказу наркома авиационной промышленности СССР А. Шахурина от 1-го декабря 1943 г. – Ереванский завод № 447, в кооперации с Тбилисским заводом № 31, в кратчайшие сроки освоил производство шасси, крыльев и других агрегатов для советских истребителей “Як-3”. В конце войны на заводе было организовано серийное производство учебно-тренировочных легких самолетов “Ут-2М”. После окончания войны завод № 447 был перепрофилирован в завод “Армэлектромаш” и в скором времени стал одним из ведущих предприятий советского ВПК.

С началом Великой Отечественной войны высшее руководство СССР стало уделять особое внимание развитию оборонной промышленности и производству военного обмундирования, снаряжения, оружия и боеприпасов в районах глубокого тыла. Согласно утвержденным планам, в первые месяцы войны заказы на поставку стратегического сырья и производства военной продукции получили и советские республики Закавказья, в том числе Армения. Для решения поставленных перед Советской Арменией задач в республике имелись необходимые ресурсы и, в главную очередь, многоотраслевая развитая промышленность. С началом войны многие промышленные предприятия Советской Армении были переоборудованы на военный лад и начали выпускать военную продукцию.

Уже к концу 1941 г. на предприятиях тяжелой и химической промышленности республики, в механических и металлообрабатывающих мастерских заводов и комбинатов производили корпуса зажигательных авиабомб, противотанковых и противопехотных мин, находились в стадии разработки и освоения производство минометов, мин, авиабомб, ручных гранат и т.д.

За годы войны в военно-оборонном производстве были задействованы почти все отрасли промышленности республики, около 50 заводов и фабрик, механических мастерских и других предприятий. Ведущими предприятиями военно-оборонной отрасли производства республики стали Ереванский машиностроительный завод имени Ф. Дзержинского, Ереванский химкомбинат имени С. Кирова (№ 742), Ереванский завод № 722, Ереванский самолетостроительный завод № 447 и др. Всего за годы войны на предприятиях военно-оборонной

промышленности республики было произведено 10 видов боеприпасов (зажигательные авиабомбы, снаряды, противотанковые и противопехотные мины, ручные гранаты и т.д.), 1 – вооружения (ротные минометы), 6 – средств армейской связи, 47 видов вещевого снаряжения, 20 – химпродуктов, 9 – инженерно-технического и артиллерийского имущества, несколько десятков видов военного обмундирования и т.д. Для нужд фронта и военно-промышленных предприятий страны Армения поставляла стратегическое сырье – медь, молибден, синтетический каучук, карбид, каустическую соду, карбинол, другую продукцию металлургических и химических комбинатов.

Весомый вклад в организацию военно-оборонной промышленности республики и военного производства в годы войны внесли ученые и наука Советской Армении. Состоявшийся 19–20 ноября 1941 г. 9-й пленум ЦК КП(б) Армении поставил перед ними серьезные задачи. В действительности, без весомой научно-технической базы республика была бы не в состоянии в столь кратчайшие сроки завершить перестройку промышленности на военные рельсы, эффективно использовать возможности промышленных предприятий республики. С самого начала войны академические и вузовские научно-исследовательские коллективы, кафедры и лаборатории были вовлечены в выполнение серьезных задач для обороны страны и повышения боеготовности армии. Своими исследованиями и открытиями, новаторскими предложениями армянские ученые внесли значительный вклад в создание и развитие военно-оборонной промышленности республики, способствовали усовершенствованию качества оборонной продукции.

В результате исследований ученых Института химии АрмФАН-а были созданы реактивные вещества и составляющие, которые способствовали получению качественного искусственного каучука, металлов, активированного угля, другой продукции для нужд военной промышленности. Армянским химикам удалось также разработать эффективный способ получения важного вещества – ферросилиция. Производимый на Ереванском и Кироваканском химкомбинатах ферросилиций использовался в металлургии при выплавке сверхтвердой брони, значение которого для нужд военной промышленности невозможно переоценить. Не менее важным было и другое открытие – оригинальный метод получения химического соединения тринитробензол, который был предложен научным сотрудником института, профессором Ереванского госуниверситета Ваче Исагулянцем. Тринитробензол, как взрывчатка, использовался в изготовлении боеприпасов вместо тротила, его качественные особенности имели преимущество в сравнении с последним.

Важные биологические, медицинские, фармацевтические исследования проводились в специальных научно-производственных лабораториях при кафедрах фармацевтической и органической химии Ереванского медицинского института. Здесь были созданы и внедрены в производство медицинские препараты, лекарства, различные индикаторы и химреактивы, необходимые как для выявления боевых отравляющих веществ, так и для защиты от них. Отметим, что в результате плодотворной работы кафедры органической химии под руководством будущего академика АН Армении Арменака Мнджояна уже к лету 1943 г. было налажено производство свыше 20 видов

индикаторов, в том числе, болеутоляющих, а также 40 названий индикаторов и химреактивов. Работа кафедры была удостоена высокой оценки командования Красной Армии и Военно-Морского флота. В деле выполнения заказов армии и флота коллективам ряда предприятий Еревана существенную помощь оказала научная группа физиков во главе с Норайром Кочаряном.

В ноябре 1943 г. на основе АрмФАН-а была создана Академия наук Армянской ССР, первым президентом которого стал академик И. А. Орбели, ученые республики получили еще больше возможностей для новых исследований и участия в процессе выполнения военно-оборонных задач. Особо важным исследованием была теория рассеивания света в мутной среде, которую разработал будущий президент Академии наук Армении, всемирно известный ученый Виктор Амбарцумян. На основе предложенного им же принципа инвариантности, эта теория сразу же получила широкое применение в различных областях науки и техники, особенно в военных целях, широко была использована при изготовлении оптических приборов ночного видения.

Таким образом, в годы войны специалисты разных областей науки Советской Армении: инженеры, геологи, химики, физики, биологи, фармакологи и др. внесли существенный вклад в дело развития военно-оборонной промышленности, укрепления обороноспособности страны, повышения боеспособности советских Вооруженных Сил, победы советского народа в войне.

Основанные в республике в годы войны новые промышленные мощности и отрасли производства: самолетостроение, станкостроение, электромашиностроение, приборостроение и т.д., обозначили дальней-

шие пути развития промышленности Советской Армении в послевоенные годы и более тесного вовлечения страны в советский военно-промышленный комплекс.

После окончания Великой Отечественной войны Советская Армения получила свою часть “немецких военных контрибуций” – за героическое участие ее сынов в боях на фронтах Второй мировой и Великой Отечественной войн, за сотни тысяч человеческих жизней, отданных Победе. Благодаря тому, что в первые послевоенные годы были получены оборудование и сотни высокотехнических станков немецких заводов и предприятий промышленные предприятия республики были переоснащены и пополнены дорогостоящим совершенным оборудованием. Это дало возможность развить в республике такие отрасли промышленности как электромашиностроение, станкостроение, приборостроение и др., повысить вовлеченность республики в советский военно-промышленный комплекс.

В первые послевоенные десятилетия своим формированием и стабильным развитием советский ВПК был «обязан» начавшейся с конца 1940-ых годов холодной войне и набирающей обороты военно-технической революции. С началом 1950-ых годов в СССР наблюдается значительный рост расходов на ВПК. Ее приоритетами становятся создание и развитие атомного оружия, реактивной, зенитно-ракетной новейшей техники, радиолокационных систем противовоздушной обороны и т.д. Проводимые в СССР в 1957–1964 годах административно-хозяйственные реформы были направлены также на децентрализацию советского ВПК и системы ее управления. В ВПК страны усиливается координирующая роль Военно-промышленной

комиссии при Президиуме Совета Министров СССР, а также отдела Оборонной промышленности ЦК КПСС. После свертывания реформ с середины 1960-ых годов начинается новый этап централизации системы управления ВПК, окончательно формируется так называемая “девятка” руководящих министерств военно-оборонной промышленности (авиационной, оборонной, судостроительной, химической, электронной, электротехнической промышленности, радиопромышленности, общего машиностроения, среднего машиностроения). В этот период были окончательно сформированы приоритеты советского ВПК и система ее управления. Была также подготовлена прочная научно-техническая и производственная база для выпуска всех видов новейшей техники и вооружения. Советский ВПК становится социально-экономической основой СССР, возрастает ее определяющая роль в партийно-политической жизни страны.

В послевоенные годы в военно-оборонную сферу страны продолжила вносить свой весомый вклад химическая промышленность Советской Армении. На Ереванском химзаводе им С. Кирова производился высококачественный искусственный каучук, клеи, другие химические продукты. Кироваканский химический и электролизный заводы с начала 1950-ых годов начали производство синтетического корунда, меламина, других химических продуктов для нужд советского ВПК и Вооруженных Сил. Здесь производилась так называемая “тяжелая вода” – главный компонент для производства атомных и водородных бомб.

Начиная с 1960 г. участие Советской Армении в ВПК СССР приобретает более упорядоченный характер. Задания относительно

военного производства Арм. ССР на каждый расчетный год принимаются на закрытых заседаниях Бюро ЦК КП Армении и Совета министров Арм. ССР. Планы по производству в республике комплектующих изделий военной техники и вооружения на каждый отдельный год периодически уточнялись и с некоторыми изменениями и дополнениями утверждались решениями Бюро ЦК КП Армении и Совета министров Арм. ССР.

В 1960–1980 гг. на предприятиях военно–оборонной отрасли промышленности Советской Армении было налажено производство электронных вычислительных машин (ЭВМ), автоматизированных систем управления (АСУ), специального наземного электросилового оборудования, средств радиозлектронной и космической связи и слежения, других изделий и средств для комплектования новейшей ракетной и реактивной техники, радиолокационных станций и зенитно–ракетных комплексов противовоздушной обороны: “Круг”, “Куб”, “Даль”, “С–125” (“Волхов”), “С–120”, (“Нева”), “С–200” и др., советских подводных лодок и военных кораблей, авиационно–космических аппаратов, для нужд Вооруженных Сил и советского ВПК.

Большая работа по военно–оборонному производству была проделана на “Армэлектростроительном заводе”, предприятиях армянского промышленного объединения “Электрон”, “Электроприбор”, “Разданмаш” и др. С годами они стали одними из крупнейших предприятий ВПК СССР. По заказам Министерства обороны СССР предприятия в советские годы выпускали уникальную, в основном – монопольную продукцию.

Ереванское промышленное объединение “Электроприбор” было вовлечено в союзную программу Министерства приборостроения, средств автоматизации и систем управления СССР по созданию и производству кораблей с воздушными подушками и подводными крыльями. Производство АСУ для летательных аппаратов было налажено на ереванском заводе “Раздан”. Для организации современного военного производства на основе завода было создано объединение “Авиакомплекс”. Объединение “Разданмаш” приняло участие в создании противовоздушной обороны СССР. Здесь производились радиоэлектронные приборы для радиолокационных станций зенитно–ракетных комплексов противовоздушной обороны: “Оса”, “Куб”, “С–75”, переносные и стационарные средства связи для обеспечения технических средств советских Вооруженных Сил.

Вместе с тем надо отметить, что ни одно из промышленных предприятий, находящихся на территории Армении, не выпускало конечную военную продукцию. Это было явной особенностью советского ВПК – исключение законченного и целостного производства военных систем и военной техники не только в рамках одного заводского комплекса, но и в одной союзной республике, исключением была Советская Россия. Цель центральных властей была ясна – чтобы вся страна находилась в тесных экономических, взаимосооперированных связях, а национальные республики не имели бы возможности стать самодостаточными.

Кроме заводов и предприятий ВПК СССР, произведенные в Советской Армении некоторые виды военно–технического оборудования, отдельных узлов, комплектующих деталей, специальных

средств экспортировались в социалистические и в слаборазвитые в экономическом отношении страны – Болгарию, Венгрию, Польшу, Румынию, ГДР, Чехословакию, Югославию, Ирак, Иран, Египет, Вьетнам, Северную Корею, Монголию, Индию, Цейлон, Йемен, Гвинею, Кубу, Ганну и др.

Власти Армении придавали большое значение созданию предприятий и отдельных цехов крупных промышленных предприятий военно-оборонной отрасли в разных районах республики. Строительство современных промышленных предприятий способствовало небывалому развитию и прогрессу отдаленных районов, городов и сельских местностей республики, улучшению социально-экономических, коммунально-бытовых условий на местах, ликвидации безработицы, росту населения. В результате предпринятых совместно с центральными властями комплексных мероприятий были созданы обслуживающие ВПК СССР предприятия в Лениакане, Артике, Маралике, Степанаване, Кировакане, Дилижане, Иджеване, Красносельске, Берде, Апаране, Раздане, Чаренцаване, Абовяне, Арзни, Эчмиадзине, Веди, Севане, Камо, Мартуни, Капане, Мегри, Горисе, Татеве, Сисиане и др.

В условиях научно-технического прогресса послевоенных лет в системе советского ВПК наряду с промышленными предприятиями Советской Армении весомое участие приняли наука и ученые республики. Проводимая государством в этой сфере политика стимулировала дальнейшее развитие в Советской Армении математики, физики, радиофизики, радиозлектроники, химии, микробиологии, фармацевтики, астрофизики и космологии.

С начала 1960 г. наука Армении принимала участие в космической программе Советского Союза, в которой ключевое место занимала военная составляющая. В АН Арм. ССР были осуществлены внеатмосферные астрофизические исследования с использованием ракет дальнего действия и искусственных спутников земли. Организованное в Армении научно-исследовательское отделение радиофизических измерений Всесоюзного научно-исследовательского института было крупным центром научных исследований в области наблюдений за космическим пространством, создания сверхдальних космических связей и систем специального радиотехнического назначения, антенно-оптических станций и радиоприемных комплексов. Ведущими организациями в области космических исследований были также НПО “Астро”, Ереванский филиал Всесоюзного научно-исследовательского института оптико-физических измерений, специальное конструкторское бюро “Гранит” и др.

В Советской Армении наиболее высокие показатели отмечались особенно в области радиозлектроники, ведущим центром которой стал Ереванский научно-исследовательский институт математических машин (ЕрНИИММ). Вплоть до развала СССР в институте осуществлялись важные работы по созданию новых видов ЭВМ и АСУ для новейшей военной техники. За свою почти 35-летнюю деятельность институт не только обеспечивал военно-промышленные нужды, но и способствовал созданию и развитию в республике новых, менее металлоемких и энергоемких отраслей промышленности.

В советские годы в армянском филиале научно-исследовательского института “Комета” были разработаны и изготовлены радио-

приборы, имеющие важное военно-оборонное применение – сверхчувствительные многолучевые системы для определения местонахождения подводных лодок и кораблей. В дальнейшем они использовались также для комплектования самолетов и космических систем.

В 1970–1980 гг. большой объем работы был проделан в Институте радиофизики и электроники АН Арм. ССР, в научно-исследовательских и научно производственных организациях “Агат”, “Альфа”, “Гамма”, “Севан”, “Волна”, в конструкторском бюро “Сигнал”, в Ленинаканском специальном конструкторско-технологическом бюро “Магнот” и др.

В послевоенные годы в Советской Армении был осуществлен ряд мероприятий по военной, гражданской обороне республики, по созданию и накоплению мобилизационных запасов и т.д. По решениям и поручениям правительства Арм. ССР были отремонтированы имеющие стратегическое значение главные шоссе, дороги и мосты республики – с целью повышения их готовности к использованию в “особенный период”, для военных перевозок, обеспечения проходимости ракетной и военной техники.

Надо заметить, что для обеспечения противовоздушной обороны Арм. СССР на территории республики была дислоцирована зенитно-ракетная бригада противовоздушной обороны СССР. В составе бригады находилось 9 зенитно-ракетных дивизионов, 3 из которых были оснащены ракетами и несли боевое дежурство. Зенитно-ракетная бригада была комплектована системами № 75 и № 125, которые включали радиолокационные станции и боевые ракеты.

До 1988 г. ракеты системы № 75 были вооружены ядерными боеголовками.

Сложный и ответственный процесс военно-оборонного производства, организованный в Советской Армении, хотя и имел значительные успехи, не проходил гладко. Некоторые заводы и цеха данной отрасли иногда не выполняли утвержденных планов, зачастую выпускали брак и некачественную продукцию, задерживали поставки своей продукции предприятиям светского ВПК. Эти негативные явления, присущие советской экономике, стали более глубокими с начала 1980-х годов, когда советская экономика, в том числе ВПК, переживали трудные времена. Предпринятые советским руководством в направлении ликвидации имеющихся негативных явлений меры в основном не были результативными и не привели к положительным сдвигам. Эти явления углублялись и дальше, вплоть до развала СССР в 1991 г.

Политика “перестройки” 1985–1991 гг. привела к полному видоизменению советского ВПК, началась замена предприятий военно-промышленной отрасли на гражданское производство (конверсия). В конверсионных программах очевидное предпочтение было отдано производству предметов широкого потребления и бытовой техники. Однако “Советский ВПК, вполне конкурентноспособный в сфере военного производства, никак не мог быть конкурентноспособным в сфере производства товаров широкого потребления для населения”.

Надо отметить, что в последние годы существования СССР, вследствие катастрофического Спитакского землетрясения 1988 г., в период обострения Нагорно-Карабахского конфликта, когда СССР

ствием преступной политики властей Советского Азербайджана стали погромы и убийства, депортация армянского населения республики в Советскую Армению, в условиях осуществления суровой экономической, транспортно-энергетической блокады Армении со стороны Азербайджана, военно-оборонные предприятия Советской Армении имели серьезные недостатки в осуществлении производства и плановых поставок для ВПК страны.

Таким образом, бурное развитие экономики и промышленности Советской Армении в послевоенные десятилетия было преимущественно обусловлено деятельностью предприятий электромашиностроительной, электротехнической, приборостроительной, радиоэлектронной, химической отраслей промышленности, выпускающих продукцию военно-оборонного назначения. Советская Армения обеспечивала специфическую часть общесоюзного ВПК – как правило, интеллектуальную, а также сектор электроники. В СССР Армения прочно утвердила за собой роль советской “Силиконовой долины”. Около 40 % всех производственных мощностей республики в той или иной мере обслуживали ВПК СССР. На десятках предприятий, научно-исследовательских и научно-промышленных организаций, вовлеченных в данную отрасль, было разработано и выпущено до 30–40 % общего объема всесоюзной военной и космической радиоэлектроники. По общему уровню развития военно-оборонной отрасли Армения занимала в СССР 4-е почетное место, после России, Украины и Белоруссии. По объему производства электротехнического машиностроения Армения была 2-й, а по приборостроению – 5-й.

Проведение в Советской Армении военно-оборонных мероприятий способствовало укреплению обороноспособности и безопасности республики, а развитие военно-оборонных отраслей промышленности послужило серьезным стимулом для небывалого развития экономики и промышленности республики в целом, создания новых промышленных центров, решения социальных проблем, обеспечения занятости населения, роста ее благосостояния, научно-технического прогресса.

## SUMMARY

For the first time in the Armenian historiography the problem of participation of the branches of the Military Defense industry and science of Soviet Armenia in the military-industrial complex (MIC) of the USSR in 1922-1991 is generalized and comprehensively studied on the basis of numerous declassified archival documents, historical evidence, published collections of documents and materials, as well as the scientific literature. The study also examines the questions of organization and implementation of military and defensive measures in Soviet Armenia.

Besides scientific and practical value of the research its actuality is reflected in the fact that in the sphere of organization and development of the military-industrial complex of the Republic of Armenia it is working closely with some of the countries of the former Soviet Union, and, in the first place with the Russian Federation within the framework of the Collective Security Treaty Organization. The countries realize complex measures to strengthen the defense capability of the Republic of Armenia, in particular a system of air defense is in the process of creation.

The dissertation consists of introduction, four chapters, conclusion, list of primary sources and literature.

In the introduction are presented the relevance and actuality of the theme, purpose and objectives, scientific and theoretical novelty, scientific and practical significance of the study, historiography and the degree of scrutiny topics.

On the basis of a critical examination of the historical facts we show in the paper that in the 1920-1930-s the Soviet Union took decisive steps for the formation and development of the Military Defense industry, and by the beginning of the Great Patriotic War the task of creating of the Soviet military-industrial complex was practically solved.

In 1920-1930-s creation of the branched industry in Soviet Armenia and its development had become a basis for the involvement of the republic in the military-defensive measures of the Transcaucasian Military District of the USSR and the military-industrial complex of the country during the Second World War and the Great Patriotic War.

During the war years almost all branches of the industry of the Armenian SSR, about 50 factories and plants, mechanical shops and other enterprises were set in motion in the Military Defense industries. The leading enterprises of the Military and Defense industries of the republic became the Yerevan Machine Building Plant named after F. Dzerzhinsky, Yerevan Chemical Plant named after C. Kirov (№ 742), the Yerevan plant N 722, the Yerevan aircraft construction plant N 447 and others. During the war the enterprises of the Military Defense industry of the republic produced 10 types of ammunition (incendiary bombs, shells, anti-tank and anti-personnel mines, hand grenades, etc.), 1 – armament, 6 – means of army communication, 47 kinds of clothing equipment, 20 – chemical products, 9 – engineering and artillery assets, a few dozen types of military uniforms, etc.

During the years of war a significant contribution to the organization of the Military Defense industry of the republic and military production was made by the scientists and science of Soviet Armenia.

After the end of the Second World War Soviet Armenia received its part from German war reparations. Due to the received equipment from the German factories and plants, the industrial enterprises of the republic had been refitted and replenished by costly and perfect equipment. This gave the opportunity to develop such branches of industry in the republic as the electrical engineering, machine-tool construction, instrument making, etc., as well as sharply increase the involvement of the republic in the Soviet military-industrial complex.

In the postwar years at the enterprises of the Military Defense branch of industries of Soviet Armenia was established production of electronic computers, automated control systems, a special ground-electric power equipment, radio-electronic and space communications, other products and resources for kitting as modern rocket and jet technics, radar stations and anti-aircraft missile defense systems, "Crug", "Cube", "Dal", "S-125" ("Volkhov"), "P-120" ("Neva"), "P-200" et al., as well as Soviet warships and submarines, aircraft and space apparatuses, and generally for the needs of the Armed Forces and the Soviet military-industrial complex.

In conditions of the scientific and technical progress of the postwar years in the system of the Soviet military–defense complex along with industrial enterprises of Soviet Armenia, scientists and science of the republic had a weighty share. Armenia provided a specific part of the All–Union complex – as a rule, intellectual as well as the electronics' sector. Armenia firmly established its role as the Soviet "Silicon Valley" in the USSR. About 40% of the total production capacity of the republic in one way or another served Soviet military–industrial complex. Dozens of companies, research and scientific and industrial organizations involved in this sector designed and produced up to 30–40 % of the total All–Union military and space electronics. Due to the general level of the development of the Military Defense sector of Armenia it assumed the 4th honorable place in the Soviet Union, after Russia, Ukraine and Belarus. In terms of the production of electro–technical engineering Armenia was the 2nd, and instrumen making – the 5th.

At the same time it should be noted that none of the industrial enterprises of Armenia issued a final military product. This was a clear feature of the Soviet military–industrial complex – complete exclusion of the integral production of weapon systems and military equipment not only within a single factory complex, but also in any union republic, with the exception of Soviet Russia.

The realization of military and defensive activities in Soviet Armenian helped to strengthen the defense capability and security of the republic, and the growth of the Military and Defense industry served as a serious impetus for an unprecedented economic and industrial development of the republic: creation of new industrial centers, solution of social problems, providing employment of the population, the growth of its wealth, scientific and technical progress.

The main findings and results of the study are summarized and presented in the conclusion of the dissertation.

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Սկզբնաղբյուրներ

#### I. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. ֆ. 1 (ՀԿԿ Կենտկոմ («Հատուկ թղթապանակներ»)), ց. 21, գ. 65, 91, ց. 23, գ. 57, ց. 26, գ. 45, 115, 215, ց. 34, գ. 66, ց. 37, գ. 39, ց. 38, գ. 49, ց. 39, գ. 59, ց. 41, գ. 85, 89, ց. 43, գ. 48, ց. 48, գ. 49, ց. 49, գ. 48, ց. 50, գ. 57, ց. 51, գ. 70, ց. 52, գ. 14, ց. 53, գ. 73, ց. 87, գ. 6, 21, ց. 126, գ. 2–8, 14, 17, 22–29:

1.2. ֆ. 113 (ՀԽՍՀ կառավարություն), ց. 3, գ. 75, 1408, 1439, 1748, ց. 8, գ. 7, մաս «CC», ց. 24, գ. 129, 130, 136, ց. 26, գ. 473, 486, 531, 543, 592, ց. 33, գ. 18, 35, 74, 75, ց. 41, գ. 13, ց. 77, գ. 47, 156, 335, 353, 356, 483, 655, 738, ց. 89, գ. 235, 273, ց. 103, գ. 11, 108, ց. 181, գ. 7, 22, 56, 73, 76, 85, 137, 156, 186, 200, 226, 228, 233, 235, 292, 302, 324, 367, 397, 411, 443, 473, 482, 620, 641, 660, 675, 686, ց. 185, գ. 281, 299, 476, ց. 188, գ. 506:

1.3. ֆ. 172 (Ձերժինսկու անվան Երևանի հաստոցաշինական գործարան), ց. 2, գ. 17–23:

1.4. ֆ. 199 (Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդ), ց. 1, գ. 142:

1.5. ֆ. 253 (ՀԽՍՀ տեղական արդյունաբերության նախարարություն), ց. 2, գ. 28, 118:

1.6. ֆ. 275 (Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն), ց. 5, գ. 79:

1.7. ֆ. 313 (Թիվ 447 գործարանում ռազմաօդային ուժերի զինվորական ներկայացուցիչ), ց. 1, գ. 8:

#### II. Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ)

1.8. ֆ. 617 (Անդրդաշնության ժողկոմխորհ), ց. 1 (հատոր 5, 1931–1933), գ. 6576:

## 2. Տպագիր սկզբնաղբյուրների և փաստաթղթերի ժողովածուներ

### ա) հայերեն

2.1. Հայաստանի Կ(Բ)Պ Կենտկոմի հաշվետվությունը XV-րդ համագումարին, «Հայպետհրատ», Ե., 1951:

2.2. ՍՍԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, «Հայաստան», հ. 3 (1922–1925), Ե., 1987:

### բ) ռուսերեն

2.3. Армения и советско–турецкие отношения в дипломатических документах 1945–1946 гг. Под ред. А. Киракосяна, Е., 2010.

2.4. Документы внешней политики СССР, т. 23, книга 1, М., 1995.

2.5. Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941–1943), М., 1946.

2.6. Политбюро ЦК РКП(б) – ВКП(б). Повестки дня заседаний, 1919–1952. Каталог в трех томах, т. 1 (1919–1929), М., 2000.

2.7. Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сб. документов и материалов, Е., 1975.

2.8. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг. Том 4. Крымская конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (4–11 февраля 1945 г.). Сб. документов, М., 1979.

2.9. Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941–1945 гг. Том 6. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.). Сб. документов, М., 1984.

2.10. Социалистическое строительство Арм. ССР (1920–1940), Е., 1940.

## 3. Մենագրություններ և աշխատություններ

### ա) հայերեն

3.1. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, Ե., 1992:

3.2. Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945–1990-ական թվականներին, Ե., 1994:

3.3. Անանյան Լ., Հայկական ՍՍՀ արդյունաբերությունը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, ՀՍՄՀ ԳԱ, Ե., 1982:

3.4. Անանյան Լ., Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը (նախապատերազմյան շրջան), Ե., 1979:

3.5. Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր (ռուսումնական ձեռնարկ), Ե., 2003:

3.6. Ասծատրյան Ե., 20-րդ դար. Հայաստանի կառուցման ճանապարհին (Հուշեր): Գիրք առաջին, Ե., 2004:

3.7. Ավագյան Վ., Սովետական Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման պատմությունից (1927–1980 թթ.), Ե., 1983:

3.8. Ավետիսյան Հ., Վիրաբյան Ա., Հարությունյան Կ., Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, Ե., 2000:

3.9. Գևորգյան Ռ., Մեծ քիմիայի «առեղծվածը», Ե., 2010:

3.10. Խաչատրյան Գ., Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941–1945), Ե., 2005:

3.11. Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Ե., 2007:

3.12. Կարապետյան Ս., Հայաստանի Հանրապետության բանակը (1918–1920), Ե., 1996:

3.13. Կոզմոյան Կ., Երևանի Ֆ. Է. Ձերթինսկու անվան հաստոցաշինական գործարանի 50 տարին, Ե., 1956:

3.14. Կոզմոյան Կ., Լենինական, Ե., 1957:

3.15. Կոզմոյան Կ., Կիրովական, Ե., 1960:

- 3.16. Կոզմոյան Կ., Ալավերդի, Ե., 1966:
- 3.17. Կոզմոյան Կ., Հրազդան, Ե., 1986:
- 3.18. «Հայաստան» հանրագիտարան, Ե., 2012:
- 3.19. Հայաստանի ժողովրդագրության վերջին նախագահը: Գուրգեն Չոլախյան (Կազմող՝ Է. Չոլախյան-Գասպարյան), Ե., 2012:
- 3.20. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան 50 տարում, Ե., 1994:
- 3.21. Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Ե., 2010:
- 3.22. «Հայուհիներ» հանրագիտարան (2 հատորով), հ. 2, Ե., 2011:
- 3.23. Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Ե., 2002:
- 3.24. Հարությունյան Կ., Մանուկյան Հ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակում, 1941–1945 թթ., Ե., 2001:
- 3.25. Հարությունյան Կ., Սահակյան Մ., Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Ե., 1988:
- 3.26. Հարությունյան Հ., Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.), Ե., 1987:
- 3.27. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:
- 3.28. Մանուկյան Հ., Խորհրդային Հայաստանի աշխատավորության ավանդը Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակում (1941–1945 թթ.), Ե., 2000:
- 3.29. Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013:
- 3.30. Պետրոսյան Վ., Գրիգոր Հարությունյանի ժամանակը: Գիրք առաջին–երրորդ, Ե., 2008:
- 3.31. Պետրոսյան Վ., Անտոն Քոչինյանի ժամանակը, Ե., 2013:
- 3.32. Պողոսյան Վ., Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը Մեծ Հայրենականում հանրապետու-

յան նյութական և հոգևոր ուժերի մոբիլիզացման ուղղությամբ, Ե., 1982:

- 3.33. Սարգսյան Ֆ., Կյանքի դասերը (Հուշեր), Ե., 2001:
- 3.34. Վարդապետյան Ա., Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին 1920–1925 թթ., Ե., 1959:
- 3.35. Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով: Հասարակական–քաղաքական կյանքը (1945–1957 թթ.), Ե., 2001:
- 3.36. Քոչինյան Ա., Անավարտ հուշեր, Ե., 2008:
- բ) ռուսերեն*
- 3.37. Арзуманян А., Иван Тевосян, М., 1983.
- 3.38. Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Е., 2004.
- 3.39. Арутюнян К., Саакян М., Участие сотрудников Национальной Академии наук Республики Армения в Великой Отечественной войне (1941–1945), Е., 2001.
- 3.40. Быстрова И., Советский военно–промышленный комплекс: проблемы становления и развития (1930–1980–е годы), М., 2006.
- 3.41. Васильев И., О турецком “нейтралитете” во Второй мировой войне, М., 1951.
- 3.42. Гарибджанян С., Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941–1945), Е., 2007.
- 3.43. Гасанлы Дж., СССР–Турция: от нейтралитета к холодной войне (1939–1953), М., 2008.
- 3.44. Горьков Ю., Государственный комитет обороны постановляет (1941–1945). Цифры, документы, М., 2002.
- 3.45. Григорьянц А., Формирование и развитие технической интеллигенции Армении (1920–1965), Е., 1966.
- 3.46. Димитров Г., Дневник (9.III.1933 – 6.II.1949), София, 1997.
- 3.47. Дни сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Е., 2010.
- 3.48. Заробян Н., Яков Заробян и его эпоха, Е., 2008.

- 3.49. История ереванского станкостроительного завода имени Ф. Э. Дзержинского, Е., 1967.
- 3.50. История социалистической экономики СССР (в семи томах), т. 5. Советская экономика накануне и в период Великой Отечественной войны. 1938–1945 гг., М., 1978.
- 3.51. Кнышевский Б., Добыча. Тайны германских репараций, М., 1994.
- 3.52. Коваленко Д., Оборонная промышленность Советской России в 1918–1920 гг., М., 1970.
- 3.53. Кравченко Г., Экономика СССР в годы Великой Отечественной войны (1941–1945), М., 1970.
- 3.54. Мельтюхов М., Упущенный шанс Сталина, Советский Союз и борьба за Европу: 1939–1941. Документы, факты, суждения, изд. 2–е, М., 2002.
- 3.55. Отечественный военно–промышленный комплекс и его историческое развитие. Под редакцией О. Бакланова и О. Рогозина. Под общей редакцией О. Рогозина, изд. 2–е, М., 2013.
- 3.56. Ржешевский О., Сталин и Черчилль. Встречи. Беседы. Дискуссии. Документы, комментарии. 1941–1945, М., 2004.
- 3.57. Розенфельд С., Клименко К., История машиностроения СССР (с первой половины 19–го в. до наших дней), М., 1961.
- 3.58. Самуэльсон Л., Красный колосс. Становление военно–промышленного комплекса СССР. 1921–1941 (Пер. с англ. И. Давидян), М., 2001.
- 3.59. Саркисян А., Армяне – военные ученые, конструкторы, испытатели и производственники 20–го века, т. 1, Е., 1998, т. 2–3, Е., 2005.
- 3.60. Семиряга М., Как мы управляли Германией, М., 1995.
- 3.61. Симонов Н., Военно–промышленный комплекс СССР в 1920–1950–е годы: темпы экономического роста, структура, организация производства и управление, М., 1996.
- 3.62. Тюленев И., Через три войны, М., 1960.

- 3.63. Хачатрян К., Великий друг армянского народа – Н.И. Рыжков, Е., 2004.
- 3.64. Чадаев Я., Экономика СССР в период Великой Отечественной войны (1941–1945), М., 1965.
- 3.65. Шахурин А., Крылья победы, М., 1990.
- 3.66. Шумихин В., Советская военная авиация, 1917–1941, М., 1986.

#### զ) անգլերեն

- 3.67. Davies R., Crisis and Progress in the Soviet Economy, 1931–1933 (The industrialisation of Soviet Russia), London, 1996.
- 3.68. Holloway D., War, Militarism, and the Soviet State, Harmondsworth, 1980.

#### 4. Հոդվածներ

##### ա) հայերեն

- 4.1. Բաղալյան Գ., ՀՀ արդյունաբերության զարգացման համատեքստում ռազմարդյունաբերական համակարգի զարգացման հեռանկարի մասին, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 35–42:
- 4.2. Գեղամյան Գ., Հայաստանի ժողովրդական տնտեսությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1995, № 1, էջ 62–73:
- 4.3. Եսայան Ա., Ոսկանյան Բ., ՀՀ ռազմական արդյունաբերության համալիրի դերը հրթիռային զորքերի և հրետանու տեխնիկական զարգացման գործում, «Հայկական բանակ», Ե., 2012, № 4, էջ 34–40:
- 4.4. Իսախանյան Ս., Պետրոսյան Ա., ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 18–24:

4.5. Խաչատրյան Կ., Խորհրդային Հայաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմական նախապատրաստությունների ոլորտում, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Ե., 2011, հ. 12, էջ 255–269:

4.6. Խաչատրյան Կ., Խորհրդային պաշտպանական արդյունաբերության և դրա կառավարման համակարգի զարգացման հիմնավուլները (1920–1930–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2012, № 2–3, էջ 32–41:

4.7. Խաչատրյան Կ., Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորման նախադրյալները Խորհրդային Հայաստանում (1920–1930–ական թթ.), «Պատմաբանասիրական հանդես», Ե., 2012, № 3, էջ 53–65:

4.8. Խաչատրյան Կ., Արդյունաբերության ռազմականացումը և ռազմական արտադրության կազմակերպումը Խորհրդային Հայաստանում Հայրենական Մեծ պատերազմի առաջին ամիսներին, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ, Ե., 2012, հ. 9, էջ 95–102:

4.9. Խաչատրյան Կ., Ռազմապաշտպանական արտադրությունը Հայաստանում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2012, № 4, էջ 12–32:

4.10. Խաչատրյան Կ., Խորհրդային Հայաստանի պաշտպանական արդյունաբերության առաջնեկի՝ թիվ 447 գործարանի հիմնադրման և շահագործման պատմությունից, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Ե., 2012, հ. 13, էջ 262–279:

4.11. Խաչատրյան Կ., Հայաստանի ռազմավարը Երկրորդ համաշխարհային պատերազմում, «Վեմ» համահայկական հանդես, Ե., 2013, № 4, էջ 107–117:

4.12. Խաչատրյան Կ., Խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման առաջնահերթությունները և կառավարման համակարգը հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1945–1960–ական թթ.), «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Ե., 2014, հ. 15, էջ 240–267:

4.13. Խաչատրյան Կ., Հայաստանի Երկրորդ (Խորհրդային) Հանրապետության պատմության հիմնահարցերի ուսումնասիրության արդի վիճակը, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի (17–19 հոկտեմբերի, 2013) զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Ե., 2014, էջ 101–105:

4.14. Խաչատրյան Կ., Հայ գիտության ներդրումը ԽՍՀՄ ռազմապաշտպանական ոլորտում հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1950–1960–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2015, № 2, էջ 77–86:

4.15. Խաչատրյան Կ., Հայաստանի գիտության ներդրումը ԽՍՀՄ ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում (1970–1980–ական թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2015, № 3, էջ 10–27:

4.16. Խաչատրյան Կ., Ռազմապաշտպանական արտադրությունը Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան առաջին տասնամյակներին (1946–1970 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 2015, № 123, էջ 372–389:

4.17. Խաչատրյան Կ., Խորհրդային Հայաստանի ռազմապաշտպանական արդյունաբերությունը 1970–1991 թվականներին, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., Ե., 2015, հ. 16, էջ 267–303:

4.18. Խաչատրյան Յու., Շադյան Պ., Դադայան Կ., Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները, «Հայկական բանակ», Ե., 2008, № 1, էջ 11–35:

4.19. Հովհաննիսյան Գ., Երևանի մաթեմատիկական մեթո-  
դների գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքների  
հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները,  
«Հայկական բանակ», Ե., 2008, № 1, էջ 58–65:

4.20. Մաթևոսյան Հ., Ռազմարդյունաբերական համալիրը և  
հիմնարար գիտությունը, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ  
43–53:

4.21. Պետրոսյան Ա., Թովմասյան Ա., Ռազմական արդյունա-  
բերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալ-  
ները, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 25–34:

4.22. Օհանյան Ս., ՀՀ ռազմական արդյունաբերության համա-  
կարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների  
առաջնային խնդիր, «Հայկական բանակ», Ե., 2011, № 3, էջ 9–17:

#### *բ) ռուսերեն*

4.23. Аллахвердян Г., К характеристике промышленности  
Армянской ССР в период Отечественной войны, “Известия АН Арм.  
ССР (Общественные науки)”, Е., 1954, № 2, с. 3–11.

4.24. Безбородов А., Власть и ВПК в СССР (середины 40-х –  
середины 70-х годов), “Сталин и холодная война”, М., 1997, с. 94–126.

4.25. Безугольный А., Ни войны, ни мира. Положение на советско-  
турецкой границе, меры советского руководства по предотвра-  
щению турецкой угрозы в первый период Великой Отечественной  
войны, “Военно-исторический архив”, М., 2003, № 5, с. 53–76.

4.26. Быстрова И., Военно-экономическая политика СССР: от  
“демилитаризации” к гонке вооружений, “Сталинское десятилетие хо-  
лодной войны: факты и гипотезы”, М., 1999, с. 171–187.

4.27. Быстрова И., Военно-промышленный комплекс СССР на  
международной арене, “Отечественная история”, М., 2006, № 2, с. 56–  
73.

4.28. Гарибджанян С., Документы об организации академической  
науки в Армении в годы Великой Отечественной войны (1942–1944),  
“Вестник общественных наук”, Е., 1995, № 1, с. 239–249.

4.29. Мухин М., Эволюция системы управления советской обо-  
ронной промышленностью в 1921–1941 годах и смена приоритетов  
“оборонки”, “Отечественная история”, М., 2000, № 3, с. 3–15.

4.30. Степанов А., Военные планы и оборонная промышленность  
СССР накануне и в начале Второй мировой войны: британский  
фактор, “Отечественная история”, М., 2006, № 3, с. 33–40.

4.31. Филитов А., Конец холодной войны и распад СССР: проб-  
лема закономерности и альтернативности, “Историческое простран-  
ство (Проблемы истории стран СНГ)”, Издание Международной Ассо-  
циации институтов истории стран СНГ, М., 2011, с. 245–254.

4.32. Хачатрян К., Советско-турецкие отношения на начальном  
этапе холодной войны и Армянский вопрос (1945–1949 гг.), “Вестник  
РАУ”, Е., 2003, № 1, с. 50–57.

4.33. Хачатрян К., Армянский вопрос и репатриация армян в  
Советскую Армению в 1945–1949 гг., “Историческое пространство  
(Проблемы истории стран СНГ)”, Издание Международной  
Ассоциации институтов истории стран СНГ, М., 2007, № 2 с. 124–133.

4.34. Хачатрян К., Армянский вопрос в сфере советско-турецкого  
противостояния в годы Второй мировой войны и на начальном этапе  
холодной войны. //Актуальные проблемы Второй мировой и Великой  
Отечественной войн /к 65-летию Великой Победы//, Минск, 2010, с.  
326–337.

4.35. Хачатрян К., Советская Армения и Армянский вопрос в  
сфере военных приготовлений СССР и советско-турецкого противо-  
стояния в годы Второй мировой войны // Электронный научно-обре-  
зовательный журнал “История”, 2011, т. 2. Выпуск 7 [Электронный  
ресурс]. URL: <http://history.jes.su/s207987840000174-0-1>

4.36. Хачатрян К., Военно-оборонное производство в Советской  
Армении в годы Великой Отечественной войны, “Историческое про-

транство (Проблемы истории стран СНГ)”, Издание Международной Ассоциации институтов истории стран СНГ, М., 2013, с. 240–258.

4.37. Якушевский А., Агрессивные планы и действия западных держав против СССР в 1939–1941 гг., “Военно-исторический журнал”, М., 1981, № 8, с. 47–57.

*զ) անգլերեն*

4.38. Asaturian V., The Soviet Military-Industrial Complex: Does It Exist? //Testing the Theory of the Military-Industrial Complex, Journal of international Affairs, 26, № 1, 1972, pp. 1–28.

4.39. Agursky M., The Soviet Military-Industrial Complex. Jerusalem Papers on Peace Problems, 31, 1980, pp. 1–32.



*ԿԱՐԵՆ ՀԱՍԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ-ը*

ծնվել է 1969 թ. մայիսի 25-ին Երևանում: 1986 թ. ընդունվել է Բելառուսական պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1987–1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1989 թվականից ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1993 թ.:

1994 թ. Կ. Խաչատրյանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում ձևակերպվել է որպես հայցորդ, իսկ 1995 թ. ընդունվել աշխատանքի: 1998 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1999–2008 թթ. զբաղեցրել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, եղել է ՀՀ ԲՈՅ-ի «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարը: 2008 թվականից Կ. Խաչատրյանը Պատմության ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենն է, ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

2003–2009 թթ. համատեղությամբ վարել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը: 2009 թվականից Կ. Խաչատրյանը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի Պատմության և միջազգային հարաբերությունների մեթոդի վարիչն է: Դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում:

Կ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուսական հարաբերություններ, Հայաստանի առաջին և երկրորդ (խորհրդային) հանրապետությունների, ԼՂԻՄ-ի պատմություն և այլն: Կ. Խաչատրյանը հեղինակ է եղել մենագրության, առաջինը՝ «Великий друг армянского народа – Н.И. Рыжков», հրատարակվել է 2004, երկրորդը՝ «Հայ-ռուս»

կան հարաբերությունները 1920–1922 թթ.», 2007, երրորդը՝ «Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)», 2015 թվականին: Համահեղինակ է «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ–ի տարածքային կորուստները 1920–1930–ական թթ.» (2015) աշխատության, «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի, միջնակարգ և ավագ դպրոցի մի քանի դասագրքերի: Կ. Խաչատրյանը հրատարակել է 50–ից ավելի գիտական հոդվածներ և հրապարակումներ, համատեղ կազմել և խմբագրել փաստաթղթերի ու նյութերի մի քանի ժողովածուներ («Հայության պայքարը ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար» (2011), «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989 թթ.)» (2014) և այլն):

Կ. Խաչատրյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային տասնյակ գիտաժողովներում և գիտագործնական սեմինարներում, ԱՊՀ երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում, սփյուռքահայ համայնքներում և այլն: Նրա գիտական ղեկավարությամբ երկու ասպիրանտ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Կ. Խաչատրյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈԱԶՄԱՎՈՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՈԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920–1930–ԱԿԱՆ ԹԹ.)**

1.1. Ռազմապաշտպանական արդյունաբերության և դրա կառավարման համակարգի ձևավորման և զարգացման հիմնափուլերը ..... 22

1.2. Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացումը որպես ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման նախադրյալ ..... 36

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԽՍՀՄ ՈԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՈԱԶՄԱՎՈՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1939–1945 ԹԹ.)**

2.1. Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ռազմապաշտպանական միջոցառումների և խորհրդաթուրքական դիմակայության ոլորտում ..... 55

2.2. Ռազմապաշտպանական արդյունաբերության ձևավորումը: Ռազմական պատվերները և արտադրանքը  
2.2.1. Երևանի թիվ 447 ինքնաթիռաշինական գործարանի հիմնումը և շահագործումը ..... 72

2.2.2. Արդյունաբերության վերակառուցումը և ռազմական արտադրության կազմակերպումը Հայրենական պատերազմի առաջին փուլում (1941–1942 թթ.) ..... 84

2.2.3. Ռազմական արտադրության կազմակերպումը 1943–1944 թթ. .... 122

2.2.4. Հանրապետության գիտական ներուժը ռազմապաշտպանական ոլորտի աշխատանքներում ..... 132

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱՅ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**  
**ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ (1945-1960-ԱՎԱՆ ԹԹ.)**

3.1. Գերմանական ռազմավարի դերը Խորհրդային Հայաստանի արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման գործում ..... 141

3.2. Խորհրդային ՌԱՅ-ի կազմակերպման և զարգացման առաջնահերթությունները, կառավարման համակարգը .... 158

3.3. ՀԽՍՀ արդյունաբերության ռազմապաշտպանական ճյուղի ձեռնարկությունների ներգրավվածությունը Խորհրդային ՌԱՅ-ում և նրանց արտադրանքը ..... 180

3.4. Հանրապետության գիտության ներդրումը Խորհրդային ՌԱՅ-ում ..... 211

**ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌԱՅ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 1970-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

4.1. Գիտության ներդրումը Խորհրդային ռազմապաշտպանական և տիեզերական արդյունաբերության ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում ..... 228

4.2. Հանրապետության ռազմապաշտպանական արդյունաբերությունը Խորհրդային վերջին տասնամյակներին ..... 253

**ՀԱԿԵԼՎԱԾ** ..... 286

**ԱՄՓՈՓՈՒՄ** ..... 291

**РЕЗЮМЕ** ..... 308

**SUMMARY** ..... 326

**ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** ..... 329

**ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ** ..... 341

*ԿԱՐԵՆ ՀԱՍԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՍՀՄ ՌԱԶՄԱՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (1922-1991 թթ.)**

*КАРЕН ГАМЛЕТОВИЧ ХАЧАТРЯН*

**АРМЕНИЯ В СИСТЕМЕ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА СССР (1922-1991 гг.)**

*KHACHATRYAN KAREN HAMLET*

**ARMENIA IN THE MILITARY-INDUSTRIAL COMPLEX OF THE USSR (1922-1991)**

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Աղամյանի  
 Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Հանձնված է տպագրության՝ 01.11.2015 թ.:  
 Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ  
 ИИСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
 INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4  
 РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4  
 24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan  
<http://www.academhistory.am>